Հատուածն. Նախ՝ ի սահմանէ անձնիշխանութենէ, աւանդելոյ՝ ի սկզբն Թուլմայէ. զի ասէ, կարօղութենէ ընտրօղ միջոցաց պահմանց կարգի վախճանին: Ապա ոչ է կատարելութենէ, այլ պակասութենէ, եթէ կար լոյծ նմա մեղանչել՝ լոյծ խանգարել զկարգ վախճանին: Երկրորդ. զի անձնիշխանութենին կացուցանի արութենէ՝ ի վերս խորոց ներգործութենից: Խակ արդ առ հուպ թե արութենէ ոչ վերաբերի իշխանութենին զեզ ծանելոյ՝ այլ ուղիղ վարելոյ նովաւ: Ապա առ անձնիշխանութենին ոչ պատահանի իշխանութի զեզծանելոյ ներգործութենէ խորով, մեղանչելով: Երրորդ. զի անձնիշխանութենին ոչ դիմէ առ չարն, բայց եթէ՝ ի զի խաբին միտք ըմբռնելով զայն իբր բարի ինչ եան: զի ամ որ մեղանչէ, ապէտ է: Խակ արդ խաբելին մատոյց ոչ է յէութենէ անձնիշխանութենեան, այլ առաւել պակասութենի ինչ նր. ոչ պակասութենէ է ոչ առին առաջնորդել՝ ի մեծագնեալ ականէ: և զորացն յանհմուտ զօրավարէ: Ապա ոչ է յէութենէ անձնիշխանութե, կարօղ լինելն խոտորիլ՝ ի չարն:

* ՝ի գիր. անձնիշխանութե. գլ. ա:

Ասասէ բն անսեւլմաս* ասէ: Ոչ է պատճառն, եւ ոչ ման պատճառն կարօղ լինելն մեղանչել: Այլ միայն, ոչ նշանակէ զբն Թուլմաս, նշան ինչ նր, ոչ հիմանդութենին է նշան կենաց:

## Ձորորդ էդրակացութիւն։

Ա՛ր անձնիշխան ազատութիւն ոչ պահանջի հարկաւ՝ անտարբերութիւն ներհակութիւն • կամ ըստ տեսակարարութեան • այլ բաւական է անտարբերութիւն հակասութիւն , և ըստ գործածութիւն ։ Ա՛յս եզրակացութիւն ևս է հասարակ ։

Յուցանի • անտարբերութիւնն հակասութիւն , և ըստ գործածութիւն բաւական է առ կատարեալ ուրութիւն ։ Ապա և առ անձնիշխան ապատութիւն ։ Յուցանի առաջարկութիւնս • նախ 'ի սկզբն Թումայէ * , ասէ ։ Գոյացութիւնն հոգեղէն՝ ոչ է իրաւ ներգործութիւն • զի 'ի նմա է առնել և ոչ առնել ։ Երկրորդ բանիւ • զանգի ստվին իսկ , զի գործածութիւն ներգործութեան ոչ է կամաց 'ի հարկէ սահմանեալ , կամքն 'ի դնել զայն համարի կատարեալապէս ինքնիշխան , ըստ որում ոչ միայն լուսով բանի ուղղէ զնկատն յայնմ , այլ և ըստ հաճոյից անօրինէ զնմանէ • և յառաջ բերէ զայն , ոչ վն զնկ , և 'ի բացորոշութիւն բնութիւն , այլ վանզնի կամի 'ի բացորոշութիւն իւրոյ իսորհրդոյ ։ Ա՛նդրիցես , թէ զնարդ սահմանից անձնիշխանութեան ։

Պատասխանեմ • բազումք բազմօրինակ սահմանեն , այլ 'ի մէջ այլոց ընտրեալդ Թումայ սահմանն առեալ 'ի սրբոյն Թումայէ , զոր վերադոյն նշանակեցաք • այսինքն Թէ է կարողութիւն ընտրող միջոցաց պահմանել կարգի վախճանին ։ Ա՛ինօր իմանամք զնմանուր բարիս , յորս բովանդակ բան բարութիւն ոչ երևի յայս յանդիման ։ Իսկ վախճանս ըզ վախճանն վերջին , ջ զբարին կատարեալ • կամ զերանութիւն ։

Ա՛րդ այս սահման ըստ սրբոյն Թումայէ * , բացատրի 'ի բազդատութիւն կամաց ընդ իմացութիւն ։ Զի կամքն վհեա երեսից իմացութիւն ,

և

* Ե• ընդ հակ։ գլ• խէ։

* ա• մ• խ• ձէ• պ• է։

և նմին համեմատ: Ասասի որպէս յիմացական կարողութիւնն զանազանեմք գործս կրկին. մի՝ ճանաչել զկզբունսն՝ զբնապէս յայտնիս, և ըստ այսմ կարողութիւնն իմացական ասի՝ նմայդրական. և երկրորդ մակաբերել զեղրակացութիւնս յայտ սկզբանց. և ըստ այսմ՝ կոչի՝ բան, կամ պրամաբանական: Այսպէս՝ ի կամեցողական կարողութիւնն ևս գործ. մի՝ բաղձալ վերջին վախճանի. և երկրորդ՝ ի սիրոյ վախճանին շարժել զինքն յընտրել զմիջոցս: Բաղձողական կարողութիւնն ընդ առաջնով պահէ զհասարակ անունն կամք. իսկ ընդ երկրորդիւ տիրաբար ասի ազնիւականութիւն: Ասի անձնիշխանութիւնն և կարողութիւն ընտրելոյ կամ որոշելոյ զմիջոցս՝ ի նախածանուցեալ դիտմանէ վախճանին: ոչ բանն և կարողութիւն մակաբերօղ եղրակացութեց յըստ ինքեան ծանուցեալ սկզբանց: Եւ զի՝ ի համառօտ քան զեսցուք զասացեալսն, որպէս մակաբերել զեղրակացութիւնս՝ զանց արարեալ զօրինաւոր կարգաւ սկզբանց՝ ոչ է կատարելութիւն բանին, նոյնպէս և ոչ կատարելութիւն է անձնիշխանութիւնն՝ թողեալ զկարդ վախճանի ընտրել զմիջոցս. և այնպէս մեզանչել: Եւ որպէս առաջին սկզբունքն են ծանուցեալ բնապէս, և ոչ տրամաբանութեամբ. նոյնպէս և վերջին վախճանն է կամեցեալ բնապէս. և ոչ անձնիշխանութիւն: Ասասի որպէս բանն ոչ է սկզբանց. այլնպէս և ոչ անձնիշխանազատութիւնն զվերջին վախճանէ: Այլ ոչ բանն յածէ զեղրակացութիւնք, և շարժէ զինքն և մերձեցուցանէ՝ ի հասանիլ այնց, նոյնպէս և կամքն քինէ զորս էնն առ վերջին վախճան. և շարժէ զինքն և մերձեցուցանէ յընտրել զնոսա, ի սիրոյ վերջին վախճանին: Եւ որպէս իմացութիւնն ոչ միշտ ներգործութիւն հասանի սկզբանց, այլ միայն յորժամ ըստ պատշաճի առաջադրին նմա. նոյնպէս կամքն թէպէտ և բնապէս դիմէ առ վերջին վախճանն,

և

և առ կատարեալ քարոզութեն · բայց ոչ ըստ գործածութեան միշտ կամի գայն · այլ միայն յորժամ ըստ պատշաճի յանդիման լինի նմա : Եւ այսպէս երևի աքանչելի հիւս Թումայա- կան վարդապետութենն ի վերայ ազատութե · յորում պատասխանեն վերջինք առաջնոց, մի- ջինք երկոցուն, և ամենայնն ամենայնի : Յո- րոց առ յարգի լինելոյ երացդ՝ ձոխապոյն զըն նելոց , յայտ յանդիման երևին և այլ բա- զում ուսմունք ընդ խնամոտ ազատութենն բա- զազանք , յորս համբակք անհնարինս վարա- նին և տատասկին · վասն զի ի ձչգրիտ ծա- նօթութէ անձնիշխանութե վերջացեալ՝ խափ և անախիպ զնորա նկարեն յինքեանս զնման- նութիւն :

## Պ Ր Ա Կ Ե Ր Բ Ո Ր Դ :

Յաղագս կամաւոր ներգործութեց առանձինն :



Ամեցեալ զկամաւոր ներգործութեց իսկ ինչ առանձինն : Նախ յայտ է , թէ կամաւոր ներգործուն՝ ոմն է ե- լուզեալ · որ է , ի կամացն յառաջ բե- րեալ · ոմն՝ սկիզբ : և ոմն հրամայեալ · որ մերձեցուցմամբ կամացն՝ յայլսն կարողութէ արարեալ · ոմն իսկ : Եղելութեալ ներգործու- թենէ , զորոց միայն առաջին կայ մեզ իսկ , ( վա զի հրամայեալքն ի սոցանէ ունին զկամաւո- րութենն · ) են վեց · երեքն առ վախճանաւ · որ պարզ կամեցումն , դիտաւորութէ , և վայե- լումն · և երեքն առ միջոցօք , որ · հաւանումն , ընտրութէ , և վարումն : Ի սոցա վերայ գան ի կողմանէ խնացութէ այլ վեց ուղղութք , ո- րոց և երեքն յածին զվախճանաւ · և երեքն զմիջոցօք : Զսոցա ամ զանօրէնութէ և զկարգ առաջի առնել կամեցեալ , պարտ է հաւաքել և սղղևորել զայսպիսի շարժմունս հոգւոյ մե

ըոյ, որք զմիմեանց պիտի այնպէս աղխաղխեալ կան, զի միշտ ներգործութիւնք կամաց առաջի երեսայ ներգործութիւն ինչ լսացուիք ուղղիչ և կանոնաւորիչ. և փոփոխակի ամ ներգործութիւնք լսացուիք՝ բաց յառաջնոյն՝ առաջի երեսայ ներգործութիւն ինչ կամաց մերձեցուցիչ, և կորովութիւնք և գործածութիւնք ազդիչ: Զի ոչ առ լսացուին վերաբերի կարգ, ուղղութիւն, և առարկական տեսակարարութիւնն ներգործութեց կամաց. այնպէս և առ կամն հայի մերձեցուցանն և գործածութիւնք այլոց կարողութեց, և և լսացութիւնն: Ապա ամ ներգործութիւնք, որք ընթացակցին առ գործ քարոյական, եթէ՝ ի կոչմանէ լսացութեան և եթէ՝ ի կոչմանէ կամաց, են մանաւանդ երկուսայան. որք այնպէս դասաւորին յերիս դասս, որ ունիք՝ ի վախճան հային. և ունիք յառնուլ զիջողս պատուիրին. և ունիք զգործածութիւնն կատարեն:

Առդ նախ սկիզբն առնէ՝ ի կոչմանէ լսացութիւնք պարզ ըմբռնուածն բարուոյն. որով ըմբռնի ինչ և առաջադրի կամաց իբր բարի, որուամ անդէն երկրորդաբար՝ ի կոչմանէ կամաց պատասխանի պարզ կամեցուածն. ցհաճութիւնն՝ ի բարին յանդիման եղեալ. որ թէ ուժգին իցէ, զարթուցանէ և մերձեցուցանէ զնմա ցութիւնն՝ ի քննել, եթէ օգտաւէտ իցէ, կամ հրնաւաւոր ստանալ զայն բարի. և այնպէս երկրորդաբար զհետ գայ դատուածն. որով լսացուին առաջադրի կամաց զբարին, իբր օգտաւէտ և հնարաւոր առ ստանալ. և այսմ դատմանէ՝ ի կոչմանէ կամաց զհետ գայ երրորդն, այսինքն դիտաւորութիւնն ստանալոյ զբարին վերջոյ:

Զհետ ներգործութեցս երեքեանց, որք են զվախճանաւ՝ գայ պարապուածն՝ ի միջոց: Ասա ոչ հինգերորդաբար զօրութիւն դիտաւորութիւնն մերձեցուցանի լսացութենն՝ ի հետազօտել ըզ միջոց դիպաւորս առ ստանալ զվախճան: Եւ այս

այս ներգործութեն կոչի խորհուրդ. կի խոր-
հրդածութեն: Որում՝ ի կողմանէ կատաց պա-
տասխանէ վեցերորդաբար հաւանութեն, ո-
րով կամքն հաւանի, կամ մանաւանդ բաղձայ
օգտութեն այնց միջոցաց. և զօրութիւ այսր հա
ւանման, կի հաւանութական բաղձանաց, շար
ժի խնացութեն՝ ի քննել և յորոշել զմիջոց,
խոյզ և խնդիր առնելով, թէ ոյք յարմարա-
գոյն իցեն և առաւել գիւրին, սակայն թէ
բազումք իցեն, և ոչ զայն հնար իցէ՝ ի ձեռն
առնուլ: Ուր այսպէս լինի եօթներորդ ներ-
գործութեն. զի գաւառական որոշիչ միջոցաց,
որում՝ ի կողմանէ կատաց պատասխանէ ութե-
րորդ ներգործութեն, որ ասի ընտրութիւն.
որով կամքն զմի միջոց նախասահմանաբար ընդունի
քան զմիւսն:

Այս չորեքին ներգործութիւքն զմիջոցք կար
գելոք առ վախճան, որոց՝ ի կատարիլն (ոչ
բանից կարգ է ասել,) միսի ձեռն՝ ի գործ:
գան զօրութիւք, և ազդումութիւք ընտրութիւն չար-
ժի խնացութեն ազդ առնել զգործածութիւնն
միջոցաց ընտրելոց. և այսպէս լինի ներգոր-
ծութեն իններորդ. ի հրամանն, որում՝ ի
կողմանէ կատաց պատասխանէ առանձնորդ վա-
րութեն ներգործական. որով կամքն մերձենա-
ցանէ զգործածական կարողութեան յառնուլ և
՝ի գործ գնել զմիջոցս: Ապա յետ ներգործական
մերձեցուցման պատասխանէ մեռսանութեորդ
դասեալ՝ ի կարողութեն հպատակեալս կամաց.
վարութեն կրաւորական. ի է առութեն միջոցաց
արարեալ զօրութիւք մերձեցուցիչ կատաց, ո-
րոց միջնորդութիւք, երկոսատանեորդաբար
վախճանն՝ առ որ այս ամ հետևութիւն ներ-
գործութեց գիմէր, ստացեալ լինի և ժա-
ռանգի, յորում ժառանգութիւն բերկրանօք
հանդչի կամքն, և այն բերկրական հանգիստ
կոչի վայելուչն:

Յայսցանէ երևի կատաց և լմնացութեն առ՝ի
միմեանց կախուածն և եղք. և կարգն, որ պահի

ի մարդկային կրօնութենս, զի թէ յորժամ խոհեմութիւն և հասուն բանիւ, և ոչ շուտափոյթ շտապմամբ՝ կամ երեւակայութիւն լոկով զործեցին: Քանզի յայտ է թէ բազումք են, որք կրեցեալ և երեւակայութիւն յափշտակեալք՝ ոչ ընդօրինաւոր կարգի շաւիղս գնան. և ոչինչ խոր հրդով, ոչինչ զործեալեացն կշռութիւն՝ զննութիւն, և ընտրութիւն վարին զանձինս: Սակայն և ի խոհականս այս ամ ներգործութիւնք այնպէս վաղվաղ կատարին. և անյապաղ գան զվիմեանց գինի. և աննշմարելի արօհութիւնք խառնին ընդ միմեանս, մինչ հազիւ ճանաչել՝ ևս և գործոցն զին՝ վկարգ նոյ, և զգանազանութիւն:

Արդ կամեցեալ իսկել ինչ զգլխաւորացն. կամեցումն սահմանի. պարզ հաճութիւն կամացս ի բարին երևեցուցեալ խոհացութիւն: Երբ է կրկին, առաջին և երկրորդ: Երկրորդ կամեցումն է, առ որ շարժիմք յայլմէ առաջնոյ. զի ոչ ի ծառն ի միջէ ոստոյ բուսանին այլ ոստք, այլ ի միոյ կամեցմանէ երկանեն այլք. ոչ ի կամելոյ զիսաւկութիւն՝ զհետ գոյ կամիլ զարծաթ ի գնել զիսաւկս իսկ առաջին կամեցումն է, որ ոչ երկանի յայլմէ, այլ ի նմանէ ծագին այլք. և այս կամ պարզապէս, և ի բոլոր կեանս, որպիսի է առաջին սխորժանի. որով մանուկն նորոգ հասեալ ի բանաւորութիւն, նախ առաջին զկամացս իւրոց առնու զմտիւ. կամ յետ խոհանածն ամ ներգործութիւն, որպիսի է կամեցումն զոր զարթեալ ի քնոյ՝ նախ առաջին կերպաւորեմք. և կամ ըստ մանաւանդ ինչ իրողութիւն. որպէս յորժամ յայլ ինչ զ աղեալ մեր, կամք լինին առնել նոր ինչ իրողութիւն անյարիր ընդ որս գործեաքն. զոր օրինակ յորժամ պարապեալդ արուն մոռք յոյս՝ գոյ յանկարծ խորհուրդ և կամք հրաժարելոյ յաշխարհէ, և ի կրօն մուտ նելոյ: Յայսգս այս ամ առաջին կամեցողութենէ ամ ուրեք հաստատութիւն ուսուցանէ աբդն Թովմաս, թէ [illegible] ի

՚ի կամաց , բայց կամքն ոչ լինքնին շարժի և մերձենայ առ այնս , այլ մերձեցուցանի մանաւանդ ի՛ն ազդեցութենէ յարարչէն իւրմէ յայ , որ ազդեցութիւն ոչ է սակ ֆիզիկական նախաշարժութենէ , որով ամ պատճառաւ առ ամ և իւրաքանչիւր ներգործութիւնս մերձեցուցանի յայ • այլ չարժութիւն ինչ յոյժ մանուածոյ , որ այնպէս ընդերգործութենին կինքն գրաւէ , մինչև ոչինչ տեղի լինքնին մերձենալոյ ՚ի յայն՝ թողու կամաց ։

Ա՚րդ զայս ճշմարտութենէ , զոր ածաբանք քննեն յերկար , ընդ թովմաս պէսպէս փաստիւք ապացուցանէ * ։ Յորս երեւելիքն են , նախ այն , որ առեալ լինի ՚ի համեմատութենէ իմացութենէ և կամաց , որով ոչ իմացութիւնն շարժէ զինքն ՚ի հաւանութենէ սկզբանց առ՚ի հաւանել եզրս կացութենէց , բայց առ հաւանութեն սկզբանց շարժի և մերձեցուցանի ոսկապէս՝ յարարչէն իւրմէ • սոյնպէս կամքն մերձեցուցանէ զինքն ՚ի միոյ կամեցմանէ յայլ • այլ առ առաջինն մերձեցուցանի միայն յիւրմէ արարչէ ։ Երկրորդ՝ զի ըստ այնմ շարժէ ինչ զինքն • ըստ որում է ՚ի ներգործութենէ ։ Իսկ արդ կամքն յառաջքան զառաջինն կամեցուն ոչ է ՚ի ներգործութե , այլ միայն ՚ի կարողութենէ ։ Ապա ոչ կարէ շարժել զինքն • այլ կարօտի շարժել յարարչէն իւրմէ ։ Երրորդ՝ զի յայմ կեանս առաջինն շարժուցն այնը կենաց է ՚ի ծնողէն • ոչ յայտ է ՚ի շարժման արարէ ։ Ա՚յլ ած է արարիչ , և ծնօղ իմացականն կենաց ։ Ապա առաջինն շարժուցն այնը կենաց , ջ առաջինն ձանաչուցն իմացութենէ , և առաջինն կամեցուցն կամաց , մանաւանդ ընդ մա վայելչանոյ ։ Չորրորդ՝ զի ամ բազմապիսի , այլայլելի , պակասելի , և ներընդունակաբար պատշաճօղ , արարի վերածել երբեմն ՚ի սկիզբն՝ ՚ի միապիսի՝ յանպակասելի , և ՚ի բնապէս պատշաճօղ ինչ , տոհմեալ յարարչէն բնութենէ ։ Իսկ արդ այլ շարժմունք կամաց են բազմապիսի , այլայլելի , և ներընդունակաբար պատշաճօղ ։

* ա. տ. խ. ֆէ. պր. ֆ։ ա. է. խ. ի. պր. ֆ։ Ա ընդ հելլա նասայ. գլ. ֆէ. ա այ ։

Ապա պարտին վերածիլ յառաջին ինչ միապես՝ անպակասելն, բնապէս պատշաճեալ, և յարարչէն կամաց մանաւորապէս տուեալ։ Հինգերորդ, ղի կամքն շարժէ զինքն և վերձեցուցանէ միջնորդութիւն իսորհրդոյ։ Այլ քան զառաջին կամեցումն ոչինչ խորհուրդ կարէ կանխել. ոչ ինքնին իսկ յայտ է. զի նա է արմատ և ծագումն ամ խորհրդածութիւն։ Ապա առ առաջին կամեցումն կամքն ոչ վերձեցուցանէ զինքն, այլ յայլմէ, ի յարարչէ իւրմէ վերձեցուցանի և շարժի։ Ասաի ոչ 'ի նկարելիլ սաղմին նախ երևի շարժումն սրտի տուեալ 'ի ծնողէն, որ է արմատ կենաց, գործարան ոգւոց. սկզբնւր և սկիզբն կենսական շարժմանց. սոյնպէս և 'ի կամս՝ առաջին ախորժակին, որ է սերմն ամ ախորժակաց, և բազձողական կենաց սկզբնւր և ծագումն. է 'ի մեզ մանանաւորապէս յայ, և ապա խորհրդով և կշռութիւք համացութիւք ընդարձակի, և ծաւալի յայն անընդհատ հետևողութիւն ախորժակաց, որոյ աղխաղխեալ ածէ զմեզ 'ի կամիլ զհեռագոյնս, և յանբաւս պատատղէ յերոլութիւնս։ Այլ զայսցանէ ձոխագոյն և պոցեա յածաբանութէ։

Ղնտաւորութիւն սահմանի. գործունեայ դի մղութիւն կամաց 'ի ստանալ զվախճանն միջոց։ Չի այն պարզ հաճութիւն ընդ բարին, զոր վերագոյն էնթափրեցաք ընդ անուանմբ կամեցման, 'ի գալ գոհման զհնարաւորութիւն ստանալոյ զբարին, ասէ, զօրանայ, և հաստատի յանդրդռելի բազձանս ստանալոյ զվախճանն միջոցօք ինչ. և այն է դնտաւորութիւն. ոչ սակ նաբար է զվերջնոյ վախճանէ. բայց և կարէ լինիլ զ'ինջնոյ. զի և զնոյն հնար է դնտաւ, ըստ որում ստանին միջոցօք ինչ։

Խորհուրդն ուզղէ զընտրութիւն. վ՚ն այն սահմանի. զինուիթե, կամ կշռութիւն ընտրելի միջոցաց։ Ե՛ն ներգործութիւն գործնական նմանցութիւնք. որում առ'ի լինիլ կատարեալ և լրացեալ՝ յերից պատճառանաց պարտ է բազկանալ։

Առա-

Առաջինն է հետազոտութիւն միջոցաց : Երկրորդ քննութիւն, կամ կշռութիւն օգտի իւրաքանչիւրոց : Երրորդ դատումն՝ թէ արդեօք կամաց, եթէ զնոսին՝ ի բազմաց անտի միջոցաց արժանիցէ առնուլ. և յայնմ դատման կատարի բովանդակ խորհրդածութիւնն : Յայսցանէ յայտ է, թէ խորհուրդն է միայն զմիջոցաց. վ՚ր զի վախճանն է հնձն և սկիզբն ամ խորհրդածութիւնէ, և վ՚ր այն ոչ անկանի ընդ նուաւս. ոչ և՝ ի տեսականս՝ սկզբունք արամաբանութիւնէ ոչ անկանին ընդ արամաբանութիւնէ, այլ պահանջին առ այն : Քանզի յայտ է թէ խորհուրդն ոչ է գործոց. որք արդեն բացորոշեալ են և ատոյգ, և որք ոչ են՝ ի մերում իշխանութիւնէ. զի որք ատոյգն են և բացորոշ, ոչինչ պէտս ունին քննութիւնէ. իսկ որք ոչ են՝ ի մերում իշխանութիւնէ, ոչ է հնար մեզ առնուլ զնոս՝ ի ստանալ զվախճանն : Այլ արդ՝ խորհուրդն է խուզումն առնլի միջոցաց.

Հաւանութիւնն զհետ երթայ խորհրդոյ: Քանզի երբեմն խորհրդական զննութիւնէ բազում միջոցք պատշաճականք առաջի դնին կամաց, կամքն հաճել ընդ օգուտս նոցա, ասի հաւանիլ: Արդ հաւանիլն անհրաժեշտ է համախոհ լինիլ ընդ այլոսն. և երբ յայլոյ միտս շրջիլ. ուստի հաւանութիւնն է տիրապէս հաճութիւն կամաց ընդ այնմ, որոյ խնդացութիւնն երբ օգտակարաց լինի հաւան : Քանզի յայնժամ կամքն ասի համախոհ լինիլ խնդացութիւնէ, և երբ՝ ի նոր միտս շրջիլ. և վ՚ր այն հաւանութիւնն վերաբերի առ կամն : Արդ յայտնի է և նշանակ ոչն Թովմաս *. Թէ հաւանութիւնն վերջին՝ որում նոյն հետայն զհետ գայ ներգործութիւնն և ընտրութիւնն, վերաբերի առ բանն վերին : Եւ այս յայտ է նախ փորձիւ. որով առնանեմք, զի որչափ և աղիկատցին առորին կատարելութիք, ոչ երբէք լինի յառաջանալ՝ ի ներգործուն, թէպէտ և՝ ի պատրաստ լցէ, եթէ ոչ հաւանեսցի վերին մանն միտս. ընդ որով են այլք : Երկրորդ բանիւ.

* ա. է. խ. ձէ. պ. է:

զի որովհետև հաւանութ՛ե՛ան ՚ի ներդործութ՛ե՛ն է վախճանական վճիռ • յայն մասն հոգւոյ պարտի վերաբերիլ, որ ՚ի վերջոյ դատէ զնա։ Եւ սա է բանն վերին • յորոյ առնէ ոչ գոյ բողոքել յայլ։ Ուստի մեղք ոչ համարին կա տարեալ, թէ ոչ վերին մասն հոգւոյն հաւա նեցոյ այնմ, կամ լռեալեայն, և կամ յայտնա պէս ։ Յորոց խնամանմբ, թէ այս ամ շարժ մունք թշնամութ՛ե՛ն, բարկութ՛ե՛ն, և ցանկու թ՛ե՛ն, և այս ամ խորհուրդք անհաւատութ՛ե՛ն, հայհոյութ՛ե՛ն, և պղծութ՛ե՛ն, որք յերևակին ՚ի տառապելոց վերայ հասանեն, նեղեն, խռո վեն, և տապնապեն, ոչ են մեղք, եթէ ոչ ՚ի վերայ գայցէ հաւանութ՛ե՛ն այնը վերին մա սին, ( որ մերձեցուցիչն է այլոց, ) կամ յայտ նապէս՝ հաճելով ըստ այնմ, և կամ լռելեայն, ոչ ըստ արժանեաց հերքելով, որոց հերքումն կատարի, ոչ խուճապիւք մտաց՝ զդալուսաւոն կամելով խափանել, զի այս բազում անգամ անհնար է • ( Քանզի ըստ հնդրեայ դլխոց, ՚ի հաւանել զմին եւանեն այլք • ) այլ արխական դիմադարձութ՛ե՛ն, ոչ տալով հաճութ՛ե՛ն եթէ ՚ի գործն և եթէ ՚ի բերկրութ՛ե՛ն • և ՚ի բարեխ

շնորհելով զմիտս ։

* Ք• Եա- ցոյականաց

Ընտրութ՛ե՛ն սահմանի յարխատոտէլէ * ։ Ցան կնել յառաջագոյն խորհեցեալոց ։ Յորմէ ե լանէ այս սահման ։ Ընտրութ՛ե՛ն է միոյ քան զմիւսն որոշողական ընդունութ՛ե՛ն • ուստի են թադրէ զնորհուրդ ուղղութ՛ե՛ն • և վասն այն ոչ է ՚ի յանբանս, որք ոչ խորհրդով ուղղին, այլ ազդմամբ բնութ՛ե՛ն ։ Խնդիր մեծ է յաղագս ընտրութ՛ե՛ն, թէ արդեօք հնար լոյծ կամաց յերկուց միջոցաց զնուազ բարին ընտ րել ։ Զայս որ յուծանութ՛ե՛ն քննի յերկար • կամեցեալ սակաւուք զննել • նախ ստոյգ լինի է, թէ որ է նուազ բարի յինքեան, մանաւանդ որ այդպիսին համարի ՚ի հասարակի, երբեմն նախատեծաք ընտրի քան զմեծադոյն բարին • յայտ է թէ, վշ զի կամքն ոչ առ այնոսիկ, որք

հա-

համարին բարի բացարձակապէս, և՛ ի հասա
րակի, այլ որք մեզ, և առաւ, և այժմ՛ ի մաս
նաւորի։ Ասաւ յիրաւի գրէ քերթօղն՝ ասել
մեդեայ.

Տնաանէմ ղլաւն և յայն հաճիմ,
այլ՛ ի վախճարն էս նիզպիմ։

Բայց անհնար է, թէ որ առաւ և այժմ վերջին
գառնաւոքն համարի նուճազ ընտրելի, քան է նուճազ
բարի բարուքեքն օգտի, նախառաքեալք ընտրես
ցի քան զմիւսն, որ առաւել ընտրելի համարի։
Ա՛ի՝ ալ ընտրութենն է բարձանք յառաջագոյն
խորհեցեալոյ. քան է խորհրդածութեքն նախադա
տելոյ։ Երկրորդ՝ զի կամքն ենթադրէ զնմա
ցութենն, և զհետ երթայ նմ. և վասն այն ըմ
այնմ գնմէ՛ ի բարին, ըստ որում թեւադրէ
գնմել նմացութենն։ Ապա անհնար է, թէ՛ ի
թեւադրել նմացութեքն նախառաքեալ ընտրել
զայն ինչ, և զայս ինչ՛ ի վերջոյ գառնել. կամքն
զայս ինչ նախառաքեալ ընտրեցեալ, և զայն ինչ
՛ ի վերջոյ գառնացեալ։ Թող զայլ բաղում զբա
ւոր պատճառս։ Բայց քանզի այն ինչ, որ ըմ
մեզ մտածութեքն համարի նուճազ բարի և օգ
տակար, հնար է նոյնս ըմ այլ մտածութեքն համա
րիլ լաւագոյն և օգտակարագոյն, գէթ առ՛ ի
գործ դնել զաղատութենն. վ՛ այն հնար է և
նախառաքեալ ընտրիլ։ Յորմէ լուծանին և
առարկեալքն՛ ի հակառակն ասելին։

Քրամանն՝ ըստ սքոլն Թովմայի *, առհմանէ, * ա. է. խո
ազդարարութենէն կարգագիր՝ գործունէութեար ձէ։
շարժիչ՛ ի ներգործել։ Ա՛եկին առհմանս. զի
յետ գիտելոյ զվախճանն և ընտրելոյ զմիջոց,
ապարտ լինիլ գնմանէն առ՛ ի գործ դնել զմի
ջոցս և՛ ի տանիլ զվախճան։ Զայս գնմանէն
գործադրիչ ոմանք հրամանն, ըստ որում
զկարգեալն՛ ի բանէն և զհաստատեալն՛ ի կամաց
հրամարակէ, ազդ առնէ, և ըստ առելոյ սքոլն * կան. ֆէ.
Թովմայի *, բաշխէ՛ ի գործադրիչ կարողու յաղէս ճշդ
թիս։ Ասաւ՛ ի հրամանն էն երեք. ազդարա հարգաւէ.
րութիւն ապնելի նրին. կարգաւորն հոգատա պր. ճէ.

կաց առ այն՝ զոր պարտ է առնել, և մերձեցուցումն ՚ի գործ : Զի այն ազդարարութեն և կարգումն ոչ պարտի լինիլ սոսկ ծանուցական, և ցուցական, զոր նշանակէ եղանակին ահմանական, այս ինչ է առնելի : այլ զարթուցիչ, և գործունէաբար մերձեցուցիչ ՚ի գործ, զոր բացայայտէ եղանակին հրամայական, արա՛ դայ : Իբր զերեսին զայս բացատրէ ահմանին առանձեալ :

Բայց քանզի ՚ի ներգործութեն հրամանի երևի լինչ կամաց, և երևի լինչ լսացութեն, տա թակոյս է, թէ առ որ կարօղութեն քերիցի էպէս : Սքն Թովմաս ասէ լինիլ ներգործութեն լսացութեն նախեմնթադրողի կամն : Որոյ պատճառն է. զի հրամանն է հապէս ազդարարութիւն կարգադիր մերձեցուցիչ ՚ի գործ. արդարդ առնելն, և կարգելն առ լսացութեն վերաբերի, իսկ դէյեցուցանելն առ կամն : Ասասի էութիւն ներգործութեն հրամանի վերաբերի առ լսացութեն. իսկ գործունէութեն զորունն ՚ի մերձեցուցանել առ գործ, ածանցի ՚ի կամաց. ըստ է յընտրութեն անտի, որոյ կանխեալ քան զհրամանն՝ ազդէ ՚ի նա զիւր գործունէութեն : Զի որպէս գեղեցիկ գրէ սքն Թովմաս, ՚ի սպորտարգելալ զօրութիւն առաջնոյն հայ ՚ի չէրնն : Ասասի խոհեմութեն, որ է առաքինութեն ուղիղ հրամայելոյ, դադարէ յիմացութեն :

Վարուն սահմանի, մերձեցուցումն երևի ՚ի գործողութեն : և վ՚ը զի սեպհական գործ կամաց է մերձեցուցանել զայլ կարողութիւնս, վ՚ը այն վարուն տիրապէս է ներգործութիւն կամաց :

Վայելուն սահմանի. հանգիստ և քերկրութեն ՚ի վախճանն, և ՚ի բարին առաջակայ : Ասասի վ՚ը զի կրկնակի ստանի բարին և վախճանն. կամ ըստ դիտողական գոլոյ յուսով, կամ ըստ իրական գոլոյ՝ իսկական ժառանգմամբ, կրկին է և այս վայելուն : Մին՝ անկատար,

առար, և իբր նախաձաշակ. որով բերկրիմք ՚ի բարին ժառանգեաւ ՚ի յուսոմ. որպես ասէ առաքեալն, յուսով խնդացէք: Եւ երկրորդն կատարեալ, որով զուարճանալ հանդիսիմք ՚ի բարին առացեալ ըստ երկնից: Աւրդ վայելումն ՚ի լաւին բարբառ ածանցի ՚ի պտղոյ, որպես թէ ասէաք, պտղաքաղութիւն: Իսկ ՚ի պատուին են երկու կնճ, անուշութիւն, որով բերկրեցուցանէ, և վերջնութեն; ըստ որում վախճանէ և պատակէ զերկոս միակութեն. արդ թէպէտ ըստ առաջնոյն վայելումն կարէ լինել յինչ և իցէ բարիս, ըստ որում բերկրեցուցանէ; բայց ըստ երկրորդին է միայն ՚ի վերջնում վախճանի. որ լիով վախճանէ՝ հանդուցանէ, և պատակէ զամենայն ախորժակս կամաց: Աւյժ զայսցանէ շատ լինել ցայսմայր:

# Ի՛ՆԴՈՒՐ ԵՐԲՈՐՊ:

Յաղագս կրկին:

Յարձակմունք արտի՝ եւ եւեալք ՚ի զգայական բաղձանաց, զորս նշա նակէ հիւրդ անուն, այնպէս ՚ի հա մարի են յիրողութիւնս բարուց. ինչ զի յոլով յառաքինութենէ ՚ի սոցա ուղղութիւն պատահին. և պրեթէ ամ մոլութիւնք յանկարգութէ սոցա գան յառաջ: Վասն այն կարեւոր համարեցաք գրել ինչ զսոցանէ, և ՚ի սքին Թովմայէ, որ զայսմանէ գեղեցիկ Հոխաբանեաց * ծայրաքաղ արարեալ աստէն առաջի կացուցանել. զի մի ՚ի նմանութ այսպիսի, որ առ ծանօթութէն քա րուց կարի լինն պնտանի, և առ գիտել զոճար ձալի, զանցառու գտանիցիմք:

* ա. Ք. ՚ի փառնէր էին դէր նոյ մինչ ՚ի նոյնէն ին:

Ա՛ռդ ՚ի համառօտն փութացեալ, զոր լինչ զկրից առաջի կայ մեզ գրել, յերկս պրակս բո վանդակեացուք: խօսեցեալ նախ յաղագս կր քից առ հասարակ. եկիդ յաղագս կրից ցան կական մասին. երրորդ յաղագս կրից ցաս մնականին:

# ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ•

## Յաղագս կրեց առ հասարակ ։



Որինչ խնդրի զկրից առ հասարակ, վերածի յերկիս, ըստ թէ զինչ իցեն, քանի՛ իցեն, և զիարդ բաղդատիցին առ բարոյական բարուքեն և չարուքեն։

Այրքն՝ ի յունաց անուանի էպիւս, զոր կիկերոն թարգմանէ աղմուկ • և կուինտիլիանոս, ախորժակ • այլ կիրքդ անուն առաւել համեմատ թուի յունականին ։ Իսկ զերն սահմանեն բազուկք բազմօքինակ ։ Ստոյնկեանք զկիրս ասէին լինել• ամբոխումն սրտի խոպորեալ՝ ի բանէ ընդդէմ բնութեան ։ Բայց այս սահման ոչ պնուքեն կրից, այլ ըստ պակասութեան բացատրէ ։ Այլք համառօտագոյն սահմանէին զկիրս, ոստիկանն բաղձանք • և այլք, ընդհանուր ևս ամբոխումն սրտի, կամ կծիռն, ևս պնդումն ասէ ։ Բայց ընտրելագոյն քան զայլս է սահմանն, զոր բերէ ձեզն Թուլիոս՝ ի դամասկացւոյն * • որով կիրքն ասի, շարժումն բաղձողական զօրութեան զգալոյ՝ անբնակայութեան բարւոյ կամ չարի ։ Գիր ոմանք զի՛ զոր սակս թուլութեան յաւելու, հանդերձ մարմնական հիւանդութեամբ ։ Իբր զի այնք չարժմունք զգայական բաղձանաց միշտ լինին այլայլութեամբ իմն մարմնոյ • յորմէ իսկ անուանին կիրք ։

* անուն գիրս ոմանց։

Արդ նախ ասէ շարժումն • ի սմբոխումն, և իբր յարձակումն լինչ, զի ինչ այն՝ ի տեղւոյ սեռական ։ Եւ յարի, բաղձողական զօրութեան զգալոյ, զի նովաւ սկսցի զատանիլ • եթէ յայնցմանց, և փոփոխութեանց, ընդ որս ունկանի մարմին մեր • և եթէ յախորժակաց կամայ • զի և այնք ըստ իրաց լինչ կարեն ասել շարժումն ։ Յատկէն անբնակայութեան բարւոյ կամ չարի, նշանակի բուն պատճառ այսց շարժմանց ։ Վերզի սեռական շարժիչ զգայական բաղձանաց և բարւոյն

և

և չարն ըմբռնեալ երևակայութիւք. ոչ սեպհական չարժիչ կամաց է բարին և չարն ըմբռնեալ իմացութիւք: Իսկ յետին մասունքն, հանդերձ մարմնական փոփոխութեամբ, ոչ միայն նշանակեն զմակ յաւելեալ ինչ՝ հուն կրից հետևակ. այլ և զպանապանութեն նորա, եթէ 'ի շարժմանց կամաց, որ վն զի ոչ է 'ի մարմնական կազմուածս, ոչ շարժէ զինքն մարմնական փոփոխութիք; և եթէ 'ի շարժմանց զգայական մասին ձանաչական, որ թէպետ հաստատուն է 'ի մարմնական կազմուածս, բայց ըստ ինքեան ոչ փոփոխէ զմարմինն զելն փիլիգիա, այլ միայն դիտողապէս. իսկ կիրքն և փիլիգիապէս փոփոխէ զմարմինն. մանաւանդ՝ ոչ նշանակէ զբն թուիմաս *, զինքն զսիրոն. զի՝ ոչ նա ինքն ասէ, յամենայն ինչ յաւելանայ ինչ կամ նուազի 'ի բնական չարժմանէ արտին, ըստ որում սիրտն ապրիգոյն կամ նուազգոյն չարժի ըստ ինչնոյ, կամ նուազնոյ:

* ա. է. կա. ի գ. պ. է. ա. է:

Յայտնի բաժանման կրից պիտելի է, զի ամանք են ցանկական մասին, և ամանք ցասմնականին: Քանզի են չարժմունք զգայական բաղձանաց. և վն այն պարտ է նոյ բաժանիլ՝ ըստ բաժանման բաղձանաց: Ընդ՝ բաղձանաց մի մասն ասի ցանկական. որ յածի զղգալի բարեաւ և չարեաւ, առակապէս առեալ: Իսկ միւսն ցասմնական, որ հայի 'ի բարին և 'ի չարն ոչ առակապէս, այլ իբրև 'ի գժուարահաս. և վն այն մարտիւ ինն և ձգամբ հասանելի: Իսկ տարբերին կիրք ցանկական մասին 'ի կրից ցասմնական մասին, ոչ նշանակէ զբն թուիմաս * . զի ամ կիրք ցանկականին կամ դիմէ 'ի բարին, կամ հեռանայ 'ի չարէն. ուստի ներհակին միմեանց 'ի կողմանէ առարկային, զի բերին 'իններհակն եղեալ: Բայց կիրք ցասմնական մասին յածին զնուիրն առաջի կայնել ներհակեալ չարժմամբք. ոչ յոյսն դիմէ 'ի բարին գժուարահաս, իսկ յուսահատութեն հեռանայ 'ի նմանէ: Համարձակութիւնն յառնէ 'ի վերայ չարին. իսկ երկիւղն ոչ

ընդ

ընդ նովաւ : ուստի ներհակին միմեանց ոչ միայն ՚ի կողմանէ եղերն, այլ և ըստ մասէ[ղ]ս, և ըստ հեռանալոյ ՚ի նոյն եղեռն :

Յանկական կիրք են վեց. սէր և ատելութիւն, ցանկութիւն և փախուստ. ուրախութիւն, և տրտմութիւն : Սէրն է իբր ծանրութիւն ախտոյ ՚ի բարին. վասն որոյ ասէ սէրն օգոստինոս, սէրն իմ ծանրութիւն է իմ : Ցանկութիւնն է շարժումն ՚ի բարին՝ յաւաչ եկեալ յոյնմ ծանրութէ : Ուրախութիւնն է հանգիստ ՚ի բարին : Եւ զտրտմութիւն հակառակին, Ատելութիւնն է իբր ծանրութիւն յեռտընկրկօղ ՚ի չարէ : Փախուստն է շարժումն պատճառեալ յոյնմ ծանրութէ : Տրտմութիւնն է բուռն պագարութիւն ՚ի չարն :

Յաստնական կիրք են հինգ. յոյս, և յուսահատութիւն. համարձակութիւն և երկիւղ. և բարկութիւն, որոյ ոչ գոյ ներհակն : Յոյսն քաջալերէ զսիրտն առ դժուարահաս բարին : Յուսահատութիւնն լքուցանէ : Համարձակութիւնն ՚ի վերայ յառնէ դժուարին չարի. այլ Երկիւղն նուաճէ : Իսկ բարկութիւնն ՚ի պատճառս չարի բորբոքէ զսիրտն և սրէ ՚ի վրէժխնդրութիւն : Ամենայն կիրք յաստնական մասին՝ ծագին ՚ի կրից ցանկական մասին, և յոյն եղերին. զի յաստնական մասն է իբր պաշտօնեայ ցանկական մասին, և որպէս է դիմել ՚ի բարին և հանգչիլ ՚ի նմին, իսկ նորա զարգելն ՚ի բաց բառնալ :

Յալոգս բարութիւնք և չարութիւնք կրից յայտ է կարծիք առաքինեանց, որք ոչ միայն գնէին զգկիրս՝ անպիտանս առ առաքինութի, այլ և զնոսին դատապարտէին ոչ ամենևին չարս : Իսկ ձեմականք գովէին զկիրս չափաւորս, և կանոնաւորեալս բանիւ, իբրև բարի : Արդ Թէպէտ այս երկու կարծիք երևին միմեանց հակառակ. բայց ոչ նշնիկ ըստ Թովմայ * . զանազանութիւնն է միայն ՚ի ձայնի, այլ յիրօք են միաբան : * ա. է. ի. ե. պ. է.

ամէ մերոյ զկանոնաւորեալս բանիւք կոչէին կամ
ինչ զանցեալսն ըստ սահմանադրութեան բանի,
կամ զանապատն, կոչէին յունարէն բանօս, ցո
ազմունս, հիմանդութիւնս, կամ ախտս: Եւ յայս միտ
առեալ կիրքն, ցոր ըստ որում խոտորի ՚ի կանո
նէ բանին, ևս ըստ ձեմականաց կ՚ըսէ, և մո
ղի: Բայց ըստ որում անսայ և գործակցի բա
նին, և զ՚ի ստոյգիկեանց դատապարտի:

Բայց գիտելոյ ինդիր ինդրի, Թէ արդեօք
կիրքն ՚ի գործակցիլ կարում բանին և կամացն,
նուազիցէ՞ պատասխանութիւն կամաց, Թէ առաւելու
ցու: զոր օրինակ, եթէ գաւազան ոք կրկնէ.
և բորբոքմամբ զգայական մասին կատարիցէ
պարգարութիւն, արդեօք գործէ՞ լաւագոյն կամ
չառեգոյն՝ քան յորժամ լռելով զգայական
բաղձանացն, զնմ զգործն հեղինակ և լրիով կա
տար վճարիցէ:

Պատասխանեմ, չայոմ վայրկ պարտ է ընդ ամէն
ժամայն զանազանել: Քանզի կիրքն կրկնակի
բաղդատի առ բանն, և առ կամս. մի՝ նոր
նախընթաց, և երկրորդ նոր հետեւող. քանզի
երբեմն աճապարեալ կրնչ՝ յորդորեն և ստի
պեն զկամն ևս և՚ի բարի լինչ. զոր օրինակ յա
ղորմիլ, ՚ի պատժել, և այլն. բայց երբեմն ա
ճապարեալ բանին և կամացն զարթուցանեն
զչարժմունս կրնչ, զի մի լինելոյ գործն թու
լութիք, այլ հեռանդեամբ և կորովութիք. վը
զի կիրքն են նոր նախորդիք լինչ, որք ազդեն գոր
ծոյն զմոտադրութիք, զտաստկութիք, զեռանդն,
և զկորովութիւն: Ըստ այսմ դատաւորն յա
ղարկութիք չարաց գրգռե զբարկութիք. և զի
նուազն ընդդեմ թշնամւոյն սրէ զքաջութիքն
սրտմտութիք, զոր յիրաւի կոչեցին նախնիք ա
կադեմեանք, չեսան արիութիք. Ուստի և հոմե
րոս ասէ. Ընդ առաջինութիւնէ խառնէ՛ զդաստուն:
Զայս եդեալ դիւրաւ յայտնի ինդիրս. Զի
կիրքն, որ կանխէ և ձգէ զհետ իւր զկամն.
նուազիցէ զբարութիքն. մի՝ զի մթագնէ զդա
տաւճն բանին, յորմէ նոր յաղթելոյ կախի բա
րու-

թուին բարոյական, որ և վը այն իբրև՝ ի պղտոր աղբեր վտակ՝ ոչ լինի յատակ։ Երկրորդ՝ զի նուազել զազատութիւնն, վը զի կամքն յարձակ մամբ կրից յափշտակեալ՝ ի նուազ ինքնիշխան և ներգործութիւն սր։ Բայց կիրքն հեռւոզ ոչ նուազել զբարութիւնն, այլ զի կրկնակի գոյ նմա հեռւել. ի ըստ զէտման, ըզ որում կամքն ի սատականալ իւրում՝ ընդ իւր յափշտակէ զատորին բաղձանս. և երկրորդ ըզ ընարութիւն, ըստ որում կամքն բացայայտ և յանուանէ ընտրէ զի ի կրից, զոր օրինակ զցանուալ, յահաբ կութիւն։ Ի հեռւելին ըստ առաջնոյն, ոչ յաւելու տկրասկս, այլ ցուցանէ զվնասադոյն բարութիւն, մանաւանդ ըստ իւրաց ինչ ատրածանէ զնա։ Իսկ ի հեռւելին ըստ երկրորդին, յաւելու զբարութիւն ներգործութիւն։ Զի առկայ տարերութիւն բարոյական բարւոյն վերաբերի, ոչ միայն՝ զի բարւոք գործիցէ մարդ ըստ բանական մտանն. այլ զի և զանդամս իւր, և զիմ ախորժակս զինս պատրաստեսցէ արդարութե, ոյր ասէ առաքեալն։

## ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ։

### Յաղագս կրից ցանկական մասին։



Կիզքն առնեմք ի կրից ցանկական մասին, վը լինելոյ նոցա սկզբունք և եկեալ կրից ցասմնական մասին։ Արդ ոյր առաջաք, են վեց, սէր և ատելութի, ցանկութի և վախճուստ, ուրախութի և տրտմութի, զորոց կարդաւ խօսեսցուք յառաջի կայդ։



# ՅՕԴՈՒԱԾ ԱՈՒԱՋԻՆ.

## Յաղագս սէրոյ և ապէնութեան:

(1) Երկոսին փակեմք ընդ միով մակագրութեամբ. զի ներհականք ներհականօք ծանօթանան. և վասն այն զհակակայից նոյն է գիտուն: Ընդ սկիզբն արարեալ յառաջնոյն, սէրն (որ և աստեղուին,) է կրկին, զգայական, և խմացական: Խմացական սէրն է ախորժակն այն, որով կամքն հաճի ընդ բարին ըմբռնեալ խմացութեամբ. իսկ զգայական սէրն է կիրք զգայականն բաղձանաց, որով հաճի ընդ բարին ըմբռնեալ զգայութեամբ: Ի դէպ է յաւելուլ և զերծորդ, ի զբնականն. որ է յօժարութիւնն իւրաքանչիւր բնութեան առ իւր պատշաճն: Զառաջնոյ և զերծորդէ ոչինչ ունիմք խօսիլ, բայց միայն զզգայականէն, զորոյ զբնութիւն, զպատճառս, և զգործս զննութեամբ յառաջիկայդ:

## Յաղագս բնութեան սիրոյ:

Սէրն ի բազմաց բազմօրինակ սահմանին: Ի պլատոնեանց ասի, Ցանկութիւն գեղեցկի, կամ յորում սրտի ի գեղեցկին: Այլ այս սահմանս պատկան երկոքեամբք. Մի՝ զի չիտէ զերկուս կիրս, զսէր և զցանկութիւն: Եւ երկրորդ, զի է թերատ. վասն զի սէրն է առ ամ բարի. իսկ գեղեցկին երբեմն լինիլ միայն առեսական ինչ բարւոյ: քանզի ամ գեղեցիկ է բարի. այլ ոչ ամ բարի է գեղեցիկ, զի ոչ առեմք զհասոց գեղեցիկ. այլ բարի: Այն զի գեղեցկին բազում անգամ ոչ երեւի լինիլ եղեր սիրոյ. այլ մանաւանդ կարի և հայծ. որով բարին յանկուցանէ ի սէր իւր: Զի գեղեցկութիւնն է իբր ծաղիկ, ձառագայթ, և ծաւալումն բարութեան, որ սիրի: Այլ զայսցանէ լիագոյն գրեսցուք ի ձառն զպատճառաց սիրոյ: Սմանք սահմանեն զսէրն,

զսկերն, Շարժուն բազկանաց, որով յարի միրդն ընդ
բարին, ոչ արարողական՝ այլ ախտաժական յար
մամբ: Բայց այս սահման երևի հակառակիլ
յեզերան: զի շարժիլ առ բարին, և յարիլ ընդ
նոյն, երևին միմեանց հակառակ. զի ոչ շարժ
մամբ առ բարին, այլ յաւէտ հանգստեամբ՝ի
բարւոյ լինին յարուածն կամայ՝ի բարին: Ապա
լաւագոյն թուի քան զայլս սահման սոքին թուի
մալն, զոր ասէ: Սէրն է հաճութիւն բազկալուծ,
կամ բարւոյ:

Օ այս պատուական սահման մեկնէ ոչն Թով
մաս՝ եպեաք Թէ կիրքն է գործ արարողի՝ի *ա. է. կո.
կրօնն: Ապա զոր օրինակ առնօղն բնական կրկ ինչ. պ. է:
նակի փոփոխէ զկրօնն. նախ տալով զառաջ,
որ է սկիզբն շարժման. երկրորդ միջնորդու
Թիւն առաքի տպաւորելով զշարժուածն: ոչ որ
արտադրէն զքար, տայ նմա նախ զծանրուԹիւն,
երկրորդ միջնորդութիւն ծանրութիւնն զշարժուածն
՝ի կեդրոն. ուրնպէս (ասէ) բազկալուին գայ բազ
կանաց նախ պէտպէտանութիւնն ինչ առ այն, որ է հա
ճութիւնն ինչ ընդ բազկալուին. յորմէ պիտի գայ շար
ժուն առ բազկալուին. ի բազկողական շարժուն ընդա
նուր գործէ. ոչ ասի չերբէ գերբ հոգոյ: Քանզի
բազկալուին շարժէ զբազկանս. առանձինն՝ի նմա ըստ
երայ ինչ պյօժարութիւն: (այլ և տպաւորելով՝ի
նմին կրկ բերան ինչ ծանրուչ, և անբռուն յօժա
րեցուցիչ բազմանաց՝ի բարին:) և բազկանդն
դիմէ՝ի սպանաւ զբազկալուին երօք, ոչ զի անդ լինիլ
վանճանի շարժման, որ ելեալ ոչինչն: Հապա առաջին
գոգոհութիւնն բազկանաց՝ի բազկալուին, (այլ բաղա
դանութիւնն այն, որով բարին բազձալի փոփո
խէ զբազձանս՝ զայն ինքեան ոչ սիրականեալ, և
յինքն գրաւեալ և յօժարեցուցեալ, տպաւո
րութիւն այլաբանեալ ինչ բերելն և ծանրութ,
որ սկիզբն է՝ի նոա գիմելոյ.) կուի ասէ. որ ոչ
այլ ինչ է, քայց էրէ հաճութիւնն ընդ բազկալուին:
Զայսմ հաճութիւնն պիտի գայ շարժուն՝ի բազկալուին, որ
է ցանկութիւնն. և հոսուն յնոյն հանգիստ, որ է սուա
քութիւնն:

Ասէ

Ասացեալ. Հաճութեան ոչ այլ ինչ թուի լինել, բայց եթէ սկզբնաւորութեան ինչ սիրոյ, և նախաձաշակ. և իբր արշալոյս: Ապա ոչ բարեաց սահմանն սէրն հաճութեան, ոյք եթէ զսիրոն սահմաներ արշալոյս, և զպատուէն, ծայրիկ: Պատասխանեմ. հաճութեանն է նոյն իսկ սէրն. այլ մնացեալ կրկնակի, մի իբր նոր, տկար, և սհաս, որ դեռ ոչ յատիչսակէ, այլ միայն 'ի հարևանցի շարժէ, և դրդէ զբաղձանս, և յայնժամ ոչ ասի տիրապետ սէր, այլ առաւել սկզբնաւորութեն սիրոյ. կամ սուկ հաճութիւն: երկրորդ մնացեալ իբր ալդէն զօրացեալ, հաստատուն, անյողդողդ, և ևշխեցօղ բաղձանաց. յորժամ բարին սէր 'ի հարևանցի միայն շարժէ, այլ հզօրագոյնս հակէ յինքն զբաղձանս, և յայնժամ ասի տիրապետ և կատարեալ սէրս սէր:

Երդ այս կատարեալ հաճութեն ընդ բարին, եթէ ևցէ ընտրութեբ, որով որոշիչ գատմամբ բարի ինչ 'ի բազմաց զատանի ուրոյն՝ դիմել ախորժակին առ այն, ասի սիրելութիւն: Իսկ եթէ ասակապես ևցէ 'ի սաստիկ ստացողութեն բարւոյն յատիչսակողն զախորժակս, անուանի լրիւ սէր: Վայ այն ասէ դիոնեսիոս *, Ոմանց 'ի սէրց ապնուշագոյն լուծեցաս սէրդ անուան, քան սիրելութիւն: Իբր ոմն, ոյք գերեզմկի մեկնէ զերն թովմաս * . Հրաւիրեալ դիմէ մարդ առ այծ 'ի չէառն սիրոյ կրառարապէս՝ ըստ էրայ ինչ չգիտաս յայ, քան էրիք բանիւ առ ալիքն ասելով՝ ես վայ այն ապնուշագոյն է սէրն քան պսիրելութիւն. և վայ այն ապնուշագոյն է սէրն քան պսիրելութիւն: Ապա եթէ 'ի հաճութեբ վերայ գայցէ մեծ ինչ արժողութեն բարւոյն սիրեցեալոյ, ըստ որում որ սիրի է յարգի յոյժ, յայնժամ վերատաքրաւ կուգեմք սէր հիղճական: և վայ այն ումնէ ոտ պտեղն յատկապէս 'ի սէր ածայնոց. և սէ 'ի սէր մարմնաւոր բարեաց, վայ լինելոյ նոցս առնարգ: Իսկ եթէ այսպիսի հաճութիւնս ևցէ առանձն, որում իբրև մեզ կամիմք զբաղել, կոչի սէր բարեհամութեն. մանաւանդ յանդրադարձելն:

* Ք. գլ. յղիս ասածայնն, ոն. ոյք գերեզմկի մեկնէ զերն թովմաս:

* ա. Ք. կո. ին. ոյ. գ. ոտ ոտ Ք:

քանզի հաղիւ երբեք հնար է անձինն ուսեք հաճոյ լինիլ ինքեանմբ, և մեզ կամիլ նմա զբաղբի, եթէ ոչ փոփոխակի և նա մեզ կամիցի ըզբարի: Իսկ հաճութեն բարուցն՝ զոր անձինն կամիցէ՝ եթէ մերոյն, և եթէ օտարին, կոչի սէր ցանկութիւն. մանաւանդ յորժամ զայնպիսի բարին անձանց մերոց կամիցէ:

## Պատճառ Սիրոյ:

Առաջին և գլխաւոր պատճառ սիրոյ, որ և է պատճառ այլոց՝ է բարին: Քանզի սէրն է կնիքք ինչ բաղձանաց, և հաճութեն սիրոյն առ սիրեցեալն: Արդ յայտ է թէ միայն բարին է իսկական շարժիչ բաղձանաց, և թէ ոչ ինչ լինի հաճոյ, եթէ ոչ ըստ որում պատշաճող բաղձանաց, և ըստ որում բարի: Ապա թէ ասիցես, և գեղեցիկն է պատճառ սիրոյ, մանաւանդ ազդուագոյնն ի պատճառս նր: Պատասխանեմ ընդ այն թուիմայի, թէ գեղեցիկն պարունակի ըստ բարեաւ. մանաւանդ թէ նոյն է ըստ էրին ընդ նմա, և միայն տարբերի ի նոր մանէ բանիւ: Ասասի ոմն գեղեցիկն է բարի. մանաւանդ թէ առաւելութեն, ծաւալուն, ծաղիկ, և ճառագայթ բարութեն, ըստ պլատոնեանց, ասդնպէս է և ազդուագոյն պատճառ սիրոյ: Արդ զղանազանութեն բարուցն և գեղեցիկն քաջ ցուցանէ Եբեն Թուիմաս *, յաւելլն: Քանզի բարին է, որոմ ամենեքեան բաղձան, յերկնէ իջեալ բարուցն է՝ ըստ ի նմա հանգիցեն բաղձանք: Իսկ առ էութեն գեղեցիկն վերաբերի, զի պէտութիւ կամ ճանաչմանբ նր հանգիցեն բաղձանք: Ասպէ այնք զգայութիւք առաւելապէս հայկն ի գեղեցիկն, որք առաւել են ճանաչականք. այսինքն՝ պէտանելիք, և լսելիք՝ որբանեակք բանին. տանելի ասեմ՝ գեղեցիկ պէսէ, և գեղեցիկ ձայն: Իսկ ի զգալիս այլոց զգայութեց ոչ ի գործ ածեմ զգեղեցկութեն անուն. զի ոչ ասեմ՝ գեղեցիկ համ, կամ հոտ: Եթէ այսպէս ձայս է՝ թէ գեղեցիկն յաւելցու ի վերոյ բարոյն զկարգ ինչ առ ճանաչական զօրու-

* ա. է. կա. պ. ա. գ:

ԹՂԹ. «ՈՉ ԱՆ ԲԱՑԻ ԱՍԵԼ ԱՅՆՄ, ՈՐ ՊԱՐԶԱՊԱՆ ՀԱՃԱԿ Է ԽԱՂՅԱՆԱՑ. ԻՍԿ ԳԵՂԵՑԻԿ, ՈՐԱՑ ԸՄԲՌՆՈՒԱՆ Է ՀԱՃԱԿ: Յորմէ մանկաբերն, ԹԷ այնչափ գեղեցկապէսն են երեք, որչափ առաւել են ձանձրելի. և վասն ՚ի հոգեղէնս յոյժ գերազանց գեղեցկութեան պատճառ, քան ՚ի մարմնեղէնս:

Երկրորդ պատճառ սիրոյ է նմանութեան. ուստի ասէ յառակս, նմանն ընդ նման խնդայ: և սիրաբ. ժԳ. ասէ, ՀՀինայն կենդանի սիրէ զնմանն ինքեան: Բայց ըստ սեպն Թովմայի՝ կրկին է նմանութիւն: Առաջինն կայանայ յայն, զի երկուքին ունկցին զնոյն ներգործութեան, ոյք երկու մարդիկ են նմանք ՚ի մարդկութեան. և երկու սպիտակք ՚ի սպիտակութեան: Երկրորդն յայն, զի մին ունկցի ոչ սոսկ յընդունական, այլ ՚ի յայլ մարտական, և ՚ի յօժարական կարողութեան, զոր միւսն ունի ՚ի ներգործութեան: Քանզի կարողութիւնն ունի զնմանութեան ինչ առ իւր ներգործութեան, ոչ միայն ըստ որում է սկզբնաւորութեան ինչ նոր. և յայն դիմէ, և հակի. այլ և ըստ որում է համաչափ նմին: Ընդ ամ համաչափութիւն է սէր ինչ նմանութեան: Առաջին նմանութիւնն հիմունք զսէր բարեկամութեան. զի նմանն համարի իբրև մի ընդ իւրում սիրելոյ. և վասն այն ախորժակ նոր բազդատի և գիմել առ միւսն իբրև առ ինքն, յորում է բան բարեկամութեան: Ըստ բնապէս մարդ մարդոյ է բարեկամ, վասն բնական նմանութեան. և քաղաքացիքն քաղաքակցի վասն քաղաքական նմանութեան: Իսկ երկրորդ նմանութիւնն է պատճառ սիրոյ ցանկութեան. զի յոմէ որ է ՚ի կարօտութեան, դոյ բաղձանք առ իւր ներգործութիւնն, յորոյ ՚ի ըստացման բերկրի, եթէ զգայուն իցէ. և ձիս նաչաւոր: Բայց ըստ պատճառին առաջին նմանութիւնն պատճառէ զառաքինութեան, ըստ որում ՚ի ստացման բարւոյն մի նմանն խափանի երբեմն յիւրմէ նմանութեայ, վասն որոյ առեալ զնա երբեմն իւր ինասակար: Ըստ առակ է արիստոտէլի, Բրտաւոն ընդ բրտաւ նախանձի: Ըստ որում հա-

խաւսան լինի նա շահուն իւրոյ: Եւ յամբարշ
տաւանս միշտ է կապ. զի խոչ են միմեանց ի
գերազանցութենէ, զոր առանձինն կամին ունել:
Յոյսսոնիկ պատճառս սիրոյ երևին վերածել և
այլք, ոչ ընտանութենէ, համակրութենէ, ընկե-
րութենէ, և հաղորդութենէ ի բարի ինչ, և այլն:

## Գործք Սիրոյ:

Գործք սիրոյ, քանզի են անթիւք, զվեց մի-
այն յերևելեացն Թուէ ոքն Թուվանաս. ա-
ռաջինն է մխաւորութենէ. երկրորդն յարու-
երրորդն, ապշութենէ. չորրորդն, նախանձայու-
զութ. հինգերորդն, մեռանել սիրոյն. իսկ վեցե-
րորդն, ընդհանուր հոսումն ինչ յամի, որ ինչ
գործի ի սիրոյէն:

Ա խաւորութենէ է գործ սիրոյ սեռականն յոյժ,
մինչև ոչն դիմանեսիոս կոչէ զայն ըզօրութիւ:
և ոչն օգոստինոս * ասէ. Սէրն է իբր յօդ՝ զաղիա- * ը. յաղ-
պիւ երկուց. այսինքն սիրողին և սիրելոյն: Քայց երբ ղե. գլ. ծ:
քանզի ոչ ամենայն միաւորութենէ է գործ սի- * ա. ք. խա
րոյ. վասն այն նշանակէ սուրբն Թովմաս * . գլ. ա. ա.
Թէ՝ միաւորութիւն երբեմն բազդապիր առ սէրն: Զի ոմն իր. պ. ա.
է պատճառ սիրոյ. և սա է միաւորութիւն գոյացական ըստ առ է:
սիրոյն, որով ոք սիրէ զանձն. իսկ ըստ սիրոյն՝ որով ոք
սիրէ զայլս, է միաւորութիւն նմանութենէ: Եւ ոմն է էութի
նայն ինքն սէրն. և սա է միաւորութիւն ըստ բազկանութե
ախորժակաց. որ նմանի գոյացական միաւորութե, ըստ ո-
րում սիրօքն բազդապիր առ սիրելեալն, իսկը բնութիւ-
մութիւն՝ իբրև առ անձն իւր: Իսկ ի սէր ցանկութիւն իբրև
առ ինքն իւր: Իսկ ոմն միաւորութիւն է գործ սիրոյ. և սա է
միաւորութիւն իրական, զոր սիրօքն խնդրէն ունել ընդ սիրե
ցեալն: Զի ըստ փիլիսոփային՝ * արիւտոփանէս ասաց, * չերիւրդ
ընդ սիրոյդ ցանկան չերիւոյ լինիլ ի: Այլ չանկալի յայո- գիր. փա-
մանէ զինեալ գոյր ինչ երկոցունցն ևս ինչ միաւո- ղափան-
նել, խնդրէն զմիաւորութիւնն պատճառք ևս զիւրօք. ութիւն.
այսինքն է, զի կենդանակից լինէն, և խօսակից, և յոյզ գլ. ե:
այլակերս կցորդ:

Յարութիւն կրկնակիւ պատճառի ի սիրոյ: Նախ
ըստ ճանաչման, զոր որում սէրն ի նոր սեռեալ

պսակութեանն յամբառնումն սիրոյն։ Եւ փոփոխական նոյն սէր զնորհուրդ սիրոյն սեւեռէ՛ի սիրեցեալն. և այնպէս առնէ անթարթափ հայեցուք յառնել՛ի նա։ Երկրորդ ըստ ասոր ժակին, ըստ որում սիրեցեալն ժառանգէ զա խորժակ սիրոյն. և նեղքին հաճութիւն տալ՝ ուրի՛ն նմա, և զամ շարժմունս նր ապատնա՝ ուէ. ոչ նբր արտաքին զօրութիւն, այլ նեղքին յօժարութիւն. ուստի և սէրն ասի նեղքին. և փոփոխակի սիրոյն զամ ախորժակս իւր սեւեռաւ ուն՛ի սիրեցեալն. մինչև իրաւամբք ասել պղատոնի. հոգին առաւել է՝ որ սիրէ, քան որ հոգևորն։ Ա՛նուանդ զի սիրոյն բարեկամութիւն փոփոխ յորում այն կատարելագոյն լինի՝ ախորժական իմն նոյնութիւն, ըստ որում բարեկամն զբարեկամ համարի մի՛ ըստ ինքեան. և իբր միւս ինքն։

Օ՛գտակարութիւն պատճառէ սէրն ըստ ըմբռնման, և ըստ ախորժակին։ Ըստ ըմբռնման, ըստ որում տայ սիրոյն մտանգալ զանձն, և խորհիլ միայն զսիրեցեալն, և այնպէս բերել արտաքոյ իւր։ Իսկ ըստ ախորժակին ըստ որում սիրեցեալն այնպէս գնա՛մ փոյթ և զախորժակ սիրոյն յափշտակէ, մինչև թողուլ նմա զիւրան, և հոգալ միայն զսիրեցեալն, և այնպէս արտաքոյ իւր եւանել։

Ա՛խանձն պատճառի՛ սէրն սիրոյ, ըստ որում սէրն՛ի սաստկանալ իւրում, ոչ միայն բերի՛ սիրեցեալն, այլ և սաստկութիւն վանէ զնա՛մ ներ հակառակս նմա, և զդևմամարտս. յորում կայա նայ բան նախանձոյ։ Բայց յայսմիկ՝ սարքերն սէրն ցանկութիւն, ՛ի սիրոյ բարեկամութեան, զի սէրն ցանկութիւն վանէ զնեղհակառակս ոչ այնչափ սիրեցեալն, որչափ ժառանգութեան նր, զոր խնդրէ ունել. ոյ այլն՝ որոյ նախանձն հիմն՛ի սէր ցանկութիւն, ոչ այնպէս վանէ զոչ հաճոյս, և զնեղհակառակս կնոջն, ոյ զհակառակեալս եզական ժառանգման իւրոյ։ Բայց սէրն բարեկամութիւն նախանձու վանէ զհակա՝

ռա՝

Ասկեաւլս բարեկամին իւրոյ, և բարեաց նր, ի վերայ յարուցեալ ընտանակարգաց նր: Սակս առցոյ զբարեաց, զորս հնար է ծառանգել բազմաց, ունելով իւրաքանչիւրոցն լիով, որպիսի են ածային բարիք, ոչ գոյ նախանձ ցանկալ թե, այլ միայն բարեկամութիւն:

Ո ինսա սիրոյն պատճառէ սէրն, կամ ընկերանկանին իւրոյ, ի, ըստ մարմնական փոփոխութեանն, որ լինի յամ կերս, ըստ որում ի առատանալ իւրում, զսպիս՝ (յորոց վերայ աւելի քան զայլ կերս նշխէ սէրն,) կարի ինձ շարժէ, և ծանէ: Եւ կամ ըստ առաքինին ևս, յորժամ անկարող է, և յայնս յորի, ոչ վայելէն, և ոչ պատշաճին սիրոյն: Բայց թէ ուրիս լցէ, և յարիցէ ի չքնարիս բարին, ոչ ինսա, այլ առաւել կատարէ զսիրոյն: զի ոմն ասէ ոչն թովմաս, Սէրն նշանակէ զբաղադրութիւն ինչ բաղդատական զօրութեանն առ ինն բարի: Զի ոչինչ որ բաղադրի առ ինն պատշաճել ինչ կան, ընդ սի վասն այնր. այլ առաւել՝ ոչ հնար լոյ, զգիտ նոցա, և լաս ևս լինի. իսկ որ բաղադրի առ ինն ոչ պատշաճել ինչ կան՝ յայնմանէ ընդառ ևս յոռանայ: Մա նաւանդ զի սէրն է սկզբնաւոր սկսորժական և շարժմանց, վ ոյն եթէ չար լցէ, զամենեսեան գնոսա յարմատոյ և յակզբնէ իւրեանց ապականէ:

Վերջապէս, սէրն է պատճառ ամի որ գործի ի սիրոյն, ոչ միայն՝ զի ըստ դիտնականսն * . վ սիրոյ բարոյն ամ ինչ գործն՝ զսրինչ և գործն. կամ զի բարին սիրեցեալ ունի զբան վանճանի, որ շարժէ զառնօղն ի գործել. այլ և զի սէր է բաղձանաց, որոյ է մերձեցուցանել ի գործել. արմատ ամ սկսորժական, և կրից՝ որով չար ժի կենդանին. և քանզոր չարժիչ՝ առնողն մնիչ, գործադրապէս մերձեցուցիչ, և պատճէլի ազդօղ զօրութ. և հնարից և երկայնմտութեան ի նեղգործել:

* գլ. չ. յաչ կէս ամ ոչ ամանց:

Բոց յերևելեացս ասին գործոց սիրոյ, չորս ևս մերձաւորս ոտցս յաւելու ոչն թովմաս *, ոչք

* ա. ք. հ. ոչ. ե.

որք են Հալուածն, զմայլուածն, խանդակաթուլթիւն, և եռանդն: Հալուածն հակադրի սառուցմանն. զի սառուցեալքն են յինքեանս ալինդ, և չկարեն պիւրաւ մուտ տալ այլում: Իսկ առաքերն պահանջի, զի բաղձանքն յարմարեսցի առընդունելուածի բարւոյն սիրեցելոյ, ըստ որում սիրեցեալն ընդմուտանէ 'ի սիրօն, և Թափանցէ 'ի նա, և 'ի խորս տարրանայ: Ուսոյ սառուցուածն կամ պնոտուն որոյ է որամադրուածի հակառակ սիրոյ: Ա՛յլ հալուածն 'ի ներքս ածէ զկակղուն ինչ սրտի, որով տեղի տայ յինքեան 'ի մուտ սիրեցելոյն: Բայց եթէ սիրեցեալն լոյծ ներկայ, աչքն պատճառէ զմայլուածն, որ է ախորժական գրկածուածի առաջեալ բարւոյն. որով սիրօն իբրև թէ փարի ընդվաս, և տարփանօք թևառկէ: Ապա եթէ բարին սիրեցեալ հեռի լոյծ, պատճառէ զխանդակաթուածի. որ է Թախծագին լքուածն, և ապաժոյժ սրտի նուաղուածն և Թալկուածի: Ա՛յլ զի մի 'ի տառապանս յոյս Թմրել կացցէ սիրան, աչքն ափոփէ, զարԹուցանէ, իրախուսէ, և ձկտեցուցանէ զնա զջուածն, և այնպէս պատճառէ զեռանդն, որ է իբր տապացեալ սրտի ալեկոչեան: Եւ այնպէս լինի զգրգռուածն սիրոյ, որով սիրտն 'ի Թալկուածէ խանդակաթուածէ բոլորքի երթեւեն 'ի վառուածն, յարձակուածն, և յարձարձուածն եռանդան:

Որչափ յառաջս առեալուածէ են զոյգք, հնար է նմանել յառացեալոցս վսիրոյ: Բայց մի ինչ է աքանչելի. զի առեալուածին Թէպէտ օտար է 'ի սիրոյ, սակայն 'ի նմանէ յառաջ գայ՝ ծնանի և անանի: Քանզի աչքն է ծանրուածէ ինչ սրտի. սակս որոյ ոչ 'ի նոյն ծանրուածէ յառաջ գայ մատչուածն 'ի կէտրոն, և հեռացուածն 'ի կետէ որ կայ հանդէպ կէտրոնի, այնպէս 'ինոյն սիրոյ լինի՝ յօժարիլ սրտին 'ի բարին, և համաչափ, և բաղաձան, և համեմատ լինիլ նմա, և հաճիլ ընդ այն. և միանգամայն հակառակացն սիրեցեալ բարւոյն՝ լինիլ և սիրոյն հակա-

հառակ, և անհաճոյ, և դժպհղի, որ այն խակ
է ատելութեն:

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Յաղագս ցանկութենէ և ֆախսպէան:

ՅԱնկութեն և փախուստն են իբր թևք ինչ
սրտի, որովք բերի առ բարին բացա-
կայ, և ի չարէն տարտղեմ խուսափ և փախչի:
Վի ղի կենդանուցն պիտոյք և բարիք՝ արուաքոյ
իւր են, և չարիք ի վերայ յարձակիչն. յայն
սակս պատշաճ եղև նմա երկոքումբք սրբոք իբր
թևօք կամ ոտիւք կազմ լինիլ, առ խուսեալըզ
ի չարեաց, և սիրեալըզ գնեա բարեաց: Ա՛ր-
տասացութք ինչ զսոցանէ համառօտ:
Ցանկութեն ախտակս անուճամբք բացատրի.
զի առն փափ, էդյ, փենչ, և պարֆանփ, թէպէտ
այս անուանք միոքդ մի ընդարձակագոյն առեալ
լինին փոխանակ այլոց ախտից ցանկական
բաղձանաց, մանաւանդ փոխանակ սիրոյ: և՛ի
Նշանակելն զցանկութեն, ոմանք՝ ի սացանէ ոչ
սարզ, անմէղ, կամ զնարդ և նոցէ նշանակեն,
այլ վառեալ, անսանձ, և անչափաւոր, և ոչ
հնազ բանին, այլ խառնիչ և յափշտակիչ: Կոչի
երբեմն և փոփանփ. այլ այս առվօրապէս ամէն
ախտ ի նշանակել զանկարդ յարձակումն բաղ-
ձանաց՝ ի հեշտութեան շօշափականին. ոչ և ա-
դահութեն ոչ զսարզ, այլ վնոքեկան բաղ-
ձանս արծաթոյ ցուցանէ: Ասաի այսր ախտ
ժակի՝ հրաժարմամբ՝ ի կարդաւորութէ և յան
կարգութէ, սեռականան անունն է ցանկու-
թէ: Այդ ցանկութեն ասհմանի, շարժուն կամ ախտ
ձակ զգայական բաղձանաց գինեալ՝ ի բարին բացակայ.
կամ որով հնարաւոր ընինիմ ձեռնագործել բարոյ:
Ըստ որում ախորժակ, համաձայնի ըստ այլ կիրս.
նակ այլ մասունք զանազանեն զցանկութիւնն
յայլոց ախորժակաց ցանկական մասին: Ջի
սերն է ախորժակ որով հաճիմք ընդ բարին

եթէ ներկայ և եթէ բացակայ: Իսկ բերկրու-
թիւն լինի՝ ի վերայ ներկայ և ժառանգեալ բար
ւոյն: Բայց ցանկութիւն է սիրատենչ առ հե-
ռակայ բարին: Նաև այսոքիկ մասամբք տար-
բերի ցանկութենէն՝ ի կրից ցասումնական մասին.
մանաւանդ՝ ի յուսոյ. որում առաւել ազգա-
կից երևի, զի յոյսն ոչ է, զինչ և իցէ հեռա-
կայ բարւոյ վհետ պնտուելն, այլ այնմ որ դժուա
րահաս իցէ, և տաքժանաւոր. և ոչ զիարդ և
իցէ դիմէ յոյսն, այլ սրտապնտութեամբ ինն, և
ջանիւք, և մրցմամբ ընդդէմ դժուարութեց,
որք վհատեն զսիրտն: Բայց ցանկութիւն է լոկ
շարժումն և ախորժակ սրտի՝ ի բարին բացա-
յայտ՝ սոսկապէս ըստ որում բարի:

Սակայն լաւ ևս յայտնի լինի խնդութիւն ցան-
կութենէ, եթէ ածցուք զմտաւ, թէ այս ախոր
ժակ միջին է՝ ի մէջ սիրոյ և խնդութենէ. զսէրն
ունելով իբր սկիզբն, և զինդութիւն ունի զեզր:
Քանզի սէրն է ծանրութիւն ինչ սրտի, որ միտ
յուցանէ զինա հզօրապէս, և քաղցրութիւն՝ ի բա
րին, ուստի ունի՝ ի բնական կրա, եթէ՝ ի բաց
կորզեացին, և հեռացին՝ ի կեդրոնէ, ՝ի ծան-
րութիւն անտի նոյ ծնանի ձկտումն և շարժումն
առ դառնալոյ՝ ի կեդրոն, յոր՝ ի հասանելն, դա
դարէ այնպիսի շարժումն, և փոխանակէ զինա
դադարումն. այնպէս՝ ի սրտի եթէ բարին ա-
րեցեալ հեռի իցէ, ծնանի՝ ի սիրոյ շարժումն
այն կամ յարձակումն, որով յափշտակիմք՝ ի
բարին. զոր և խնացուցանէ ցանկութիւն ան-
ուն. իսկ՝ ի ստանալ բարւոյն, զայն շարժումն փո-
խանակէ դադարումն՝ ի բարին, որ է բերկ-
րութիւն:

Ցանկութիւնք քանզի են անթիւք, սեռօրէն բա
ժանին՝ ի բնականս, և յանբնականս: Բնական
ցանկութենէն է, որ ծագի՝ ի կարօտութենէ բնու-
թեանէ. և դիմէ՝ ի բարին բարձօղ այնր կարօտու-
թենէ. որպիսի է տենչ կերակրոյ և ըմպելւոյ,
և այլոց կարեաց բնութենէ: Անբնական ցան-
կութենէն է, որ ծագի ոչ՝ ի հարկէ բնութեան,

այլ

այլ՝ ի գաստիանէ բաղձացողին, և բերի առ այն, զոր բաղձացողն համարի ինքեան պատշաճ, արտաքոյ քան զպահանջեալն բնութեանէ, որպիսի են համադամ կերակուրք, մեծագին հանդերձք. արծաթ, պատիւ, և իրք վայելուչք: Բնական ցանկութեանն դիւրաւ լինանի. և գիմէ ոչ միայն առ հասնուածոյ ինչ, այլ և առ սակաւս, զի բնութեանն գոհ գնաքեօք չատանոյ. բայց ցանկութեանն անքնական է անյագ, և անհուն, և ըստ այնմ յիրաւի կոչի յոմանց առնայն, ոչ միայն զի գիմէ յանպէտ կրս, այլ և զի ոչինչ բարեօք գիտէ լինել յագեցեալ, և լինելիս: Ասա տէր լուսկրեսիոս զսիրտ տեսպացեալ այսպիսի ցանկութիւք յիրաւի կոչէ ծակոպ, վասն ոչ իւիք բարեօք լինանելոյ: Որոյ պատճառն է. զի յառաջ գոյ յիմանանէ բանին. արդ բանն յառաջանայ յանբաւս, ըստ որում՝ ի միոյ խոկմանէ Հանապազորդ հեռևողութեն լինչ ցանկութեց ազգասիսէ: Ի՝ իւս ևս պատճառ բերէ ընդ թուի մաս յայնմանէ, զի ցանկութեն բնական բերի միայն առ այնս, որք են միջոց սիսիսութեան բնութեն: Ապա քանզի ըստ այնմ բաղձացեալ լինին միջոցք, ըստ որում ածեն առ վախճան, յայն սակս ցանկութեն բնական ոչ բաղձայ ըստց յանհուն, այլ միայն որչափ լինչ պահանջէ հարկն բնական: Բայց բանն հարկ է կատարանել ինքեան վախճան՝ յայնս որոց բաղձայ, զոր օրինակ յինչս: Իսկ ևս զի վախճանն բաղձացեալ լինի ոչ ըստ չափու լինչ, այլ պատճառ հնար է. ցանկութեն հեռևսակ ըմբռնանանն բանին՝ բաղձայ իրաց առանց չափու, ոչ ուշ ընդունելոյ զինչ՝ որչափ հնար լիցէ: զոր իմաստնասէր Աստուածն եղոյց ուղղատես, յառեղն:

Ձ յԼ անոպի բաղձանօփ,
խոբեալ մարդկան առ բարձօփ.
Ու շատ առնն, ինչ լուանին,
որչափ ինչ առնիլ կամին:

Եւ նշանակէ անդ լեռ ապահք, որք ունին զար

ծանի

ծաղէ որպէս վախճան, և ոչ որպէս միջոց. խնայեն 'ի նա, իբրև 'ի արբազան ինչ. ասէ:

Ու պատուէր ընդ ընչս.
աճապարանօք անդ հնչէս.
Իբրև 'ի ձեռ ինչ խնայես,
կամ պների բժիշկաս տիրես:

Պատճառ յանկուածել և սէրն հանդերձ կարօտութ: Սէրն, զի (ոյք վերագոյն ասացաք,) 'ի նմանէ բղխէ սա իբրև յիւրմէ սկզբնէ, զոր օրէն նակ շարժուածն 'ի ներգործն՝ 'ի ծանրութէ: Իսկ կարօտութէնն, զի ոչ ամ սէր ծնանի ցանկութէ, այլ որ կարօտն է, և զսրկ 'ի սիրելեաւ բարւոյն: Բայց քանզի եգաք զկրկին ցանկութէ. զբնական և զանբնական: առաջինն ծնանի 'ի ձգմարիտ և 'ի բնական կարօտութէ, ըստ որում քնութէնն հետացեալ 'ի բարւոյ իւրմէ, ջ 'ի պատշաճ ատամնդրութէ. (ոյք յորժամ առաւծքան՝ առաւել ցամաքեալ և ջերմ լինիցի քան զարժանն բնաւոր որպիսութէ իւրոյ,) ծնանի զանձն լրացս պիտոյից առ վերագոյն յառաջինն կացութէիւն. յանդգոյն իբր բնաւոր շարժուածն. իսկ 'ի զգայուն, իբր կենդանական ախորժակ: Իսկ ցանկութէնն անբնական ծնանի 'ի կարօտութէ ըմբռնեցելոց դատմամբ բանի: ըստ որում՝ վը զի 'ի մարդն զգայական կարողութէիք կցորդութէ բանի վեմութէի լինչ ստանան, յայսմանէ բաղձանքն ըզ գայական ունի բերել առ նրա, ոչ միայն ըստ որում պատշաճին բնութէ, այլ և ըստ որում կարգին բանիւ: Ապա քանզի բանն՝ լինչ լինչ 'ի զգալեաց ասող ըմբռնէ ոյք բարի, որք ոչ են հարեւոր բնութէ. ոյք զմեծագին հանդերձս, զնկարս, զականս պատուական, զձոխութէիս, և այլն: կարօտութէ ասցա ըմբռնեալ՝ ծնանի զցանկութէն, և զայն այնչափ աստիճագոյն քան զբնականն, որչափ 'ի բարձրագոյն աղբերէ բղխէ:

'Ի գործոց յանկութէ. համարի են միաւորութէինն և ապշութէինն, ըստ որում յանկութէինն իբր

իբր ապաստարս սիրոյ՝ դիմէ 'ի միաւորութիւն սիրոցին ընդ սիրեցեալ բարւոյն, և զսիրօքն իբր արտաքոյ իւր յափշտակէ, 'ի բերել առ սիրեցեալն: Բայց են և ոմանք սմին սեպհականք, որպիսի է նախ Տաղտկութիւնն, որ է թախծութիւն 'ի յապաղմանէ ցանկացեալ բարւոյն, ձանձրանալով և յայնց, զորս ունի: Եւ և առատամութիւն, որ է կարի լինչ նեղացուցիչ հոգւ ցանկացելոյն: Հառաչանք, որք այնպէս յատուկ են այսմ ախորժակի, մինչ պրեթէ նոյնանշան լինիլ ընդ նմա. և են՝ փակեալ շնչոյ իբրև 'ի դուրս յարձակումն. և լինին ըստ որում 'ի ցանկութենէ բաղձանքն զշունչն 'ի ներքս ձգէ, զի ապա իբրև թէ նետեսցէ 'ի սիրեցեալն, զոր օրինակ նետաձիգն զլար ապեղան փքնաւն հանդերձ լինքն ձգէ, զի ապա ուժգինս վարեսցէ 'ի նպատակն: 'Ի դէպ է ընդ գործս, կամ ընդ յատկութես ցանկութենէ դառնալ և զայն ջան, որով նկրտի նշդն յարգելեալն, ըստ ովիդեանն առակի:

Զկիմ յաւէտ յորգելնալսն,
Ե անչհանամ առ պլացիալսն:

Եւ այն զի՝ բաղումանգամ 'ի դժուարութէ և 'ի յապաղմանէ բարւոյն առաւել ատատկանայ, և յոլովակի 'ի կարի լինն դիւրութէ իրացն, շկջանի: Որոյ պատճառն է, մի՝ զի առ արդեն լեալն ազատութենն, և 'ի գժուարինս յողնութենէն է ցանկալի յոյժ. զի երկոքինն սրբա վեմականք՝ առաւել ըղձալի գործեն զիրան, ընդ որս լծորդին, և այնպէս զցանկութենէն առաւելուն, և աստակապոյնս ձկուցուցանեն: Եւ երկրորդ բնութենէն ցանկութէ. զի այս աղիտակ ոչ այլ ինչ է, բայց էութէ ջանք առ բարին, կամ իբր փքին, որ ձգի 'ի բարին իբրև 'ի նպատակ, առնս որոյ ոչ գժուարին իրք մեծագոյն ջանս պահանջեն, և նետաձիգն առատ կապոյն ուժգնութէ արձակէ զփքինն 'ի նպատակ հեռաւոր քան 'ի մօտաւոր. ասյնոյ սիրոյն մեծագոյն ջանիւ և ձկտմամբ գիմի յայն բարիս.

ըլլա, զորս կամ արգելուման, կամ դժուարութեան թէն, և կամ յապաղուման իբրև թէ հեռացուցեալ է ի մէնջ:

Գիտուան յայտ է յաստուածոցս զչանկութիւն. վը այն ոչինչ է պիտոյ զննել յերկար: Զայս ի՞նչ ընդ սընդ Թումմայի ի դէպ է նշանակել, զի այս ախորժակ անչ ունի զսեպհական անուն, տակս որոյ այլաբանական, և առաստական անուամբ անուանեմք զախտապոլիմ խորհուրդս:

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ:

Յաղագս բերկրութեան, կամ խնդութեան, և պրպտութեան, կամ ցաւոց:

Յա երկու կերք են այլոց կրից աւարտ. ուրախ սէր և ատելութիւն, սկիզբն: զի ոմն ախորժակ սրտի մերոյ ծնանի ի սիրոյ բարւոյն, կամ յատելութենէ չարին, և գայ աւարտի ի բերկրութիւն, կամ ի ցաւ: Տակս որոյ ի միջ կրից են յարդիւ, և վը այն փոքր մի զգուշադոյն արժանի մեկնել:

Բերկրութիւն պէտպէս անուամբք բացատրի. քանզի ասի, խնդութիւն, ուրախութիւն, ցնծութիւնք, հրճուանք, հեշտութիւն, վըճտութիւն. և այլն: որոց ըստ սընդ Թումմայի այս է մեկնութիւն: զի բերկրութիւնն է բուն, և սեռական անուն այսր ախորժակի. այլ խնդութիւնն նշանակէ զայն, ըստ որում վերաբերի առ բանական մասն: Իսկ այլք գնին ի գործոց ինչ նմ: Զի ոմն ասէ ոչ վարդապետ * . ուրախութիւնն գնի չընդունչակելոյն ըզ սիրոն. և ցնծութիւնն ասի յարտաքին նշանաց ներգին բերկրութիւնն, որ է ներքին արտաքոյ. ըստ որում ներգին խնդութիւնն կայնմամբ զչեղանի արտաքս, հրճուանքն ասի ի տանաւարս ինչ նշանաց, կամ գործոց ուրախութիւն, տանաւանդ ի ծաղրս: Իսկ հեշտութիւնն, ըստ որում բերկրութիւնն է կարի խիտ համեմատ յօժարութիւնն, թէպէտ այս անուն յաշխահակի առեալ լինի ի վերայ մարմնական բերկրութեանց:

* ա. է. խ. ա. պ. գ. առ գ:

Յո-

Յաղագս բնութեանն, և բաժանման էներգութեանն:

Այս ախորժակ՝ ըստ որում հասարակ է կա-
մաց և զգայական բաղձանաց՝ սահմանի.
հանգիպ էազդանաց՝ ի բարին. կամ ՀՀ խորհակ պա-
ճառել չըմբռնմանէ քաղաքացիել բարւոյն: Իսկ ըստ
որում մասնաւորապէս ամփոփի առ զգայական
բաղձանս, ասի, Կիրք էղէալ՝ ի բաղձանս՝ ընդ-
հայտնի զգալի բարւոյն. կամ Հանգիպ՝ ի զգալի
բարին: Այս սահմանք յայտնի են յառաջելոցս.
Այլ զի ոչ՝ ի սկզբան բարւոյն ծնանի շարժումն
քինչ առ այն. եթէ ևցէ բացակայ. որ ասի ցան
դ-նի, զոյնպէս՝ ընդդէմ սկզբան ծնանի հանգիստ,
կամ հանդարտ խաղաղութեն քինչ բարիոք բաղ
ձանաց, յորժամ բարին ըմբռնի նոքա ներկայ:
Այդ զայն հանգիստ և խաղաղութեն՝ ի բար-
ւոյ ոչ է պարտ առնուլ առանց պակասաբար,
ոչ թէ կատարման քինչ յայմ շարժմանէ, այլ դէ
բաւական նոքա ախորժակ քինչ, կամ վոխխութեն
եղեալ՝ ի բաղձանս, ըստ որում, որ յառաջն տա-
րադրեալ՝ ի բարւոյն և նոքա արտաքոյ կեդրոնի
նորոյ եղեալ՝ զբռնութեն քինչ կրեր, ստացմամբ
բարւոյն և զուգաւորութեամբ ընդ այն բարիոք
կայ. և նոքա՝ ի բուն և՝ ի պերճեցիկ յիւր կայս
հաստատի: Ասէ արիստոտէլ* սահմանէ զայ
հեշտութեն. Շարժումն սրտի, և հոմանգամայն, և
զգալի հաճոյապատեհ՝ ի համաճաշակ նկարի բնութեան
նորոյ. առեալ զշարժումն՝ ոչ վոխանակ գիմո
ղութեն առ անդրադարձն քինչ եզը, ըստ որոյ հա
կադրի դադարման կամ հանգստեան, այլ փո
խանակ փոխխութեն քինչ եղելոյ՝ ի ստացմանէ
եզերն. որ փոխխութեն ոչ յաջորդական նոքա,
որպիսի է գնալ, խօսիլ. և այլն, այլ միան-
գամայն, որպիսի է տեսութեն, լսացութեն, և
այլն: Ասէ և զբան թուելոյս ասէ, թէ հեշ-
տութեն ոչ լինի՝ ի ժամանակի ըստ քինքեան,
այլ միայն ըստ պատահման, յայն ասէ զի ժա
ռանգաւոր բարւոյն, յորմէ պատճառի, կայս

նայ

* յաստա-
ջին գիրս
հոէպոր-
ոէ. գլ.
ժ:

նոյ ՚ի յաջորդութիւնէ, և իբր սման սման լինել
ընկալեալ:

Բներկրութեց ոմանք են լմանալի, և հոգևոր. որք մտօք և կամօք ըմբռնին, ոչ այն որ լինին ՚ի նկատմանն Ձլմարտութենէ: Իսկ ոմանք են զգալի, որք զգայութիւնք ըմբռնին, և աւելցայական բաղձանս վերաբերին. ոչ այն, որ լինին ՚ի կերակուրս, և յըմպելիս, և ՚ի տեսիլ գեղեցիկ իրաց: Առաջինքն են ըստ ինքեանց կատարեալգոյն վճռագոյն և առաւելագոյն. միք զի ըմբռնին յաղնութագոյն կարողութենէ, այս է ՚ի մտաց. որ գեր ՚ի վերոյ է քան զզգայական կարողութիւնս. որոյ նշանն է, զի ոչ ասէ ոքեն օգուտանիցես, չիք ոք, որ ոչ առաւել կամիցի ՚ի մարմնաւոր տեսութենէ լինել զուրկ, քան թէ ՚ի մտաց, ըստ անբաժանից և անմտաց: Երկրորդքն են յաղնութագոյն բարւոյ. զի հոգևոր բարին վսեմագոյն է քան զզգալիս, որոյ նշանն է. զի վասն հոգևոր բարւոյ ժուժկալեն մարդիկ ՚ի մեծամեծ հեշտութենէ մարմնոյ. որպէս վասն պատուոյ, և առաքինութենէ: Եւ երրորդ, զի հոգևոր բարիք կատարելագոյն, և հաստատագոյն ստացեալ լինին քան զզգալիս. և վասն զի ստացուածք բարւոյն է պատճառ բերկրութեան, մեծագոյն ևս բերկրութիւնք պատճառեն: Բայց մարմնաւոր բերկրութիւնք ՚ի մարդիկ աստահագոյն են վասն երից. ոչ նշանակէ սքեն թուիմաս * . Մի՝ զի զգալիք ՚ի մեր իղմանէ են առաւել յայտնիք քան զիմանալին. Երկրորդ զի են ՚ի մէջ զգայականաց բաղձանաց, և վասն այն լինին մարմնական ինձ քան զհոգևորսն, որ ոչ հանդիպի ՚ի հոգևոր բերկրութիւնս, քայց երբէք զեղմամբ ինձ ՚ի վերին բաղձանաց ՚ի պատրինն: Երրորդ, զի մարմնական բերկրութիւնք բաղձանս ընծաւ լինին, երբեմն դէպ ինչ ընդդէմ մարմնական պատճառելոյ կամ վնասու, որոյ զհնար գան պրպտելիք: Ասատի կրկնակի բերկրեցուցանեն, վասն բարւոյն, զոր բերեն, և ևս առաւել վասն չարելոյն զոր բառնան: Մանաւանդ զի՝ ոչ ասէ ոքեն օգուտ գիրս ինչ տնիցես *, ամ ոք առաւել խորհի ՚ի ցաւոց, քան

* ՚ի լիք. բառնան

* ա. է. կա. լու. պ. է:

քաղձայ հեշտութիւնք • և վն այն զգալի հեշտութիւնք չերմագոյն լինդրին, առ փարատելոյ նոցա զարտմութիւնն, որով դրեթէ հանապազ նեղիմարդ առաւ և անուխ։ Այլ զի են, որք անձկագնօք խնդրին, և մեծապէս բերկրեցուցանեն, յորս ոչ երևի լինչ քարւն, քայց զի բառնան զարտմութիւնն որ յաշխատութիւնէ • ոչ դատարկութիւնն, խաղ, և այլ այսպիսիք վերաբերեալք առ հանգիստ։

Բերկրութիւնն զգալի, հանգոյն ցանկութիւնք, բաժանի գործեալ ի բնական • և յոչ բնական • համ ըստ արհեստողին * յայն որ առանց քանի, * ա. հոգ պորութիւն. և յայն որ քանիւ։ գլ. ժա։

Բնական և առանց քանի բերկրութիւնն է, որ ապատճառ յըմբռնմանէ բարւոյ առակ բնականին, որ և զգայութիւն ըմբռնի իբր բարի, առակաւս վն յարմարելոյ բնութիւնն • որպիսի է, որ լինի ի կերակուրս և յըմպելիս։ և այս առանց քանիոյ պատշաճի, ևս ըստ նրոց լինչ վճռապոյն քան զոր ի մարդ։ Իսկ բերկրութիւնն ոչ բնական, այլ բարձրագոյն քան զբնական, որ և հանգերձ քանիւ, այն է, որ ապատճառ յըմբռնմանէ զգալի բարւոյ, որ ըմբռնի՝ ոչ առակ վն յարմարելոյ բնութիւն, այլ՝ ոչ ասէ արհեստողէ, վասն յորդորանոյ քանին • այ, վն զի հանճարոյն է քանիւն, և զգայութիւնն լիութապէս հաղորդելոյ քանին ի մարդ։ Ա յսպիսի է բերկրութիւնն, զոր զգամք ևս ի զգայական քաղձանս՝ ի ստացմանէ պատուոյ, համբաւոյ, յաղթութիւնք, ձոխութիւնք, և այլ այսպիսի է քայ, զորս մարդիկ միայն ի մէջ կենդանեաց խնդրեն, և սիրեն։

## Պատճառք բերկրութեանն։

Առաջին և ընդհանրագոյն պատճառ բերկրութեանն է փոփոխութիւնն • մի՝ զի ամ՛ բերկրութիւնք ծագի ի գործողութենէ լինչ, գէթ ի ստացմանէ բարւոյն, և ի ձանձրանալոյն նր իբր նեղ-

կայ : Եւ երկրդ՝ զի ինքն իսկ գործոլութիւնն ե բարի ինչ · և առ վայելուչ, և մտադիւրապոյն լինելոյ, հրապուրանօք հեշտութիւնն համեմի ՚ի քնութիւնէ · ոչ երևի մանաւանդ ՚ի գործոլութիւնս, որք վերաբերին առ պահպանութիւն անհատի, և առ սերունդ տեսակի, զորս՝ առ յոժարամիտ լինելոյ կենդանւոյն ՚ի կատարել, համեմիւք հեշտութիւնն ամոքեաց արարչապետն քնութիւնէ : Բայց քանզի գործոլութիւնն ցայնվայր բերկրեցուցանէ, ցորչափ հասանելի է կարողութիւնէ արարողին, վն այն եթէ անցցէ ըստ չափ, լինի տարժանաւոր, և առաւելեցուցանէ, նմին իրի ոչ ևս բերկրեցուցանէ, այլ տանջէ :

Երկրդ պատճառ բերկրութիւնէ վոխոխութիւն · զի ըստ առաւելին, փաղցր է պէսպէսութիւնքն : Ընդ որ սքանչացեալ օգոստինոսի * ասէ · զի՞ է ցր, զի որ ցնծութիւնքն ես ոյ յաւիտեան, և որ զի՞նչ ՚ի ցնծան, այլ սպրդեալ արարածս ընդ փոփոխ ելևէնս, ընդ խռովութիւնքն և հակառակութիւնքն պոճարճանան : Ջպատճառ ևս սորա աւանդէ նըն Թովմաս · Մի՛ զի քնութիւնն մեր է փոփոխական, և վն այն սիրէ զփոփոխութիւնէ, իբրև համաբնական ինչ իւր : Երկրդ՝ զի բերկրութիւնն լինի ՚ի միջատահման, և ոչ ՚ի չափալանց ներգործութիւնէ բերկրելոյն · վն որոյ յորժամ հանապազորդեալ ներկայութիւնն նր սկսանի անցանել ըստ չափ քնական բաղձալանութենէ, լինի ծանրաբեռն, և ձանձրալի · և վն այն բարձուսն նր եկաւորութիւնք ներհականին՝ լինի զոճարճալի : Երրորդ, զի մարդն ցանկայ ձանաչել զնմ · և քանզի են իրք ինչ զոր ոչ է հնար ըմբռնել բովանդակ միանգամայն, զոճարճալի է յայնս փոփոխութիւնն, զի միոյն անցցէ, և միւսն գհետ գայցէ, և այնպէս բովանդակ զգայցի : Եւ թէ կարի լինի յամեցէ առաջինն, լինի տաղտկալի, ըստ որում յապաղէ զերկրդին ձանաչութիւնն : Ասաի

* Ե· գիրք խոսպովանութ գլ· ժ:

* աստ օգոստինոս * : Ու խոհ՝ վանկին ճառ, այլ անցանել· զի այլ ինչ գայցէ, և զնմ ըմբռնէ :

Ընդ և ընդ պատճառ բերկրութեանն են . Յայս հանդերձեալ բարւոյն , և Յիշատակ անցեալ ցոյն : Քանզի , որովհետև բերկրութեանն ծագիւ ի՛ն ներկայութենէ բարւոյն . երկոքին սոքա զբաղելին բացակայ , ըստ նրաց լինչ ներկայ գործեն մտայ : զի յիշատակաւ զանցեալն նրօք՝ յուշ ածեմք , և մեզ յանդիման առնեմք . իսկ յուսով զառհասատչեայ լինչ ժառանգութենէ հանդերձեալ բարւոյն ձաշակեմք , ըստ որում զբաղատացուցն նր զդամք ընդ մերով լինիլ իշխանութիւ :

Զայլ թէ զնարդ և ի յիշատակել զանցեալ ջարհան , լինի բերկրութենէ . ըստ այնմ՝ ղոր ասէ հոմերոս .

Քանզի ենդնդմ տնշապալեալ՝
զնդեալ վարպոյս , և պգործեալ :

Պատասխանեն արիստոտէլ * . թէ այդ լինի , * ա. հաւ
զի զի տաքժանաւոր վասակք թոյլուն յետ փորձէ.
իւրեանց համեստ լինչ , և բարի . որոյ յանդիման գլ ծա:
լեալ մտաց՝ ի՛ յիշատակել զանցեալ վնշոյն՝ բերկրեցուցանէ : Եւ ևս զի մեծամեծ ձգանց տանիլ , և ընդ վնշոյս անցանել , է ազգ լինչ յաղթութենէ , մասն երջանկութենէ , և գործ՝ որ առնէ սքանչելի : Ապա քանզի յաղթութենէն , երջանկութենէն , և այն լինչ որով լինիմք սքանչելի , մեծապէս բերկրեցուցանեն զսիրտ , վասն այն ի՛ խորհիլն զանցեալ ձգուձս , և զպարտեալ վնշոյս , մեծապէս բերկրիմք :

Բայց զարմանք մեծ այս են , զի ոչ միայն յիշատակ ցաւոց , այլ և նոյն իսկ ցաւն , տուգն , և արտասուքն , զոր հեղումք վն հեւն լինելոյ սիրեցելոյն , են պատճառք բերկրութենէ : Եւ արդարև զսգոյ և զարտասուաց ի՛ դէպ է ասել , թէ պատճառեն զբերկրութենէ , ըստ որում մեղմեն և թեթևացուցանեն զդառնութենէ ցաւոց , արտաքս թափեալ զոյն , և իբրև ի՛ դուրս վազնեալ . ուստի ասէ ովիդիոս :

Ես որ կանանաց ոգեայ ,
Ի ընդ լալիս դիւրանայ ,

զի հարկանի յարտասուս,
և ընդունէ զայս ՚ի դուրս:

Բայց միւս ևս պատճառ բերել ՚ի սէրն Թովմայէ, և յարիստոտէլէ, եթէ զի այս ամ արծարծէ զմիջատակ և զխոհուն սիրեցեալն: Վա՛ որոյ ոչ ասէ արիստոտէլ* . Թէպէտ վէրք է այն, պի ոչ մօտ ունի զսիրելին, քայց աւրպի տիւր է այն, զի չիւնէ և ըսպ երայ ինչ պետանի զնա, և զինչ ևս գործէր, և զիարդ սէր:

* Ա. հոռ. տրտմելոց գլ. ժա:

Հինգերորդ պատճառ բերկրութեն է նմանութեն, զի նմանն ընդ նման ինդայ: և ըստ յունաց առակի, գաղանն զգաղան ճանաչէ, և հաւն սէրմա նափաղ զսէրմանափաղ: Քանզի նմանութիւն է միութեն ինչ. և այսպէս բարին ընդ բարւոյ միացեալ առաւելու գնա, յորմէ զհետ գայ բերկրութիւն: Քայց քանզի ըստ պատահման ՚ի գալ նմանութեն՝ առանձինն բարին կարէ խանգարիլ ոչ յորժամ բրուա բրուի՚ն շահ վաստակայ լինի նի խափան, յայսմանէ երբեմն նմանն զնմանն ատէ:

Վասն զի մի գնամն գրեացուք մի ըստ միոջէ, ըստ պատճառս բերկրութեն հասանելն և զարմացութեն, ըստ որոյ ճանաչողութիւն ինչ նորանշան իբր բերէ ըստ իւր: և առաւել քան զնոյն խոստանայ՝ զի այն սահմանագիտութիւն և զարմանալորք՝ են գրոնարձակել, ոչ և ոչ մի կերպարանել երևոյթք երաց. և ոչ որոց չեն յինքեանս բերկրութիւն: Քանզի ասէ ոչն Թովմաս: Զուարճանայ աչք՝ ի նա միայ բաղդատելիք, զի բաղդատել զմի ընդ միւսն ոչպիսին և համբնական գործ բանին: Իբ և ևս առաւաձեռնութեն, որով երևի մարդ՝ բազմանալ բարեաց ոչնակ: Ա՛յլ և բարկութեն, որ ըստ հոմերոսի, փողոց է փան վէրք ծորեալ. զի յուսացուցանէ առնուլ զվրէժ, որ ի զոհ ար ձակի: Իբր զի՝ ըստ սէրն Թովմայի, երևի՚ ի քոյ փերձել յանչնէ պապիկորութիւն ոյոյ՝ որ յանոչեալ ընա ուէնն: Զի ընաւելն յայտէ, նովին երևի պապիկոր փան գնա, և՝ զի այն բաղձայ գոյն պապիկորութիւն: անձ ՚ի քոյ փերձեն գոհարբինա ընաւոան: Այնպէս ոչ

ընե,

ընէ, գովէ. և ձեռնէ, պատճառեն զբերկրութիւն; ըստ որում են նշանակք բարւոյ եղելոյ ի մէջ, մանաւանդ յորժամ լինին յիմաստոց: Ակն և յաղիել, ներամիել, և ատել այլոց, են զուարճալի, ոչ ըստ որում հաստատանեն այլոց չարիս. այլ ըստ որում վերաբերին առ սիրական բարին, զոր աւելի սիրէ մարդ, քան զնատիանն լինել այլոց չարն: Գանգի յալթելն է բերկրալի, վի առաւելոյն նուաւ զվարկ գերազանցութիւն անձին: Վի այսորիկ և ծամ խաղք, յորս է մաքառումն ինչ, և հնար է 'ինն յալթականն լինել. են առաւել բերկրական: Խակ կշտամբել և ատատել են պատճառ բերկրութիւն, մի զի սովաւ բարերարէ մարդ այլում, որ է զուարճալի. և եկիր զի սովաւ երևի մարդ յանձն իւր խմաստուն, և գերազանց: քանզի ատատել և խրատել է խմաստնոց, և աւագաց:

## Գործք բերկրութիւն:

Գործք բերկրութիւն են նախ ընդարձակութիւն, և այն կրկին: Մ՚ին խոհականէս առեալ. ըստ որում 'ի ինդութիւն սիրան երևի պարզիլ, և տարածանիլ. և ապաժոյժ ոգիք յորդութիւն 'ի դուրս զեղանին, իբրև թէ ընդ առաջ եղեալ քարւոյն. երբեմն այնչափ յաճախութիւն, մինչ ամենևին խակ լքանել զսիրտն, և այնոյ նուաւ ղութիւն և մահ 'ի վերայ հասուցանել: Վի այսորիկ լսելիք՝ բազմաց 'ի կարի խնդն և յանակնկալ ինդութէ փչել զոգի: Մ՚ինէ ասիցէ ոք՝ այսմ մինոյն պատճառիլ ոչ 'ի լքանելոյ ոգւոյ ընդ սիրան, այլ զի կարի խիտ ընդարձակեն զթոքան, և յորդ ճապաղիք արեան մղձկեն զսիրտն: և այնպէս նուաճութիւն յորդելոյ ընչման, և քան բան զօրութէն, իբր խարխափմամբ երկիւղած ապխոյս կենդանութէ, 'ի վր հատանէ նուաղութիւն, և մահ: Խակ միւս ընդարձակութիւնն է նմանութէ, ըստ որում յուրախութէ, ըմբռնումն՝ 'ի հատու լինելոյ պատշաճական բաց

ւայն, ստանայ զկատարելութիւն ինչ, որ է հո-
գևոր լինն մեծութիւն, և ախորժակն ուժ՝ ի ըն-
դունել զբարին լիով, երևի տարածանիլ:

Անկիդ գործ բերկրութիւն է պատճառել զծա
րաւ և զցանկութիւն իւր, ոչ միայն յորժամ է
բացակայ, և յուշ ածի, այլ և յորժամ ակա
նի ոչ ունել, և չև է ընկալեալ կատարելայն,
զի յայնժամ ճաշակ նր սրէ զցանկութիւն առ
կշտասկինդ վայելելոյ զնա: Ա՛յլ իբրև ցյապ
ենին վայելեալ, պատճառէ զձանձրութիւն, և
զտաղտկութիւն. ոչ յայտ է՝ի բերկրութիւն կե-
րակրոց, և այլոց զգալեաց. յորս միայն ունկ
զտեղի այս սեռ ձանձրութիւն. զի զհոգևոր բեր կ
րութիւնս որչափ ոչ լիով ընդունի, այնչափ ջեր
մեռանդն փափաքի:

Անդիդ գործ զգալի բերկրութիւն է խափանել
զկերատուութիւն բանին. կամ գլխովին ընկղմե-
լով, եթէ բերկրութիւնն մեծ ևցէ յոյժ, և զնա
ուշ մոռաց լինքն յափշտակիցէ. կամ եթէ ևս
միաւոր ևցէ, կարի լինն ցնդեալով: (Զի բերկ-
րութիւն՝ ուղ գեղեցիկ գրէ մարսիլիոս, և խոյժ
և կարի ոգւոյ, որոց Թողէ զայլ գործս՝ խուռն
յարձակին յըմբռնել զնա.) և կամ զկորուսա
նի գործնական դատմանն մեղկեալով: Ոսասի
արխատոտել* ասէ. Բերկրութիւն հանգարչ զհոգա-
բանի խոհեմութիւն:

* Ե. գիրք բարոյակ. գլ. է:

Ողորմդ գործ բերկրութիւն է, կատարելագոր
ծել զնր զբարի գործոցն, որով ըմբռնի: Քան-
զի և ինքն է բարի ինչ. և վ՛ն այն յաւելեալ՝ի
բարին գործոցն, առաւելուս զնա, վայել
ջացուցանէ, ամրաք, և կատարելագործէ: Եւ
ևս առաւել զի յանկուցանէ զուշ, զդիտաւո-
րութիւն, և զջանս զօրութիւն արարողին, զի է համեմ
ինչ, որ առնէ զգործոցն անուշակ, սիրելի,
բաղձալի: և իբր խայծ ինչ է ոգւոց: Վ՛ն այսո
րիկ ընութիւն իմաստուն՝ի կարևոր գործոցնս
հարստահրեր ձեռամբ խառնեաց զհեշտութիւն, զի
մտադիւրագոյն, զգուշագոյն, վայելչագոյն,
ջերմագոյն, և աղդողագոյն կատարեսցին:

Յաղագս փրփռուելոյ, և դէղոյ նը։

Որոմուելոյ, զորմէ գեղեցկիկ գրեաց հինգ
րնդրօք սրբն Թովմաս *. կամեցեալ մեր * ա. Ը։
խօսիլ լինչ համառօտ։ Յայտ է նը բնուն, սպատ
ձառք, և գործք՝ յատացեալոցս զբերկրուելոյէ։
Քանզի սահմանի, դպտրուածն բաղխանաց ի լոյն.
դադարումն ոչ խնդալոյ, և համաձայն բաղձա-
նաց, այլ հակառակ և տարաձայն։ Կամ այս-
պէս. կէսէ պատճառաւ չըմբռնմանէ ներկայ լորի։
Որդ պատճառի ի ներհակացն պատճառ բերկ
րուելոյ. և ըհանրապէս յայտ չարէ ի վր հասելոյ, և
ըմբռնելոյ իբր չար։ Իսկ գործք նը են. նախ,
անձկացուցանել, կծկել, և վհատեցուցանել
զսիրտ, ոմն բերկրուելոյն ընդարձակել և քա-
ջալերել։ Երկրդ գործողուելոյն սկարացու-
ցանել. ոմն բերկրուելոյն զօրացուցանել։ Երրդ
քան զայլ կիրս մնասել մարմնոյ և կենաց. զի
ոմն գեղեցիկ նշանակէ եբն Թովմաս, խափանել
զսիրտն առ'ի չհեղլոյ համարձակ զշարժուելն և
զկենդանութի յայլ անդամս, և այնպէս իբրև
թէ խցանել զալբիւրն կենաց, կծկելով զնա.
և աւելի քան զայլ կիրս նեղելով։ Բայց եթէ
չափաւոր լցէ, օգտէ կենաց, զի զոգիս ի ներքս
արգելու. և իբր հեղուսէ։ Վ՚ այսորիկ ասէ
առաքեալն * . որ ըսպ այն փրփռուելի է, դէղուելի. * Ե.Կոր.Ը։

Եւ աչխարհի փրփռուելի վնաս գործէ։

Որոմուելոյն անչափաւոր, քանզի է ախտ լինչ
հոգւոյ, որն Թովմաս նշանակէ դեղս լինչ սո-
րա, և հնարս փարատելոյ. յորս առաջինն է
վինչ և լցէ բերկրուելոյն, որ քաղցրուելոյէ իւ-
րով իբր բաւականաւոր իմն զվէրս վարակեալ
ցաւոյ գործէ, կամ գէթ դիւրէ ցաւոյն. և
պատճանել սիրտս սփոփէ, իբր հանգիստ՝ վան
դամն լուծեալս յաչխատուելոյէ։

Երկրդ, և առաւել հաճարնական հնար են
քաղիք, հեծուելոյն, հառաչանք, ողբք, և այլ
արտաքին նշանք որոմուելոյէ։ Զի սոքօք թե-

ԹԻԱՆԱՅ ԱՒՐԱՆ, ԵՒ ԻՐՔ ԴԱՏԱՐԿԱՆԱՅ. ԵՒ ԱՐՔ ՏԱՔԱ ԼԱՒԱԼ ՄԱՆ ԻՆՉ Ի ԴԱՒՆՈՒԼԵՔ ՏՐՄՈՒԼԵՔ. ԵՒ ՈՒՐԱ ՀՈԳԱՒՈՅՆ Ի ՁԳԱՅՈՒԼԵՔ ՆԵՐՔԻՆ ՅԱՌԱՋԱԳՈՅ ԳԱՒՆԱՅ ՅԱՐՏԱՔԻՆ ՅԱՅՆ ՆՇԱՆԱՅՆ, ԵՒ ԱՐԱՒ ԴԻՒՐ ԳԱՏԱՆԵ ՅԱՅՍ ԳՈՐԾ ՀԱՄԱՐՁԱԿԱՆ. ԶԻ ԶԻՆԵՑ ԱՅՆՊԷՍ ԲՆԱԿԱՆ ԼՑԵ ՅԱՒԱԾԻՆ, ՈՅԼ ԼԱԼ: ԱՐԴ ԱՄ ԳՈՐԾ ՀԱՄԱՐՁԱԿԱՆ ԲԵՐԿՐԵՑՈՒՑԱՆԵ:

ԱՐԴՆ Է ԿԱՐԵԿՑՈՒԼԵՆ ԲԱՐԵԿԱՄԱՑ. ՈՐ ՎԱՐԱՏԵ ԶՅԱՒ: ՄԻ՝ ԶԻ Է ՔԱՀ ՆՇԱՆ ԱՒՐՈՅ ՆՑ. ԼԱԿ ՆՇԱՆՔ ԱՒՐՈՅ, ԹԷՊԵՏ ՄԻՇԱ ԲԵՐԿՐԵՑՈՒՑԱՆԷՆ, ԲԱՅՑ ԱՌԱՒԵԼ ԼԱՒ ՅՈՐԺԱՄ Ի ՎԻՇՏԱ ԼԻՆԻՄՔ. ԶԻ ՅԱՅՆԺԱՄ ԱՌԱՒԵԼ ԱՊԵՍ ՈՒՆԻՄՔ ՅԱՐՑՈՑ ՕԳՆՈՒԼԵՆ: ԵՒ ԵՐԿՈՒՔ, ԶԻ ԱՒՐԱ ՆԵՂԵԱԼ Ի ԾԱՆՐՈՒԷ ՅԱՒՈՑ, ԹԵԹԼԱՆԱՅ ՅՈՐԺԱՄ ՅԱՂՔ ԿԱՐԵԿՑՈՒԼԵՔ ԿՑՈՒԴԻՆ ՆՄԱ, ԱՌ ԲԱՒՆԱԼՈՅ ԸՂ ԲԵՒՆ ՅԱՒՈՑ ԸՆԴ ՆՄԱ:

ՀՐԴԵՀ ՀՆԱՐ, ՈՐ ԽՄԱԱՆՈՑ ՄԻԱՅՆ, Է ԽՈՒՀԱՒՆ ՀՄԱՐՏՈՒԵ. ՈՐՈՎ ՄԵՂՄԱՆԱՅ ՅԱՒՆ. ՈՉ ՄԻԱՅՆ՝ ԶԻ ԱՅՆՈՒՀԻԿ ՈՒՐԱ ՄԱՑԱՑ Ի ՁԳԱՅՈՒԼԵՔ ՅԱՒՈՑ Ի ԲԱՑ ԳԱՒՆԱՅ. ԵՒ ԱՒՐԱՆ՝ ԱՌ ՋՆՆԿՁԵԼՈՅ Ի ՀԱՐԵԱՑ՝ ՔԱՀԱԼԵՐԻ, ԵՒ ՔԱՀՈՒԼԵՔ ԱՐՈՒԼԵՔ ԱՐՀԱՄԱՐՀԵ ՂՂԱԼԱՆ՝ ԵԹԵ ՁՎՏԱՊՆԻՉ, ԵՒ ԵԹԵ ՁԲԵՐԿՐԱԿԱՆ. ԱՅԼ ԵՒ՝ ԶԻ ԻՆՔՆԻՆ ԱՄԵՆԱՁՐԱՐՁ ԳՈԼՈՎ ԿԼԵԱՂԾԵԱԼ ԱՒՐԱՆ ԱՐԳԱՀԱՏԵ, ԵՒ ԱՆՈՒՀՈՒԼԵԱՄՔ ԻՒՐՈՎ ՁԳԱՒՈՒԼԵՆ ՁԱՄԵՆԱՅՆ ԱՄՆՔԵ:

ՈՐՊԷՍՔԻ ԱՓՈՓՈՒԼԵՆ ՅԱՒՈՑ ԵՆ ԴԵՂՔ ԻՆՉ ՄԱՐՄՆԱՒՈՐՔ, ՈՐՈՎՔ Ի ՀԱՍՏԱՏԻԼ ՅԱՒԱՊՆԵԼ ՄԱՐՄՆՈՅՆ ԱՆԴՐԷՆ Ի ԱՒԱՇԱՀ ԿԻՒՐ ՈՐՊԻՍՈՒԼԵՆ, ԱՐԱՒ ԵՒ ՄԱՐՄՆՈՑ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ ԼԻՆԻ ԳԻՒՐ: Ի ՄԷՋ ՈՅԱ Է ՔՈՒՆՆ, ՈՐ ԸՍԱ ԱՄԲՐՈՍԻՈՍԻ, ՊԱՆՋ ՏԻՊ ՀԱՆԳՈՒՅԱՆՔ, Ա ՊՈՒԳ ՀՈԳԱԾԻ ԸՆԾՈՅՆԷ: ԻՐՔ ԶԻ ԶՅԱՒ, ԵՒ ՊՀՈՊ ԶՅՄ ՄՂՈՒԱՑՈՒՑԱՆԵ. ԵՒ ՔԱՂՑՐ ՑՕՂՈՎ ԼԻՆ ՂՅԱՄԱՔԵԱԼ ՈՉԻՍ ԹԱՐ ՄԱՑՈՒՑԱՆԵ: ՈՒՍԱՒԻ ԱԵՐՈՒՍԱԼԵՄՈՒ ԿՈՉԷ ՂԱԱ ԽՈՊԵՈՒԲԻԼ ՄԱՐՆՈՅ, ՀԱՍՊԻԼ ՊՕՐՈՒՆԵՑ, Ա ԵՒԹԻԼԻ ՎԱ-

* Ի ԵՒ. ԼՈՒԱ ՓԱԿՈՅ: ԱՅԼ ԵՒ ԲԱՂԱՆԻՔ, ՁՈՐՈՑ ԱՍԷ ՅԵՂԻ ՕՓՈՍ ՓՈՂԱՆՈՒ- ՍԻՆԱՍ, * ԼՍԵԱԼ Է ԻՄ՝ ԿՈՒԷԼ ՁԱ ՅՈՒՆԱՑ ԲԱՂԱՆԻՆ, ՐԵՑ. ԳԼ ՎԱՅՔ, ԶԻ ԲԱՒՈՒՆԱՑ ՂԱՆԻՒՈՒԵՔ Ի ՓՈՓԵ:

# ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ:

## Յաղագս հրեշ չաստիական հատին:



Ամենեւաւ և զայլոց կրեց, որք առ ցաւս ինականն վերաբերին, հասեալ լինէ հասնուցանել: Այսպէս է նախ յառաջելոցս, թէ ցանկական մասին կիրք յածին զբաղեալ և զբարւոյ՝ առակապէս առեալ. այլ սոքա յաւելուն զառաջանաւորն լինիլ, և զդժոխարին: և վասն այն են երբ ձգանք լինէ հոգւոյ, ի խրախուսել առ ի բարին, և ի վերայ յառնել չարին: Եւ են թուով հինգ, յոյս և յուսահատութիւն, երկիւղ և համարձակութիւն, և բարկութիւն: զորոց դրեացուք փոքր ի շատէ: Յոյս սահմանի, ինչ որով դիմէ բաղձանն յապագայ բարին ձեռնարկեալ՝ բայց հնարաւոր առ պանալ: Ըստ որում ինչ, համաձայնի ընդ այլոց: իսկ այլ մասունք զանազանեն զինս յայլոց անուն, յերկիւղէ՝ ըստ որում առաջիկայ չուսցն՝ ասի բարին. զի երկիւղն է պչարէ: ի խնդութիւն՝ ըստ որում ասի՝ ապագայ. զի խնդութիւն է զինեւկայէ: ի ցանկութիւն, ըստ որում ասի՝ դժոխարահաս. զի ցանկութիւնն է զապագայ բարւոյ, ասակ ըստ որում է հաւանձայն, այլ ոչ ըստ որում դժուարահաս: ի յուսահատութիւն, ըստ որում ասի՝ հնարաւոր առ պանալ. զի յուսահատութիւնն է զանհնարից: Յորմէ յայտ է՝ թէ յոյսն են թադրէ զցանկութիւն. և ի նմին վերայ հիմնի. և յաւելու զբաղձանաց ընդէմ դժուարութեանց. զի ցանկութիւնն է սասկ խանդակաթութիւն ինչ ի բարին բացակայ. բայց քանզի յատկացուն, և դժուարութիւնք, որք պաշարեալ ունին զբարին ցանկացեալ, ընկճեն, և լքուցանեն զկորովութիւն բաղձանաց, վասն այնպիսոյ է նմա ջանք ինչ, և քաջալերութիւն առ այնսեւոյ զանձն. և խրախուսելոյ ի հեռաւորաց

լինել բարւոյն. այս չանք քաջալերէր սրտի՛ ի յոյս, որ ծնանի՛ ի հնարաւորուն բարւոյն: Պատճառք յուսոյ են, նախ փորձն, ըստ որում նուաւս խելացուած լինելիք հնարաւորութեամբ բարւոյն, և միջոցաց դիմելոյ՛ ինա: Զի թէ դիտելիք սուաւս՝ ոչ յառաջադէմ յաջողել իւրային, յայնժամ ոչ եւս օգնէ, այլ առաւել խափան լինել յուսոյ: Երկրորդ ոյժն, որով դժուարութիւնք լինին դիւրայաղթ: յայս պատճառս վէրաբերին և փարթամութեն, արիութեն, բարեկամք, և այլն: Երրորդ ջերմութեն սրտի, որով զօրանան ոգիք, զի մի՛ վաղվաղակի նահանջեցին յերևիլ դժուարութեն: Չորրորդ՝ անմտածութեն, որով դժուարութիք ոչ համարին ինչ կամ ոչ նկատին: Վն այսց պատճառաց մանկունք, և արբեալք, և յիմարք են քաջայոյս: Մանկունք, զի սակաւ ինչ կայ նոցա անցեալ, և բազում ինչ ապագայ. վն այն առաւել յուսով գնան, քան յիշատակաւ: Եւ ևս, զի վրատահ են՛ի զօրութեն իւրեանց. և զդժուարութենս ոչինչ գրեն. զի ոչ լիով զննեն. և զի անփորձ են: Եւ դարձեալ զի առաւելուն ջերմութեք, որ ընդարձակէ զսիրտ, և զշարժմունս ոգւոց յոխորտս գործէ: Արբեալք, զի և՛ի սոսա տապագին է ջերմութեն. և զի վրատահ են՛ի զօրութեն իւրեանց, և ոչ հային՛ի դժուարութենս: Իսկ յիմարք վն անմտածութե վրան գայ: Այլ ծերք լինին նուազայոյս, քանզի յանցելոց անտի զփորձ առեալ՝ բազում անգամ ոչ՛ի բարիս յաջողել իրաց, և վն ապագայից զնոյն կասկածին. և դարձեալ՝ զի՛ի դժուարութենս առաւել հային, և խորագոյն զբնեն. և զի նուազ ջերմութեն որ՛ի նոսա՝ ոչ լիով զօրացուցանէ զշարժմունս ոգւոց, վն այն գիւրաւ ընկճին՛ի կարծեաց դժուարութեն:

Պորձք յուսոյ են, նախ բերկրեցուցանել. ըստ որում սուաւս զառհասաւորչեայ ինչ ցանկացեալ բարւոյն ձաշակեմք: Երկրորդ զգործողութեն իւրեանն կատարելագործել, զի ըստ որում

հայէ

հայն ՚ի գժուարահաս բարին, զարթուցանէ զուշ. եակ ըստ որում հայն ՚ի հնարաւոր բա- րին, աննուճաճելի առնէ զկնոս : Երբ՝ աճել ՚ի սէր անձին՝ յորմէ յուսամբ զբարին. զի ակն ունելով մեր, ՚ի ձեռն ուրուք ժամանել բա- րեաց առմէզ, ձգիմք ՚ի նա երբև ի մեր բարն. և այնպէս սկսանիմք սիրել զնա :

Յուսահատութեին յայտ է յատացեալոցս զյու- սոյ, որում ներհակն : ոչ ներհակութիք առաք կայն, ըստ բարւոյ և ըստ չարի, ( զի երկոքին եակ են զբարւոյ. ) այլ մերձեցմամբ հեռաց- մամբ, ըստ որում յոյսն է մատչումն ՚ի բարին. և յուսահատութեին հեռացումն ՚ի նմանէ : Քան- զի դէպ լինի երբեմն ցանկացեալ բարւոյն այն- չափ դժուարութիք պատճառիլ, մինչև շրջա- րեալ սրտին նորօք՝ ընկճիլ, և ՚ի հետամուտ լի- նելոյ կասիլ : Վասն այս ասէ յուսահատու- որ և սահմանի : կիրճ, որով հեռանան բազմունք ՚ի դժուարին բարւոյն, զոր անհնար է ոմանս : Բայց այսմ անհնարութիք ոչ է պատճառ լինիլ մեթա- փիզիկական, այլ բարոյական. ըստ որում կա- րի յոյժ դժուարինքն՝ որք ՚ի վեր են քան զմեր կան՝ համարին իբր անհնարին :

Յամառձակութեին է կիրճ, որով բազմունք յոյ- նէ ՚ի վերայ ահաւոր լերի, ՚ի ջախջախանել զնա և ՚ի պարպել : Ըստ որում կիրճ, միաբանի ընդ այլոց = ձնացեալ մասունք զբուն կիսկութիք համարձակ կութիք յայտ առնեն. զոր առ խմանալ, պարտ է գիտել, զի ըստ սքին լիովմայի, լեռնպետ բազ- ձանքն ըստ ինքեան դիմէ ՚ի բարին, և խոտորի ՚ի չարէն, բայց ըստ պատահման խոտորի և ՚ի բարւոյն. յորժամ այնչափ դժուարութիք պա- շարեալ գտանի, մինչ՝ ոչ է հնար հասանիլ այնմ. և այնպէս լինի յուսահատութիք. և զբ աւորին հակառակն դիմէ առ չարն, ոչ ՚ի ստա- նալ. այլ ՚ի յաղթել, յորժամ յոյս նի վստահ է յաղթական լինել : և այս չարժուճն ասի՝ հա մարձակութիք : Իսկ բացատրաբար երկաք ՚ի վերայ ահաւոր լերի. զի ընդ հետ և չարիք արհամարհանա

քեր-

քերեն, և ոչ զհամարձակութի՛ն: Ասատ հա-
մարձակութինն է միայն զմեծամեծօք, և զահա
ւոր չարեօք:

Պատճառք համարձակութե՛ն են, նախ յոյս· զի
ոչ չարժի ոք՝ ի յառնել ընդդէմ չարի, թէ ոչ
* Փ· ԲԱ- յուսով յաղթելոյ նմա: Ասատ արիաստաւէ՛,
ԲՅԱ·ՓՈՂԸ: ասէ· փաղյոյսին են համարչակ, ոչ մանկունք՝ ար
քեալք՝ և յիմարք: Եւ ևս ասի՛ լինի, որ տածէ
և առաւելու զյոյս, նոյն պատճառէ և զհամար
ձակութի՛ն· ոչ փարթամութի՛ն, բարեկամք,
զօրեղութի՛ն· փոյթ վտանգից, և այլ այսպի-
սիք: Ա՛յլ քան զայս, բերէ զօրինաւոր հա-
մարձակութի՛ն՝ առաւելնութեան ձեռնին օգնու-
* Ք· ՀԸ- թե՛: Վ՚ որոյ արիաստաւէ՛ * ասէ, ուր ձեռ-
ՈՒՓՈՐ· պալփն են, համարչակագոյն լինին· և յարէ, նոյն-
ԳԸ· Ե: պէս և զրինեալսն· զի փէր օգնական լինէ զրնեղոյ:

Ա՛յլ և այլ պատճառ համարձակութե՛ն՝ ի կողմն
նէ նիւթականին· այն է ջերմութի՛ն արեան, որ
զօրացուցանէ զյարձակումն ոգւոց, զի մի յեմ
բունանէ վտանգին ընկճեացին դիւրաւ: Վ՚
այսորիկ կենդանիք՝ որոց փոքր է սիրտ, են
համարձակ, իսկ որոց մեծ, երկչոտ· ուր ասէ
* ԳՔՐՓ· Փ· արիաստաւէ՛ *· Այսպէս է նէ, վ՚ պի, ըստ սո՛յն
ՅԱՂՓՈ ՆԱ- թովմայի *· Ջերմութի՛ն բնական ու՛ սպառնալիս կարօղ է
ՍԱՆՅ ՀՔՆ- ջերմացուցանել զմեծ փառն, ուր պիտ էր: Եւ ևս վ՚
ԴԱՆԵԱՅ· զի երկիւղն հակադրի համարձակութե՛ն, որինչ
ԳԸ· Ե: բառնայ զերկիւղ· պատճառէ զհամարձակու-
* Ա· Ք· ԼԱ- թե՛: Վ՚ այսորիկ համարձակագոյն է այլ՝ որոյ
ՆՔ·ՊՐ·Փ: ոչ լցեն թշնամիք, և չեզդ ուժք ինասեալ·
զի որոց ինասեն այլոց՝ առաւել՝ ի վ՚ր կան
վտանգք:

Ընդ գործս այսր կրկին թուէ ձեզն թովմաս,
նահանջել զոգիս և զջերմութի՛ն՝ ի սիրտն՝ ի սակ
բան վտանգին, իբր առ ուժգին յարձակումն·
վ՚ այսորիկ համարձակք՝ երբեմն ընդ ձեռնարկել՝ ի վտանգս՝ դողան, ուր պատմի զաղէք-
սանդրէ մեծէ· որ յառաջքան զպատերազմ՝
հարկանիւր զդողանի: Ա՛յլ և զշարժմունս՝
ուժգինս գործել՝ ի սկզբան վտանգին քան՝ ի
վախ-

վախճանի: Ասասն արիստոտէլ՝ ասէ. համարձակ՝ ՝ Ճ. բա-
յեռանէրեցի՛ էն և համակարծ յոտոաջեան պվպանգս, բոյական-
այլ՝ ի վպանգի խոսքն: Որոյ պատճառն է, զի գլխէ:
այն կերպ կատաւարել զգայական ճանաչմամբ,
որ ոչ է բաղդատիչ. վ՚ր այն ոչ զինէ զամ պա
րագայս վտանգին. սակս որոյ՝ ի գիտել նոցա
յանկարծուսա ընկճի: Իսկ որ արին է, ան-
դէն իսկ՝ ի վտանգի պինդ կայ քան զոր յա-
ոաջն. վ՚ր զի ամի եղև յոտոաջատես. նա՝ եր-
բեմն և մեծամեծոց քան զինյնս, վ՚ր այն՝ ի դի
ալիլ մանուկց ոչ զարհուրի, այլ առաւել ևս
վատահի:

Երկիւղն հակադրի համարձակութե. յորոյ
բացատրութե մարթե իմանալ զսորայս: Ասա
ոն ոչ համարձակուհին քաջաբերե զներսն ընդ
դեմ չարեաց, յուսով պարտեզոյ. սոյնպէս երե
կիւղն լքուցանե զնա առ գժուարութե զերծ
անելոյ. և վ՚ր այն սահմանի, Կերպ որով բաղ-
ձանքն ընկճի՝ ի վերահաս ահաւոր չարէ, յորմէ գժուա
բին է խոսնիլ: Կամ լիուն սրտի նահանջելոյ՝ ի ծան
րութե վտանգին: Զի ոչ ասե ոքն թովմաս.
յորժամ չարն, որ մերձ՝ ի վերայ կայ՝ է յերկ-
բռնման. լինի երբեմն թե մարտ ինչ՝ ի մէջ բաղ
ձանացս և չարին: Քանզի բաղձանքն պարտեզ
և փախուցանել նկրտի զչարն. իսկ չարն բնա
ւորեալ է ոչարտեզ և փախուցանել զբաղձանս:
Ապա եթե յայտ մերցման տեսանիցէ կենդա-
նին զկար իւր վերադոյն լինել քան զչարն. գայ
՝ի վ՚ր նոր ուժգնութե՝ ի ձեռնամուխ լինել, և
վանել զչարն, որ է համարձակութե: Ապա
եթե տեսանիցէ զկար իւր ոչար, և զչարն և
զվտանգն ծանր, լքանի, և բաղձանք նո՛ր պար
տեզ նուճանի, և այնպէս լինի երկիւղ:
Յայտ է, թե պատճառք երկիւղին
են՝ նախ պակասութե՝ ի կողմանէ բաղձանաց,
և բաղձացողին, որ ոչ զգայ յինքեան բաւա-
կան զօրութե՝ ի վանել զչարն: Երկրորդ ծան-
րութե՝ ի կողմանէ չարին, յորժամ այնպէս
՝ի վ՚ր կայ, և ասիպե, մինչև ուր ուրեմն է-
րևի

քրեւ հնար զերծանելոյ։ Ասեմք, մեր ուրեմն, զի թէ բնաւ ոչ գոյր զերծումն երկիւղին գնայր ի յուսահատութիւն։ Վասն որոյ առ երկիւղն պատ հանջէ յոյս լինել զերծանելոյ· ոչ ծագեալ յա ռաջելութէ վօրութեամբ մերոյ՝ ի յաղթել չարին, զի այս թերէ զհամարձակութիւն· այլ յանաստու գութէ չար պատահարին, որ ոչ հարկաւ, այլ ներընդունակապէս մերձ՝ ի վր կայ։ Յայսց պատճառաց վերայ յաւել զարամադրութիւնն մարմնական, մի՝ ի կողմանէ երևակայութէ, որ յոլովամեղծ սխալութբ լինի զղարհուրատեսակ ցնորս երայց նկարել, յորմէ սևամաղձոտք լինին երկչոտ, (բայց յայնց՝ որոց սևամաղձն է դիւրաւար, զի աբ հեամարձակագոյն գտանին։) և խաւար՝ երկիւղ և արհաւիրս ածէ՝ ի վերայ։ Եւ երկրդ՝ ի կողմանէ սրտի, յորում ջերմութիւն նուազ լեայ, և ոգիք ձիւղ և տկար։ Վ՚ն այն կենդանիք, որոց մեծ է սիրտ, և հուվ արիւն պտանի առ փորոտեօք, են առաւել երկչոտ։

Վ՚որձք երկիւղի են նախ կծկումն· և այն կըր կին· մին այլաբանական, ըստ որում բաղձանքն պարտեալ՝ ի չարէն, և ընկճեալ, խուսէ և լինքն ամփոփի։ Իսկ միւսն խակական, և մարմնաւոր, ըստ որում յերկիւղի ջերմութէնն և ոգիք Թողուն զարտաքինսն, և դիմեն՝ ի ներքինս, մանաւանդ՝ ի սիրտ· և անդ հաւաքին սէջ զի յարձակեսցին՝ ի վր· ոչ՝ ի ցանկութէ, ի բարկութէ, և՝ ի համարձակութէ· այլ զի ապրեսցին· վ՚ն այն ոչ վաւելն անդ, այլ Թմրին և Թառամին, ոչ յառնուլ քաղաքի՝ փախչելոյն քաղաքացիք՝ ի ներքսագոյն յամրակոփն քաղաքին, ոչ առ դիւրագոյն՝ ի վր յարձակելոյ, այլ առ փրկութէն և զերծումն։ Մանաւանդ զի և ստգնասէր ըմբռնման չարին, և՝ ի նկուն լինել սրտի, ջերմութէնն և ոգիք գնան՝ ի խոնաւ հագոյն, իբր փախստեալ յըմբռնմանէ չարին, յուղղոյ՝ ի սիրտ ածանցելոյս· նոյն վ՚ն այդր բան նի՝ լինի և՝ ի մահու, որոյ երկիւղն է գառն քան նախաձաշակ· յորում ջերմութիւնն և

ոգիք

ոգիք դիմեն ՚ի ներքսակողմն։

Բայց ոչն Թովմաս *, ասէ, Թէ ամենն որ է * ա. կո. ա. ա. ա

Ա ու գործս երկիւղի վերաբերին և ամբոխումն մտաց, թմրութեի և անզգայութեի, մինչև կարի լինի պակուցկելոյն՝ ոչ լսել, ոչ տեսանել, և ոչ խորհիլ ինչ. վ՚ի զի խոկումն չարին բռնադատակ զերեւակայութեին ընու, հեղձուցանէ, և խաւխանէ. և այսպէս յայրմ կողմանէ երկիւղն բառնայ զխորհուրդ, և խափան լինի գործոցն: Սակայն և հոգ զերծանելոյ ՚ի չարէն՝ պատճառ յերկիւղէ. և վ՚ի այն յայսմ կողմանէ, երկիւղն ասի առնել փակ խորհրդական, և օգնել գործոցն. իբր խթելով՝ հարցանել զխորհուրդ, և փոյթ ՚ի մէջ առնուլ առ ՚ի խորշել ՚ի չարէն: Թէպէտ այլուստ՝ ամբոխմամբ և խուճապիւք մտաց խափանէ զխորհրդածութեին. և կծկութիւք ջերմութեի և ոգւոց, որք են օժանդակք գործոցն, կասեցուցանէ զգործն:

Յարկութեին, զոր պրիդոր նիւսացին գեղեցիկ կոչէ ջնջիչ ցանկութեի, սահմանի բազմօրինակ: Կիւկերոն սահմանէ, ընդմտութիւն ոգւոյ ժամանակի վրէժխնդրութեի. իսկ այլք քանզի ոչ միայն պարզ կիրս համարին, այլ հիւսուածք կրից, սահմանեն այսպէս. Ախորժակ, որով հոգին առ ցաւոց ընկալեալ ելասուն, և առ ապրել զգոյ ծօղ նորին, պայքարին որպէս գրգռի ՚ի վրէժխնդրութիւն, ինչպէս ղեկավարեալ զգործօղն: Հասանաւօտաս գոյն՝ սահմանէ աբխաստոկլ՝. Բառիւնոփ յայտնի վրէժխնդրութիւն, երաժամբ արեան պրպիմ: Ըստ որում Բառիւնոփ համաձայնի ընդ այլ կիրս, որք են չարժմունք լինչ բաղձողականք. այլք միասունք զբեպհական հանգամանս բարկութեան յայտ առնեն. զի սեպհական առարկայ բարկութեե է վրէժխնդրութիւն կամ հատուցումն ինասուն, ոչ զխորհուրդ և լոյծ, այլ յայտնի: Վ՚ի այսորիկ՝ արխաստոկլ զբարկութեին կոչէ, ախոյեան և անդրան: Քանզի բարկացեալն կամի, զի որ զրկեացն՝ ծանիցէ, թէ զրկեալն է՝ որ ինչ ասէ, և թէ վ՚ի ընկալեալ զրկանացն վը



* գիրք ա. գոյն՝ սահմանէ աբխաստոկլ՝. Բառիւնոփ յայտնի վրէժխնդրութիւն. Ըստ որում Բառիւնոփ համաձայնի ընդ այլ կիրս, որք են չարժմունք լինչ բաղձողականք. այլք միասունք զբեպհական հանգամանս բարկութեան յայտ առնեն. զի սեպհական առարկայ բարկութեե է վրէժխնդրութիւն կամ հատուցումն ինասուն, ոչ զխորհուրդ և լոյծ, այլ յայտնի: Վ՚ի այսորիկ՝ արխաստոկլ զբարկութեին կոչէ, ախոյեան և անդրան: Քանզի բարկացեալն կամի, զի որ զրկեացն՝ ծանիցէ, թէ զրկեալն է՝ որ ինչ ասէ, և թէ վ՚ի ընկալեալ զրկանացն վը

բեալ ինաստնէն : Եւ յայլն , ետուցմամբ արեան
ղարիւ , ի նշանակել վնիւթականն բարկութ .
որ զեռանգն իմն արեան յարուցանէ առ սըր
սիրէ :

Ա. Մէջ պատճառաց բարկութեան զառաջինն առելին ունի անարդութիւն կամ անիրաւ արհամարհութիւն . զի ամ առիթք բարկութենէ ի առ վերածին : Չի բարկութենն է բաղձանք վրէժխնդրութենէ , ըստ է վճարելոյ ինաստն ոչ զիարգ և լեզէ հասուցելոյ , այլ որ առնչպ գիտութէ , և ընտրութէ : Վն այսորիկ ընդդէմ՝ որոց յանգետս կամ ի կրից ինաստեն մեզ , կամ առկուա և կամ ոչինչ բարկանամք : Ա.րդ հասուցանել ուանք ինաս՝ գիտութէ և ընտրութէ , վնիւ յար համարհանս նորուն , որոյ երիս տեսակս թուի արհասատել , զանգանութիւն , որով ոք երբ ոչինչ իմիք արժանի վնիւ անտես . զբմնպահակութէ , այն է ( նիսակէթ , ) որով ոք հակառակի կամաց այլոց , ոչ առ իւր յաջողմամբ . այլ զի մի յաջողեսցի նմա : և զթշնամանս , որով ոք ինաս և նեղէ յայլն՝ որք վնիւն ի նախատինս կրողին , ոչ վն շահասատանութէ ինչ , այլ վն չարաչար հեշտութէն զոր զգայ , ըստ որում չարիս ան ցուցանելով ընդ այլ կարծէ գերազանց քան զնա վնիւել : Ապա որվնչ առաւելու զայսոսիկ տեսակս արհամարհանաց , առաւելու և զբաց կուելն . և քանզի այնչափ արհամարհութենն է ծանրագոյն , որչափ գերազանցագոյն է անձն արհամարհեալ . վն այն գերազանցութէն վշտացելոյն առաւելու զբարկութենն . իսկ գերազանցութէն վշտացուցչին ի վերայ վշտացելոյն նուազել զնա : Եկիր պատճառ արամադրիչ առ բարկութէն ի կոչմանէ բարկացելոյն , և պատկառութէն անձին նր : Չի անկեալն ընդ պատկառութէ իւն՝ գիւրագոյն վարկանի զիւր արհամարհելն . վասն այնր գիւրագրգռութէ ի բարկութէն . Քանզի ոչ ասէ առեբենտոս .

Ամենեքին որոց իրէ են միւք յաղթէ ,
Ձիթեմ քնաս , գիտէ լինին յաղթող .

Ձի

ՉԻ ՆԱԽԱՊԱՏՆԵՑԱ ՀԱՄԱՐԻՆ ՊԱՏՃԱՌ

ԱՒԱ ԱՊԻՒՈՐ ԳՈՐԾՈՅ ԻՐԵՒԱՆՑ, ԵՒ ԽՈՓԱՆ։

Գործք բարկութեանն են, նախ քան զերկրորդին ինչ սեպհական սմին. ուստի զբարկութեանէ ասէ հա մերոս, փաղայր փան պէղը ծուբեալ առաքելոս 'ի սրտի։

Որոյ պատճառն է. զի բարկութիւն լինի յոյս վրէժխնդրութեան, որ զուարճալի է յոյժ, վա լինելոյ գեղ ցաւոց, որ 'ի հիւանդէն։ Երկրորդ եւանդն լինի ոչ քաղցր և հեզնիկ, այլ որ էնն 'ի սէր, համեմատեալն արեան, այլ գառնապէս վառեալ 'ի ծախուձն, համեմատեալ խարտեաշ մազէի։ Երրորդ ամբոխուձն, երէք բանին, որ հան դարտ և խաղալ ոգիս պահանջէ, և 'ի խռովիլ նոյ յեռանդնէ բարկութիւն՝ կարի լման պղտորի, մրթադնի և շլանայ։ և երէք մարմնոյ, մանա անդ այնց անգամոց, յորս (ըստ աբեյն Թով մայի) երևի նշմար լինէ սրտի, որպիսի են աչք, դէմք, լեզու, և այլն։ Զայս ամբոխուձն այս

* Ե. բա ղոյակ. գլ. ՀԱ։

պես ենթագրէ դրիգորիոս *, Գրգռուելիք բար կուելիք իրոյ՝ պայթյելոյ սիրտն բաբախէ, մարմինն դող դոջէ. լեզուն կարկի. երեսք հրանան, և ալիք պիգա նան, մինչ և ու ծանօթիդ ճանաչելն պնա, բերանն ա ղաղակէ, և պիտուելոյն ու գիտէ պինչ խօսի։ Վասն այնր յերեսուն ասաց ոմն, պատշաճագոյն հնար ցածուցանելոյ զբարկութիւն, է հայիլ ցասու ցելոյն 'ի հայելն. զի յայն արտաքին այլանդա կութիւն կերպարանացն ծանիցէ զհոգւոյն 'ի հայից իւրոց տարագրութիւն։ Նա և լուսինն պնի 'ի գործս բարկութ. ըստ որում ամբոխեալ բանն կամ ոչ գտանէ զարժանի կրից խօսս. կամ կարկելով գործարանին՝ ոչ զգոյ արտա ատնել. կամ խնթայ թէ գուցէ անկարգա ինչ խօսեսցի, վասն որոյ զինի վրէժս լուծա նիցէ։

Յաւելուլ մարթ է 'ի գործս բարկութիւն և զայլոսն գործել։ զի բարկացեալն ոչ է գարտա նագիտ, այլ համարձակ։ Զորոյ զպատճառն առնու սբն Թովմաս *։ Կէս՝ 'ի խափանմանէ

* Ա. Ք. ԽՈ. ՊՈ. ՁԲ։

ԺՁ բա

քանին, որ ոչ կարէ որոշել՝ զինչ ծածկել պարտ
էցէ, և զինչ յայտնել· և ոչ խորհիլ նսեմ հը
նարս ծածկելոյ: Կէս յընդարձակութիւնէ սըր-
տին, որ վերաբերի առ քաջասրտութիւնն, զոր
առնէ բարկութիւն· զի յաղագս քաջասրտին ասէ
արիստոտէլ *· Յայնի ապէ և սիրէ, և համարձակ * Է·Բարձ·
խօսի և գործէ: Եւ կէս՝ ի զանազանութէ, որ՝ ի գլ· ֆ:
մէջ ցանկութէ և բարկութէ: Զի ցանկութիւնն
քերի երբեմն առ հեշտալիս ինչ, ընդ որս խառ-
նի զազրութիւն լինն, և մեղկութիւն· և յայն
ասկս կամի մարդ թաքչիլ· ուստի զցանկութիւնն
կոչէ արիստոտէլ, ծածկող և դարանակալ: Բայց
բարկութիւնն բերի՝ ի վրէժխնդրութիւն, յորում
երևի արտութիւն լինչ և վեհմտութիւն· վն այն բար
կացեալն սիրէ գործել յայտնի, եթէ զի հա-
մարի քաջութիւ գործել: Ի դէպ է ասել և սա,
թէ բարկութիւնն, քանզի միանգամայն յարձա
կի, խնդրէ զհամարձակ Հանդիպիլն· արդ գաղա-
նի և դարանաւոր Հանապարհք են դիւրա-
թեկք, բազմապատոյտք, և երկարք: Եւ գար-
ձեալ՝ առ բացատրութիւնն արհամարհութէ,
պիտոյ է, զի յայտնի լինցի ամենեցուն, թէ որ
զայրացոյցն, ոչ երևս առանց պատժի· և վասն
այն բարկացեալն ոչ՝ ի ծածուկ՝ այլ յայտնի
խնդրէ վրէժառել, զի լիով հաճոյիցէ զվիրաս իւր:

Ա՛յլ յաղագս կրից ցայտվայր:

# ԽՆԴՈՒՐ ՁՈՐՐՈՐԴ:

Յաղագս բարուաւքն և չարուաւքն բարուց:



Ա յսմ մասանէ բարոյականին պրեսցուք սակաւ, զի Ճոխագոյն և զգուշագոյն քննեն զայն ձեռնարկք: Վասն այսորիկ Թողեալ զյաղագս բարոյական բարուաւքն և չարուաւեան զերկար խոյզ որ յաճախանուաթե, զոր ինչ ի սոյն իրն գիր առաջի կայ մեզ ասել, յերիս պրակս բովանդակեսցուք. խօսեցեալ նախ յաղագս բարոյականուաթե ըստ ինքեան, և յաղագս բաժանման նր ի բարուաթե, և ի չարուաթիւն: Երկրդ, Թէ իցէ ինչ ներգործուաթե անտարբեր: Երրդ զկանոնաց բարուց համառօտ:

## ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ.

Թէ պէտ ինչ իցէ բարոյականուաթիւն. և զիարդ բաժանի ի բարուաթե և ի չարուաթե:



Բարոյական ներգործուաթե են երկու ինչ, էակուաթե, և բարոյականուաթե. յորս էակուաթիւն է նիւթ և ենթակայ բարոյականուաթե: Արդ յայտ է Թէ, էակուաթե բարոյական ներգործուաթե կայանայ յայն, զի իցէ գործողուաթե ինչ կենսական և ազատ: Զի ոչինչ ներգործուաթե համարի բարոյական, Թէ ոչ կենսօրէն և ազատաբար լինիցի: Քանզի ի բառնալ ազատուաթեան, ոչ

մնան՝

ձնան՝ ոչ արդիւնք և ոչ ապարդիւնաւորութիւն • ոչ գովութիւն, և ոչ պարսաւ • ոչ բարի և ոչ չար՝ գէթ բարոյական:

Բայց թէ ինչ կայանայցէ բարոյականութիւնն յատկապէս, ոչ ամենեքին են միաբան: Ոմանք չիմանան զայն ընդ ազատութիւն • ոմք թէ ոչինչ յաւելուած՝ ի վր նր: Ոմանք կարծեն թէ յաւելումիայն գոյարանումանութիւն ինչ արտաքին: և այլք՝ թէ է սոսկ էակ բանի: Այլ արդ՝ առաջինն կարծիքն զինւոր բարոյականութիւն չիմանան ընդ բարոյականութիւն: Զի ըստ նշանակելոյ սէյն թուվմայի յատուկ յաբանութիւն բարոյականին, զոր օրինակ կարգն արուեստական կայանայ՝ ի տրամադրութիւն, զոր բանն մուծանէ՝ ի նիւթ արտաքին, այնպէս կարգն բարոյական կայանայ՝ ի տրամադրութիւն, զոր բանն առնէ՝ ի ներգործութիւնս կամաց: Վ՚ր որոյ ոչ քարինք, փայտք, երկաթ՝ կամ այլ ինչ այսպիսի, որ արուեստաւիւ տրամադրի՝ է միայն նիւթ արուեստաւորութիւն. նոյնպէս և ներգործութիւնք կամաց, որք վ՚ր ազատութիւն անկանին ընդ բանիւ, ոչ են բարոյականութիւն, այլ էնթակայ նր, և նիւթ: Իսկ եկիր և երդ կարծիք, ոչ յայլս պակասեալ գտանին • նոյնպէս և յայն, զի ոչ պատչաճ միտս ունին զբարոյականութիւն:

Վ՚ր որոյ թողեալ զսուտ՝

Ասելի է նախ • Բարոյականութիւնն տեսակապէս կայանայ՝ ի կարդի, զոր բանն առնէ յազատ ներգործութիւնս, կարգելով զինք հմամաձայն՝ կամ տարաձայն կանոնաց բարուց: կամ կայանայ՝ ի գերագանցական հայեցմանն, զոր ունի ներգործութիւնն կամաց առ առաքինայն իւր, ոչ սոսկապէս առեալ, այլ իբր կանոնաց բարուց էնթակայ:

Երկաքանչիւր տարազ մեկնութիւնք եզրակացութեա՝ ինոյն գլխի: Զի ոչ այլազգ կարգէ բանն զներգործութիւնն կամաց, թէ ոչ միջնորդութիւն առարկային, ըստ որում կանոնաւորելով ի մացութիւնք զառարկայն՝ յոր թեթի կամքն, տայ

եւ ներգործութեանէ կամաց լինիլ կանոնաւոր։ Ասասի կարգն զոր առնէ լմնցութեանն ի ներգործութեանէ կամաց, է նոյն իսկ գերազանցական հայեցուածն ներգործութեանէ կամաց առ աստուածային իւր ըստ որում կանոնաւորեալ։ Սքն Թովմաս ըստ առաջնոյ օրինակի մեկնէ զբարոյականութեանն յառաջաբանութեան բարոյականին՝ յասել իւրում, թէ կարգն զոր բանն առնէ ի ներգործութեանէ կամաց, վերաբերի առ բարոյական փիլիսոփայութեանն։ Իսկ ըստ երկրորդին մեկնէ զայն *, յասելն, թէ ներգործունէին մարդկային, որ ասի բարոյական՝ առնի պիտոյիկ յաստուածային վերաբերելոյ առ սկիզբն մարդկային ներգործ ածութեանէ, որ է բանն։

* Ա. Է. կ. Ծ. Ը. Ը։

Յուցանի եզրակացութեանս. նախ զի նոյն է զանազանիչն և կացուցիչն։ Իսկ բարոյականութեանն զանազանի ի բարւոյն և ի չարութեանէ նկատմամբ համաձայնութեանէ և ապրաձայնութեանէ առ կանոնս բարուց։ Ապա բարոյականութեանն կայանութ յայդմ հայեցման։

Նկատ, այնպէս համեմատօրէն պարտ է խօսիլ զբարոյականութեանէ մարդկային ներգործութեանէ ոչ զէականութեանէ նր։ Իսկ արդ ներգործութեանէն մարդկային առնու զէականութեանէ իւր ի գիտողութեանէ առ առարկայն իւր՝ յէականական կարգի մը ուածեալ։ Ապա պարտ է նմա առնուլ զբարոյականութեանէ իւր յայնմ կարգէ բարոյապէս առեալ. այս ինքն է, առ կանոնս բարուց բաղդատեալ։ Փոքրագոյնս է հաւաստի. զի ներգործութեանն տեսակացուցանի առարկայիւք. բայց և ցուցաք ի բնաբանութեանէ *։ Իսկ մեծագոյնն յայտ անուն է, զի բարոյականութիւնն հիմն ի վր էակութեանէ ներգործութեանէ՝ որպէս զեղանակ յաւելեալ ի նա, և իբր յատկութեանէ նէ։

* Ա. Ը. կ. Ա. պր. վեր Ջին։

Նրդ. Բարոյականութեանն միշտ բացատրի իբրև համաչափութեանէ. ուստի բարւոքն կոչին ասպիտ, և չարքն ընդ, խոպորեալ, և անուշ ցայտ։ Այլ համաչափութեանէ, ուղղութեանէ, թիւ

րոս

բուԹեն և խոտորուԹեն նշանակեն կհայեցուիս
ինչ իրն առ կանոն իւր : Ապա նշան է Թէ
բարոյականուԹիւնն առեալ լինի ի հայեցմանէ
առ կանոնս բարոյականս :

Ասելի է երկրորդ , Թէ բարոյականուԹիւնն էա-
պէս , և հաւասարուԹիւն բաժանի ի բարուԹիւն
և ի չարուԹիւն :

Յուցանի առաջին մասն • Թէ այն բաժանուիս
է էական : Քանզի պարտ է բարոյականուԹիւնն
հաւասարակի՝ բաժանիլ էական իւրմէ տարբերու-
Թիւք : Իսկ արդ ոչ երևի լինչ առաւել էական
քան զբարին և զչարն , վասն զի բարուց ըստ նո-
քեան նախ պատշաճի բարուԹիւն և չարուԹիւն :
Ապա բարուԹիւն և չարուԹիւն են էական տար-
բերուԹիւնք : Վասն այսորիկ ասէն Թուլմաս * , ասէ • * Ֆ• ԸՆԴ-
Բարին և չարն ի բարոյական գնին փոխադարձ գոյ- ԴԷՄ ՀԷՐԱՒ-
ԲԷՐՈՒԹԻՒՔ : ԳԼ• Ե:

Յատուած , բարոյականուԹիւնն ոմն արդ ցու-
ցանէ , էապէս կպչանայ ի հայեցման առ առար
կայն ըստ որում ներքոյ անկանի կանոնաց բա-
րուց : Իսկ արդ առարկայն ըստ որում ներ-
քոյանկեալ կանոնաց բարուց՝ բաժանի ի բա-
րի և ի չար • կամ ի համաձայն , և ի տարա-
ձայն այնց կանոնաց : Ապա և բարոյականու-
Թիւնն էապէս բաժանի ի բարուԹիւն և ի չա-
րուԹիւն :

Ածել և երկրդ մասն , Թէ այս բաժանումն է
հաւասարեալ , հաւանեցուցանի : Քանզի ի
մէջ երկուց այնց անդամոց ոչ անկանի լինչ մի-
ջին : Ապա հաւասարուԹիւն բաժանեն զբարոյա-
կանուԹիւնս : Յուցանի առաջարկուԹեամ : զի
Թէ անկանէր լինչ միջին • անկանէր մանաւանդ
ներգործուԹիւն անտարբեր : Իսկ այդպիսի ներ-
գործուԹիւն ոչ կացուցանէ զտեսակ բարոյա-
կանուԹեանն : Ապա ոչ անկանի լինչ միջին ի մէջ
երկուց այնց անդամոց : Մեծագոյնս յայտ է •
մեկնի փոքրագոյնս : Ջի ըստ ոչին Թուլմայի * , * Ա• Է•Ի•
ըստ այնմ ներգործուԹիւն ասի անտարբեր • ԹԷ• Պ• Է•
որում ոչ ինչ ներքս փակէ լինչ վերստաբերեալ առ

կարգ բանի : Իսկ արդ որ ոչ ՚ի ներքս փակէ ինչ վերաբերեալ առ կարգ բանի՝ ոչ է տեսանկ բարոյականութեան . զի սա բովանդակ կայանայ ՚ի կարգի առ առարկայն , ըստ որում ներքոյ անկեալ կանոնաւոր բանի : Ապա ներգործութեան անառարքեր ոչ է միջին ինչ տեսանկ բարոյականութեան : Ա յլ զայսցանէ ճոխագոյնս ածաբանք : Մի՛ այն մնայ ասել ինչ զայսմ անտարբեր ներգործութեանէ :

## ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ :

ԱՀ՛ դէպ գուցէ՞ ներգործութի՛ն անպարբեր , եթէ ըստ պէտի՛ն , և եթէ ըստ անհատին :



Ներգործութիք մտածին կրկնակի , մի՝ որաշակի ըստ ինքեանց , և երբ ՚ի նշանակեալ ներգործութեն . կամ ըստ իւրեանց տեսակի : Եւ եկիր , ըստ որում լինին առ և այժմ ՚ի գործածեալ ներգործուէ՝ հանդերձ այսպիսի ինն դիտմամբք , և այսպիսի ինչ պարագայիւք . և կամ ըստ անհատին :

Այս է թէ են բազում ներգործութիք անտարբերք ըստ իւրեանց տեսակի : Եւ զայս ցուցանէ տքն Թովմաս * , հաւաստի բանիւ : Քանզի ներգործութեն ունի զբաւութեն և զչարութեն , ՚ի համաձայն և ՚ի տարաձայն երկոյ կանոնաց բարուց : Ա յլ բազում ներգործութիք են , որք ըստ ինքեանց՝ և ՚ի տեսակի իւրեանց մտածեալ , ոչ համաձայնութի և ոչ տարաձայնութի ունին առ կանոնս բարուց . ոմի գնալ , ուտել , խօսիլ , և այլն : Ապա գտանին բազում ներգործութիք , որք ըստ ինքեանց ոչ բարի են , և ոչ չար . այլ անտարբեր առ երկոսին : Խնդիրս է միայն զներգործութեանց՝ մտածեալ ըստ անհատին :

* ա . Ք . խա . Ձ . պ . Ը :

Եւրա-

## Եղբայրութիւն:

Պէտք ներգործութիւն ըստ անհատին, կամ ըստ որում լինի աստ և այժմ, է անտարբեր. այլ հարկաւ պարտի կամ բարւոք լինիլ, և կամ չարեաք. և այնպէս լինիլ կամ բարի, և կամ չար:

Որ էզրակացութիւնս, զոր յայտնապէս ուսուցանէ ոքն Թովմաս 'ի բազում տեղիս *, և ընդ նմա այլ ևս բազումք ընդդէմ սկսուտոսի, պարտ է խոնարհ միայն զմտածեալ ներգործութենէ, որք յառաջ գան 'ի մարդոյ խորհրդածութէ, որ սահմանէ ինքեան զվախճան: և ոչ զայնց որք յառաջ գան միայն յերևակայութէ, կամ 'ի յարձակմանէ զգայական քաղձանաց՝ երևակայութենն հեռևակէ, ոչինչ հրամայելով, կամ միտ դնելով բանին, այլ թոյլ տալով և ելթ. որպիսի են չփել զձեռս, քորել զգլուխ, թքանել, հազալ, զանդամս մարմնոյ պէսպէս տրամադրել, և այլն: Քանզի յայտ է զսոցանէ. թէ են անտարբերք, թէպէտ եթէ բանն՝ յանցանել սոցա ըստ չափ՝ հեղգասկի ուղղել, կարեն լինիլ թեթև ինչ մեղք, վի թէպէտ ոչ պարտաւորիմք զայս ամ խորհրդածութէ կատարել, բայց պարտաւորիմք զեզանակ ինչ և յայսպիսի չարժմունս մարմնոյ դնել: Զեզրակացութենս այսպէս մեկնեաք՝ հնար էր ցուցանել անհամար վիճաբանութիք սբց հարց, զորովք 'ի հաստատութենէ սակս զանցարաբեաք, ցուցանի նախ վիճաբանութիք քն ամբոյ, որ * * Ասպրնէի. ասէ. ընդ ամ դատապարտի բանի, զոր խօսելոյն մտաբերի, զայն համար չատուածն դատապարտի. զոր քննեալ ստերատուղևանոսի 'ի Ճառս համբերութենէ, ասէ, Ամանդէ վարդապետութենն փոխ, ծանոթ մեզ պարտաւոր վասն ամենայն ոնայն և աւելորդ բանի: Իսկ արդ եթէ և ոչ բանք դատապարտիք. այսինքն, ըստ մեկնելոյ հարց, սա ոչինչ բարւոյ վախճան կարդեալք, են անտարբեր, այլ չար.

որ ներգործութիւն ինչ անտարբեր:

Պատասխանիցես, այնպիսի արարք, որք կո՛չ
էին անտարբերք, ոչ են դատարկք, զի ունին
իրաւացի պիտոյութիւն պատճառս. քանզի լի՛
նին առ դիւրութիւն բնութ. ոյք յորժամ ընտ՛
րութիք ձեռնեմք, յարմունին կենցաղոյ, նատիմք,
և այլն, այլ են առքա անտարբերք, զի ոչ գովելի
երևին և ոչ պարսաւելի. բայց չեն դատարկ,
զի լինին՝ ի սիրելոյ մարմնոյ:

Այո՛ ընդդէմն. քանզի եթէ լինին առ դիւ՛
րութիւն բնութիւն, առանց անցանելոյ ըստ չափ,
են բարի և համեստ: Զի ոյք ասէ՝ ըն թով՛
մաս* . Ա՛ն ինչ, զի ոչ գործէ կրկին՝ առ նուա՛ղ
դուրսն և հանգիստ մարմնոյ, կրկին առ բարին առա՛
ջինութիւն՝ յայնմ որ զմարմին իւր կրկին առ բարին ա՛
ռաքինութիւն:

* ա՛ն է՛նո՛. ձը. պ. ի՛ն. առ. ք:

Այսուհետև. երբեմն այսպիսի արարք ըստ ին՛
քեանց անտարբերք՝ վերադարձին միայն առ հե՛տ
ութիւն մարմնոյ, ոյք հոտառութիւն, և գեղե՛
ցիկ իրաց տեսութիւն, և այլն: Բայց և այ՛ս ա՛ն
քա երևին շատ, ապա ինայ ասել, թէ են ան՛
տարբեր:

Այո՛ է ընդդէմ. քանզի կրկնակի իմանի գոր՛
ծել մարդոյ վը հեշտութիւն: Նախ, յորժամ
յիւրում ներգործութիւն զհամեստ բարին ար՛
տաքսիցէ. ոչինչ այլ ինչ դիտեալով, բայց ե՛
թէ բերկրիլ զգայապէս: Երկրդ յորժամ զհե՛տ
ութիւնն ըստ կանոնաց բանին պայմանեսցէ,
առեալ զայն՝ ի կազդուրութիւն մարմնոյ, կի մի
ծանրասցի հոգւոյն, կամ զի յետ այնր ժրաս
ցի՝ ի գործս առաքինութիւն, զի զգալի հեշտու
թիւնք, ըստ սըբոյն Թովմայի, են դեղք և սիր՛
փանք ըստ իրաց ինչ կարևորք՝ ի վարել զկեանս:
Եթէ ըստ այսմ երկրորդ եղանակի գործեսցէ
վը հեշտութիւն, յայտ է թէ ներգործութիւն լինի
բարի և համեստ: Զի Թէպէտ՝ ի զգալի բերկ՛
րութիւն առաւել գովելի է հրաժարիլն վը սի՛
րոյն ոյ. սակայն և ընդունիլն է գովելի, մա՛
նաւանդ երբեմն և հարկաւոր առ կազդու՛

րութիւն

բռնեն ՚ի սփոփանս մարմնոյ ։ Իսկ եթէ ըստ առաջնոյն գործեացի վը հեշտութե, ոչինչ խնդրելով ՚ի նմա, բայց զինքն զհեշտուն, ներգործեն է չար ։ Զի անբանից զգայնոց միայն է հանգչիլ ՚ի զգալի հեշտութիս, վը լինելոյ հեշտութեն սեպհական բարի զգայական բաղձանաց ։ Բայց բանաւոր բնութիւն ոչ ունի վախճան զհեշտութիւն բերկրեցուցիչ զգայութե, այլ զհամեստութիւն զհամաձայն բանին ։ և յայնսակս ՚ի գործելն միայն վը հեշտութե, թէպէտ և այլուստ ոչ գործիցէ ընդդէմ հաճելութե, սակաւ յիւրմէ վախճանէ, և յանանական բարիս անկարգութե թեքի և կորանայ, և այնպէս մեղանչէ ։

Արկինիցես ։ ապաթէ այդպէս իցէ, բովանդակ կեանք մարդոյ է հանապազորդ անկուճած լինչ մեղաց ։ Զի քանիցս անգամ գործեմք վը բերկրութե միայն՝ ոչինչ դմնաւ ածեալ զհաճելութե ։

Պատասխանեմ նախ, չէ լինչ մեծ անպատշաճութե. դնել զայսպիսի թերեւս մեղանաց բազմութե, որովհետեւ գիրք սբ * , և զկատարեալ արդարոց ասէ անկանիլ ստէպ ։

* առակ. ԻԴ։

Պատմեմք երկրդ ուրանալով զհետեւութիդ ։ Քանզի և հանդարտախիղճ մարդիկ իբր ՚ի բաղձմանէ ունին զբաւական փոյթ՝ հաճեստ բերկրութեց միայն տեղի տալոյ ։ Քանզի աւ այսչատ է, թէ յեղանակի գործելոյ մի եւանիցեն ըստ կոպար չափաւորութե և բարեխառնութե այսպիսի սփոփանք ։ և զի առեալ լինին ՚ի պատշաճ տեղւոջ և ժամանակի պատշաճ պայմանաւ ։ քանզի այնուիկ համարի կանոնաւոր և համեստ, իբր ՚ի բանէ չափաւորեալ ։

Յուցանի երկրդ եզրակացութենս բանիւք սբյն Թովմայի ։ Արինչ լինի խորհրդածութե, կամ կարգի առ պատշաճ և համեստ վախճան, և կամ ոչ ։ Եթէ կարգեսցի՝ է բարի, և թէ ոչ՝ է չար ։ Ապա որ լինչ լինի խորհրդածութե,

կամ

կամ է բարի, և կամ չար, և վն այն ոչինչ կայ անտարբեր: Մեծագոյնս յայտ է • քանզի կարգիլ առ պատշաճ վախճան, և ոչ կարգիլ՝ ի նոյն՝ են հակառականք, որոց ոչ մնայնէ ինչ ընդմէջ: Ցուցանի փոքրագոյնս: Եւ նախ Թէ՝ի կարգիլն առ պատշաճ և հաւեստ վախճան, լինի բարի, յայտ է ըստ ինքեան: Իսկ Թէ յոչ կարգիլն լինի չար, հաւանեցուցանի: Քանզի չարն է, որ պակասի՝ի կարգէ բանին: Այլ ներգործուին ոչ կարգեալ առ պատշաճ վախճան՝ պակասի՝ի կարգէ բանին: Ապա ուրեմն է չար: Մեծագոյնս է հաւաստի: Իսկ փոքրագոյնն յայտ անալի է, զի կարգ բանին կոյանայ՝ի սահմանել ամի զպատշաճ վախճան:

Պատասխանիցեմ նախ • չարն է, որ պակասի՝ի կարգէ բանին, որ պատշաճի նմա • այլ ոչ Թէ պակասեցի՝ի կարգէ բանին ոչ պատշաճելոյ նմա: Արդ բազում ներգործուԹիք են ԹեԹևք, որոց ոչ պատշաճի կարգ բանին • և վն այն ոչ են չար, Թէպէտ և չունիցին զայն կարգ:

Այլ է ընդդէմ • քանզի պատշաճի կարգ բանին ամ ներգործուԹեց մարդոյ, զորս առնէ իւրհրդածուԹիք: Ապա վայրապար է պատասխանիդ: Ցուցանի առաջարկուԹիս • քանզի ամի պատշաճի կարգն իւր, յորմէ Թէ պակասեցի, լինի չար յիւրում սեռի, ոյք արուեստ առնի կարգի արուեստի, և բնականն առնոյ կարգի բնուԹե, համարին՝ի սեռի իւրեանց չար: Այլ ամ ներգործուԹի իւրհրդածեալ է ներգործուԹի բանական: Ապա պատշաճի նմա կարգ բանին, վն այն և բանաւոր վախճան:

Ասցես երկիդ, հնար է բանին կարգել զներգործուին ինչ առ անտարբեր վախճան • և այն՝ պէս Թողուլ զայն յիւրում անտարբերուԹե:

Այլ ընդդէմ է նախ: Ջի որովհետև չէ հնար իմիք ունել զբան վախճանի, Թէ ոչ ընդ բանիւ բարւոյ; հարկ է այսպիսւոյ վախճանի, առ

որ

որ բերի ներգործութեին, լինիլ բարի, կամ ըստ զգայուէ, և առ երևոյթս. և կամ ըստ բանի, և խոհուէ: Եթէ առաջինն, առնէ զներգործութեին չար և անկարգ. զի ոչ վերայ գոյն ասացաք, ոչ վայելէ բանաւոր ստեղծուա ծոյ թմրիլ, և հանգչիլ'ի զգալի բարիս: Եթէ երկրորդն, ներգործութեին լինի բարի և հա մեստ: Ապա ոչ իւիք իրօք անտարբեր: Ընդդէմ է երկրդ: զի վախճանն այն անտար բեր՝ եթէ ոչ իւիք իրօք է բարի, կամ առ բարի լինչ կարգեալ, գոնէ լինի դատարկ: Իսկ արդ ոչ յառաջն ասացաք, ներգործութեին դատարկ է չար վարքաւն: Ապա ուրեմն, և այլն: Յուցանի մեծագոյնս: Չի ըստ սէյն գրիգորի, զոր բերէ ոչն թովմաս՝ • դպրելի է, որ լուանի զգա- * ա. է. կո. պուելի ուղղութիւ, կամ զբան իրաւոյն հարկի, կամ բա ծէ. պ. ին ղեպազպական օգտի: Իսկ արդ վախճանն այն ա մենևին անտարբեր է այսպիսի, ոչ ինքնին իսկ չայտ է: Ապա ուրեմն է դատարկ:

Ո դելիաւոր առարկութեան նշանակեցաք և լուծաք, 'ի յառաջբերել և 'ի ստել զպատաս խանիս հակառակորդաց: Մնան միայն ե րեք: Առաջինն առեալ լինի 'ի բանից անտի հերոնիմոսի. Բարի է ծուծիլուսի. չար է պղպեա քի, և 'ի մէջ երկոցուն անպարբեր' գնալ ըստանել. և այլն: Եկիր չիք լինչ պատուհասն' վերաբերելոյ գործ ներգործուիս 'ի համեստ վախճան: Ապա թէ և ոչ վերաբերոցն, ոչ են չար: Երբ, ոչ գոյ լինչ տեսակ. որոյ ոչ կայցէ անհատ լինչ: Այլ գոն ներգործութիք լինչ 'ի տեսակէ իւ րեանց անտարբերք, ոչ ասացաւ: Ապա պարտին լինիլ և անհատք, կամ ներգործութիք ըստ անհատին անտարբերք:

Պատասխանեմ առ առաջինն, թէ զսբին հե րոնիմոսի բանն լսանալ պարտ է զայնց ներգոր ծուէից, ըստ ինքեան առեալ. վերացուցմամբ 'ի դիտանէ: Քանզի ճշմարիտ է թէ, գնալն բարի ոչ դիտաւորուէ, է բարի: Ապա քան զն այսպիսի գործոցուէիք, զորս հերոնիմոս

կոչէ

կոչէ անտարբերս, լինիլն միշտ կամ՝ի կարգս դնել, և կամ յանկարդ դիտմանէ. հարկ է նոյ լինիլ բարւոք, կամ չարեօք. և այնպէս բարի, կամ չար, ոչ՝ի տեսակէ իւրեանց, այլ՝ի վախճանէ։

Պատասխանեմ առ եկեղն, թէ մարդկիկ պարտաւանդին բնական պատուիրանաւ՝ կեալ բարեպաշտապէս. և խորշիլ՝ի դատարկութենէ. ուսուն և սահմանել զբարի և զրանաւոր վախճան գործոցդ՝ զորս առնեն խորհրդածութեամբ, և հանդերձ դիտմամբ վախճանի։

Պատասխանեմ առ երիդն, զանազանելով զմէծագոյնդ։ չիք լինչ տեսակ որոյ՝ ոչ կայցէ անհատ. վերացուցմամբ, զոր ցուցանէ տեսակն, ուրանամ. առանց այդմ վերացուցման, ընդունիմ։ և ընդունելով զփոքրագոյնդ, զանազանեմ նոյնպէս զհետևութենդ։ Այսպէս պարտին լինիլ անհատք այսց անտարբերք ներգործութենէ, յորս իցէ այդպիսի վերացուցումն՝ի բարութենէ և՝ի չարութենէ, որոյ վերայ ասին անտարբերք, ուրանամ. առանց այդպիսի վերացուցման, և բացորոշութեամբ առ բարութեն, կամ չարութեն ընդունիմ։ Քանզի տեսակն բազում անգամ վերացուցանի՝ի պէսպիսեաց, և ե առ նմա անտարբեր, առ որս անհատքն ոչ կարեն լինիլ անտարբեր։ ոպ տեսակն մարդկային վերացուցանի յամ գունոյ,՝ի սպիտակէ, ՝ի սևոյ, ՝ի թխոյ, և այլն։ Եւ սակայն հարկ է անհատից նորա՝ որոշիլ՝ի մի գունոց, զ ոչ գտանի մարդ, որ ոչ իցէ՝ կամ սպիտակ, կամ սեաւ, կամ թուխ, և այլն։



# ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ։

Յաղագս կանոնաց բարուց, ուր և յաղագս խղճի մտաց, և օրինաց։



Անգլ յայտ է յաստացելոցս՝ թէ բա րոյականութենն կայանայ՝ ի համաձայնութենէ ազատ ներգործութենէ ընդ կանոն ինչ, որում թէ համաձայն իցէ, լինի բարի, և թէ տարաձայն, համարի չար։ Ինայ մեզ ասել ինչ զայսմ կանոնէ։

## Ա՛ռաջին եղբայացութենէ։

Առաջին, և հեռաւոր կանոն մարդկային ներգործութենց է օրէնքն յաւիտենական, որ յայն սակս է աղբիւր, և առաջին սկիզբն ամ համեատութե, և բարոյական բարութե։ Ա՛յսպէս դնէ ոքն Թովմաս *։

Յաւիտենական օրինօք, ըստ սահմանելոյ սրբոյն Թովմայի *, լինանի բանն ամենայն իմաստութենէ, որ առգնէ զամ առ պատշաճ վախճան. կամ ըստ սահմանելոյ սրբոյն օգոստինոսի *, բանն ծայրագոյն, որում պարտ է հնազանդիլ։ Զի զոր օրինակ ճարտարապետն, որ վերակացուն է բովանդակ շինութեան, ուրանի ինքն՝ ի մանր, որում ըստորին, և ներքոյ անկեաղ ճարտարութիւն իւրաքանչիւր ըստ իւրում պայմանի հնազանդիլ պարտին, զի ուղիղ գործեսցեն. յորմէ թէ խոտորեսցին, սխալին։ Այնպէս ծայրագոյն կառավար ամ է ինչ ամ, մտօք և իմաստութենէ իւրով յաւիտենից հաստատեաց բան կարգի, պահել զայն՝ ամ իւրոց հնազանդելոց, զի ուղիղ գործիցեն, ըստ որոյ և ինքն գործէ հանապազ։ և ամ բան ստորին, ունի զի ուղիղ իցէ, պարտի առնել ըստ նմին, և թէ յայնմանէ խոտորեցի, մեղանչէ։ Ասաւ զմեզս ուղիղ սահմանէ

* ա. է. խա. ձէ. պ. ըէ։
* ա. է. խա. պէ. պ. ա։
* գիրք ա. յոբէ անչն իշխանութ. ըէ. գ. ըչ։

ամն

* ընդդէմ Աբեն օլոստինոս *, լաօսփ, կամ գոլճ, կամ յանկոս ֆաճոսո՝ սի. գլ. ը։ * ա. ք. լա. պէ. պ. ֆ։

ԼԲ ընդդէմ յաւիքենական օրինաց։

Յուցանել եղբակացութեիս բանիւ սքանչ Թովմայի *. Յամ կարգեալ շարժօղս, երկրորդն կանոնաւորն յաւելնոյն. ոչ՝ ի քաղաքականս աստրին դատաւորք յիշխանէն. և յարհեստականս, աստրին Ճարտարք՝ ի Ճարտարապետէն։ Այլ օրէնքն յաւիտենական է բան զերագոյն իշխանի և կատարիչն ամ էիցս՝ այ։ Ապա այն է առաջին կանոն ամ աստրին բանից. և ներգործութեց՝ ի նոցունց յաւաջ եկելոց։ Ուստի ուղղութեի այլոց օրինաց, և բարութեի ներգործութեց, նախ՝ և մանաւանդ դատի՝ ի համեմատութէ աւ այն օրէնան. և զայնս համարիլ պարտ է Ճշմարտիւ բարի, ուղիղ և համեստ, որք հաւանձայն են սմա, Թէպէտ և մրիկեղէն բանի՝ ի սկզբան անդ անդէպ երևեսցին։ Զի յոլովակի այս օրէնք յաւիտենական ընտրէ զմարդկան անտեղի երևեալն. ոչ՝ ի սահմանել յաւիտենական փրկութեե Ճանապարհ զնաչէցելոյն երկրպագութիւն, զարհամարհութեն սէր, զկամաւոր աղքատութի, զառ՝ ի պատուհոյ և՝ ի համբաւոյ փախուստ. զմտադիւր Ճգանց յանձնառութի, և այլն։ Իսկ որք այսմ օրինաց ընդդէմ դառնան, զայնս համարել պարտ է չարս, Թէպէտ և առ կարծիս մարդկան ուղիղ և աքանչելի երևեսցին։ Վասն այսորիկ այն ամ մարդկային քաղաքականութե Ճարտարմտութի, որ այնպէս զգօնաւթ զհաստարակաց օգուտ խնամարկէ. զխաղաղութե, և զպատերազմի զպէտս իմաստութե անտեսէ, և առ թագաւորութե պահպանութի, առաւելութի յաղողութի և ընդարձակութի ամենազգաստ տեսչութե տքնի։ մանաւանդ Թէ՝ որ ինչ հրաշանշան առաքինութե ցոյց ուրեք երևեցի, եԹէ ոչ այսմ օրինի միաբան լիցի, ընդ ձայ, և ըստ Ճշմարտութե, խորամանկութիւն է, և կամ անմտութի և անօրէնութի գումնատ գեղեաւ առաքինութե։

Զայս

Օայս օրէն յաւիտենական, և զտրա ամե-
նայն օրինաց և համեստութե՚ զալըխուր և
գկանոնն լինիլ, ոչ միայն ՚ի վարդապետէ՚ այլ
և փիլիսոփայէ իսկ ծանեան բնական լուսով ։
ոյզ գրե կիկերոն * ։ ասէ ։ Ազ յ՚ կոչիւ եղէն ի- * գիրք ։ ֆ ։
մասպանոյ, լինիլ օրինաց, ոչ մարդկան ճարպարմտութե՚ յաղէա ։ օ-
գիւտ, և ոչ ժողովրդոյ իմաստ, այլ յաւիտենական րինաց ։
ինչ, որ վարէ զամ աշխարհ, ՚ի հրամայել և յարգե-
լուլ իմաստութե՚ ։ Զայն իշխանաւոր օրէնս՝ որպ ասէին
լինիլ ՚ամ, որ զամ բանի՚ հարկէ, կամ արգելու ։ Յոր
մի՚, ասէ, ՚ամ ուղիղ օրինադրեալ օրէնիք ու-
նին զզօրութե՚ ։ որ ոչ միայն ե վաղնջու տան պատ-
ամանակաց ժողովրդոյ՝ և փաղաքաց ։ այլ յաւիտենից
՚ամ հաստիւէ երկնի և երկրի ։ Զի չէ իսկ հնար ա՚ծե
զկեն մտաց լինիլ առանց բանի, և ոչ ա՚ծեզկեն բանի
չուանիլ զօրութե՚ օրինադրելոյ, զինչ ուղիղ, և զինչ
ընթար իցէ ։ Վասն այսորիկ օրէն ճշմարիտք և իշխանա-
ւոր ։ որոմ անկ ե հրամայել և խուչնեցուցանել, ե մե-
ծին ՚ամ ուղիղ բան ։ Յորմէ ՚ի վերայ ա՚ծէ, ոչ
լինչ օրինաց լինիլ ուղիղ, թե ոչ՝ որ ՚ամայ ի-
ցէ միաբան ։

Յայտնանէ յայտ ե թէ հաստատն և ուղիղն ոչ
կախի ՚ի կարծեաց մարդկան, կամ ՚ի սովորու-
թե՚, կամ յօգտութե՚ ։ այլ ՚ի քնութե՚, և ՚ի
հաստատութե՚ ։ Զի հաստատեալ կայ ՚ի նոյն
պատճառ, յոր և քնութե՚ն ։ և ոչ ըստ մարդ-
կան կամաց դատի, այլ ըստ ա՚ծային օրինաց
և բանի, որոմ ա՚մ լինչ բնապէս ներքոյ ան-
կանի, ա՚ն և ՚ի վերագոյնդ նշանակի տոհմ-
ին ։

## Երիտասարդ եղբայրութե՚ ։

Վերձաւոր և անմիջական կանոն բարոյակա
նութե՚, ե բանն թեզատիր կատարց, զինչ
բարի իցէ, և զինչ չար ։ Ըղձակացութե՚ն ե
սա՚ն թռվմայէ * ։ ասէ ։ Կանոն մարդկային կո- * ա՚ ։ բ ։ հռ ։
մաց ե կրկին ։ մին մերձաւոր, և հեռաւոր ։ այսինքն, պր ։ ա՚ ։
բոնն մարդկային, իսկ հեռն աստուածին կանոն ։ այ-
նինքն ։

ինքն, օրէնքն յաւիտենական, որ է իբր բան այ:
Յուզանել եղբակացութիւնս, հայելով ի զանա-
զանութիւնն որ ի մէջ սահմանաժողով բանաւո-
րաց և անբանից: Քանզի անբանք ոչ ուղղին
ընկերանալ, այլ ուղղին յարարչէն բնութիւն, և
վասն այն ոչ է պարտ նոցա ունել յինքեանս զգու-
ժող խրատանց կանոն. այլ ի միտս արարչին
միայն. ոչ կանոնն որ ուղղէ զնոսա ի նպա-
տակ, ոչ է ի նոսա՝ այլ ի նոսատածին: Բայց
բանաւորս սահմանաժողն, ոչ միայն իշխանու-
թիւն ունի ուղղել զինքն, և զներգործութիւնս իւր
կարգել: Ապա քանզի ամ կարգ՝ է ըստ կանո-
նի մինչ եղելոյ ի միտս կարգողին, ոչ կարգն
արուեստական ըստ կանոնաց արուեստին՝ եղե-
լոց ի միտս արուեստաւորին, և կարգն քաղա-
քական ըստ կանոնաց եղելոց ի միտս իշխա-
նին, պատշաճ եղև հաստատել ի մարդ զկա-
նոն մինչ, առ ուղղելոյ զինքն, և կարգելոյ զը
ներգործութիւնս իւր բարւոք: Եւ այս կանոն
* ա. Ք. կո. է բանն, որ ըստ սրբին Թովմայի *, ածանի ի յա-
ծիւ. պ. Ք. ւիպէնական օրինաց իբր բան պատկեր նորին: Վա
առ Ք: յասորիկ սահմանագրութեան ի ոչ սահմանին յետ
սահելոյն, հապարդիւ պատարագս արդարոյ է,
զգործս բարութիւն, իբր առարկելով, յարէ.
բարեմտ առնին, ընդ ո՛ դասցի մեզ պիտուիքն. որում
պատասխանի, նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց.
* ա. Ք. կո. ոչ թէ կամելով ասել, ըստ սրբին Թովմայի *,
ծիւ. պ. Ք: Լոյս բանին, որ ի մեզ, ըստ այնմ դասցի մեզ զը
բարութիւն, ըստ որոմ է լոյս երեսաց քոց, այսինքն,
նշանեցաւ քոց ծագել:

Ասեցեալ, բայց յերկուց սահմանաց բա-
րոյ գան և այլ բազումք. ըստ օրինակ՝ եթէ եկե
ղեցականք, և եթէ քաղաքականք: և դարձեալ
խնդրեն մտաց քոյ կանոնաւորել զբարոյակա-
նութիւն ներգործութեանց: Ապա անբաւական
է վերադրեալ բաժանումն:

Պատասխանեմ, լաւ ասացեալ օրինակ, և խնդիր
մտաց՝ բովանդակին յերկուսին կանոնաց նշանա-
կեալս ի մէնջ: Զի խնդիր մտաց ոչ այլ ինչ է,

բայց եթէ բանն ներգործուԹիւն Թեւլադրիլ, յորմէ խորչիլ պարտ կայէ, և զորմէ զհետ երԹալ: Իսկ այլ օրէնք են հաղորդուԹիւնք մինչ յաւիտենական օրինաց, և սահմանադրուԹիւնք բանի իշխանին՝ որ պետն է հասարակուԹե: Ա՛յլ յալագս խղճի մտաց, և օրինաց առաջնորդք մինչ համառօտ:

## Յալագս խղճի մտաց:

Խղճմն մտաց այնպէս ենԹադրի՛ ի հարց: Մտորգինէս կոչէ ընա, ուղղիւ ոգւոյ. և դասպիարակ ընկերակիցեաւ հոգւոյ, որով մեկնիմ՛ ի լրչեաց, և զնէպ երեսամ բարեաց: Բասիլիոս, բնականն դպրապետն: Դամասկացին, լոյս իմացուԹե՛ ձերոյ, յայտ է ԹԷ՝ գործնականի: Բայց լսա գոյն սահմանի՛ ի սրբոյն Թովմայէ *. Դպրութի՛ մտաց, որով ոք ձերիցուցանէ զգործնական ինչ գիՀնոց-ՃՓ: պուԹի՛ ի մասնաւոր ներգործուԹի՛: յորմէ խոկ կոչի խրբեան գիպակցուԹի՛, ոմն ԹԷ ընդ այլուս գիՀրուԹիւն: Զի ոմն յառաջն ասացաք, բանն ԹԷ լադիր է կանոն բարուց: Ա՛րդ՛ ի բանն երկուս ինչ մտածին. Նախ ընդհանուր ծանօԹուԹիւն գործնական սկզբանց. և ապա՝ պրպնջիկան: Երկրորդ մերձեցուցումն այնր ընդհանուր ձանաչման՛ ի գործ մասնաւոր. և ապա՝ խղճմտաց, խղճմտից:

Մա ընծային գործք զանազան, իբ, ձկայել, պահպանել, պաղել, անբասիր առնել, ամբաստանել՝ կամ ըսփփանել: Որոց այսէ պատճառ, զի մերձեցուցումն գործնական գիտուԹե՛ ի ներգործուԹիւն կարէ լինիլ երկակի: Մի՝ իբր ներքինի հաւաստուԹե, ըստ որում ձանաչեմք՛ ի ներքս՛ ի մեզ, ԹԷ արարած ինչ. և ըստ այսմ խղճն մտաց ասի ձկայել, և հաստատել: Երկրորդ իբր դատաստան առնելոց, որ որոշէ՛ ի մէջ համեստին և անհամեստին. և ըստ այսմ խղճն մտաց ասի պղծել, Թելադրելով զինչ առնել պարտ կայէ. և պարտաւորել՝ առաջի առնելով

զայն զոր պարտաւորիմք առնել: Եւ երկրորդ
մերձեցուցանի գիտութիւնն ի գործ, ըստ որում
զգործեալս աղմկաւ, ի խաղաղական առեան
բանին ի քննին մատուցանեմք, և ըստ այմ
խնդիրն մտաց առն անբասիր առնել, եթէ զոր
գործեցաքն գաւեմք ի ներքս ի մեզ, բարւոք
գործեալ. և ամբաստանել կամ ըսդգիանել, ե-

թէ տարաձայն գոցն ի լուսոյ բանին:

Խնդիր մտաց եօթն գլխաւոր որպիսութիւս զանա
զանեն ածաբանք: ըստ Աւգիլ, Թիւր, հաւանական.
երկբայական, ստոյգ, խղճահար, և մոլար:
Ոմանք են, որ պատշաճաւոր գտեալ զհամեա-
տութիւն գործոց՝ ըստ վճիռ և անեղծ լուսոյ և
սկզբանց բանին. և սա է միշտ սկիզբն բարւոյ
գործոյ: Թիւրն է, որ գտեալ զառնելեացս ըստ
հաճոյից և ճաշակաց՝ ախտաւոր և չարագին
կրից կամ կամաց: և սա միշտ սկիզբն չար
գործոց: Հաւանականն է, որ գտեալ զառնե
լեաց ըստ հաւանական սկզբանց, (որպիսի են
վկայութիւնք ոմանց վարդապետաց. օրինակք
արանց երկիւղածաց. փաստք ըստ իրաց լինչ
հաւանեցուցիչք.) տակայն խնդրաւոր ի հակա
ռակ կողմանէն: որ լինի երկակի: Նախ յոր-
ժամ մեծ է հաւանականութիւնն զվատթարու-
թիւ գործոյն, քան զհամեստութիւ: Երկրորդ
անդրադարձեալ, յորժամ մեծ է հաւանակա
նութիւնն զհամեստութիւ նորա՝ քան զվատթա-
րութիւ: Երբդ յորժամ հաւասար է կերկու
ցունց կողմանց հաւանականութիւնն: Ընդու-
նելի է թէ հաւանական խնդիրն մտաց կարէ
լինել կանոն բարւոյ գործոյ, եթէ հաւանա-
կանութիւնն առաւել հակեալ լցէ ի համեստու
թիւն գործոյն, քան ի վատթարութիւն նր. քան-
զի որովհետև ուր ուրեմն հանդիպի ունել
զառնելեաց հաւասար ստուգութիւն, բաւական
է զհետ երթալ այնմ որ հաւանականագոյն ի-
ցէ: Քայց թէ արդեօք ի լինիլ հաւանակա-
նութիւն կերկուց կողմանց հաւասար, կամ ի
միտելն առաւել ի դատապարտութիւն գործոյն,

մերթ

մարթ լեալ մեզ և այնպէս ձեռնարկել յայն գործ, ստհմանելով՝ յայդպիսի դիպուածս՝ լինել մեզ օրինաւոր, եթէ զի հաւանական բարուքին այն զերծ կացուցանէ զնա՛ի վատթարութենէն, խնդիր է դժուարին, զոր առ ըստ արժանեաց քննել, յիւրեանս գրաւեն ածելանք: Ըստ լեալ առ այժմ ասել. Թէ ոչ երևի՝ այր անկեղծ բարւոյ հաւատալ, որ զայսպիսի հաւանականութենէ ստուերս անձկաւ խնդրիցէ, առ լայնելոյ զվարս, և ոչ հրաժարիցի՛ի գործոյ, զորմէ ծանր ծանր պատճառք վըկայեն բաստրելի լինիլ, թէպէտ և ոչ այնպէս հաւաստեալ, մինչ ոչ թողուլ տեղի անբաւականութենէ: Ա՛յլ քեզ աւասիկ յիրիդ յայդմիկ կանոն զգուշաւոր, զոր սահմանէ առաքեալն*, *Ա՛ուէ՛ասե՛ասե • Ջա՛յ ինչ փոյթ էիցէ, կի՛մ ըստ յուսոյ, քանէ՛ցէ՛: Ջբարին ընկալարուք: Յա՛մէ իրաց չարաց՝ ի բա՛ց կայէ՛: Երկբայական խիղճ մտացն է, որ՛ի մէջ երկուց ներհակեալ գաւամանց տատանի, և ոչ գիտէ թէ զո՛րն կալցի. և սա ոչ կարէ լինիլ կանոն բարւոյ գործոյ. վ՛ր զի առաջի առնէ կատարած գործոյ զոր յայտնի վտանգաւոր, յորմէ խոհեմութենն դատէ հրաժարիլ: Այսպէս խիղճ մըտացն է, որ այնպէս հաստատեալ կայ՛ի դատումն համեստութենէ գործոյն, մինչ ոչինչ խրթին նմա զվատթարութենէ նորա. կամ՝ վասն զի յայտ յանդիման հաւաստի է բարուքն առնելի երևին, և յայնժամ ասի պարտաւորէ ֆիզիկան: և կամ եթէ բարուքին առնելի երևին չէ ցե ստոյգ, և հաւաստի, գէթ զքննելիսն քննելով՝ հաւաստեալ հետևեցուցանէ, թէ հնար է օրինօք՝ առնել զայն գործ, և սա ասի պարտաւորէ խոհեմական, կամ բարոյական: Խղճահար խիղճ մտացն է, որ՛ի թերեւս սկզբունս իբր՛ի մեծ ինչ պատճառս ծանծաղմտութենէ հաստատի, և՛ի դատէն զառնելեացս և զկորչելեացս, յայնս ապաստանի: բայց առաւել՛ի դատել զկորչելեացս: Իսկ մնացեալ խիղճն է, որ՛ի տուտ սկզբանց հազմէ թերևս[illegible]

Ներեաց, և զայն առաջին դնէ իբրև ճշդիւտ կա
նոն բարուց գործելոյ: Այլ եթէ հետեանոս ոչ
հաստատուէր ի մտի եդեալ, թէ դիտս լիցի
ձօ, յայնմանէ հետեւեցուցանիցէ, թէ պարտ
է նմա երկիւղած լինել: և սա պարտաւորէ,
մինչ զի մեղանչէի, որ զընդդէմն գործիցէ. այլ
ոչ անպարտ առնէ յայնս, որք ըստ այսմ խղճի
լինին, եթէ ոչ մոլորուեին էգէ անյաղթելի:

## Յաղագս օրինաց:

"ա. է. կա. գ. պ. Ը: Օրէնքն սահմանի ի սէրն Թովմայէ*, կամ գոնէ բանի սա բարին հասարակաց, հրապարա
ղեալ յայնմանէ, որ իւրեք հասարակուէ: Ասի, հարգոյն բանի, կամ կարգ առնելեաց՝ սահմա
նեալ ի բանէն, վ զի բանին է ուղղել զառ
նելիս: Եւ յարի, սա բարին հասարակաց. զի կարգ առնելեաց առեալ լինի ի վերջին վախճանէ:
Արդ վերջին վախճան է բարին հասարակաց. որումամ մանաւանդ ներքոյ անկանին. վ որոյ օրէնքն հայի ի հասարակաց բարին, և զմանա
ւորս առ այն ուղղէ: Ասի, յայնմանէ, որ իւրեք հասարակուէ, զի ուղղել վնեղբոյանիւեալս առ հասարակաց բարին, անկ է այնմ, որ իւրեք հա
սարակուէ. ուստի և իրաւունքն օրէնադրու
թէ ի խնամել զայն բարւոյ: Ասի հրապարակեալ, վ զի օրէնքն է կանոն. արդ չափին և կանոնն դնի ի վերայ, յորժամ մերձեցուցանի ի չա
փեալսն. իսկ օրէնքն մերձեցուցանի, յորժամ հրատարակի, կամ ծանուցանի հնազանդելոց. ուստի հրատարակութիւնն է կէտ թէ օրինաց, և պատուիրանին, առանց որոյ ոչ պարտա
ւորէ:

Բաժանի օրէնքն ի բնական, և ի դրական: Բնականն է որ պարունակի ի բնութէ իրաց. իսկ դրականն է, որ իբրև թէ ի վերայ դնի սորա. որոշելով նրա ինչ բնապէս անհատ
բերս:

Օրէնքն բնական բաժանի յօրէն յաւիտենա
կան,

կան, որ է իբր հակառակ օրէնք: և յօրէն բնա-
կան հաղորդեալ, որ է ածանցումն ինչ նորա:
Օրէնքն յաւիտենական, ոչ առացաք, է ու-
ղիղ բան առնելեաց 'ի միտս այ յաւիտենից
դոյօղ: Օրէնքն բնական հաղորդեալ՝ է տպա-
ւորութիւն յաւիտենական օրինաց 'ի բանաւոր
առեղծուածս, կամ բնական լոյս դործնական
յաճախին լուսոյ ածանցեալ. որով որոշի հա
մեան 'ի չարագուշն: Ա յս օրէն է յամ բա-
նաւարս, և սուաւ, ոչ ասի յովհաննու. ն. լո-
սաւոր առնէ այ զամ մարդ՝ որ գայ յաշխարհ: Բայց
երբեմն կրկնէ, և մոլեդին դնացնէ, և վատ-
թար աննդեամբ այնպէս ասլականի մարդ, մինչ
զի թէպէտ ոչ խոպատ չիջանի, բայց ծածկի այս
լոյս, որով վարկանի զչարն բարի, և զբարին
չար: Սակայն փայլէ և 'ի խաւարի անդ՝ այսր
անչէջ լուսոյ Հառաջագոյն. 'ի յանդիմանել,
'ի կշտամբել, 'ի պարտաւորել, 'ի գանել և 'ի
խածատել լուսեղէնն զսիրտ չարագոյզ:

Բնական օրինաց այս է բովանդակուածն. Ի-
պոլէ՞ս 'ի լոյն, և սրա պէտն: Արդ բարին
մարդոյ առաւելապէս նկատի ըստ մտաց, որ
է 'ի նմա գլխաւոր, և ապա ըստ այլոց, որք
հնոթարկեալ են մտաց: Եւ վն այն բնական
օրէնքն է, նախ ուղիղ լինիլ մտաց մարդոյ առ
բարին իւր, կամ առ վերջին վախճան, և ոչ
յայլ ինչ սևեռիլ, բայց յայծ, որ է իսկապէս
բարի և վերջին վախճան մտաց: Վասն որոյ
առաջին տպաւորութիւնն յաւիտենական օրի-
նաց, որով և առաջին պատուիրանն բնական
օրինաց, (ըստ սբ. Օգոստինոսի *) է հրամայել * գիրք Ճ.
ցոլանալ վերին 'ի ծանականաւորաց, և սրբել զայն յաղագս
դարձուցանել առ յաւիտենական: և կամ սիրել անչնչելոս
զայծ իբրև ծայրագոյն բարի, և 'ի նա ուղղել նորին:
զամ ախորժակս մտաց:

Եւ ապա յայս օրէն վերաբերի, պահել մար-
դոյ զուղիղ կարգ բանին՝ եթէ 'ի պահպանուե
գոլոյ իւրոյ, եթէ 'ի սերունդ իւրոյ տեսակին,
եթէ 'ի շարժմունս կրից. և եթէ 'ի կենակ-

դուԹԵ ընդ այլ մարդիկ • ընդ որս բնական ըն
կերուԹԵ կցորդի • ՚ի է, զի զծնօղս պատուԵս
ցէ, զորդիս ուղիղ անուացէ և հրահանգԵս
ցէ, զդաշինս պահԵսցէ : Հասարակաց բար
ւոյն վաստակակից լինիցի • ամն զնւբն տացէ,
և ամ որսացէ այլոց, զոր ինչ ոչ կամի ԹԵ ին
քեան լինի, և այլն: Յոր պատուիրանս ծա
նուցեալս ՚ի բնէ՝ հասատատեալ կան ամ իրա
ւունք մարդկային ընկերուԹԵ :

Լսնդրիցեա, եԹԵ հնար իցէ բնական օրինաց
փոխիլ : և կամ արժան իցէ երբեմն զայն անօ
րինել :

* ա. է. կո. ղէ: Պատասխանեմ ընդ աչին Թովմայի * • ԹԵ պա
տուիրանք բնական օրինաց են երկատեսակ :
Ոմանք են նախնականք, և իբր ընդհանուր
սկզբունք գործնականք . ծանուցեալք ըստ ին
քեանց • որպէս , ԹԵ պարտ է պաշտել զԱծ •
պատուիլ զծնօղս , առ ամենեսեան պահել զի
րաւունս • և այլն : Իսկ ոմանք են իբր երկ
րորդականք , որ իբր մանաւանդ եզրակացուԹիք
ածանցեալք յառաջնոց անտի , ոմն , ԹԵ պարտ
է հատուցանել զաւանդս, պահել զնորհուրդս,
և այլն : Առաջնոցն , որք տիրաբար , և ըստ ին
քեանց կացուցանեն զբնական օրէնս , ոչ փո
խիլ հնար է , և ոչ տնօրինմամբ լուծանիլ • զի
են տպաւորուԹիք ինչ յաւիտենական օրինաց ,
որ է անփոփոխ , և ոչ ունի վերնագոյն՝ յորմէ
լուծցի , վասն զի է ՚ի բան : Բայց երկրորդական
հրամանաց հնար է երբեմն փոխիլ , և անօրի
նիլ , զի ոմն ՚ի սեռականս եզրակացուԹիք կա
նոնաւորին սկզբամբք , այսինքն և այս եկեղեցական
պատուիրանք՝ առաջնովք : Բայց հանդիպել եր
բեմն՝ վասն պարագայից ինչ՝ որ արտաքոյ քան զ
սովորականն, այսց եկեղեցական պատուիրանաց՝
ըստ հակառակս ելանել առաջնոց • կամ ոչ այնպէս
հարկաւ կապակցիլ ըստ առաջինոն , զի չիցէ հր
նար զանց առնել զնոքօք՝ առանց յառաջինոն
անօրինելոյ : Յառաջնում դիպուածոյ փոխին ,
և յերկրդում անօրինին չիցէ , որ է օրինադիր

բնու-

բնութիւն: Ըստ այսմ զղջանս եդեալս ի պահ՝ ոչ
է պարտ հատուցանել ոմանց զայրացելոյ: Ըստ
այսմ կանխաւ անօրինեաց ած ոմանց առնուլ
զբաղդս կանայս: Զի հնգկէտ բնութեամբ մարդ-
կան, և վախճանի ամուսնութիւնն պատշաճէ,
թէ միոյ առն լցէ մի միայն կին. և վասն այն բազ-
մաւորութիւն կանանց հակառակի երկրորդական
պատուիրանի բնութեանն, առ որոյ հաստատուն
յաւելաւ և ածային պատուիրան դրական * . *Ծննդ. Ե:
բայց բազմաւորութիւն կանանց ոչ այնպէս հա-
կառակի վախճանի ամուսնութեանն, և առաջնոց
պատուիրանաց բնական օրինաց, մինչև առանց
ընտրոյ սոցա անհնարին լինիլ այ Թոյլ տալ
այնմ, առ վայելգոյն ածումն հաւատացեալ
ժողովրդեան:

Առարկեցես. սպանութիւն անմեղի, չնութիւն,
և բարձումն ընչից օտարի, ևս առաջին պատ-
ուիրանաւք բնական օրինաց արգելանին: Ա՛յլ
ած անօրինեաց ի սոսին, ի հրամայել աբրա-
համ՝ զենուլ զորդին *, և հրեից՝ բառնալ *Ծննդ. Ե:
զփոխս առեալ անօթս եգիպտացւոց *. և ով- * Ելից.
սեայ, առնուլ զկին պոռնիկ *: Ապա հնար է Թ:
անօրինել ի բնական օրինաց: * Ովս. ա:
Պատասխանեմ ընդ սմին Թովմայի *. Թէ յայնս * ա. Ե. խ.
տիրաբար ոչ եղև անօրինութիւն. այլ՝ յաւել- գչ. պր. Ե:
մամբ պարագայի լինի ի վերայ ածային հրամա-
նին, այն որ առանց այսր պարագայի լինէր
ընդդէմ բնական իրաւանց, առնի եղև հնազան-
ձայն: Քանզի ած է տէր. վասն այն ոչ է ընդ-
դէմ իրաւանց բնութեան հրամանաւ նր սպանա-
նել զմարդ. կամ զկէսէն յաւելագոյն այլոց
անձին սեպհականել. կամ ի կին ոք տուողոյ
քան զաւրական եղանակ ամուսնութեան մեր-
ձենալ. զի յայնժամ լինի օրինաւոր ի նշանա-
կելոյն այ:

Օրէնքն դրական բաժանի ի մարդկային, և
յածային, զի բաց յայնց որք բնաւորապէս են
արդար և ուղիղ, են և ոմանք ի մարդկանէ, և
յայ տուեալք, որք յառաջն էին անտարբերք:

(Երկնքն մրրկային սահմանի, կարդումն առ-
նելոյց՝ ի միտս լիշեսանին նախ ծանուցել.
և առ բազմութեն հրատարակեալ: Այս օրէնն
է ամ իրօք հարկաւոր առ հասարակաց խաղա-
ղութ. որումն ոչ էր հնար կալ, եթէ ոչ մարդ-
կային ընկերութենն հնազանդ լինէր լիշեսանու-
թինչ, որ օրինօք զչարան սանձէր, և բարեաց յա-
ջողէր. և ամն լինէր խնամակալու: Իզեկո-
բոս ենթադրէ զամ հանգամանս մարդկային
օրինաց՝ յասելն *. Ընդէղ օրէնդն հայեսք, արդար,
պատգաբա- հաւնիլ, սար բնութիւն, սար երկիրն տնկրութիւն. սար
նութեց. պատրաստի փեղոյ և ժամանակի, կարող, օգտակար,
գլ. ին: և յայտնի, զի մի գաղտնութիւն ենագ ինչ լինիցի ի
նմա. ոչ յատաւնչինն ջահ, այլ առ հասարակ օգուտ
տալոց տացեալ՝ գրելոյ: Բաժանի յիրաւունս ազ-
գաց, և յիրաւունս քաղաքական: Իրաւունք
ազգաց է, որով վարին ամ ազինք, իբր ընդ-
հանուրք ընութենէ և բանի կեցեալ: Իսկ
իրաւունք քաղաքական է, զոր իւրաքանչիւր
հասարակութեն օրինադրէ իւրոց:

(Երկնքն ձծային է առ յայ կացուցեալ կար-
գումն՝ առնելեաց՝ ի հաւատացեալ ժողովրդե-
նէ՝ առ՝ի հաճոյ լինել այ. և ստանալ զդերբնա-
կան երջանկութեն: Քանզի ամ մարդիկ, ըստ
որում միաբանին՝ ի հետամուտ լինել ճշմարիտ
երջանկութե, կայուցանեն զհասարակութեն, ինչ,
որոյ լիշեսան է ձծ, և վն այն նմա անկ է կարդել
զպատկանեալս առ կառավարութեն այսր հասա-
րակութե: Այս օրէնք բաժանի՝ ի հին և՝ ինոր.
կի՝ ի գրաւոր օրէնս. և՝ ի շնորհաց օրէնս:
Օրէնքն հին կի գրաւոր՝ էր զօրինակօք հան-
դերձեալ փրկութե: Իսկ օրէնքն նոր, կամ
շնորհաց՝ ոչ զօրինակս, այլ զնոսին ունի զճա-
նապարհին փրկութե:

Ներգործութիւնք օրինաց են սորք: Հրամայել
զբարիս. արգելուլ զչարիս. թոյլ տալ ան-
տարբերից. և պատժել զյանցաւորս: Այլ
զայսցանե շատ լիցի ցայսմայր: Տես՝ ի սբ
Թովմա*, յորմէ զսակաւս զայս հաւաքեցաք:

Խն-

* ա. է. ի
ընդդէմ
մինչ-
ծեալ.

# ԽՈՐՈՒՐ ՀԻՆԳՆԵՐՈՐԴՈՒ:

## ՅԱՂԱԳՈ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ:

ՅԱՅՏՆԻ Է ԶԱԺԱՆՈՒՄՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵ ՅԻՄԱՑԱԿԱՆ, ՈՐ ԼԻՆԻ ՅԻՄԱՑՈՒԹԵ, ԵՒ ԿԱՏԱՐԵ ՊՆԱ Ի ՀԱՍՈՒ ԼԻՆԻԼ ՃՇՄԱՐՏՈՒԹԵ. ԵՒ Ի ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՐ ԿԱՏԱՐԵ ԶԲԱՂՃԱՆԱՆ ԱՌ ԲԱՐԵՕՔ: ԶԻՄԱՑԱԿԱՆԱՑ ԱՍԵԼ ՈՒՆԻՄՔ Ի ՀԱՄԱԲՆԱԲՆՈՒԵ, ԱՍԱ ԶԲԱՐՈՅԱԿԱՆԱՑ ՄԻԱՅՆ ԳՐԵՑՈՒՔ ՀԱՄԱՌՕՏ. ԸՆԴ ՈՐՍ ԴԱՌԵՄՔ ԵՒ ԶԼՍՀԵՄՈՒԹԵՆ, ՈՐ ԹԷՊԵՏ Է ՅԻՄԱՑՈՒԹԵ, ԵՒ ԿԱՏԱՐԵ ՊՆԱ Ի ՀԱՍՈՒ ԼԻՆԻԼ ՃՇՄԱՐՏՈՒԹԵ, ԵՒ ՎՏ ԱՅՆ ՇԸ ԻՄԱՑԱԿԱՆԱՆ ՀԱՄԱՐԻ. ԲԱՅՑ ԵՒ ԱՌ ԲԱՐՈՅԱԿԱՆԱՆ ՎԵՐԱԲԵՐԻ ԱՌԱՒԵԼ, ԸՍՏ ՈՐՈՒՄ ՀԱՍՏԱՏԱԻ ՅՈՒՂԻՂ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵ ԲԱՂՃԱՆԱՑ ՀՈՒՐՉ ՁԼԱԽՃԱՆՈՔ ԱՌՆԵԼԻՑ: ԵՒ Ի ԿԱՏԱՒԱՐԵԼ ԶԱՅՆ ԲԱՂՃԱՆԱՆ ՊԱՏԱՃԱՌԻ: ԻՍԿ ՁՈՐ ԻՆՉ ՅԱՂԱԳՈ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ՝ ԱՌԱՋԻ ԿԱՅ ՄԵՁ ԼՍԱԼԻ, ԵՐԲԻՑ ՊՐԱԿՍ ԲՈՎԱՆԴԱԿԵՑՈՒՔ, ՃԱՌԵԱԼ ՆԱԽ ԶԸՆՈՒԹԻՆ ՆՈՐԱ ԵՒ ՁՅԱՏԿՈՒԹԵՑ. ԵՐԿՐՈՐԴ ՂՊԱՏՃԱՌԱՑ ՆՈՅ, ԵՒ ԶԲԱԺԱՆՄԱՆԷ. ԵՐՐՈՐԴ ՅԱՂԱԳՈ ՆԵՐՀԱԿԱՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԵ. ԿԻՍ ՅԱՂԱԳՈ ՄՈՂՈՒԹԻՒՆ:

# ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ:

Յաղագս բնութեան, և յատկութեանց առաքինութեան:



Որս սահմանս առաքինութեանց յայլ և այլ տեղիս ասացաք արիստոտէլ: Յառաջին գլուխս, որ յայսգս երկնից, գլ. ժ: սահմանէ զառաքինութեան սեռօրէն ծագ կարողութիւն. ցի ամենակալ սար որպիսութիւնն: Ա յս սահման, ընծայի և առարկայի առաքինութիւն. զի առարկայն՝ առ որ մեծագոյն կանք կարողութիւն զնրե վերանալ, կոչի ծագ կարողութիւն:

Երկրորդ գլուխս բնաբանութիւն. գլ. ձ. սահմանեն զայն, պրամատրութիւն կոպարելոյ առ նա բարեգոյնն. ուր առեալ լինի պրամատրութիւն միջոցն մի ընդարձակագոյն, քան որում և զառնակութիւնն միակ ընդ նմա: Առդ առաքինութեան ասի պրամատրութիւն կոպարելոյ, ցի կարողութիւն, որ յոնին զնրիշն զառաքինութիւն՝ է կատարեալ. առ նա բարեգոյնն. ցի առ՝ի առնել զներգործութիւնս նա բարեգոյնն եղանակաւ քան զառաջինն:

Ասանաւորապէս սահմանէ զառաքինութիւնն բարոյական, յերկրդ գլուխս բարոյականի, գլ. չ: Ասնաւորէ որ զառնօգն առնէ բարի, և զգործ նորա՝ բարի: Ասնաւորէնն է սեռ. այլք մասունք որոշեն զառաքինութիւնն բարոյական յայլոց անտի՝ եթէ յառնակութենէ՝ և եթէ յառաքինութենէ: Զի սորա է սեռական՝ առնել զմարդն բարի. և զգործ նր յիմ կոչմանէ կատարեալ: Քանզի այլ առաքինութիւնք տան միայն զկարողութիւն կատարեալ՝ի գործել. այլ ոչ տան զբարեաւք գործածութիւն այնր կարողութեանց: այլ գնատութիւնն տայ զկարողութիւն ուղիղ հատու լինելոյ զչմարտութենէ, բայց զբարեաւք գործածութիւն այնր կարողութեանց ոչ տայ. զի հնար է գիտնոյ չարաչար վարիլ նմանով գնատութեանց: Բայց առա-

առաքինութեն բարոյական զնոյն զինքն զգուշ
ծածութեի եղելոցն ՚ի մեզ ուղղութե: Զի զոր
ծածութենն հայն առ բաղձանս և առ կամս, ո՞
քոյ է մերձեցուցանել զայլ կարողութիս: Ա՛ստա
քանզի առաքինութեն բարոյական ուղղութե
զբաղձանս, ոչ միայն ասոյ զկարողութե ուղիղ
գործելոյ· այլ և առնէ, ուղիղ վարիլ մեզ ամ
կարողութեաք եղելովք ՚ի մեզ: Ասաի մնալոյն
ոչ ասի բարի յայլոց առաքինութեց, զոր օրի
նակ, վէ՛ զի է գիտուն, կամ քաջ արուեստա
գէտ· և այլն: այլ միայն ՚ի բարոյական առա
քինութեց:

Վասարելոգոյն և անդէն ահմանէ արիստո
տէլ զառաքինութեն բարոյական: Առնակուրի
ընթրոզական, կայացեալ ՚ի մէջն, ահմանելով բանին
՚ի մէջ հողմանէ, ո՛ր ահմանիցէ այր խոհեմ: Ասոյ այս
է միտ, լինիլ բարոյական առաքինութե ունա
կութեն ուղղութիչ ընտրութեց: ՚ի է յօժարե
ցուցիչ բաղձանաց առ ի ընտրել զառարկայ հա
մակերպ ուղիղ բանի՝ ոգաոի և կայացեալ ՚ի
մէջն: Զի համակերպութենն առ կանոն՝ է մէջ
քինչ ՚ի մէջ առաւելութե և նուազութե: Եւ
յայլն· Ահմանելով բանին ՚ի մէջ հողմանէ, որպէս
ահմանիցէ այր խոհեմ: պէս այս մէջ դասի հայելով
յընտրօղն, այնպէս պէ իւրաքանչիւր ոք ընտրի
ցէ զպատշաճեալն անձին իւ ուղիղ բանիւ, ոչ
յաւէտ՝ և ոչ նուազ· ոյք զիարդ ահմանեսցէ
խոհեմութենն, որոյ է ընտրել կշռել, և զ-
րոշել զինչ պատկան ինչ է, և զինչ պակաս:
Նշանակի է այս և ահմանն առաքինութե,
զոր աւանդէ սքէն օգոստինոս *. ասէ, առաքի * գիրք. Ե.
նութիւն է բարի որով ոք ուղիղ կեցեալ յաղագս
լինի, և ոչ ոք չարաչար վարի:

Ի՛ ահմանի աստ որոշութենն է սեռ: բարին ըս
կիզբն առնէ որոշելոյ զառաքինութեն ՚ի մոլութեց:
մասոյն ցուցանէ զինքնաիւոյ առաքինութե· և
առեալ լինի աստ փոքր մի ընդարձակագոյն,
վտանգաւոր ոմն որ հաղորդ է բանի· ոյ փոխա
նակ լմնցուածք, և կամաց, և ոչ զդայական

բաղ

բաղձանաց, ոյր հալածութիւն կարէ կոչիլ քա-
նաչար, եթէ զի ըստաւորութեն, և ուղղութեն
բանին ինձանէ և՛ ի սա: Իսկ այն զոր ասէ, ոչ-
ոչինչ կեցեալ էինի, ցուցանէ զվախճան բարոյա-
կան առաքինութեն, որ է զկեանս մարդոյ գոլ
ծեալ ուղիղ և բարւոյ: Եւ յարէ, ոչ ոչ ա-
րուեստ վարի: Այլ զի ոչ ասացաք, կատարէ զնոյն
զինքն զգործածութեն և զվարուցն. վասն ը-
դեմ է նմա չարաչար վարուցն:

Յայտնի երկուս խնամանաք յատկութեիս բա
րոյական առաքինութեն, մի՝ ի մէջն կայանալ
և երկրորդ՝ ոչ ումեք նուաւս չարաչար վարիլ:
՛ի դէպ է յաւելուլ միւս ևս, ք է, զընդ մի-
ւեանս կատակցութեն: Զամանէ պրեսցուք ՛ի
վախճանն հետագայ խնդրոյս: զի դժուարին
է ըմանալ, թէ ոչ նախ ցուցցուք զմիոյ միոյ
առաքինութեց զբնութեն: Ա՛ւ մեկնութեն ա-
ւանչնոյն և երկրորդին ասելն է:

## ՀԱՏՎԱԾ ԵՂՐԱԿԱՑՈՒԹԵՆ:

Ա՛մենայն առաքինութեն բարոյական կայանայ
՛ի մէջն:

Ցուցանէ: Բարին բարոյական առաքինութե
կայանայ ՛ի հաւասարութեն առ կանոն իւր, ը
է՝ առ ուղիղ բանն: Ա՛յլ հաւասարութեին է
մէջ առաւելութեն և նուազութեն. ոչ ինքնին
իսկ յայտ է: Ա՛պա ամ առաքինութեն բարոյա
կան եդեալ կայ ՛ի մէջ ինչ:

Ա՛ռարկիցես նախ. առաքինութեին է ծագ կա
րողութե: Ա՛յլ ծագն հակառակի միջոյն: Ա՛պա
առաքինութեին ոչ կայ ՛ի մէջն:

Պատասխանեմ զանազանելով զմեծագոյնդ.
առաքինութեին է ծագ կարողութե, ըստ կա-
տարելութե ներգործութե՝ ընդունիմ. ըստ
քանակութեան նիւթոյն՝ զորով յածի, ու-
րանամ: Ա՛պա յէութէ առաքինութեան է,
հայիլ ՛ի ներգործութեն վերակատար եղանա-
կաւ համակերպ կանոնի բանին. և ըստ այսմ

է ծագ : Բայց ըդհմ է նմա առաւելութի , կի նուազութի նիւթոյն քան զկանոն բանին .
և ըստ այսմ է մէջ :

Ախկիցես . բազում առաքինութիք դիմեն 'ի ծագ նիւթոյ իւրեանց . ոչ մեծահոգիութին հայի 'ի մեծամեծ պատիւս , մեծագործութին 'ի մեծամեծ ծախս : կուսութիւնն հրաժարի յամ ցանկական հեշտութէ . կամաւոր աղքատութին յամ ստացուածոց : Ապա և ոչ 'ի կողմանէ նիւթոյն յածին զմիջով :

Պատասխանեմ զանազանելով . այսպիսի առաքինութիւնք դիմեն 'ի ծագ նիւթոյ իւրեանց . բացարձակապէս մտածեալ , ընդունիմ . բայդատեալ առ պարագայս , ուրանամ : Զի մեծահոգիութին դիմէ 'ի մեծամեծ պատիւս , բայց ուր պիտոյ իցէ , և յորժամ պիտոյ իցէ . և վն որոյ պիտոյ իցէ , որ է մէջ 'ի մէջ առաւելութէ , այ դիմելոյ՝ յորժամ , ուր , և վն որոյ ոչ է պիտոյ . և 'ի մէջ նուազութէ , այ ոչ դիմելոյ յորժամ՝ ուր՝ և վն որոյ է պիտոյ : Ասասկ արիստոտէլ՝ . ասէ : Այնծահոգին է մեծագին ծայրագոյն , բայց այնոս ընդանակաւ՝ որով է պէտ : Զնոյն է ասել յաղագս մեծագործութէ , կուսութէ , և աւետարանական աղքատութէ : * Ե. բայ. գլ. է:

Պայմանէ խմանամբ , թէ առաքինութին բարոյական եղեալ կայ 'ի մէջ երկուց մոլութէց 'ի ծագս եղելոց . և այնպէս կայանայ 'ի մէջն՝ ոչ միայն պատճառաբար , ըստ որում զմէջն ունի 'ի նիւթոջ իւրում : այլ և առանձնապէս , ըստ որում ինքն իսկ ընդ մէջ անկանի երկուց հակակայ ունակութէց մոլեկանաց . Զայս մատկածուբ յանդիման կացուցանէ արիստոտէլ՝ . Զի արուեստին է 'ի մէջ յանդիման , և երկնջոտութէ : Բարեխառնութին 'ի մէջ անբարեխառնութէ , և անզգայութէ : Առատաձեռնութին 'ի մէջ ժլատութէ , և շռայլութեան : Մեծագործութին 'ի մէջ խնեղշուբ և գծծուբ : Մեծանձնութին 'ի մէջ գոռոզութէ , և փոքրա

* Ե. բայ. գլ. է:

հոգուԹե . խոհեմուԹեին ՚ի մէջ յիմարուԹե , և խորամանկուԹե : Ա րդարուԹեին վեհԺիան դիւ՝ ՚ի մէջ անգԹուԹե , և կարի իմն նեղուղուԹե . բայց այլ տեսո՞ւկ արդարուԹե ոչ երևելին լինել ՚ի մէջ երկուց մոլուԹեց : զի Թէ ոք հաստուացէ այլուամ նուաղ քան զպարտն , անկրաւ է վտ պակասուԹեն : Բայց Թէ յիւրոց անտի ասացէ այլուամ աւելի քան զպարտն , առաւելուԹեին այն ոչ ինասէ արդարուԹե , և ոչ վերաբերի առ մոլուԹեն ինչ ներհակեալ նմին . այլ Թէ անչափաւոր լիցէ՝ առ շուայլուԹեին : Սակայն ՚ի դէպ է ասել , Թէ այս՝ առաւելուԹե ՚ի փոխանակուե , և ՚ի բաշխոյս , քանզի լինի զանց առնելով հայիլ ՚ի հաւասարուԹեն , երևի վերաբերիլ առ մոլուԹեն ներհակեալ արդարուԹե առաւելուԹե՝ որով ոք առաւել ընտրէ տալ աւելի՝ քան պահել զհաւասարուԹե : Թերևս զայս մոլուԹեն ոք որ ունի ախտանան մարդիկ , որք առաւել յօժարեալ են զաւելին քան զարժանն պրաւել յիւրեան :

## ԵՐԿՐՈՐԴ ԵԼԱԿՈՑՈՒԹԻՒՆ :

Բարոյական առաքինուԹիք ոչ ոք ըստ ինքեան և միրապէս կարէ վարիլ ջարաչար : Յուցանի , ԵԹէ ՚ի սահմանէ սքին օգտաւինուսի . և ԵԹէ բանիւք : զի առաքինուԹեին բարոյական հատարէ զբաղձանս , առ ուղիղ վարեցոյ յայնս , որք են յիւրում իշխանուԹե . ապա ընդդէմ է նմա ջարաչար վարուին : Ա ռարկեցեա , որ ընդ առաքինուե իւր հպատանայ , ջարաչար վարի նովաւ : Ա յլ բազումք ընդ առաքինուԹեա իւրեանց հպարտանան : Ա պա վարին ջարաչար :

Պատասխանեմ , ջարաչար վարին նովաւ , ոչ իւր սկզբամբ գործելոյ , այլ իւր առարկայիւ գործուլուԹե : Վ ն այն ոչ է բարւոյ ուանակու

Թե

թե չարաչար վարուին, այլ չար ներդործու
թի առթիւ բարւոյ յառաջեկեալ:
Սոկրատես. որ ունի զօնակուածի առաքինու
թե, կարօղ է գործել ըստ այնմ ևւ չար վախ
ճանի: Ապա և չարաչար վարիլ նովաւ:
Պատասխանեմ, որ առնէ ևւ չար վախճանի
ոչ ևս առնէ ըստ ունակուածէ առաքինուածէ,
այլ առաւել խանգարէ զինա: Քանզի ունա
կութիւն առաքինուե յօժարեցուցանէ առնել
ըստ թելադրուածէ ուղիղ բանին, զի է դիւ
րաւն ինչ՝ ի բաղձանս առ՝ ի հնազանդիլ բանի:
և ևւ այն յորժամ խոտորի ոչ յուղիղ բանէ,
խոտորի և յօնակուածէ առաքինուածէ:

## Պ Ր Ա Կ Ե Ր Կ Ր Ո Ր Դ:

Յաղագս պատճառաց բարոյական առաքինուածէ, և
յաղագս բաժանման նոցա:



Անձնական պատճառ բարոյական
առաքինուածէ յայտ է յառացելոցս.
զի է ուղիղ վարք կամ գործ բա
րի: Այլ և տեսականն, զի է
համաձայնուածի ընդ ուղիղ բանի, որով՝ ի հա
կակայ մոլուածեց որոհի: Մնայ նիւթականն և
արարչականն: Առդ նիւթականն է կրկին,
նիւթ՝ զորով, և նիւթ յորում, կամ ենթա
կայ: Նիւթ զորով են գործողուածիք կամաց,
և կիրք բաղձանաց: Զսա ուրոյն ուրոյն մեկ
նեացուք՝ ի ձառս իւրաքանչիւր առաքինու
ածեց: Ապա մնայ մեզ առաջին խօսիլ զարար
չական պատճառէ բարոյական առաքինուածէ,
և զննութակայէ նորա:

## Ա՚ռաջին եղբակացութիւն:

Վերմանք առաքինութեց են՝ ի մեզ՝ ի բնութա•
այլ ունակութիւնքն արտադրին յաճախե-
լով՝ ի գործս:

Յայտ է առաջին մտան • քանզի են՝ ի միտս
բնապես սկզբունք ինչ բնականք համեստի, և
ուղղոյ, յորոց բղխի ամ առաքինութիւն: Ա՚յլ
և՝ ի կամս է յօժարութիւն ինչ՝ ի բարին համեստ:
Նա՝ և՝ ի զգայական բաղձանս ևս յօժարութիւն
իմն առ առաքինութիւնս ինչ, որ կոչի, բարե-
բնաւորութիւն, ոյք տեսանեմք ոմանց՝ ի խառն-
ուածոյ իւրեանց բերիլ առ ողորմութիւն, ո-
մանց առ ողջախոհութիւն, ոմանց առ արիու-
թիւն • և այլն:

Երկրորդ մտան ևս յայտ է փորձիւ: Զի ոչ
՝ի չինելոյ կուի ոք չինօղ • այլ նպաստ արդար ի բ-
նեխառն ներգործութենէ առնելով. կուի արդար ի բա-
նեխառն, ասէ արիստոտէլ*: Ա՚պա առաքի-
նութիւնն տեսակաւորի յաճախեալով, որոյ այն-
պիսի է զօրութիւն՝ եթէ՝ ի բարին, և եթէ՝ ի
չարն, միշտ լինիլ երկրորդ բնութիւն:

Ա՚րդ զունակութիւնն առաքինութիւն՝ ի ներգոր
ծութիւն՝ նր լինիլ՝ գրեթէ ամենեքին ընդունին•
բայց ոչ դիւրին է մեկնել զայսր կերպաւորու
թիւն ղեկանակ: Վ՚ո որոյ առ իմաստ արժանա
կշիռ խնդրոյս, պարտ է դիտել, զի ըստ սկզբն
թռվմայի*• առնողաց՝ ոմանք ունին միայն յին-
քեանս ընդերգործական սկիզբն ներգործութե-
իւրեանց• ոյք՝ ի հուրն է միայն ներգործական
սկիզբն ջերմացուցման, և՝ ի սառս՝ ոչ ունի զգ
առին ծնանդ ունակութիւն, և վ՚ո այն բնա-
կան իրք ոչ կարեն սովորիլ ինչ, ոյք առ յեկիւ-
դիս բարոյականաց: Իսկ ոմանք ունին յին-
քեանս միանգամայն ընդերգործական և կիրա-
ւորական սկիզբն իւրեանց ներգործութեան,
ըստ որում անմիջական սկիզբն ելուզիչ ոչ մի
՝ի ներգործութեն, եթէ ոչ ըստ որում շար-



* Ե• բա-
նական•
գլ• ա:

* ա• Ե•կա-
նա•ա•Ե•
ն՝ ի կան•
յաղէ• ա-
ատիննա
ընէց առ
հաւասակ•
ա• ին:

ժեալ, այլմէ բարձրագունէ եղելոյ՝ ի նոյն իսկ արարածն. և՝ ի առաս ունի զտեղի կերպաւորութեան ունակութեան, ըստ որում՝ ի բարձրագոյն անկընէ չարժուիլ ածանցի՝ ի սկիզբն ըստորին՝ տպաւորութեան ինչ ունակապէս մնայուն, և դիւրացուցիչ՝ ի կատարել զայնս, զորս առնէ՝ ի շարժութիւն վերնագունին. ոյք է տեսանել՝ ի ձեռս, որ վէպ զի գրէ ըստ որում շարժեալ յիմացութիւն և՝ ի կամաց առաջնորդութիւն ալուհեասի, վէպ այն ընդունող է տպաւորութիւն ինչ ածանցելոյ յայնց սկզբանց շարժողաց սորա, որով լինին ընդունակադոյն՝ ի գործել: Աւրդ յայտ է թէ նկատմամբ ներգործութեանց իմացութիւն կամ բաղձանաց, կրկին է՝ ի մարդ սկիզբն, մին ներգործական, և միւսն կրաւորական: Քանզի նախ՝ (որոհետ մեր՝ ի վախճանի բնաբանութիւն՝ կրկին իմացութիւն, առնող, և կրողական,) յայտ է թէ կրողականն ոչ եւանէ՝ ի ներգործութիւն, եթէ ոչ ըստ որում զտպաւորութիւն յինքն ընկալեալ՝ շարժի և կատարի յարարող իմացութիւն: Նոյնպէս և կամքն ոչ մղի՝ ի ներգործութիւն իւր, եթէ ոչ շարժեալ յիմացութէ որ ուղղէ և կանոնաւորէ: Իսկ բաղձանքն ցասումնական և ցանկական բնաւորեալ է շարժիլ՝ ի կամաց, և միջնորդութիւն նր յիմացութէ. վէպ այսորիկ այսպէս կարողութիւնք հնար է ծնանիլ ունակութեց, ըստ այնմ որ շարժութեն վերնոյն տպաւորի՝ ի ստորինն շարժեալն, և՝ ինքնին մնայ և հաստատուն յունակութեն:

Աւրդ քանզի յայտ վարդապետութէ որբոյն թէ ոչինչ յայտ յանդիման երևի ի մեզ ունակութեց կերպաւորութեն. կամեցեալ մեր՝ առաջի առնել զերկաքանչիւր առաքինութեն զիմացս կանին և զբարոյականին զծնունդ, պարտ է հայիլ՝ ի զանազանութեն ներգործութեն կրողական իմացութեն՝ յառնող իմացութէ, և ներգործութեն բաղձանաց յիմացութէ: Ջի ներ

ցութեբ ընդ խմացեալ երկին : և խմացութիւնն կրոլական ջարժի յառնող խմացութէբ , ըս ո֊ րում ՚ի նմանէ ՚ի սա տպաւորին տեսո՛ւակբ , ո֊ րով֊ք խմանայ , և որով֊ք յայտնի լինին առար֊ կայբ : Ուսոի առաքինութիւն խմացական լինի , ըստ որում այնք տեսո՛ւակբ , և նոքիմբք կերպա ցեալ ծանօթութիւնք մնացասէս հաստատուին ՚ի կրոլական խմացութիւն , որ ոչ անցորդ , և գիւ֊ րալինչ տպաւորութէբ բնաւորեալ է ընդունիլ զայսոսիկ կնիքս . այլ վիճանգամ գրոշմեալսն , կայուն , և անյեղլի պահէ յինքեան : Քանզի յայտ է փորձիւ , թէ ծանօթութիւնք՝ զոր մի֊ անգամ կերպաւորեմբ զիրաց որք յառաջն էին անծանօթ , կամ զեկուցմամբ օտարի , և կամ մերով տրամաբանութէբ , ոչ երբ անցորդ փայ֊ լածիւն փայլատակեալ անդէն նանրանան . այլ գանձին ՚ի խորս մտաց , մինչև քանիցս ան֊ գամ խոկութեն լինի զնմանէ , բերի յայն խմա֊ ցութեն , ուր երբ յանծանօթ , ոչ յառաջն , այլ երբ ՚ի յայտնի էինջ , և կանխաւ նմա ծա֊ նուցեալ : Ա֊յս կայուն և անյեղլի տպաւորու֊ թէն պահեալ ՚ի կրոլական խմացութէբ , կոչի ա֊ ռաքինութիւն հմայական : Յորմէ ՚ի հարևանցի է֊ մանամբ , թէ այս խմացական առաքինութիւնբ կերպաւորին ՚ի վայրկենի՝ մի միայն ներգոր֊ ծութէբ . երբ զի տեսո՛ւակբ , և ծանօթութիւնբ որք միանգամ տպաւորին յիմացուէ , անյեղլի հաստատուին ՚ի նմա :

Ա֊յլ ներգործութէբն բաղձանաց լինի ՚ի բաղ֊ ձալին ըստ կերպի յօժարութէբ . և շարժէ ի֊ մացութէն զբաղձանս , ըստ որում յօժարե֊ ցուցանէ զնա առ իւն : Զի Թէպէտ բաղ֊ ձանքն յիւրմէ բերի ՚ի բարին , բայց ըստ ին֊ քեան է անտարբեր ՚ի գիմել առ այս կամ առ այն բարի , և ՚ի հետամուտ լինիլ այնմ ըստ կարգի , կամ ոչ ըստ կարգի . վ֊ այն տպաւո֊ խմացութէբ՝ առաջադրելոյ զբարին՝ յո՛ դիմե֊ ցէ , և բացորոշելոյ , և կանոնաւորելոյ զերկ֊ նակ դիմելոյ . և այնպէս բաղձանքն ասի բա֊

ցորո֊

ցորչիլ և կանոնաւորիլ՝ ի բանէ, իբր յիւրմէ շարժողէ: Ապա ոյժ մատուցանէին որ յիւրմէ է անտարբեր՝ ի թեքիլ յայլ, կամ յահեակ, և վն այն ազատ թեքելոյ ձեռին մշակի, յորժամ բազում անդամ թեքի՝ ի մի կողմն, ուրուչի՝ ի դիմել յայն կողմն իբրովն. և այնպէս անցաւոր շարժումն այն հաստատի՝ ի տրամադրութիւն կայուն: Սոյնպէս և բազ ձանքն ըստ ինքեան անտարբեր առ հաւեսան և առ անհաւեսան, յորժամ բազում անդամ կանոնաւորելով բանին յօժարի, և բացորոշն առ բարին հաւեստ՝ ինիւթ լինէ. ոյժ՝ ինիւթ արդարուէ, կանոնաւորիչ շարժումն այն անցաւոր, սովորութիւն սեւեռի և հաստատի՝ ի տրամադրութիւն կայուն, և մնայուն՝ ի բաղձանս. մինչև որ յառաջն արտաքուստ միայն, և դժուարաւ հակեր՝ ի հետամուտ լինիլ ըստ բարուցն կարգի, նորոգ տրամադրութիւնն այնուհետև ձգեալ, դիւրաւ, հեշտեաւ, և ուժ գինս միտէ յայն: Եւ այն կայուն և հաստատուն տրամադրութիւն կոչի առաքինութիւն բարոյական:

## Երիւղ եղբաչիւրութիւն:

Երեսակ է ենթակայ բարոյական առաքինութիւն. իմացութիւն գործնական, կամք, և զգայական բաղձանք: Ապա դնէ զբն թովմաս *:

* Ա. Ք. խ. ծ:

Ոյուցանի: Զի որովհետև առաքինութիւնն բարոյական է, որով ուղիղ կեցեալ լինի, կամ որով ուղղին բարք, պարտ է նմա լինիլ յակզբունս ուղիղ կենաց, կամ բարուց: Իսկ արդ սկզբունք ուղիղ կենաց և բարուց են, նախ բանն գործնական, որ ուղղէ զվարս, և զբարս. երկրդ կամքն, որով ըստ սմին օգտատենութի, կեանք բարուք, կամ չարեօք. և երրորդ բաղձանքն զգայական. որ և սա բազում իւիք վերաբերի առ ուղիղ վարս և բարս, զն ձգել զկամս, և

գործակից լինել նմա ի բարիս, կամ ի չարիս, և ե սկիզբն կրից, զորովք յածին յոլովք յառաքինութենէ: Ապա յերեսին ի տասա պարտ ե կայանալ բարոյական առաքինութե: Զի թե մի ի տղայն ե ոչ ուղիղ դոցի, հարկ ե վարուց և բարուց տալականիլ: Իսկ արտաքին անդամք, և այլ կարողութիք ոչ են էնթակայ բարոյական առաքինութե, զի որովհետև գործածութե նոյ կախեալ ե ի բաղձանաց, և ի բանէ որ ուղղէ ե նոյ, ի լինիլ երկոցուն տղա բարուք, ուղիղ վարիմք և նոքօք:

Յատուկ եզրակացութիս ի վր զգայական բաղձանաց: զորոյ զլինիլն տկրատէս էնթակայ առաքինութե՝ բազումք ուրանան, ի վր գործնական բանի՝ և կամաց միաբան գոլով ամենեցուն: Նախ, զի ուր ե տխան, անդ պարտ ե դնել զդէղն: Այլ անկարգուն կրից՝ որով և բարուց՝ ե ի զգայական բաղձանաց: Ապա զկարգ առաքինութե, իբր դէղ՝ պարտ ե դընել ի նմա: Երկրորդ, կայծակունք և սերմանք առաքինութեց են ի զգայական բաղձանս, զի երևին ի մանկունս յառաջքան զբանաւորութիւն. իսկ արդ զառաքինութիս, և զակղբնութե նոյ յայլ և այլ էնթակայս դնել՝ անպատշաճ իմն թուի: Երրորդ, առաքինութե՝ բարոյական, ոչ ցուցաք, ե իբր տպաւորութե ուղիղ բանին ի կարողութե, որ ի նմանե կանոնաւորի և շարժի: Իսկ արդ՝ և բաղձանքն զգայական կանոնաւորի և շարժի յուղիղ բանե, և այնր շարժման հնար ե հաստատել ի նմա իբր մնայուն և կայուն յօժարութե, որ այնինքն ե առաքինութե բարոյական: Ապա և ի զգայական բաղձանս ե առաքինութե բարոյական:

Առարկեցես նախ. առաքինութին ե բայի որ կութե մտաց: Այլ զգայական բաղձանքն ոչ վերաբերի առ միտս: Ապա ոչ ե ի նմա առաքինութիւն: Երկրորդ՝ առաքինութիւնն ե ունակութիւն ընտրողական:

Իսկ

իսկ արդ ընտրութիւնն հայի 'ի կամս, և ոչ 'ի զգայական բաղձանս: Ապա ոչ է առ ենթակայ առաքինութիւնէ: Երրորդ, առարկայ բարոյական առաքինութիւնք է հաւեաս բարին: Այլ հաւեաս բարին՝ քանզի է բարի բանին՝ վերաբերի առ կամն, և ոչ առ բաղձանս, որ դիմէ 'ի բարին զգալի: Ապա ոչ հայի յայն առաքինութիւնն բարոյական:

Պատասխանեմ, առ առաջինն, թէ անդէն վիտն ընդարձակագոյն առեալ լինի փոխանակ ամ կարողութէ, որ ուղղի 'ի մտաց, և կարօղ է զհաստատուն տպաւորութիւն բանի ընդունիլ, ոչ վերագոյն նշանակեցաք:

Պատասխանեմ առ երկրորդն, թէ բաղձանքն մտածի կրկնակի: մի՝ ըստ որում է յանբանս՝ մեկուսի 'ի բանէն, և երկրորդ ըստ որում է 'ի մարդիկ, կից բանին: Արդ ըստ այսմ հաղորդութէ է ընտրողական, զի ընտրութիւն է բաղձանք յառաջագոյն խորհեցելոյն: Արդ ոչ միայն կամք մարդոյ, այլ և զգայական բաղձանք նորա բերի 'ի բարին խորհեալ յառաջագոյն: Ուստի և ինքն է ընդունակ առաքինութեան, որ յօժարեցուցանէ զնա 'ի բաղձալ ներդործութեց համաձայնելոց խորհրդոյ բանին. զոր օրինակ յաւնութ զկերակուր պայմանեալ ըստ խորհրդոյ խոհեմութէ: Եւ այսպէս հայի 'ի նա ընտրութէն, և ունակութէն յօժարեցուցիչ առ այս հաւեաս ընտրութէ:

Առ երրորդն զինն է ասել, թէ բաղձանքն զգայական վն կցորդութէ բանին 'ի մարդ, ունի՝ և զգայական բարոյն ըստ պայմանելոյ բանին բաղձալ, և ունակութէ ինն առ այն յօժարիլ: Արդ բարին զգայական հանուածութեալ 'ի բանէ, լինի հաւեաս:

Յոհպիցես: Առաքին անդամք ևս ըստ որում կցորդ բանի 'ի մարդիկ, ոչ են ընդունակ առաքինութէ: Ապա և ոչ բաղձանքն զգայական:

Պատասխանեմ, ուրանալով զհանգիստութէ.

զի ոչ նշանակէ աչքն Թովմաս * . այլապէս կոտո-
ղէր վարդին՝ ի հոգւոյ, և այլապէս բաղձանքն գիայս
կան՝ ի բանէ: զի մարմինն և առ ակնարկել՝ հնազան-
դի հոգւոյ առանց ինչ ծանրանալ յայնս՝ որպս քնա-
ւորել և շարժիլ՝ ի հոգւոյ : Ասաւ առ փիլի-
սոփայն * . Թէ հոգին կառավարէ զմարմինն ոչ
բական իշխանութեամբ . ըստ որում տէր գծառայ, և
վն այն բռվանդակ շարժումն մարմնոյ վերաբե-
րի առ հոգին , սակս որոյ՝ ի մարմնի ոչ է առա-
քինութիւն , այլ միայն՝ ի հոգւոջ : Բայց բաղ-
ձանքն ոչ առ ակնարկել հնազանդի բանին ,
այլ ունի իւր շարժմունս , որովք երբեմն հա
կառակի բանին : Վն որոյ առ փիլիսոփայն ան-
տանօր , Թէ բանն կառավարէ զցասկնականն
և զցանկականն քաղաքական իշխանութեամբ . ո-
րով կառավարին ազատք , որք ունին ինչինչ՝ ի
կամս իւրեանց : և վն այսորիկ պիտոյ է՝ ի ցան
կականն և՝ ի ցասկնականն լինել առաքինութեց
ինչ , առ բարւոքք արտամադրելոյ նոցա նոքօք՝ ի
ներգործութեն :

Յոսկանձիցես , անդ պարտ է դնել զդեղ , ուր
ակիզքն է չարին : Վյր անկարգութեն բաղձա
նաց է՝ ի չար կամաց : Ապա կամքն , և ոչ Թէ
բաղձանքն , է ենթակայ առաքինութեն ուղ-
ղւորչի շարժման բաղձանաց :

Պատասխանեմ , մանաւանդ անկարգ բաղ-
ձանքն է արմատ չար կամաց , շուրջ զդէպն
բաղձալեօք : Զի կամքն ուրուք անկարգօրէն
զդպալն բերկրութեն , ոչ՝ ի կամաց՝ այլ յան-
ձանձ ցանկութեն գոյ յատուկ : Վն այսորիկ
ասեն զսրբօք ոչ է՝ ի բաղձանս՝ ի կամաց , այլ
՝ի կամս՝ ի զդայական բաղձանաց , և վն այն ա-
ռաքինութեն ուղղւորիչ այսր անկարգութեան
պարտ լինել՝ ի բաղձանս , որ ԵԹէ ուղիղ ի-
ցէ ներգործութեն կամաց ընդօքօք , դիւրաւ

վհետ երթայ :

Ասիցես , յորժամ առնէրգործութեն լինչ լի-
նին երկու կարողութեք , որոց միոն է շարժօղ
և միւսն շարժեալ , ունակութեն գլխաւոր՝ լինի

առա

* Ա. Թագ. ԺԵ. ԽԲ:
* Ա. Փիլիպ. Գ. Ը:

առաւել՝ ի կարողութենն շարժօղ, քան՝ ի շարժեալն. ոյլ յոյժ ի յարմարեսան, որ է՝ ի միտս. և ոչ յանդամս: Իսկ արդ՝ ի գործ բարոյական առաքինութենէ, զոր օրինակ՝ ի բարեխառնութենէ, ընթացակցին երկու կարողութիք, այ զգայական բաղձանք և կամք, և կամքն յայնմ ներգործութենէ իբր շարժօղ, այլ բաղձանքն իբր շարժեալ: Ապա դէպսաւոր առաքինութենն բարեխառնութենէ պարտի լինիլ՝ ի կամս. իսկ՝ ի բաղձանս միայն ունակութենն լինել այսմ ծառայօղ, որ ոչ է ախրատէս առաքինութեն:

Պատասխանեմ նախ, ձեռնարկութենիք յոյժ ցուցանէ. քանզի և կամքն շարժի յիմացուէ. ապա՝ ի սմա միայն լինէր առաքինութենն, ըստ այդմ ձեռնարկութենէ:

Պատասխանեմ երկրորդ, պանապանելով զմեծագոյնդ. եթէ կարողութենն շարժեալ դնի՝ ցի սուկ կրաւորապէս, ոչ հանդիպի յանդաման, ընդունիմ. եթէ և ինքն ևս կարողութենն շարժեալ դնիցի ներգործապէս, մանաւանդ թէ վարկեալ շարժիցէ ևս զմիւսան, ուրանամ: Արդ թէպէտ բաղձանքն շարժի՝ ի կամացն՝ ի գործս առաքինութենէ. բայց ոչ դնի սուկ կրաւորապէս, այլ և ինքն իսկ շարժէ զկամս և յօժարեցուցանէ: Ուստի առ ողղիղ լինելոյ շարժման՝ ի նիւթ լինչ առաքինութենէ, ոչ պարտէ, բարեխառնութենէ, ոչ է բաւական՝ այն, զի ուղիղ իցէն կամք առ բերկրութենէ. այլ առաւել պահանջի ուղղութենէ բաղձանացն, և ունակութենէ տոհմէ այսր ուղղութենէ, զոր ի՞ն այնր ոչ է պարտ համարիլ ոչ պաշտօնեայ. այլ իբր ներգործութենէն այնորիկ ընկնիլն, որով և գէպսաւոր ունակութենէ: Վ՞ն որոյ ոչ ասի բարեխառն, որ զբաղձանս զսակ կերակրոյն անկարդ՝ հրամանաւ կամացն բռնի զսպէ. այլ որոյ բաղձանք սովորութենամբ՝ բարեխառն գոլանի առ կերակուրս: Ապա առաքինութենիւնն բարեխառնութեան յատկապէս, և լրացուէս ի՝ ի բաղձանս, թէպէտ

'ի կամս և 'ի միտս պահանջէ զորամասդրութ-
թիւն լինել:

Բաժանումն բարոյական առաքինութ-
եանն:

Առաքինութիւնն բարոյական ուղիղ բաժանի 'ի չորս ընդհանուր տեսակս. 'ի խոհեմութիւն, յարդարութիւն, 'ի բարեխառնութիւն, և յարիւթիւն: Եւ ասին ոմքն առաքինութիւնք հոր դինարականք, որ թարգմանի ծղնական, ոչ միայն զի են գլխաւորք՝ առ որս վերածին այլք. այլ զի 'ի սոցա վր երկու 'ի վր ծղնեաց շրջին ամ բարի և համեստ վարք:

Խոհեմութիւնն, նախ յենթակայէ բարոյական առաքինութեանց: Զի չորք են կարողութիւնք, որովք կեցեալ լինի ուղիղ: Իմացութիւն գործնական, որ է առաջին կանոն ուղիղ կենաց: Կամք, և զգայական բաղձանք, որ բաժանի 'ի ցանկական և 'ի ցասմնական: Այսպես են չորք գլխաւոր առաքինութիւնք համեմատք սոցին: Խոհեմութիւնն զիմաստ ուղիղ գործէ առ առնելիս: Արդարութիւնն զկամս առ օտարին բարիս, զի յիւրն ոչ ինչ այնպես ունի առաքինութիւն, բերել. նովաւ առ այն. զի ինքնին իսկ բաղձայ այնմ. և ոչ 'ի սէր նր առաւելու քան չափ, եթէ ոչ ըստ որում վն նր խանգարէ զօտարինն: Բարեխառնութիւնն կատարէ զցանկական մասն. չափով բերել առ զգալի բաներին: Իսկ արիութիւնն կատարէ զցասմնական մասն զդժուարսն բարեօք և չարեօք, զի մի երկչոտութիւն ընկճեացէ, կամ յանդգնութիւն անկարդ 'ի վերայ յարիցէ:

Ցուցանի երկրորդ յատարկայէ բարոյական առաքինութենէ: Զի սա հայի 'ի բարին համեստ, այս է, համեմատ կարգի բանին: Իսկ այդպիսի բարին նկատի նախ յիւրում աղբեր, ըստ որում կանոնաւորի 'ի բանէն. և ըստ այսմ հայի առ խոհեմութիւնն: Երկրորդ, ըստ որում մերձեցուցանի 'ի ներգործութիւնս կամաց, և

ըստ

ըստ այմ վերաբերի առ արդարութենն : Երբեմն ըստ որում գտանի ՚ի կիրս ցանկական մասին , և ըստ այմ վերաբերի առ բարեխառնութենն : Եւ երբեմն ըստ որում գտանի ՚ի կիրս յատ- կական մասին , և ըստ այմ հայի ՚ի նա արի- ութենն : Ապա սոքա են չորք գլխաւոր առա- քինութիք , առ որս վերաբերին այլ ամ առա քինութիւնք , որպէս յուցցուք ՚ի տրակտ որ գալոց : Զի չիք ՚ի նոսա և ոչ մի , որ ոչ դէ- մեսցէ յայս բարի :

# ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ :

## Յաղագս Ներհակի առաքինութեան, որ է մոլութիւն :

Նպատ զոր լինչ զմոլութենէ գոյր ասել , հնար է իմանալ յատացե- լոցս զառաքինութիւն , զի Ներհակն Ներհակաւ ճանաչի : Բայց ոչ դան դաղեցայց ՚ի լսումն վարդապետութեա խօսիլ լինչ համառօտ յաղագս քնութե մոլութե- ծութենն՝ որ յատակապէս ասի մեղք : Առ- նելով սահմանի , շար որակութիւն մտաց , որով հեղեալ լինի չարաչար , և ոչ ոք վնաս բարւոյ : Սահմանս յայտ է յատացելոցս զսահմանէ ա- ռաքինութե : Զի ոչ սեպհական գործ առա քինութե է տալ զբարւոք վարս , և զընթացս կենաց մերոց ուղղել . սոյնպէս և մոլութենն է յօժարեցուցանել ՚ի չարաչար վարիլ կարո- ղութիք մերովք , և զկարգ կենաց մերոց խան գարել : Դարձեալ սահմանի մոլութենն , որա մագրութիւն անկատարն առ ևս չարագոյնն : Զի մոլութենն նշանակէ զտրամադրուե ապա- կանեալ և ախտացեալ կարողութե . և է իբր հոգևոր հիւանդուե , և հակեցուցանէ ՚ի մեղանչական ներգործուե , որ է ևս չարագոյնն :

՚ի

Զ ասահմանէ ասաւ Խմանասիք ամ մոլուածէ լինել ընդդէմ բնութեան մարդոյ • ոչ միայն զի է ապականութիւն լինչ, և հիւանդութիւն հոգւոյ, զորոյ գիարողութեանս ՚ի պատշաճ կայից վերխոհեցուցանէ, և թիւրե • այլ և զի է ընդդէմ բանի, որով եմք մարդիկ, և որոշիմք յան բանից:

Պուածք բաժանին ըստ առաքինութեց, ՚ի չորս սեռս • յանխոհեմութեն, յանիրաւութեն, յանբարեխառնութեն, և ՚ի մոլութեն ընդդէմ արիութեն, որոյ ոչ երևի սեռական անուն:

Յուցանի բաժանումնս • նախ զի ՚ի ներհակն ունի է նոյն բան, այնպէս և նոյն օրինակ բաժանման՝ ըստ համեմատութեն: Երկրորդ ՚ի կողմանէ ենթակայի մոլութեն, որ է քառեակ, ունի և առաքինութեն, ՝ք, լմնցութեի կամք, բաղձանք ցանկական, և բաղձանք ցասմնական: Երրորդ ՚ի կողմանէ առարկային, զի մոլութեին ունելով առարկայ զբարին անկարգ, ապականէ զբարի բանին: Ընդ այսպիսի բար ասյս չորեքկին հնար է խանգարիլ, և եղծանել: Նախ ըստ որում է յաղթեր խրտում լինմնցուածե • և զսուաբ յածի անխոհեմութենէն: Երկրորդ ըստ որում է ածանցեալ ՚ի կամս, և այս եղծումած լինի անիրաւութէ: Երրորդ ըստ որում ձգի ՚ի կառավարել զախորժակս ցանկացման մասին • և ըստ այսմ խանգարի անբարեխառնութէ: Չորրորդ ըստ որում չափաւորէ զկիրս ցասմնականին, և ըստ այսմ եղծանի մոլութէ, որ հակակայն արիութեն:

Բայց ՚ի բաժանմանէ ասուն, բաժանի և սա երեքեին • Նախ յայն որ կայանայ ՚ինուճազուե: և յայն որ կայանայ յառաւելութե: Զի առաքինութեին ունի վճիռն, վ այն ամ խոտորումն ՚ի միջոյ՝ է մոլեկան: Ընդ կրկնակի հնար է խոտորիլ ՚ի միջոյ • Նախ ըստ առաւելութե • ունի՝ եթէ ուսիցէ ոք աւելի քան զարժանն: Երկրորդ ըստ նուազութե • ունի եթէ ուսիցէ ոք նուազ քան զոր պահանջէ ուղիղ բանն:

Երկ

Երկրորդ բաժանի մոլութիւնն՝ ի հոգևոր և՝ ի մարմնաւոր: Ջի առաջինայ մոլութիւնն է անկարգ բարին: արդ յանկարգ բարեաց ոմանք ստացեալ լինին հոգևոր իմն եղանակաւ. ածի համբաւ, պատիւ, գիտութիւն, և այլն: Իսկ ոմանք ստացեալ լինին, և բերկրեցուցանեն մարմնաւոր իմն հաճոյիւք. ունի հեշտութիւք որկորոյ, և շշուափականին: Հոգևոր մոլութիւքն են, որք յառաջին ազգ բարեաց անկարգօրէն դիմեն. Իսկ մարմնաւորքն են, որք յարին անկարգութիւք յերկրորդ ազգ բարեաց:

Երրորդ, ՚ի մոլութենէ ոմանք ասին արմատ այլոց, ունի արծաթասիրութիւնն, զոր այլոս կոչէ արմատ ամ չարեաց. վասն զի՝ ունի գեղեցիկ նշանակէ զբն թովմաս, զոր օրինակ արմատն ձգէ, և մնայ տակաւարէ զանուանդ բովանդակ ծառոյն, սոյն պէս արծաթասիրութիւնն հաւաքելով զինչս՝ սրբնուանդ մասուցանէ բովանդակ ծառոյն անօրէնութիւնք: Իսկ ոմանք ասին գլխաւորք, վասն զի ունի գլուխն ազդէ զկեանս զչարժուն և զկորովութիւնն յամ անդամս, և նա է առաջնորդ և ուղղիչ, նոյնպէս և այս մոլութիւք ազդեն յայլս, և նոքա թէ առաջնորդեն. ունի հպարտութիւնն է սկիզբն և ծագումն ամ մեղաց, զի ամ մեղք կայանան՝ ի նշխարել մարդոյ զնա, և յընտրել զնոր կամն առաւել քան զնայն, որ է հպարտութիւնն մեծ: Սոյնպէս և ագահութիւն. բղջախոհութիւն, որկրամոլութիւն, ծուլութիւն, բարկութիւն և նախանձ, առաջնորդեն ասեն և վարեն զհոգիս մոլութենէ, և զի այն կոչին գլխաւոր մոլութենէ:

Պատճառք մոլութենէ, քանզի են բազումք, բովանդակ վերածին յերկուս դասս, յարտաքինս, և՝ ի ներքինս: Արտաքին պատճառք մոլութիւնք են, նախ այսր չար փորձիչ, դրդիչ, և բորբոքիչ ցանկութիւնք: Երկրորդ առիթք և առարկայք հրապուրօղք: Երրորդ արք մոլութեանց: Իսկ ներքին պատճառք մոլութեանց

Թեց են, նախ տգիտութի, որ չիկուզանէ զա-
ռաջնորդական բանին զլոյս. և այնպէս անհա-
մար խոչ ընդ ոտն արկանէ, որպէս եթէ չի-
կուզէ ոք զձրագ մարդոյ ընդ խաւարին՝ լուր-
ծլուն, և վտանգաւոր շաւիղ ընթացելոյ: Եկիք
ջարուն կամաց, որոյ զասպականեալ դիտուն
ունելով առ վախճանաւ, դիւրաւ մեղանչէ՝ի
միջոցն: Երբ կիրքն որ հրապուրէ զկամս, և
կուրացուցանէ զբանն: Զրծդ՝ մեղքն նախըն-
թաց. որ եթէ ոչ առաչնարուելք ընկերոջ,

ծանրութիք ձգէ յայլ մեղս:

Մեղքն է ներգործուն՝ի մոլեկան ունակու-
յառաջ եկեալ. և սահմանի՝ի սքոյն օգտակ-
նոսէ, առաջեալ կամ արարեալ ի կամ ցանկացեալ
ընդդէմ յաւիրենական օրինաց: Բաժանի ըստ բա-
ժանման մոլութիք, որոյ է ծնունդ: Ալլ բաց
յայնմանէ ունի և այնպէս մանուածոր բաժան
մունս: Զի նախ բաժանի՝ի մահուշափ և՝ի
ներելի. որոց ըստ սքոյն Թովմայի՝ այս է զանա
զանութիք. զի մահուշափն առնականէ զառա-
ջինն սկիզբն հոգևոր կենաց. ըստ զկարգն առ վեր-
ջինն վախճան: իսկ ներելին ախտալի միայն՝ի մի-
ջոցան, պահելով զդիտուն և զկարգ վերջինն
վախճանին: Քանզի՝ի մահուշափ մեղս նախա
դասէ մարդ զառեղծուածն քան զնծ: իսկ՝ի
ներելին Թէպէտ միշտ նախադասէ զնծ քան
զնամ, բայց յայնս ոչ ամենևին այնպէս վարի.
ոչ պահանջէր կարգ վերջնոյ վախճանին. այլ
կամ տարաւորման յարի՝ի նմա, կամ անհո-
գութիք պարապի, և կամ այլ ինչ օրինակաւ

ոչ ըստ արժանեաց կարգաւ բերի առ նա:

Երկրորդ բաժանի՝ի մեղս սրտի՝ բերանոյ, և
գործոյ. ոչ լիբրև՝ի զանազան տեսակս, այլ
լիբրև յերիս աստիճանս, որովք լինի գալ՝ի
կատարումն մոլեկան գործոյ, որ նախ սրտիւ
ըմբռնի. երկրորդ բերանով արտաբերի. եր-
րորդ գործով կատարի: ոչ բարկութիքն նախ
լինի՝ի սրտի. երկրորդ ծշնամանօք է լանի՝ի
յայտ, և երրորդ ձգի մինչև՝ի գործ անիրաւ:

Բայց

Բայց գրէ ձեզն օգուստինոս *. Թէ, և ՚ի սրտի * գիր-
մեղքն երկուք աստիճանօք կատարի. զի խոր- ծ՚. յէ՚
հրով սկսանի, բերկրութ՚ն սնանի, և հաւա էրր-
նութ՚ն կատարի:

Երրորդ բաժանի ՚ի մեղս ընդդէմ ոյ, ընդ-
դէմ ընկերին, և ընդդէմ անձին: Զի մեղքն
խանգարէ զկարգ բանին: Առդ երբեակ է
կարգն ՚ի մարդ, առ ած, առ ինքն, և առ ըն-
կերն: Մեղք որք վնասեն կարգի, որով ան-
միջապէս հայի մարդ յած. ոչ հայհոյութի,
և սեղանակապտութի, և այլն, ասին լինիլ
ընդդէմ ոյ: Մեղք որք խանգարեն զկարգն
զոր պարտ է մարդոյ ունիլ յիւր բարիս, ա-
սին մեղք մարդոյ առ ինքն, որպէս որկրա-
մոլութիւն, բղջախոհութիւն, և այլն: Իսկ
մեղք որք վնասեն կարգի զոր պարտ է պա-
հել առ ընկերն, ասին լինիլ յընկերն. որ-
պէս սպանութիւն. գողութիւն, և այլն:
Այլ քանզի կարգն զոր ունի մարդ առ ինքն
և առ ընկերն, պարունակի ընդ կարգաւն առ
ած, վասն այն ամենայն մեղք են ընդդէմ
աստուծոյ:

Առդ ՚ի վախճան պրակիս առ լիագոյն յայտ-
նութի զազգութի մեղաց, ոչ դանդաղիմք ա-
ւաջի առնել զուրթն գլխաւոր եղանակս, ո-
րովք մեղքն է ընդդէմ ոյ: Նախ բարկացու
ցանէ զած, ըստ որում գերագոյն օրէնսդիրը,
զորոյ զպատուիրանս արհամարհէ, և ոչ ըն-
ծայէ պատշաճ հնազանդութի: Երկրորդ ըստ
որում արդար դատաւորը, յորոյ դատաստա-
նաց ոչ զանգիտէ, և զպատուհաս նորա գրգռէ
յանդգնութ՚ն: Երրորդ ըստ որում վկայ հա
ւատարիմ. յորոյ ներկայութ՚ն ոչ պատակա-
ռի, և առաջի աչաց նորա գործէ զչարիս:
Չորրորդ ըստ որում ծայրագոյն բարի, առ
որով նախամեծար ընտրէ զնոսան զիւր հա-
ճութի: Հինգերորդ ըստ որում բարեկամ և
բարերար, որում հատուցանէ ատելութի ընդ
սիրոյ, և անկրաւրութիւն ընդ երախտեաց.

մա-

մանաւանդ թէ զերախտիս նորա դարձուցա-
նէ ՚ի գործ անիրաւութեան : որ և յետին
ապերախտութիւն : Վեցերորդ ըստ որում
զերագոյն ՚ի՝ որոյ յօրինաւոր արուեստէն ստա
հակեաց ապստամբել : Եօթներորդ , ըստ ո-
րում առաջին սկիզբն , յորմէ պակասեալ և
վերջացեալ գտանի : Ութերորդ ըստ ո-
րում վերջին վախճան , յորմէ զար-
տուղի , և կամովին օտարանայ ,
և ՚ի նախատինս նորա ՚ի ըս-
տեղծուածս կացուցանէ
նա զվերջին վախ-
ճան :



# ԽՆԴՈՒՐ ՎԱՃԱՌԵՐՈՒՊ:

Յաղագս առաքինութեանց ձկնորսին:



Յոգնաթիւ առաքինութեանց հոյլս տրամասեալ սրբոյն Թովմայի, զնմանէ զբարոյական առաքինութիւնս վերածէ՛ի ջրոյս գլխաւորս յանուանեալս կարդինալական, զորս վերապոյն յիշեցաք: Զի ոչ երևի՛ի բարոյական առաքինութեան և ոչ մի, որ ոչ ևս ի՛ջրոյ կարդինալականացս կամ տեսանէ, պարտականէ ընդ նովաւ լինել ընդ սեռին, կամ մասն առքողական՝ ընթացակից՛ի կատարումն ներգործութեանն. կամ ըստ սրբոյն Թովմայի, մասն հրամայական յարակցեալ սկզբնականին, ունի կարողութիւնն իւրաւմ էութենէ, զի նովաւ կատարեցին երկրորդական ներգործութիւնք, որպէս էութիւնն ինքնին տայ զնախապատրաստականն. իսկ զայլսն կատարէ իւրովք կարողութիւնք: Ա՛ւդ յայս իմնդիր զայսց ջրոյց գլխաւոր առաքինութեց ջրիւք պրակօք առաջի կայ մեզ խօսիլ համառօտ. յորս և զյարակցացս և զամբողջ ջացուցչաց նոցա ունիմք խօսիլ, և զտեսակաց. և այնպէս ամ բարոյական առաքինութեց քա զնճած ինչ առնել:

# ԳՐԱԿ ԱՈՒԱՋԻՆ.

Յաղագս խոհեմութեան, և առաքինութեանց պարտականելոց ընդ նմա:

ՈՀԵՄՈՒԹԻՆ, լոյս առնելեաց, որ ունեսա ուղիղ կենաց, անկ կամաց, և այլոց առաքինութեանց առաջնորդ, աղբիւր, գլուխ, և իշխան, սահմանի՛ն սրտի առնէ գիտութիւն պատճառել երանութեան, վասն յայսմ նպատակ զներդործութիւնս ուղղելոյ: Իսկ կիրկերան սահմանէ զնա, անչափ իրաց գիտութիւն: (բայց գիտութիւն իմն աստ ոչ նեղապէս, այլ լայնաբար. ոչ թէ զնարդ և իցէ ստոյգ և անսխալ ճանաչումն.) վ՚ր զի գործ այսր առաքինութեան է որոշել, զինչ պարտ իցէ ընտրել, և զինչ ոչ: Ընտրութիւն* վայելուչ սահմանէ զայն, որ՚ոլիղ բան առնելոյ. յի՛ է, առաքինութեան ուղղարարիչ իմացութե՛. ՚ի լինիլ բարւոք՝ զառնելեօք կի՛ զընտրելեօք. որք են նոյն: Զի իմացութիւն է կանոն և առաջնորդ բազձանացդ. վ՚ր այն առ բարւոք վարել զայս գործ, և առ ուղիղ դառնել զայնց, յորս բերին բաղձանք, և զվայելման և զօգտակարման հրամայել, պէտս ունի առաքինութե՛ ինչ, որ կոչի խոհեմութիւն:

՚Ի սահմանել սորա խոհեմութե՛ ինչ ինչ առ լինագոյն ծանօթութե՛ նիր ունիմք մակաբերել: Նախ թէ սկիզբն, յոր հաստատի խոհեմութիւն, է ուղիղ գիտութիւն վախճանին: Զի խոհեմութիւն յածի զառնելեօք, և զընտրելեօք, յորս այնպէս է վախճանն, որ սկիզբն ՚ի սեռականս: Սակս որոյ որ ճանաչումն եղբակացութեանց ընթացիկ ճանաչումն առաջին սկզբանց, և հիմնի յայն, այնպէս բազմանգամ խոհեմականն պատահումն զառնելեօք հիմնի յուղիղ բաղձանս վախճանին, որում զառնելիսն համեմատ

ԺԵ աէ,

* Ը. գիրք բարոյից գլ. Ե:

տէ • և վը այն յատկականիլ բաղձանաց զվախ-
ճանաւ , անհնար է կալ խոհեմութիւն • այլ փո
խէ ՚ի չարահնար խորամանկութիւն : Եւ քանզի
՚ի մարդկայինս՝ վերջին վախճան բովանդակ կե
նաց՝ է ցաւ այլոց , վը այն թէպէտ որ առ մաս
նաւոր իւիք վախճան բարւոք տրամադրեալ է ,
ոչ առ յաղթութիւն , ասէ ըստ իմիք խոհեմ , յի
՚ի պատերազմականս • բայց առ՚ի լինիլ ոմեք
պարզապէս խոհեմ , հարկ է , բարւոք լինիլ
զվերջին վախճանաւ կենաց • և ուրիշ տրամա
բանել զառնելեաց ՚ի ձեռն կարգի առ այն :

Երկրորդ մակաբերի , թէ խոհեմութիւն ոչ
յարի յընդհանուրս , այլ առաւել հայի յեզա
կանս • սակս որոյ ոը պարտական ՚ի ճանաչումն
բարձրագոյն և ընդհանուր կրաց , համարի նման
առն , բայց ոչ խոհեմ , եթէ ոչ յեզականս
կրանիցէ : ոչ նշանակէ արիստոտէլ * : Որոյ * Ե. բա-
պատճառն է • մի՝ զի խոհեմութիւն կատարէ զգ էոյակ. գլ:
բանն՝ գործնական ՚ի կանոնաւորել զառնելս
թիս • արդ յեռութիւն կանոնին է , վերձիլ ՚ի կա
նոնաւորելիս , և վնկ առաւել խոհեմութիւն է
անդ՝ մերձեցուցուածն բանին առ եզական առ
նելութիւնս : Եւ երկրորդ , զի խոհեմութիւնն
յածի զառնելեօք • իսկ առնելութիւնն է յեզա
կանս • և վը այն խոհեմական մտածութիւնն
առաւել միտ դնէ եզականաց :

Բայց քանզի առաքինութիւնն պարտ է լինիլ
հաւաստի և անխոտոր • և եզականքն են առա
ւել անհաւաստի , մարթ է տարակուսիլ , թէ
գիարդ հնար լիցի խոհեմութիւն հաւաստեաւ և
անխոտոր հակիլ յառարկայն իւր , եթէ արդա
րև յածի զեզականօք : Ասէ զայս դիւրաւ ի
մանալիք , ածեալ զմտաւ , զի թէպէտ գժուա
րին է բանին հաւաստեաւ , և անխոտոր հաստա
տիլ , զինչ ձշմարիտ լիցի յեզական նմա • սա
կայն հնար է նմա , հաւաստի և անխոտոր կա
նոնօք որոշել , թէ զինչ յիւրաքանչիւր մաս
նաւոր իրողսն , որչափ և լինիցին անասպա
և երկբայական՝ պարտ լիցի մտադիր առնել , առ

պատանելոյ ՚ի նմա առաքինի, և խորշելոյ ՚ի զաղ
ջութէ մոլութենէ։ Արդ խոհեմութենին ոչ ինդ
րէ, զինչ ձշմարիտ կոչէ ՚ի մանաւանդ կրօն. նա՛
բազում անգամ այր խոհեմ սխալի ըստ այսմ։
այլ միայն զինչ ընդդրկելի կոչէ՝ կշռեալ զնա ըստ
պահանջողութենէ կրկին, տեղւոյն, անձին, և ժա
մանակին. և այլն։ Ուր ըստ այսմ խոհեմութենին
է հաւասար, և անհրաժ։

Ընդդէմ մակաբերի, Թէ սեպհական գործ խո
հեմութենէ է պատուիրել կամ հրամայել։ Քանզի
որովհետև ուղղութիւն զբանն գործնական, պար
տի հաստատանել զինա յայն՝ որ է կատարեալ և
վերջին ՚ի բանն գործնական. իսկ այս է պատ
ուիրել կամ հրամայել։ Քանզի հրամանն իսկ
և իսկ ՚ի վէր ածէ զգործածութենին, որ է վախ
ճան գործնական բանին։ և վասն այնորիկ այլք
ներգործութիւնք գործնական բանին, ցի խորհր
դածել, և զխորհրդածելոյդ ուղիղ գտանել, հա
մարին անկատար և ատել. եթէ ոչ գործա
դրել հրամանաւ մերձեցուին ՚ի գործ։ Նշան
պեղեցիկ նշանակէ ընդն Թովմաս, Թէ կատա
րեալութենէ արուեստին կայանայ ՚ի գտանելն.
այլ խոհեմութենէ ՚ի հրամայելն։ Եւ վասն այ
նորիկ ասէ՝ * Լաւագոյն է արուեստագէտն, որ կամաւ սխալէ
քան զպղծագործն։ յարուեստին, իբր զի ունի զգաղիւղ գտանելն, (Թէ
պէտ ոչ հոգայ անսաստ այնմ,) քան որ սխալէ
ակամայ, որ չունի զգաղիւղ գտանելն։
Ապա ՚ի խոհեմութենէ զիսկանալն է փնտռանել։ զի ան
խոհեմագոյն է որ կամաւ սխալէ, իբր զի վերջացեալ
գտանի ՚ի գիշատուր ներգործութենէ խոհեմութենէ, որ է
հրամայել, քան որ սխալէ ակամայ։

Ընդդէմ մակաբերի, Թէ խոհեմութենին՝ սահ
մանէ զայլոց առաքինութեց զմէջ։ Զի Թէ
պէտ ամ առաքինութեն բարոյական յիւրմէ միտ
առ մէջն՝ ՚ի նիւթ իւր, և ոչ ունի զայս ՚ի Թե
քաղութենէ խոհեմութենէ, այլ ՚ի լուսոյ ուրուն
սահմանն կենդանւոյ ՚ի մարդն • և ըստ այմ
ոչ, զի ՚ի բան հակի ամբ և սահմանք ոչ
նմանին սահմանակս։ կի զօրութենաբար •
և ըստ այմ և ոչ, զի պատճառն ոչ պարունակի
զօրութեբ ՚ի գործ իւր։

Պատասխանեմ ուրանալով զհետևողութիդ •
զորոյ ցուցման ուրանամ զփոքրագոյնն • զորոյ
ցուցման ուրանամ դարձեալ զփոքրագոյնն,
առ որոյ ցուցումն պատասխանեմ, թէ էն ամբայն
երևի և պարունակի յերևակայման սահմանա
ծոց հաղորդութեբ • իբր ՚ի գործ ինչ իւր, այլ
ոչ փաղանուն ընդ իւր։ Ասասի ոչ բան պատ
ճառին ճանաչի ՚ի ձեռն գործոյ և հաղորդու
թեբ իւրոյ, այնոչ և բան էին ամբայնոյ թէպէտ
և գերագոյն՝ ճանաչի ՚ի սահմանել հակէ։

Առարկեցես երրորդ • Առարկայի գիտութեբ
պարտ է լինիլ փաղանուն։ Այլ հակն է ա
ռարկայ համաբնաբանութեբ։ Ապա ուրեմն է
փաղանուն։ Յուցանի մերձագոյնս • քզի սահ
մանն առարկային է միջնորդ ապացուցութեան
յատկութեբց։ Այլ միջնորդն ապացուցութեբ
պարտի լինիլ փաղանուն։ Ապա ուրեմն սահ
մանն առարկայի գիտութեբ՝ պարտի փաղանու
նապէս պատշաճիլ։ որով և ինքն առարկայն
պարտի լինիլ փաղանուն։ Յուցանի փոքրա
գոյնս • քանզի պարտ է միջնորդին, լինիլ կա
տարեալապէս մի, և վասն այն պակասութեբ միու
թեբ եղծն հոմանուն ոչ կարէ լինիլ միջնորդ ա
պացուցութեբ։ Խակ արդ եղծն և սահմանն հա
մեմատանուն ոչ են կատարեալապէս մի։ Ապա
ոչ կարեն լինիլ միջնորդ ապացուցութեբ։

Պատասխանեմ ուրանալով զմեծագոյնդ բա
ցարձակապէ։ Քանզի զհամեմատանուանց կա

րէ լինիլ մի գիտութեան. ըստ որում միաբանին ՚ի մի բան համեմատանուն. և հնար է ցուցանել զնա նովին սկզբամբք, ոչ բժշկականութեանն է ոչ միայն զառուղջ ծարդոյ, այլ և զառուղջարար խոտոց, զմիզէ, զբաղնմանէ երակի, և այլն: Այս ցուցցուն՝ զանազանեամ զմեծագոյնդ, միջնորդն ապացուցցութեանէ սպարտի լինիլ կատարեալ ապէս մի, միութեամբ, որ արտաքոյ զհոմանութեանէ, ընդունիմ. միութեամբ որ ՚ի նեղբս փակէ զփոխանութեանէ, ուրանամ: Վասն զի՝ թէ միութեանն համեմատանուն բաւական լիցէ առ միջնորդ ապացուցցութեանէ, պայծառ քան զլոյս երևի յայսմ ապացուցցութեանէ: Սկիզբն ՚ի ստեղծուածս է յառաջագոյն քան զսկսեալն: Այլ սպրխուբն է սկիզբն վտակի, ապա յառաջագոյն է քան զվտակն: և սակայն յայտ է թէ միևնոյն է բզը համեմատանուն: Բազում և այլ քաջ ապացուցցութեանք գտանին, որք հաստատեն համեմատանուն միջնորդաւ:

Ասդրիցես, թէ զիարդ էակն ասի գերազանցական. և զինչ լիցէ գերազանցականն:

Պատասխանեմ, գերազանցականն է, որ կայ յայժմ տեսականութեանէ երկին՝ զորմէ ստորգի, մինչև ոչինչ խմիք լինիլ յայնմ երկի, զորմէ ոչ կարիցէ ասիլ: Ադդ էակն քանզի է ստորագեալ ևս ընդհանրագոյն, կայ յայժմ տեսականութեանէ երկին, մինչև ոչինչ խմիք լինիլ ՚ի նմա, որ ոչ լիցէ էակ: որպէս ՚ի մարդն չկայ լինչ, որ զերծ լիցէ ՚ի բանէ էակի: զի կենդանութեանն է էակ, բանականութեանն է էակ, և այլն: և ոչ միայն էակն է գերազանցական. այլ և յատկութիւնք նոր, այ միութիւնք ճշմարտութիւնք, և բարութիւնք են գերազանցականք: ոմն և բազք լինչ, որք անդրադարձին ըստ էակի, այ նոյ, և խմ: զի ոչինչ տարբերութեան գտանի յերկս, որ չլիցէ էակ, ճշմարիտ, բարի, մի, նոյ, և խմն:

Բայց պիտեալի է ըստ կայեստանոսի *, զի այս եւ զերիք գերազանցականք, էակ, մի, ճշմարիտ, բարի, նոյ, և խմն, ոչ ՚ի մէջ բերեն զայլ աստիճանս,

* ՚ի գիրս էակին ևէ-ութ. գլ:

ձան,

Հան, կամ զայլ զինչուԹիւն որիշ յատուկ ձանաց կամ՝ ի բնուԹենէ այնոցիկ, զորոց ստորոգին։ Զի յատկին զմարդոյ էակ, մի, բարի, ճշմարիտ, կր, և նման, ոչ ատուկ ինչ որիշ՝ի մարդկուԹենէ նշանակեմք, այլ զնոյն զանազան եղանակաւ արտայայտեմք։ Քանզի էակն նշանակէ զմարդկուԹիւն ըստ որում ունի զգոլ։ Մարդ ասելիք զնա՝ ըստ որում ոչ է բաժանեալ յինքեան ներգործաբար։ Բարի, ըստ որում է կատարիչ բաղձանաց, եզերիչ լինելով նոր։ Ճշմարիտ, ըստ որում կարէ եզերիչ լինիլ իմացուԹենէ։ Իր, ըստ որում դնէ զէակուԹիւն բնուԹենէ իրաց՝ ոչ կէզծեալ, այլ իրական։ Ինն, ըստ որում է որիշ յայլոց։

## ՊՐԱԿ ԵՐԲՈՐԴ։

Յաղագս պանոպանուԹենէ, և գոյուԹենէ։

Իրևէլն է խնդիրս, և մի՝ի գլխաւոր վարդապետուԹեց աչքն Թուիմայն. առ որոյ խնամոտ՝ պարտ է հրաժարեցուցանել զմիտս՝ի տոչընին բանից իրաց, և յիւս ընդհանրագոյն բան էակի դարձուցանել։ Եւրդ ոմն վերագոյն ասացաք, էակն է, որոյ ներգործուԹիւն է գոլն. ուստի որ լինչ է, կամ է ինքն գոլն, և կամ հաղորդեալ լինչ գոլոյ, կամ ունող գոլոյ։ Էակին՝ որ է ինքն գոլն, յայտ է Թէ ոչ կանտազանի էուԹենէն՝ի գոլոյ. և այս էակ է միայն աստ. յորում էուԹիւն և գոլ ոչ իւիք իրօք կանազանին։ Բայց յայնս, որք ոչ են ինքն գոլն, այլ հաղորդեալ լինչ գոլոյ, յորժամ են ներգործուԹիւք, երիցս լինչ կանազանեալ ըմբռնեմք. զի Թէ զլինչ են, և Թէ են. կամ զներգործուն գոլոյ. և զկրն ունող այսր ներգործուԹենէ գոլոյ. ՆերգործուԹենէն գոլոյ, ասի գոյուԹիւն։

Ապա

Այսպէս գոյութիւնն ընդհանրապէս ի ներգործութիւն գոլոյ, եթէ իցէ ինքն գոլն ներգործութիւնք, և եթէ գոլոյ ներգործականութիւնն: Իսկ յայնս որք ոչ են ինքն գոլն, այլ ինչ, որ կարէ գոլ և ոչ գոլ. սահմանի գոյութիւնն, ներգործութիւն էութիւնք, կամ կայութիւն իրին արտաքոյ պատճառաց և ոչնչի: կամ այն, որով իրն ի ներգործութիւնք, կամ վերջին ներգործականութիւն գոլոյ, կամ այն՝ որով պատասխանի հարցմանն, արդեօք ի՞նչ:

Իսկ էութիւն նոյ սահմանի, այն որոյ ներգործութիւնն ի գոլ. կամ որով իւին կացուցանի՝ ի բացորոշեալ տեսակի իրաց. կամ որ նախ ըմբռնի յիրում. կամ առանց որոյ անհնար ի խմանալ զնրն. կամ որով իրն ի այս ինչ, որ անուամբ իրին նշանակի, և սահմանաւ բացատրի: որով պատասխանի հարցմանն, զինչ ի: Ուսոյն ասի և պինդութիւն, այլ և բնութիւն, զի ի ըստ կիզման և արմատ յատկութեանց, և գործողութեանց: Եւ ևս բան էրէն, զի ի պատճառ՝ որոյ վերն իրն ի, որ ինչ ի. կամ զի մատց և բանի առարկի: Ասի և տեսակ, զի նովաւ կացուցանի իրն՝ ի սահմանաւոր տեսակ իրի: Թէպէտ են էութիւնք ինչ, որք ոչ են տակ տեսակք, այլ բաղադրեալք՝ ի նիւթոյ և՝ ի տեսակէ. ոյք զի նիւթոյն լինիլ ենթակայ հասարակ առ բազում տեսակս իրաց անատարբեր. իսկ տեսակին բացորոշութիւնք այսր կարողութիւնք առ այս ինչ տեսակ իրի: Ասի յայսպիսի էութիւնս տեսակն ոչ ի բոլոր էութիւնն, այլ ներգործութիւն էականն, որոյ ե՛կաւորութիւնք բացորոշն նիւթն առ այս ինչ տեսակ էակի:

Յայսցանէ յայտէ, և ամենեքին իսկ ընդունին, թէ՝ ի ստեղծեալ էակս զանազանին ըստ իրաց ինչ էութիւն և գոյութիւն: Քանզի զէութիւնն նոյ հնար ի խմանալ լինով առանց գոյութ: ոյք լինով խմանամք թէ զինչ ի մարդ, զինչ շրջանակն, և զինչ վարդ, ոչինչ ածեալ զմտաւ ե՛թէ գոյացեն՝ թէ ոչ: Մանաւանդ թէ ամ գիտ-

տու-

տուլինք յածին զէուլիլք իրաց հրաժարեցուցեալ 'ի գոյուէ: Մ իայն խնդրի՝ Թէ արդեօք և իրօք կցեն զանազանեալ: Բացատեն բազումք. նքն Թովմաս յայտնի ստորատե: Իսկ ակալտ համարի, զանազանիլ տեսական զանազանութիւն 'ի քնուլիէ իրին:

## Եղրակացուլիւն:

Յամ հունաւոր և 'ի ստեղծեալ էակս էուլինն իրօք զանազանի 'ի գոյուլիէ. ոչ կարողուլինն 'ի ներգործուլիէ իւրմէ: Ուստի իրօք բաղդրին յէուլիէ և 'ի գոլոյ՝ իբր յերկուց սկզբանց գոլոց: Ա յսպէս ուսուցանէ նքն Թովմաս *, ասէ. յամ ոպեղծեալ էակս էուլինն պարէբերի 'ի գոլոյ իւրմէ. և բողոպիւ ատ այն՝ ոչ կարողուլինն ատ ներգործուլիէ: Եթ գարձեալ * ասէ, գոլն իրին ու պեսակ է նր, և ու նիւլ. այլ էակաւոր ինչ իրին 'ի յէոն պեսակի: Զնոյն կրկնէ յանհամար տեղիս:

* ա. հ. կո. ձբ. պ. Ֆ:

* 'ի գիրս պիպտոլեանոց ձբ. գբ. ձ:

Յուցանի նախ. որ ինչ այ է յատուկ, ոչ պատշաճի ստեղծեալ էակի: Ա յլ վկայուլիւնք նք գրոց. և ամ արբոց հարց հաւանուլիւնք, յայտ է Թէ այ միայն է լինիլ իւր գոլ: Ուստի առ հեբրայեցիս անունն, յեհովահ, որ համարի այ սեպհական, նշանակէ զլինիքն զգոլ. զի ածանցի յէակէն բայէս հայահ, կամ հավահ. որ նշանակէ զգոլ: Ա պա ոչինչ էակ ստեղծեալ է իւր գոլն. այլ գոլ նր կամ գոյուլիւն՝ զանազանի յէուլիէ:

Յատատուի, ոչինչ ստեղծուածք է պարզ էակ, զի այն այ միայն է յատուկ. այլ հարկիւք բաղկանայ 'ի ներգործուլիէ, և 'ի կարողուլիէ: Իսկ արդ եթէ չէր էուլիւնն զանազանեալ 'ի գոյուլիէ, լինէր լինն՝ էակ պարզ, և ոչ բաղդրեալ 'ի ներգործուլիէ և 'ի կարողուլիէ: Ա պա յամ ստեղծեալ էակս էուլինն զանազանի 'ի գոյուէ: Փոքրագոյնս յայտ է 'ի հրեշտակս: Քանզի էուլիէ ոմնելոյ պարզ. եթէ լինէր

լինէր էութեն նոյ՝ նոցին գոյութեն, ոչ լինէին հակք բաշխադրութեք՝ ի ներգործութէ և՝ ի կատարուածէ: Զի հանին ըստ որում հակ բաշխադրի յէութէ և՝ ի գոլոյ: այլ ի նմա ոչ լիներ բաշխադրութեն յէութէ և՝ ի գոլոյ. զի նոյնն ոչ բաշխադրի ընդ ինքեան: Ապա ոչ լինէին հակք բաշխադրութեամբ:

Նոյնպէս մեծագոյնն փոքր մի Հոգեգոյն արժան է մեկնել. զի յայն առաւել հասատատեալ է եզ բանացուածքն մեր: Ասդ զնոյն միայն համարիմք հակ պարզ, և մանրուր՝ ի ներգործականութէ գոլոյ. և վն այն՝ ոչ բաշկացեալ՝ ի ներգործութէ գոլոյ, և՝ ի կարողութէ գոլոյ. այլ ինքն գոյն ներգործութէ: Այլ զայս ոչ ուսմէք առեղծեալ հակի պարտ է ասել, զոր և յաւաջքան զմեզ յայտնի ուսուցին նոքա հարք. ոմն նոքն կիւրեղ, ի դիմոն՝ յորում ասպացուցանէ՝ թէ հոգին նոքա է նոյն, ասէ. ուրնե սրեղծուածք * գիրք. ասա բնութէ է պարզ. և դարձեալ * ասէ. բաղադ՝ ի վերայ. րութէ է ամենայն, որ ինչ՝ ի սրեղծուածս. և էիւ ինչ հանդա. գլ. ի՛: ի նոսա պարզ: Ապա ոչինչ առեղծուածք է հակ պարզութէ. այլ բաշխադրութեամբ: Ասդ զանձն հակն է, որոյ ներգործութէն է գոլ. հակն ըստ որում հակ բաշխադրի՝ ի ներգործութէ գոլոյ, և՝ ի կարողութէ գոլոյ. ուստի, ոմն ամենեքին իսկ ընդունին, ներգործութէ և կատարողութէ են առաջին սկզբունք բաշխադրեալ հակի: Ապա առ՝ ի լինիլ առեղծուածոյն բաշխադրեալ՝ ի բանի հակի, պարտ է երկոցունց առցա զանազանիլ՝ ի նմա. և վն այն էութիւն ոչ պարտի լինիլ ներգործութէ գոլոյ, կամ գոյութէ, այլ բաղադրեալ ինչ առ այն իբր կարողութէ առ իւր ներգործութէն: Ուստի զէութէ առեղծուածոյ ամենեքեան իմանան իբր ինչ՝ որ կարէ գոլ և ոչ գոլ, ի կարողութիւն առ գոյութէն:

Այսմ մի միայն ապաւէն ունին հակառակորդք: Պատասխանեն, թէ առեղծուածն ոչ է իւր գոյն, և ոչ պարզ՝ ի բան հակի. զի էութէ

և

եւ գոլ զանազանին 'ի նմա՝ ոչ իրօք, այլ բա-
նիւ. և վասն այն է 'ի նմա բազադրութիւն 'ինչ
գործութեան և 'ի կարողութեան, ոչ իրական, այլ
բանի:

Այլ է ընդդէմն, զի զանազանութեանն և բա-
զադրութեանն բանի՝ ոչ ընդհմանայ կատարեալ
նոյնութեանն, և պարզութեան: Ապա եթէ ներ-
գործութեանն գոլոյ, և կարողութեանն գոլոյ՝ բա-
նիւ միայն զանազանէին 'ի ստեղծուածս՝ ոչինչ
ընդդէմ էր բացատձակապէս ասել զնա, թէ
բնութենէ գոլ, և էակս պարզս: Ճուցանի առա-
ջարկութեանս 'ի հակառակորդացդ, որոց ումանք
ընդունին, թէ 'ի յաճ էութեան և գոյութեան իմ-
նատիս զանազանին բանիւ. և ամենեքեան 'ի մի
բերան հաստատեն, թէ ոճ բազադրի բազադ-
րութեամբ բանի 'ի սեռէ և 'ի տարբերութենէ: Եւ
սակայն համարձին զնա էակ բացատձակապէս
պարզ. և թէ է գոլ իւր: Ապա սոսկ զանա-
զանութեանն և բազադրութեանն բանի ոչ ընդդի-
մանայ կատարեալ նոյնութեանն և պարզութեան:
Ճուցանի երկրորդ, եղելականացութեանս բանիւ,
զոր սահմ'ի մէջ բերէ ոճն Թովմաս: Ներգոր-
ծութեանն զանազանի իրապէս յիւրմէ կարողու-
թենէ, յոր ընկալեալ լինի: Այլ գոլն, կամ գոյու-
թեանն ստեղծուածոյ ընկալեալ լինի յէութենէ
ատա իրապէս զանազանի 'ի նմանէ: Մեծա-
գոյնս յայտ է, զի ոչինչ կարէ ընդունիլ զինքն:
Ճուցանի փոքրագոյնս, եթէ 'ի հատարակ ե-
զանակէ խօսիցի, զի ասելիք ընդունիլ ստեղծուա-
ծոց յայ գլոլ, կամ գլոյութեան: Եւ եթէ բա-
նիւ: Վասնզի գոյութ ստեղծուածոց ոչ է հնար
լինիլ ենթակայացօղ, կամ անընկալ: Իսկ արդ
յայլ ոչինչ կարէ լինիլ ընկալեալ, բայց եթէ
յէութենէն: Ապա յայն լինի ընկալեալ: Փոք-
րագոյնս յայտ է. զանզի էութենէն է սեպհական
ընկալուչ գոյութենէ. վասն որոյ յայլ ոչինչ, բայց
եթէ յայն լինի ընկալեալ: Ջմեծագոյնն ցու-
ցանէ զեն Թովմաս պէսպէս փաստիւք:

Առաջինն է, գոյութենէն անընկալ, կամ ենթա-

կայացօղ է մաքուր ներգործուելի: Այլ գոյութիւնն ստեղծուածոյ ոչ է հնար լինել մաքուր ներգործուելի: Ապա և ոչ անընկալ: Փոքրագոյնս յայտ է. զի միայն ած է մաքուր ներգործուելի: Յուցանի մեծագոյնս. մաքուր ներգործուելինն է, որ յոչինչ կարօղութեի խառնի, ոյ յայտ է յերերաց: Այլ գոյութիւնն անընկալ յոչինչ կարօղութեի խառնի: Ապա ուրեմն է մաքուր ներգործուելի: Մեկնի փոքրագոյնս. ներգործուելինն խառնի ընդ կարօղութեի, կամ վն զի է ներգործուելի կարօղութեի ինչ, կի զի ինքն է՝ի կարօղութեի առ անդրագոյն ներգործուելի: Այլ գոյութիւնն անընկալ, կի էնթա կայացօղ՝ ոչ է ներգործուելի կարօղութեի ինչ, զի յոչինչ լինի ընկալեալ. և ոչ գիմէ առ անդրագոյն ներգործուելի. զի է վերջինն ներգործուելի՝ի գծի էակի. ոյ յայտ է՝ի տահմանէն: Ապա ուրեմն է ներգործուելի մաքուր, զի ինքն գոլն էնթակայացօղ:

Ասիցես. գոյութիւնն ստեղծեալ գոյացութեի ոչ է մաքուր ներգործուն, զի թէպէտ յոչինչ լինի ընկալեալ. սակայն ընդունի, այսինքն է, զէնթակայութեի:

Այլ է ընդդէմ. զի էնթադրեալն մանաւանդ ընդունի զգոյութիւն. քանզի է այն որ արտադրի, ոյ ած է՝ի գոլ: Ապա էնթակայութիւնն ոչ ընկալեալ լինի՝ի գոյութիւնն, այլ անդրադարձեալ: Վն որոյ գոյութիւնն է վերջինն ներգործականուելի գոլոյ, կի ոյ ասէ ոչն թովմաս*, է՝ներգործականուելի ամենայն էրայ՝ նա նա փէ ասկայ. ուսոփ ու բուշդոփ առ այլս, ոյ ընդունող առ ընկալեալ, այլ ոյ ընկալեալ առ ընդունող: Եւ այս յայտ է՝ի ծանօթութեէ նր. զի է կայուելիրի արտաքոյ պատճառաց և ոչնչի. արդ իրն ոչ հաւասարի կայանալ արտաքոյ ոչնչի և պատճառաց, եթէ ոչ յորժամ ժամանէ՝ի վերջինն ներգործականուելի, և՝ի նպատակ գոլոյ: Այրկրորդ պատճառն է: Գոլն վերացեալ, կի էնթակայացօղ, և կի անընկալ՝ (զի ամենեքին

* ա. մ. խ. փ. ա. ա. ա

քին սոքա զնոյն նշանակեն. ) է մի միայն, և անհուն. այլ գոյութինն ստեղծեալ ոչ է մի միայն և անհուն. Ապա և ոչ անընկալ : Փոքրագոյնս յայտ է : Յուցանի մեծագոյնն : Ներ գործութինն հունաւորի և բազմապատկի կարողութիւ, յոր լինի ընկալեալ : Ապա գոյն, կամ գոյութինն, որ է ներգործութեն անընկալ, է մի միայն և անհուն 'ի գոյն. ըստ պարզայն :

Այս սկիզբն, թէ ներգործութինն հունաւորի, և բազմապատկի կարողութիւ, և ըստ այնմ' էինէ ընդ էից 'ի նմանէ' էինի մի միայն և անհուն 'ի գոյէ իւրում, թէ այժմ բազմաց թուոյ մեծի. բայց այնպէս մեկնի թուեցաւ որբոյն թուոյմայի, մինչև' ցանգ զայն 'ի մէջ առնուլ' առ'ի ապացուցանել զմիութինն այ, և զանհնութինն. և զայլ ինչ բազում: Պղա առնի և այս թուեցաւ հաւաստի յոյժ. մինչ զի կայ ցուցեալ նորա զբնութինս վերացեալս և անբնական, զիւրաքանչիւր յիւրում տեսակի ասել լինիլ մի միայն և անհնասէս հաղորդական' ըստ վերացմանն : Ջնոյն բացատրէ ոչն թուոյմայ փորձիւ : Քանզի 'ի վերացուցանել մեր զբնութինն 'ի նիւթոյ, նոյն իսկ զորութիւ վերացուցմանն լինի մի, և մի ինչ ըմբռնի, և մի միայն ասհմանաւ սահմանի. և զբոլոր տեսակն զբանն բովանդակէ. և է անհուն անհատից հաղորդական : Ասասի եթէ այսու վերացեալ ենթակայ նայր յիւրում, լինէր մի միայն յիւրում. և անհնազհաղորդական : Ապա յայսմանէ յայտ է, թէ տեսակն կամ ներգործութինն' վերացմամբ յենթակայէ իւրմէ ժողովի 'ի մի. և զայմ զիւրոյ բանի զընդարձակութինն բովանդակէ : Իսկ ըստ կալեալ լինելով 'ի կարողութինն իւր' բազմանայ, և հունաւորի :

Այլ առ խորագոյն ևս իմանալ զայս, գիտել է. զի որպէս ասացաք, և որպէս առնէ քին իսկ ընդունին, ներգործութիւնն 'ի բանէ իւրմէ է կատարելութեն, իսկ կարողութիւնն անկատարութեն : Ասասի 'ի յիւրս, ներգործութեն առնելն մաքուր, կամ ած. պարունակէ

յինքեան զբռավանդակ լրութեն գոլոյ. իսկ սոսկ կարողութենն, որ է նիւթեն առաջինն, զծայրագոյն անկատարութե, և զգատարկութեն գոլոյ, զոր վը այնորիկ ըզն օգոստինոս կոչէ ծերչ ոչնչի, վը ոչինչ ունելոյ ներ 'ի կատարելութենէ հակիւ, բայց միայն զկարողութեն ունելոյ զայն. որպէս խաւարչաինն ոչինչ ունի 'ի լուսոյ, բայց զկարողութե ունելոյ զլոյս: Նմին իրի որչափ առաւել ներգործութենն մատչի 'ի կարողութե, և ընկղմի յայն, այնչափ առաւել հունաւորի, նուճալի, և անկատարանայ, որով և բազմապատկի. զի մեծութենէն 'ի վերինն, են բազմայնէք, և բաժանելի 'ի ստորինն: Եւ զսորին հակառակն, որչափ առաւել հեռանայ 'ի կարողութենէ, այնչափ առաւել մերձենայ ունը ածծ. որ է լրութի գոլոյ. և վը այն առաւել կատարի և ընդարձակի, որով և ժողովի 'ի մի, զի ըստ նէալէն 'ի ստորինն էն մեայնէալ 'ի վերինն: Ասասկ ուշ կարողութենն նուճասատացուցանէ զներգործութենն, սոյնպէս և բազմացուցանէ զնա, և հունաւորէ: Եւ վը այնորիկ, եթէ ներգործութենէ լինչ լցէ ազատ չար կարողականութէ և 'ի նիւթոյ, ոչինչ հունաւորութենէ, կամ բազմապատկութենէ լինի 'ի նմա: Եւ այսպէս ճշմարիտ է սկիզբնա, թէ ներգործութեն անընկալ է ի մեայն և անհուն: Զոր այնպէս հաւաստի համարի ըզն Թովմաս, մինչև Թուի 'ի հրեշտակաց զայն առեալ. նմին իրի և ասէպ ուշ զբաջայայ՝ զայն 'ի մէջ բերէ:

Արդարոգ պատճառն, որով ցուցանէ ըզն Թովմաս, թէ ստեղծեալ գոյութենէ ոչ է հնար լինել անընկալ, է այս: Գոյութենն ոչ ընկալեալ կիւթենէ ոչինչ ունի ըստ իւր յատակցեալ. բայց միւսմէ գոլոյ: Այլ ամ ստեղծեալ գոյութենէ ունի ինչ ընդ իւր յատակցեալ բայց միւսմէ գոլոյ, ըզ զբաղում պատահմունս, ուշ զսպմատակութենէ, զբանակութենէ, և զայլս: Ապա ամ ստեղծեալ գոյութենէ է ընկալեալ կիւթենէ իւր: Փոքրագոյնս յայտ է: Ցուցանի մեծագոյնս: Եթէ հնար յատակել իմիք ընդ գոյութե, բայց եթէ

եթէ՝ ոչ կամ ընկալեալ լինի ՚ի նա, կամ ընկալեալ լեալ լինի ընդ նմա յենթակայ լինել. Իսկ արդ ոչինչ խմիք հնար է ընկալեալ լինել ՚ի գոյութիւն. զի ինքն է վերջին ներգործականութիւնն իրի. և ոչ ընկալեալ լինել ըստ նմա յենթակայ լինել երբորդ, եթէ այնպիսի գոյութիւն կայ անընկալ: Ապա գոյութիւն անընկալ ոչ կարէ ունել ինչ ընդ իւր յարակցեալ՝ բայց միւրմէ գոյ: Ասասի ասէ բոեսիոս, թէ ունօղն գոյութիւն, (զի էութիւն,) կարէ ընդունել ինչ ընդ իւրում գոյ, զի, զպատահական առասիս, այլ ինքն գոյն, կամ գոյութիւն, ոչինչ այլ ինչ կայ րէ ընդունել:

Ցոյանի եզրակացութիւնս և այլով պատճառաւ սքին թուիմայի: Անհնար է ստեղծել էակ կի լինել վերջին իւր ներգործականութիւն. զի այս յատուկ է մաքուր ներգործութիւն: Այլ եթէ էութիւն ստեղծուածոյ լինէր իրօք նոյն ընդ գոյութիւն, լինէր վերջին իւր ներգործականութիւն. քանզի գոյն կամ գոյութիւն է վերջին ներգործականութիւն և նպատակ գոյ: ուստի ած է վերջին իւր ներգործականութիւն, զի է ինքն գոյն: Ապա գոյութիւն ստեղծեալ էակ կի ոչ է իրօք իւր էութիւն, այլ զանազանեալ ՚ինմանէ:

Առարկեցես նախ. անհնար է գոյութեան ընկալեալ լինել էութիւն. ապա ոչ զանազանի ՚ի նմանէ: Ցոյանի առաջարկութիւնս. ոչ է հնար գոյութիւն ընկալեալ լինել յոչինչ: Այլ էութիւն առանց գոյութիւն է ոչ ինչ: Ապա ոչ է հնար գոյութիւն ընկալեալ լինել յոչինչ:

Պատասխանեմ ուրանալով զառաջարկութիւնդ. զորոյ ցուցման ընկալեալ զմեծագոյնն, զանազանեմ զփոքրագոյնն. էութիւն հրաժարմամբ գոյութիւն է ոչինչ, ունելոյ գոյութիւն, ընդունիմ, ունելոյ էութիւն, ուրանամ: Քանզի որով հետև զանազանեմք յէակութիւն երկուս կացուցիչ ակզբունս, զի զէութիւն և գոյութիւն, առանց

գոյութիւն էութիւնն ոչ է ինչ գոյօղ. և վ՚ր այն
կարէ ասիլ ոչինչ ոչնչութիւն գոյութիւն. որպէս
նիւթն առանց տեսակի ոչ է ինչ ներգործութ:
Բայց սակայն ոչ նիւթն հրաժարմամբ տեսա
կի ունի վերականուն կարողական էութ, այսպէ
և էութիւնն հրաժարմամբ գոյութիւն, ունի վե-
րականութիւն սեպհական, թէպէտ ոչ գոյօղ
յինքեան, այլ ըստ որում ներգործութիւն է են-
թակայ գոյութիւն:

Սոխպիցես, որ ինչ ոչ է արտաքոյ պատճա-
ռաց, է սոսկ ոչինչ. այլ էութիւն հրաժարմամբ
գոյութ ոչ է արտաքոյ պատճառաց. առա ու-
րեմն է սոսկ ոչինչ: Յուցանի փոքրագոյնս.
գոյութիւնն է արտաքոյ պատճառաց կայութի:
Ապա էութիւնն հրաժարմամբ գոյութիւն ոչ է ար
տաքոյ պատճառաց:

Պատասխանեմ նախ զանազանելով զփոքրա-
գոյնդ. էութիւնն հրաժարմամբ գոյութիւն ոչ է
արտաքոյ պատճառաց, ըստպէս, և վերջնաբար,
ընդունիմ, ոչ է արտաքոյ պատճառաց՝ սկզբ-
նարար, և անըստպէս, ուրանամ: Այնպէս
լինի զզանազանութիւնս, ոչի՝ ի բնաբանութեան
ասէաք, թէ նիւթն հրաժարմամբ տեսակի է
արտաքոյ պատճառաց սկզբնաբար:

Պատասխանեմ երկրդ, էութիւնն հրաժարեալ
՚ի գոյութ՝ ոչ է արտաքոյ պատճառաց, հրաժա
րեալ հրաժարմամբ իրական անջատման, ըստ
նիմ, հրաժարել հրաժարմամբ իրական զանա
զանութիւն միայն, ուրանամ: Վերկին. էութիւն
կրկնակի հրաժարեցուցանի ՚ի գոյութիւն. մի
հրաժարմամբ անջատման, միւնչև իրապէս պա
կասիլ յայտ գոյութիւն, երկրորդ հրաժարմամբ
իրական զանազանութիւն, ըստ որում ըստ գոյութիւն
դոլով՝ առեալ լինի իբրև իր զանազանեալ ՚ի
նմանէ իբր յիւրմէ ներգործականութիւն: Ըստ
առաջնոյն, էութիւնն ոչ է արտաքոյ պատճա-
ռաց, և ոչ կարէ լինիլ ՚ի բնութիւն իրաց, ուր
և ոչ նիւթն անջատեալ յայտ տեսակէ: Բայց
քստերկրորդին՝ ցուցանի ինչ յիրում և արտա

քոյ պատճառաց, ՚ի զենթակայ հաղորդեալ ներգործականութենէ գոլոյ : ՚Ի դէպ է և այլ ազգ զանազանել, և յայտնապէս ևս : ԷուԻն առարկապէս առեալ ոչ է արտաքոյ պատճառաց, ընդունիմ. ենթակայապէս առեալ, ըստ որում ներգործութիւն ենթակայ լինի գոյութե, իբր սեպհական կարողութիւն իւրում ներգործութենէ, ուրանամ:

Յովհաննէսիկեան : Ապա էութիւնն չիմանի ընդ առաջին նիւթոյ : Յուցանի հետևեալս : Առաջին նիւթն է կարողութիւն գոլոյ : Այլ ըստ մեզ և էութիւն է կարողութիւն գոլոյ : Ապա չիմանեմք զերկուսին ընդ միմեանս :

Պատասխանեմ ուրանալով զհետևեալդ. առ ցուցումն պատասխանեմ. նիւթն է առակ կարողութիւն ոչ միայն ՚ի գծի գոյութե, այլ և ՚ի գծի էութե. զի ըստ ինքեան ոչ է որոշեալ առ այս կամ առնաւ էութիւն, այլ որոշի տեսակաւորի է ականն ներգործութիւն : Բայց գարձեալ և բաղադրեալն ՚ի նիւթոյ՝ և յայնմ է ականն ներգործութիւն, զի ՚ի տեսակէ, որ ասի էուԻնան, բաղադրեալ առ գոյութիւնն իբր առ վերջին իւր ներգործականութիւն : և վասն այն տեսակն ասի առաջին ներգործութիւն. իսկ գոյութիւնն վերջին ներգործութիւն, և վերջին ներգործականութիւն : Ասասի ոմն ասէ ոմն Թովմայ * . ՚ի բաղադրեալս մարդէ * Ճնոյա-
լի է իրին ներգործութիւն, և իրին կարողութիւն : Քանզի հո-
պէ նախ նիւթն է ոմն կարողութիւն նկատմամբ գեղին ըս-
և գեղին ներգործութիւն նորա . և գարձեալ բնու- պեզծուա-
թիւն իմ էուԻնէն բաղադրեալ ՚ի նիւթոյ և ՚ի գեղ- ծոց.պ.ա:
նէ, է ոմն կարողութիւն նկատմամբ գոլոյ . իմ գոյութիւն, ըստ որում է ընդունող նորա : Վասն որոյ ՚ի մարմնեղէնս գոյացութիւնս կրկին է բաղադրութիւն, առաջինն նիւթոյ և տեսակի ՚ի կացուցանել զէութիւն. երկրորդն էութե և գոյութե ՚ի կացուցանել զէակ կատարեալ : Բայց ՚ի հոգեղէնս գոյացութիւնս է մի միայն բաղադրութիւն, զի էութե և գոյութե :

Առարկեցեալ երկրորդ. Գոյութիւնն առեղծեալ

իբրև զայլ իրս, ունի զսեպհական հուԹիւն:
Ա՛յլ ոչ գանազանի իրապես յիւրմէ գոյուԹէ,
ապաԹէ ոչ՝ գոյուԹԹէ լիներ գոյուԹի յանդունս:
Ապա գոնէ հուԹի ինչ ստեղծեալ ոչ գանա-
զանի յիւրմէ գոյուԹէ:

Պատասխանեմ նախ, գոյուԹիւն յատկապէս
ոչ է հուԹի ինչ, այլ ներգործուԹի ամ հու-
Թէ: բայց Թէ ապաւարուԹիւն ասացի լինիլ
հուԹի ինչ.

Պատասխանեմ երկրորդ. յասելն, Թէ հուԹիւն
գանազանի 'ի գոյուԹէ, պարտ է զայն նմա-
նալ ըստ ամենայնի առեալ հուԹէ. յորոյ նմա-
նութեան ոչ է գոյուԹիւն, զոր օրինակ մարդոյ.
հրեշտակի, և այլն: Զի ոչ ամ ստեղծել առ-
նօղ առնէ գանազանեալ առնելուԹիւն. բայց
առնելուԹիւնն առ'ի առնել, ոչ կարօտանայ այ-
լում առնելուԹիւն. այլ իւրով եղանակաւ առ-
նէ ըստ ինքեան, որպէս ամ ստեղծեալ գոյա-
ւոր, պէտս ունի գոյուէ գանազանելոյ յիւր-
մէ, որով լինիցի գոյաւոր. բայց գոյուԹիւնն
որով գոյաւորին իրք, ոչինչ պէտս ունի այ-
լում գոյուԹէ, այլ ինքեամբ՝ իւրով եղանա-
կաւ գոյանայ:

Ընդարձակեա երդ: Ոչք ոչ կարեն անջատիլ.
ոչ գանազանին: Ա՛յլ գոյուինն ոչ կարէ ան-
ջատիլ յէուԹէ, ապա և ոչ գանազանի:

Պատասխանեմ նախ, մեծագոյնդ է ասա-
քանչի բազում իրք գանազանին, որոց ոչ է հն
նար անջատիլ. ոչ նիւԹին ոչ կարէ անջատիլ
յամ տեսակէ:

Պատասխանեմ երկրորդ, Թէ՝ և ներգործու-
ԹԹէ հնար է գոյուԹէ անջատիլ յէուէ. քանզի
'ի քո հուԹիւնն մարդկային, կամ մարդկուԹիւնն
եղև իրապես անջատ 'ի գոյուԹէ իւրմէ, որոց
փոխան կացուցաւ գոյուԹէ բանին. ոչ ցու-
ցանեն մեզ ածաբանք.

# ՊՐԱԿ ՁՈՐՐՈՐԴ:

## Յաղագս էնդհակայութիե, էնդհատրէյելոյ, և անչին:



Ոյացութիեն լուացեալ տարբերի ի պատահմանց և յանլուացեալ էակաց, զի է իւր, յինքեան էնդհակայացեալ և աւարտեալ. իսկ պատահմունք ոչ են իւրեանց, այլ այլոյ, ք էնդհակայի. և են մասունք իւրեանց բոլորին: Ուստի եթէ գոյացութիեն ինչ լուացեալ, զոր օրինակ մարդն, գործիցէ ինչ. գործողութիեն ընծայի նմա. բայց եթէ պատահումն, կամ մասնն մարդոյ գործիցէ ինչ, ոչ եթէ երաժշտութիեն պատճառիցէ զերգս, և ձեռնն հարկանիցէ, ոչ ձեռնն, և ոչ երաժշտութիեն ասին առնել. այլ մարդն երաժշտութիւք, և ձեռամբ. զի ձեռնն և երաժշտութիեն ոչ են իւրեանց, այլ մարդոյ: Ա յս կատարելութիեն, որով գոյացութիեանն այնպէս լուանայ, մինչև կալ յինքեան, և լինել իւր, և ոչ այլոյ. ասի էնդհակայութիե, որպէս թէ չինփեան կայութիե: Զսմանէ երևի ինչ խնդրելի է, նախ թէ զինչ իցէ. կամ զինչ են թադրեալն և անձն: Երկրորդ զիարդ զանազանիցի ի քնութիէ, կամ յէութիէ: Երրորդ զիարդ զանազանիցի ի գոյութիէ.

Ա.ռաջի է նախ. էնդհակայութիեն է ներգործականութիե, որով քնութիեն այնպէս հաստատուն յինքեան, որ ոչ կարօտանայ հաղորդել այլոյ՝ առ ի գոլ՝ և գործել:

Ա.սի նախ ներգործականութիե. որով հանճայնի ընդ այլ կատարելութիս: Իսկ այլ մասունք ունին զտեղւոյ տարբերութիէ: Զի էնդհակայութիեն է առնել զքնութիեն հաստատեալ և աւարտեալ յինքեան. մինչև ոչինչ պէտս ունիլ հաղորդելոյ այլում՝ ի գոլ և՝ ի գործել: Ասեմք

ալինչ պէտս ասնիլ. զի բնութիւնն ածային, թէ պէտ է ենթակայացեալ յինքեան, սակայն է անդրապոյն հաղորդելի երից անձանց. ոչ առ հարկի, այլ առ անհաւն բերմնաւորուե:

Պահմանի ևս ենթակայութիւնն, կատարելութիւն, որով բնութիւնն լինի իւր՝ և ոչ այլոյ. ուստի զորինչ գործէ բնութիւնն ենթակայացօղ, ոչ այլուստ, այլ ինքեան գործէ: և վասն այն, քանզի 'ի մարդկային բնութիւնն քո՛ փոխանակ սեռական ենթակայութիւն, կացուցաւ ենթակայութիւն բանին. բնութիւնն այն ոչ էր իւր ինքեան. այլ էր բնութիւն բանին. և ոչ ինքեան գործէր, այլ բանին նոյ: Ուստի զոր ինչ արար կի՛ կրեաց բնութիւնն, այն ամ ընծայն բանին, որոյ էր:

Ենթադրեալն է իբր թանձրացեալն ենթակայութիւն. որպէս կենդանին է թանձրացեալն կենդանութե: Իսկ անձն ոչ այլ ինչ նշանակէ, բայց զինքն զենթադրեալն, ոչ զիարդ և իցէ բնութիւն, այլ զիմացականին: Զի ոչ ասեմք անձն ձիոյ, կամ քարի, այլ անձն ածային, կի՛ հրեշտակային, կամ մարդկային. ուստի անձն ոչինչ յաւելու 'ի վերայ ենթադրեցելոյ, բայց եթէ զարժանապատուութիւն ինչ և զգերազանցութիւն վի՛ իմացական բնութե: Արդ զոր ամեք կոչեմք անձն կի՛ ենթադրեալ, յոյնք անուանեն հիպոստասիս:

Յաւելն է երկրորդ: Ենթակայութիւնն է դրական ինչ իրապէս զանազանեալ 'ի բնութենէ, կի՛ չէ:

Յուցանի եզրակացութիւնս. և նախ թէ ենթակայութիւնն իցէ դրական ինչ, (թէպէտ ակատաս թուի բացատրել,) հաւանեցուցանի: Քանզի ենթակայութիւնն նշանակէ զկատարելութիւն ինչ, և զներգործականութե: Զի լինելն բնութե՝ իւր, և ոչ կարօտելն այլոյ վերաբար ձողի, է կատարելութիւն մեծ: Ապա ուրեմն ենթակայութիւնն ցուցանէ զդրական ինչ. ուստի ևբ վարդապետք ասեն. թէ բանն ածն ոչ

Հատ զենԹակայուԹեն բնուԹեանն մարդկայնոյ. այլ խափանեաց զայն, և փոխան ներ կացոյց զաճծային էնԹակայուԹեին, զոր անմարԹ էր ասել զսոսկ բացասուԹէ: Յայտ է ԹԷ աճ-ծային անձանց էնԹակայուԹեին ոչ կարէ ասել սոսկ բացասուԹեն, որովհետև տեսականաւոր կացուցանէ զանձինս, և զանազանէ՝ի միմեանց, և է եզր աճծային եղմանց, իսկապէս և իրաւա յառաջիկաեալ նոքօք. զոր գործս ոչ է մարԹ առ սոսկ բացասուԹեան: Ապա իմացուն էնԹակայուԹեն ոչ կայանայ՝ի բացասուԹէ:

Իսկ երկրորդ մասն, ըր ԹԷ էնԹակայուԹեին էրատէս զանազանի՝ի բնուԹէ, ցուցանի՝ի խորհրդոյ մարդեղուԹեն, յորում էնԹակայուԹեն բնուԹեն մարդկայնոյ եղև անջատեալ՝ի մարդկային բնուԹէ: Ապա զանազանին՝ի միմեանց:

Վերայ երրորդ հինդրոյն անմիաբան գտանին հելլինակք, ևս և Թովմայականք: Ոմանք ասեն, ԹԷ էնԹակայուԹեն և գոյուԹեն միայն զօրուԹեննաբար զանազանին, և են երկու պաշտօնք միոյ էակուԹեն. որ ըստ որում կայացուցանէ զբնուԹեն, և այնպէս եղերն զինա, որ ոչ է այլոյ, և ոչ այլում հաղորդական, կոչի էնՂակայուԹէ. իսկ ըստ որում վերջնաբար լուացուցանէ զներն, և դնէ զնա արտաքոյ պատճառաց. ասի գոյուԹէ: Իսկ ոմանք ասեն ԹԷ են երկու եղանակաւորուԹիք մի և նոյն երի: Այլ ոմանք դնեն լինել երկուս ներգործականուԹիս էրատէս զանազանեալս: Այս ամ կարծիք ունին ինչ հնին և՝ վարդապետուԹեան սբյն Թովմայի Բայց առաջինն զայս օգուտ ունի, զի զերբաւ մեկնէ զանազանուԹիւն գոյուԹէ յէուԹէ: Զի եԹէ գոյուԹի և էնԹակայուԹի են նոյն, յայտ է ԹԷ զանազանին յէուԹէ, որովհետև հաւասար է՝ի հաւատոյ, ԹԷ էնԹակայուԹին՝ի մարդեղուԹեն անՂատեցաւ՝ի մարդկային բնուԹէ, ուստի և զանազանի՝ի նմանէ: Սակայն երրորդ կարծիքն

Թուի

թուի առաւել ըստ մտաց սեպն թուլմայի, որ ուսուցանէ, թէ ենթադրեալն, այն ենթակայութեան, ընդ քնութեանն ընդունի զգոյութիւն* : Այն ոչ գոյութիւն սոսկապէս ցուցանէ զվերջ ջնին ներգործականութեան գոլոյ, և վասն այն հաստարակ է պատահմանց, և գոյացութեց: Բայց ենթակայութեանն է կատարելութիւն պատշաճեալ միայն լրացեալ գոյացութեց. և զանազանէ նոյ 'ի պատահմանց. ուստի երևի լինիլ ներգործականութեն յոյժ այլատարած 'ի գոյութենէ: Այլ զայսցանէ պրեցաք ճշդով. զի ենթակայութեն ծանօթութեն առեալ լինի առաւել յակզբանց հաւատոյ երկրորդութեն և մարդեղութեն, վասն այն յիրաւի թուղեալ լինի ծածկութենից: Ըստ լեզի մեզ այսչափ ինչ նորա յիշատակութեն:

* ա. մ. խ. է. պր. է. ա՛ն է:



# ԽՆԴՈՒՐ ՆՐՐՈՐԴ։

Յաչագս յոպհոռնէից էակի. այսինդն, ֆհռռնէ, ճշմար
պռռնէ, և բարռռնէ։



Անզն էակն է, որոյ ներգործ ծռռնին է գոլն. յայտ է լի՜ նիլ նմա՝ մի՝ ճշմարիտ, և բա րի։ Քանզն ամ որ ինչ է, ոռնի զմի գոլ, ճշմարիտ գոլ, և զբարի գոլ։ Ոռնի զմի գոլ, ասպա թէ ոչ՝ ոչ լիներ էակ. այլ բազմռռնին էակաց։ Ճշմարիտ գոլ. զի սովին իսկ, թէ է՛, կարէ եզերել ճշմարիտ ճանաչռումն, և ըզ գործոլռնի իմացռնէ, որոյ առաւրկայ է էակն։ Եւ զբարի գոլ. զի բարին է, որ բաղձացեալ լինի, արդ ամ էակ բնաւրէս բաղձայ գոլոյ։ Եւ գործեալ ամ ինչ որ է, համաձայն է կամաց առաջնոյ պատճառին, ըր ձոյ. ասպա թէ ոչ՝ ոչ լիներ, եթէ պատճառն առաջին այնմ իբր բար ձոյ ոչ հաւանէր. ըստ այնմ՝ * ։ Քանզի դիտէր նոյն * [illegible] ինչ, երբ ու նայէր։ Ճայոց երից յատկռռնեց ք։
էակի ճառեցռնէք միով միով սրրակառ. յաւե՜ լեալ և մանաւանդ սրրակ յաղագս զանազանռ լեն։ Բայց յառաջ պարտ է գիտել, զի չեն առ քա յատկռռնեք փիլիսփականք, իրրապէս զանա զանեալք յէակէ. այլ ծանօթռռնեք ինչ, որք ընծային ամ էակի. և վը այսորիկ ասին յոպհռ ռնէ առաջնական, զբռռնենական, և ծանօթական։

# ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ.

## Յաղագս մտաւք։



Ոյն է հակ անբաժան յինքեան, և բաժանեալ յայլմէ ամէ։ Ընդ քան ղն ամ հակ, ցայնվայր ի, ցորչափ ի մի, և ի կորուսանել զմիութեն, կո՞ րուսանէ զբան էն, ոչ յայտ է ի մարդն, որ դադարէ ի գոլոյ, յորժամ մասունք նր ոչ են միաւորեալ, վ՞ այսորիկ մին ոչինչ յա ւելու յհակն, այլ միայն բացայայտէ զհակու թեն բացաստուեթ բաժանման։ Չամանէ խնդ րին երեք. նախ թէ յինչ կայանայցէ սկզբնա բար, արդեօք ի բացաստուեթ բաժանման, թէ յհակուեթե, ըստ որում փաղանչանէ զանբա ժանութեն։ Երկրորդ՝ քանի՛ պատիկ լցէ։ Եր րորդ՝ ուստի՛ առեալ լինիցի միութեն և բազմա պատկութեն երից։

Ասելի է նախ. Մին հաւր նշանակէ զհակու թեն՝ ըստ որում փաղանչանէ զբացաստուեթիւն բաժանման։ Ուստի նշանակէ զդրական ինչ ուղղակի, այլ զբացաստուեթն կողմնակի։

Յուլանէ դիւրաւ ի տահմանէ միոյն, զի ա՞ ան, հակ անբաժան յինքեան, և բաժանեալ յայլմէ։ Եւ միութեն՝ հակուեթե անբաժան։ Ապա նախ, սկզբնաբար, և ուղղակի նշանա կէ զհակուեթե դրական. իսկ անուղղակի, և վիաղանչանուեթե զբացաստուե բաժանման։ Տաստատէ։ Հատկուեթեն հակի՝ քանզի ե դրա կան ինչ, և անդրադարձական ընդ հակի, ոչ կարէ նշանակել նախ և սկզբնաբար միայն զբա ցաստուեթե։ Ապա պարտ է նմա սկզբնաբար նը շանակել զհակուեթեն, ըստ որում փաղանչա նէ զբացաստուեթե բաժանման։

Ասելի է երկրորդ։ Մ հուեթեն մանուսանդ է թէ լինիլ երրեակ. ի սեռական, տեսակարար և սոակ թուական։

Մեկ-

Ասէին: Քանզի որովհետև մին՝ նշանակէ զէակն անբաժան, այնչափ լինին միութիւնք, որչափ են բաժանմունք: Ասդ իրք մանաւանդ բաժանին 'ի միմեանց կամ սեւով, ոչ քարն 'ի մարդոյ • կամ տեսակաւ, ոչ առւծն 'ի ձիոյ • կամ թուով, ոչ պետրոս 'ի պօղոսէ: Ապա երբեք են միութիւնք, յորս՝ որ բացատէ զբաժանումն սեռի, ասէ ոչ-ոքեան • որ զտեսակինն, պէս ոչխարք • և որ զթուականն, հոգեան կամ անհոգեան:

Յաղագս սեռական և տեսակարար միութեանց ոչինչ պոյ խօսիլ մանաւանդ: Բայց միայն պարտ է գիտել՝ զի երէք ոչ 'ի վերայ գոյիցէ միութիւն անհատական, ոչ են 'ի կողմանէ իրին կատարեալ միութիւնք, այլ միայն բացատութիւնք պէսպիսութեան, ոչ ասացաւ 'ի տրամաբանութեան: Յղէս թուական միութիւնքն ինդիր է դժուարին, թէ ուստի ծագիցէ միութիւն և բազմապատկութիւն ոսոկ թուական, կամ որ իցէ պատճառ՝ զի 'ի յիրս ոմանք 'ի նոյնութեամ տեսակին թուով միայն տարբերին և բազմանան: Երկրորդութիք եզրակացութիք ցուցցուք զբանն:

Ամենայն էրկոյացութիւն:

Միութիւնն և բազմապատկութիւնն գոյացութեց՝ ոսոկ թուական, ծագի 'ի նիւթոյ, որ փաղանչանի զբանակութեն: Այսոյ հատատեն ամ թուխմայականք ընդեմ սկովտոսի: Յուցանի եզրակացութիւնս նախ վկայութիք արիստոտէլի • որ յայտնի ուսուցանէ՝ • թէ այնք * ք.է.համառ
որք լուծուի են բազում՝ անուն պիտի: Յորմէ մանաւանդ կաբերէ, թէ առաջինն չարժօրն ոչ բազմանայ թուով, վնզի է անիւթ: Եւ այդատուն, որ եւ նախագաղափարս զատուցեալս 'ի նիւթոյ, ասաց վ՚ այդը բանի ոչ բազմանալ նոյ թուով • այլ գանազանիլ տեսակաւ: Զայն թուխմայի վկայութեանն ոչ բերեմք 'ի մէջ, զի զմտաց նորա ոչ ոք կարէ երկբայիլ:

Յուցանել երկրորդ բանիւ սքանչելի Թովմայի. Նիւթական միութիւնք և բազմապատկութիւնք պարտ է ծագիլ ի նիւթոյ. զի վասն այնորիկ իսկ ասի նիւթական: Այլ միութիւնն և բազմապատկութիւնն Թուոյ ոչ է նիւթական: Ապա ծագի ի նիւթոյ: Յուցանի փոքրագոյնս: Նախ՝ զի միութիւնն որ առեալ լինի ի տեսակէ, ոչ և բազմապատկութիւնն, կացուցանէ զտեսակն և զտեսակարար սխոլիսութիւն: Ապա միութիւնն սակ Թուոյ ոչ կարէ լինիլ, բայց եթէ նիւթական: Եւ երկրորդ, զի բազմապատկութիւնն ի համաբոյն մասունս, և բազմապատկութիւնք նիւթական: Այլ բազմապատկութիւնն Թուոյ կան լինի ի համաբոյն մասունս: Ապա ուրեմն և նիւթական: Փոքրագոյնս յայտ է. Զի այնք համարին սակ Թուոյ զանազանիլ և բազմապատկիլ, որք համաբոյն գոլով, ի նման հոգեբք, միայն բաժանմամբ զանազանին. ոչ երկու չինեաք ջրոյ. երկու հոգի, և այլն: Իսկ մեծագոյնն ցուցանի: Քանզի հապէս պատշաճի նիւթոյ ունիլ զհամաբոյն մասունս. զի և որ մատ քանակութիւնք, որոյ հակառակ գործ և տրոհել զգոյացութիւնն ի համաբոյն մասունս: Ապա յատուկ և նիւթոյ բաժանիլ ի համաբոյն մասունս. և վասն այն եթէ պատշաճիցի տեսակի, այս ծագի ի հալորդութիւն՝ զոր ունի ընդ նիւթոյ:

Յատուկ և ևս եղրակացութիւնս, նախ այլով բանիւ սքանչելի Թովմայի: Յայնմանէ ծագի որ մատուցեալս բազմապատկութիւնն Թուական, որ և պատճառ՝ տեսակի իրիք լինելոյ Թուապէս բազմապատկելի: Այլ պատճառ լինելոյ նիւթականաց, զոր օրինակ անկին՝ Թուաւոր բազմապատկելի՝ և նիւթն: Ապա ուրեմն ի նիւթոյ ծագի բազմապատկութիւնն Թուական: Յուցանի փոքրագոյնս: Քանզի ներգործութիւնն և բազմապատկելի վասն կարողութիւնք, յոր ընկալեալ լինի, ոչ բազմօք ցուցաւ վերագոյն *. Իսկ արդ կարողութիւնն, յոր ընկալեալ լինի տեսակն՝

*Ա.Ա.Պ.Փ:

տեսակն՝ է նիւթեն առաջին: Ապա սեռական յա-
ռաջին նիւթոյ ունի զլինելն բազմապատ-
կելի:

Երկրորդ, սատրին զանազանութենէ և միու-
թենէ պարտ է առեալ լինիլ յայնմանէ, որ է
սատրին՝ ի յիկրս: Ալ միութին և զանազանու-
թին թուականն է սատրին քան զնմա: Ապա
պարտ է նմա առեալ լինիլ՝ ի նիւթոյ, որ է
սատրին՝ ի յիկրս:

Երրորդ՝ վկայէ փորձն, որով սեռանեմք, զի՝ ի
վերացուցանել մեր զսեռականն՝ ի յիկրս՝ յայն-
մանէ որ է՝ ի նմ նիւթական, ունի յորժամ սահ
մանեմք զգինեղութին մարդոյ՝ զբոլորակի, զեռ-
անկիւնոյ, և այլն. վերացուցանեմք զկրն յամ
թուականն և անհատական բազմաւորութենէ:
եւսոն ամ անհատից տուեալ լինի մի հասարակ
սահման: Ապա նշանակ է թէ բազմապատկու-
թին թուական ծագի՝ ի նիւթոյ:

Յայսցանէ մակաբերի թէ սուկ հոդեղէն կրք,
կամ սեռական ամենևին անբնակալք՝ ի նիւթ, որ-
պիսի են հրեշտակք, ոչ իւիք կրօք կարեն բազ
մանալ թուով. և վն այն մի միայն անհատ է
կարելի յայնպիսի սեռական, յոր անհատ բոլոր
բնութին սեռականապար են թնդակայանայ: Քանզի՝ ի
բառնել պատճառին, հարկ է բառնիլ և գործոյն:
Ապա քանզի յայսպիսի բնութին չիք նիւթ,
որ է պատճառ թուականն բազմութենէ, հարկ է
թէ և ամ բազմութին սուկ թուական՝ ծագի՝ ի
ցէ՝ ի նոցանէ:

Առարկեցես նախ. իւրաքանչիւր հրեշտակ է
մի թուով, ապա միութին թուական ոչ ա-
ռեալ լինի՝ ի նիւթոյ, որ ոչ է՝ ի հրեշտակս:
Պատասխանեմ, ՝ի հրեշտակս թէպետ է մի-
ութին թուական, բայց ոչ է միութիւն սուկ
թուական. զանազանիլ նովաւ միոյ հրեշտա-
կին յայլմէ՝ թուով միայն՝ ի նոյնութեամ սեռին:
Ասսոն ձեռնարկութենէ ոչինչ ազդէ ընդդէմ
եղբակացութենս, որ է՝ ի վր սուկ թուական
միութենէ:

Պատասխանեցեալ, բանական հոգիք տարբերին և բազմանան՝ ևս թուով միայն. և սակայն ոչ ունին զնուեր: Ապա գոնէ՝ ինձ նուերն ոչ է պատճառ թուոյ բանական բազմութեան:

Պատասխանեմ, բանական հոգիք թէպէտ կարգին լինիլ առանց նուերոյ, սակայն էապէս կարգին առնուեր. որովհետև պարտ է նոցա համեմատիլ. զի որ ինչ էինի ընկալեալ, նոքա ներգին ընդունողին էինի ընկալեալ: Ուստի միայն թուով են բազմանալի, իբրև զայլ տեսակս որք ընկալեալ լինին՝ ի նուեր. ոչ՝ ի նուերոյ՝ որ ինչ՝ ի նոսա, այլ՝ ի յարաբերութենէ անտի առ նուեր:

Յառաջանդիցես. պարտ է թուական միութենէ և զանազանութենէ առեալ լինիլ՝ ի ներքին սկզբնէ: Ա՛յլ հոգին անջատեալ չունի զնուեր՝ ի ներքուստ: Ապա ոչ առնու զմիութենին և զզանազանութենին թուական՝ ի նուերոյ:

Պատասխանեմ զանազանելով զմեծագոյնդ. պարտ է թուական միութենէ առեալ լինիլ՝ ի ներքին սկզբնէ, մերձաւորաբար, ընդունիմ. արմատապէս, ուրանամ: Զի թէպէտ այն՝ որով իրն անմիջապէս ստանայ զթուական միութենէ, պարտի լինիլ նմա ներքին. բայց այնմ հնար է կախիլ յարտաքին ինչ իրաց, յոր էապէս կարգի: Ուստի հոգին անջատեալ մերձաւորապէս անհատանայ յիւրմէ էակութէ: Բայց էակութիւնն այն զլինիլն զանազանեալ ասակ թուով ունի յայսմանէ, զի ընդունելի է՝ ի նուեր, որ է առաջին ծնօղ թուական զանազանութէ: կամ՝ ի բազազանութենէ առ նուեր՝ իբր առ իւր ընկալուչ:

Յառարկիցես երկրորդ: Ա՛յսութիւնն անհատացուցանէ զգոյացութիւնս: Ապա ոչ է պարտ ինդրել զայլ պատճառ անհատական միութեան:

Պատասխանեմ, այսութիւնն է տարբերութիւն անհատական: Ա՛յլ դարձեալ ինդրի զմանէ, թէ ուստի ունիցի զլինիլն թուական բազմանալի. ք զի արդ բազում այսութիւնք գտանի-

ցին

ցին ՚ի նմին տեսանկն : Ուստի սկսաւս ոչինչ լուծումն ընտրհե խնդրոյս , յասելն , այսուհետեւ անհատացուցանե զդոյացութեանս :

Ա.սկցես • Եթէ տարբերութեն առեալ լինի ՚ի տեսակէ • այլ միութեն անհատական է տարբերութիւն ինչ • ապա առեալ լինի ՚ի տեսակէ :

Պատասխանեմ զանազանելով զմեծադոյնդ : Ամենայն տարբերութեն տեսական , և որ է ըստ պէսպիսութեանէ , ընդունիմ : Ամենայն տարբերութեն նիւթական , և որ է միայն իբր ըստ քանակական բաժանման , ուրանամ : Քանզի ոչ տեսակն է արմատ պէսպիսութեան • այլ նիւթն է արմատ բաժանման : Վասն որոյ , ոչ պէսպիսութեն տեսականարար առեալ լինի ՚ի տեսակէ • այլ զանազանութեն թուական առեալ լինի ՚ի նիւթոյ :

Ա.ռարկեցես երկրորդ : Նոյն նիւթ կարէ վերաբերիլ առ բազում անհատս : Ապա ոչ է ըստ կնճռն թուական միութեանէ :

Պատասխանեմ զանազանելով զառաջարկութեանդ : Նոյն նիւթ , նիւթապէս առեալ , ընդունիմ • նոյն նիւթ տեսականապէս առեալ • ուրանամ : Նիւթն առեալ լինի նիւթապէս յորժամ առեալ լինի ոսոկ ըստ իւրում հակութեանէ , և ըստ այսմ յայտ է թէ , հնարէ նմա յաջորդաբար վերաբերիլ առ բազում անհատս : Իսկ առեալ լինի տեսականապէս , յորժամ հակութեն նորա մտածի իբր ենթակայ այսպիսի ինն առնելութեանէ • և փաղանչանօղ զայս ինչ թուով քանակութեն : Ուրդ ըստ այսմ առեալ նիւթն ոչ կարէ վերաբերիլ առ բազում անհատս :

## ԵՒՏՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ:

Պատահմունք առնուն զԹոռչական միութի, և զբազմապատկութիւն իւրեանց յենթակայսն տեսականապէս առեալ. ՚ի ըստ որում ենթ կայ այսպիսի ինչ գործոցուե արարողն, յորմէ ընդուն զնոր պատահումն, և այսպիսի ինչ տեսողութե, և այլն:

Յուցանէ: Սի՝ զի ենթակայն ունի զտեղի նիւթոյ՝ նկատմամբ պատահական տեսակի: Ապա նմա պարտ է անհատացուցանել: Երկրորդ, զի տեսակն բազմանայ ՚ի ձեռն ընդունողաց իւրոց: Այլ տեսակն պատահական ընկալեալ լինի յիւր ենթակայ. ապա յայնմանէ առնու զբազմապատկութի և զեզրաւորութի Թոռչական:

Ղառաբկիցես, պատահումն անջատեալ յենթակայէ՝ տակաւին է մի Թոռով, ոչ յայտ է ՚ի խորհուրդ հաղորդութե: Ապա ոչ անհատանայ յենթակայէ:

Պատասխանեմ, պատահումն անջատեալ միշտ պահէ զյարաբերութի առ ենթակայն, և վայն կարէ անհատանալ ՚ի նմանէ. ոչ ասէաք Թէ հոգին բանական անհատանայ ՚ի մարմնոյ առ որ ունի զյարաբերութի:

## ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ:

Յաղագս պանապանութեանց, ուր երեսելի կնդիրը էինի, վասն ըն պիտոյ պանապանիցին ի միմեանց զերծանիլ ցանկանալոյ:



Որ ի մանագրիդ զննել յանձնառաք, թէպէտ բազում կանխապոյն աւանդեն ի սրամտութեանց, բայց պատշաճագոյն թուեցաւ մեզ յապաղել ցայսմայր: Քանզի նոյն դոլով գիտութեն զներհակաց, յետ մեկնելոյ զմիութեն, ի դէպ է իմանալ զզանազանութէ: Եւ քանզի դժուարագոյն կնդիրը, որ շուրջ զզանազանութէն, այն է, զոր հանդիպացոյց սկովտ՝ ի վէր զանազանութէ մեթաֆիզիկական աստիճանաց, (ի այնց տեսականութենէ, զորս աստիճանաւ զատնալոյ մէ յիւրաքանչիւր իրս, ոյք ի պետրոս զտեսականութեն բանականն, կենդանւոյ, կերպոյն, դոյացութէն, և այլն:) վերայն զամանէ առաւել եղիցի մեր փոյթ:

## ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ:

Յաղագս պէսպէս տեսից զանապանութեանց:

Պատուէրն և զանազանութէն միշտ գոյն էակի. որպէս բազում ուրեք առ ընծն Թուոմայ: Քանզի ըստ այնմ իր լինէ զանազանի յայլմէ. ըստ որում ոչ է նոյն ընդ նըմա: Ուստի հետեւի՝ զանազանութէ լինիլ կրկին, ի, իրական և բանի: Չի հնար է միոյ իրի ոչ լինիլ միւսն, կամ ներգործութէ ի կողմանէ իրին. և այս զանազանութէն առ իրական. ըստ որում են երկու իրք, կամ իրք. ոյք պետրոս և պօղոս: և կամ մտածութէ նմացեալ թէ. ըստ որում զիրն չինքեան զմի՝ ի պէսպէս

խմացմունս զանազանեմք. և սա ասի զանազա-
նութի բանի:

Իրական զանազանութիւն է երրեակ. մեծ, փոքր, և զօրութենական: Մեծ իրական զա-
նազանութիւնն է զանազանութի իրի յիրէ. ոյզ պետրոս զանգանի՝ի յովհաննէ. հոգին՝ի մարմ-
նոյ: Փոքր իրական զանազանութիւնն է զանա-
զանութի իրի յեղանակէ, որով տրամակայի, յի՝ի գուշնաքեայ էակութենց լինչ, որք առ իւ-
րեանց նոճազութե ոչ անուճանին տիրապետ իրք, այլ եղանակ: Ըստ այսմ պետրոս զանազանի՝ի նատելոյ իւրոյ, և գիծն՝ի խոտորնակութենէ իւրմէ: Ա՛յս զանազանութի կոչի և եղանակ-
դան: Զօրութենական զանազանութիւնն ոչ է այնչափ զանազանութի, որչափ հիմն զանազա-
նութե. և է յայնմ իրի, որ մի միայն է յին-
քեան, այլ հանդիսանայ բազմոց, որով տոյ հիմն, զանազան ներգործութիւք ճանաչե-
լոյ մեզ զայն, և զայլ և այլ տեսականութիւս
՝ի նմա զանազանելոյ: ոյզ գահեկանն ոսկի՝ ու-
նի զմիակ արժողութի. լուերաց իբր վեցից. բայց միակ արժողութիւնն այն հանդիսանայ կրկ-
նակ արժողութե երկուց արծաթի գահեկա-
նաց. և վն այն կարեմք զայն զանազանել յեր
կուս մասնական արժողութիս: Այնպէս հո-
գի մարդոյ է յինքեան միակ. բայց տոյ զոր լինչ տան հոգիք ունկոց, և անասնոց. և վասն այն ասի զօրութենաբար բազմապատիկ. ուս
ալ և կարէ զանազանիլ մնօք յերկիս աստե-
ճանս, ՝ի տնկական, ՝ի զգայական, և ՝ի բա-
նական:

Այս զօրութենական զանազանութի ակռվո
ոչ համարի բաւական. և վն այնր կացուցանէ
ընդ նր զայլ զանազանութի, զոր կոչէ պանա-
պանութի պէսական, ներգործական՝ի բնութե իրին. լինիլ այնմ ոչ՝ի մէջ իրի և իրի, կամ իրի և է-
պանակի, այլ՝ի մէջ երկուց տեսականութենց
մի և նոյն իրի, ոյզ՝ի մէջ կենդանութե և բա-
նականութե, որոց մին և յառաջքան զնմ գոր-

ծողս

ծոլութեն մտաց ոչ լցէ տեսականապէս միւսն, և ոչ ներքին կացուցիչ նր • թէպէտ երկոքին լցեն մի միայն իր : ոպ 'ի քարն եռանկիւնի երեք անկիւնքն են մի և նոյն քար • և յատաստե լեալ երկհակեան յանուս՝ երկու են դէմք, այլ մի գլուխ :

Ա՛րդ, ասէ ակովս՝ թէ այս վանապանութիւն թէպէտ և ներգործաբար լիցս • սակայն ոչ է իրական • զի ոչ է վանապանութենէ իրաց, այլ միայն տեսականութենէ • զոր վա՛յ այնոր յատուկ ասէս պարտ է կոչել՝ ասէ, փէսաչան : Եւ զայս դնէ յա՛մ իրս, և ս և 'ի սատրագելիս ա՛յ • մինչև 'ի միւսմ պարզ իրն և էակութե, հոյլս տեսականութենէ երբեմն չերջել : Ոսատի սահմանե զէսութեն ա՛ծայնի՝ հրկաս կոպարելոցն ե փէսանութենէ :

Լսակ վանապանութեն բանի և նշանակի երեք կին • մեծագոյն, փոքրագոյն, և և փոքրագոյն : Մեծագոյն վանապանութենն բանի է, յորժամ բան մեր զէակութենն զօրութեենաբար բազմա պատիկ վանապանէ 'ի ա՛սպէս իմացմունս կա տարելապէս վանապանեալս, որոց միոն ոչ իւիք իրօք փակի յայլսմ, ոպ յորժամ վանապանեմք զմարդկութե 'ի կենդանութե և 'ի բանականութե • քանզի իմացումն կենդանութե ոչ իւիք իրօք պարունակէ ներգործութե զիմացումն բանա կանութե, վա՛յ այն ընծայի և անբանից : Փոքրա գոյն վանապանութենն բանի է, յորժամ միոքն գնոյն իր վանապանէ 'ի ա՛սպէս իմացմունս, ո՛ր ոց միոն յայտնապէս ոչ պարունակէ զմիսն, ա՛ ոչ արտայայտէ զայն տեսականապէս • բայց լռելեայն պարունէ, և փակէ գնա յինքեան • ոպ յորժամ վանապանեմք յէակսմ զմի, զէմա րիս, զբարի : Քանզի իմացումն բարւոյն փա կի յիմացման էմարտի, և երկոքին յիմացման էակի : Եւս փոքրագոյն վանապանութենն բանի է, յորժամ առանց ինչ հիման, սոսկ 'ի հա՛ ճոյից, կամ 'ի տկարութե խրմէ, բաժանէ իմացութենն զմիսկ իրն 'ի ա՛սպէս իմացմունս,

տուր եթէ ոք զանազանեցէ զհանդերձս ի ձորձոյ. կամ զկամեցմանէ նմա: Զայս ամ ետեալ յառաջ, արդ դարձցուք ի զանազանութեան մէթաֆիզիկական աստիճանաց:

Արկին են կարծիք. Ընդհանին սկոտոսի, որ դնէ թէ այս աստիճանք զոր օրինակ կենդանութեն և բանականութեն ի մարդն, զանազանին ներգործութեբ յառաջքան զգործ իմացուածն. զանազանութեբ, զոր կոչէ փէռիան ի բնութենէն էրէն: այնպէս՝ զի թէպէտ ընդհի թէ ի մարդն կենդանութեն և բանականութեն են նոյն իր, բայց դնէ թէ են երկու սեռականութենք ներգործութեբ, և անկախ յիմացուածէ: Ջհոտոսն զհետ երթան նորին աշակերտք. այլ թողուն այլք ամենեքին, մինչև յայսմ մասին ի դէպ է ասել զնմանէ, որ զնամայէրէն ասացաւ, ՀԷՈՓ

ՆԲ յամենէնին, և ՀԷՈՓ ամենեցուն ի նա:

Արկրորդ կարծիքն է այլն թովմայի, և այլոց առ հասարակ. որք գնեն թէ այս աստիճանք զանազանին ներգործութեբ ի ձեռն իմացութեն, բայց յառաջքան զգործ ունելն իմացութեն միայն հնինապէս, և զօրութենաբար. ըստ այնմ որ նոյն պարզ սեռականութենն թէպէտ յինքեան է մի, բայց քանզի հանդիսանայ բազմաց, առնէ տայ իմացութեբ զանազանելոյ ի նմա զպէտս իմացմանն. որոց ոչ պատասխանէ յիրաւի, բայց և եթ մի միայն պարզ էակութեն զանազան կերպիւ իմացեալ. այլ ի բոլորին, զանազան գծից ի շրջանակի ձգելոց պատասխանէ մի և նոյն կէտ կեդրոնեան՝ զօրութենաբար միայն բազմապատիկ:

# ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Հասոպտի ճշմարիտ ի բնէն.

Հաւասին Եղբայրութենէ.

Ոչ գտանի սկովտեան գանազանութեն ներգործական տեսական՝ ի մէջ տեսականութեեց նոյնոյ իրի. այլ գանազանութենն միոյ հակութե՝ ի պէսպէս տեսականութեիս. և՝ ի պէսպէս իմացմունս առարկականաց՝ լինել յիմացուածէ:

Յուցանի ոմն միայն, այլ զօրաւոր փաստիւ. Գանազանութենն այն ոչ է հարկաւոր: Ապա ոչ է պարտ դնել: Յուցանի առաջարկութիս: Գանազանութենն զօրութենական կարօղ է առնել, զոր ինչ առնէ գանազանութենն այն սկովտեան: Ապա ոչ է հարկաւոր: Յուցանի առաջարկութեիս պատճառաւ և մակածութե: Պատճառաւ, քանզի որ հանդիպեսցի այլում, կարէ առնել զոր ինչ նայն առնէր, եթէ էր՝ ի միջի: Այլ գանազանութենն զօրութենական հանգէտ է ներգործականին: Ապա կարօղ է առնել՝ զոր ինչ առնէր գանազանութենն ներգործական, եթէ կայր: Յայտ է մեծագոյնս. քանզի ըստ այմ գահեկանն ոսկի առնէ, զոր ինչ առնէին երկու արծաթիք, եթէ կային առ ընդեր: և կէտն որ՝ ի կեդրոնի՝ վէր զի է զօրութենաբար բազմապատիկ, կարէ եզերել զպէսպէս գիծս, միապէս՝ ոչ եթէ լինէին զանազանական կէտք: Յայտ է և փոքրագոյնս, զի վէր այն ասի գանազանութի զօրութենական. զի նուաճ իրն հանդիպեսցի բազմաց իրաց գանազանելոց:

Յուցանի և մակածութե: Երեք են, զորս ակոտոս տայ տեսական ներգործական գանազանութե, և վէր որոց զայն հարկաւոր վարկան ի: Նախ՝ զի զմիօրէ իրէ հնար լինելոյ ճշմարիտ հակասական նախադասութեեց: Երկրորդ

զի

ջն կարացեք եզերել զայլ և այլ խմացմունս. երկրորդ՝ զի կարացեք սահմանիլ պետպես սահմանօք: Այլ զայս ամ կարօղ է պատնել սոսկ զանազանութիւն զօրութենական: Ապա ուրեմն, և այլն: Յուցանի փոքրագոյնս: Քանզի այսու իսկ, թէ իրն է զօրութենաբար բազմապատիկ, ըստ միոյ մասին զօրութենականութիւն նր, կարէ ճշմարտիլ ինչ ընդանէ, որ ոչ ճշմարտի ըստ այլոյ, և վասն այն բաւական է՝ ի ճշմարտել զհակառակն, ոչ՝ ի դահեկանն ասկի թէպէտ և մի արժողութի վեց լուերաց. սակայն մարթ է ասել թէ դահեկանն այն ոսկի ըստ որում պարունակէ զարժողութի միոյ արծաթի դահեկանի, ոչ է բաւական՝ ի վճարել ըզ պարտս չորից լուերաց. բայց վճարէ՝ ըստ առաւելագոյն քան զարժանի: Ասասի ոմն թովմաս * ասէ. պայմանիւ, որ նոյն է ըսպ իրին, և պարբերէ ըսպ բանին, ուրեմն արժէլոս սպորտիւ հակառակ նայ. ըսպ արիսպոպելի. ՚ի ՟. բնաբանութիւն, որպէս յայտ է ըստ հինգ իրօք նոյն, և բանիւ միայն պարբերէ՝ և ոչինչ ևս վախճան. և ըսպ որում է ոչինչ ոչ է վախճան, և անդրապարձեալ: Իսկ թէ զանազանութիւն զօրութենական բաւական է և առ եզերել զայլ և այլ խմացմունս, և զհետեւ սահմանս, քաչպայայս է: Զի այսու իսկ թէ մի ինչ հանդիսանայ բազմից, կարէ ըմբռնիլ և սահմանիլ որոշակի, ըստ որում հանդիսանայ միւսումն. և ապա որոշակի ըստ որում հանդիսանայ նայ այլոմ: Ուր արդ հարցանեմ ես զսիոփոստեանն: Ուրէք իրօք ոչ կամիցին դնել, զէթ հաստարեսցին, թէ ՚ի բնութէ իրաց դուցէ տեսանի կանութիւն յինքեան մի միայն և պարզ, որ առնիցէ զինոյն, զոր բազումք, ըստ հանդիսութիւն թէ իցէ բազմապատիկ: Ուչ արդեօք յայտ է, թէ ՚ի մտածելն զայն այլ և այլ եղանակաւս, հնար էր ասորոգել զնմանէ զհակառակսն, և կէտ ըսպաւորել զբազում իմացմունս անհաւասարս, և կացուցանել զբազում սահմանս, ընդ այնուիսիկ այլ և այլ մտածութիւն՝ այլ և այլ օրի-

* կ. է. յա զգա կա_ ցաշ_ ութ. ա_ է:

օրինակաւ բացայայտելոյս նորուն: Ապա բաւական է պահպանութեանն զօրութենական առաստաղ երեսին:

## Եւթերորդ Եղբայրութիւն:

Աստուածք մեթոդիզմականք ոչ պահպանին ներգործութիւն յիրում յաւաքման ըստ գործ իմացութեան, այլ միայն զօրութենաբար: Ասան բովանդակ պահպանութիւն նոյ ներգործական՝ լինի յիմացութէ, որ տրտհէ զմի և զնոյն հակութիւն զօրութենաբար բազմապատիկ՝ ի պէսպէս տեսականութիւս, զոր օրինակ զմարդն՝ ի կենդանութիւն և՝ ի բանականութիւն:

Օ էզրակացութիւս մարթ էր ցուցանել վերոգրեալ պատճառաւս: Զի եթէ ոչ գոյ սկզբ տեան պահպանութիւն. ապա և այն աստուածք ոչ կարեն պահպանիլ այնպիսի պահպանութէ:

Այլ բաց յայսմանէ ցուցանի հիմնական փաստ: Մեթոդիզմական աստուածք են մի և նոյն տեսականութէ զօրութենաբար միայն բազմապատիկ: Ապա ոչ պահպանին ներգործութիւն, այլ միայն զօրութենաբար: Ցուցանի տրաբանութիւս: Քանզի տեսականութիւնն գործ գոլով տեսակի, պարտ է նմա համեմատիլ և հաւասարիլ տեսակին, յորմէ յաւաքի գայ: Ուստի այսպէս ձեռնարկեմք: Ըստ նմին օրինակի պարտ է խօսիլ պահպանութենց, ոչ պահպակաց, յորոց յաւաքի գան: Իսկ արդ տեսականն յորմէ յաւաքի գան մեթոդիզմական աստուածք, ոչ հոգին բանական՝ ի մարդն, ոչ է՝ ի յոգունց հոգւոց երբորդ հոգի. այլ մի միայն պարզ, և զօրութենաբար բազմապատիկ: Ասպա և մարդկութիւն՝ ի մարդն ոչ է երբորդ տեսականութէ բաղադրեալ՝ ի յոգունց մանանականաց, ի կենդանութէ, և՝ ի բանականութէ. այլ մի միայն պարզ՝ զօրութենաբար միայն բազմապատիկ:

Արդ ունի և ևս, ցրելով զսովետեան վայրապար

նրբու-

նրբութեի: Զի զինչ իմանայցէ փիլոսոփայն իւրով զանհմուտս յայսմ իրողութեանց՝ ասասցէ: Յայտ է թէ ըստ այդմ բառացնէից նոյն իսկ է փիլոսոփայն՝ ի վերացեալն, որ ինչ փիլոսոփայն՝ ի թանձրացեալն: Ապա քանզի, որպէս ցուցաք*. տեսակն է՝ որով իրն բացորոշի առ

* ա.բնա- բանութ. սահմանաւոր եղանակ գոլոյ, տեսականութեան ի.փ.պ.ա: ոչ այլ ինչ է, բայց եթէ բացորոշութիւն իրին առ իւր եղանակ գոլոյ: և վասն այն ուր է մի միայն իր բացորոշեալ առ մի եղանակ գոլոյ, է և մի՛ակ ոչ միայն տեսակն, այլ և տեսականութիւնն համեմատ այնր տեսակի: Եթէ ոչ՝ կամի ցնմանէ թուղեալ զհաստատութիւն իրացդ՝ ցնդիլ՝ ի նանրութիւնս և՝ ի վերացմունս: Եւ դարձեալ, ոյր տեսակն է իր, նոյնպէս և տեսականութիւնն է իրականութիւն: Ապա աւելորդ ընդութիւն է մուծանել՝ ի տեսակս զղանազանութիւն տեսական ոչ իրական. կամ զղանազանութիւն տեսականութենէ և ոչ իրականութենէ: Ապա ոյր միոյ հակիւ է մի տեսակ որ հանդիսաւոր նայ յոգունց, նոյնպէս և մի տեսականութիւն որ հանդիսանայ բազմաց:

Այս ամ յայտ յանդիմանութիւն եցոյց ընդ թուի*

* ա. ն.ի. մասն: Քանզի տեսանիցէ իրաց տարբերին ըստ հիչ. պ. ձ: կատարելոց և անկատարի: ոյր՝ ի կարդի իրաց՝ բուսականքն են կատարեալքն քան զանբոյսս, կենդանիքն քան զբուսնիս, և մարդն քան զկենդանիս: Ուստի արիստոտէլ բազդատէ զտեսիլս իրաց՝ թռչնոյ և ձկնոյ. յորս կատարելագոյնն պարունակէ զանկատարն, և առաւելու քան զինս: Ապա ոյր հնդանկիւնին պարունակէ զեռանկիւնին, և վեցեանկն զերբեակտասնեայ մարդկութիւնն պարունակէ զկենդանութիւն, և զոնկականութիւն, ոչ կուսակրութիւն ոյր քարայսյտ զբարին. այլ հանդիսութիւն, ոյր դարհեւանն ոսկի զարծաթիս, զի զանազանեալքն՝ ի սորինս, միաւորին՝ ի վերինս: Ուստի՝ ի մարդն մի և նոյն պարզ տեսականութենէն է արմատ տրամաբանելոյ զգալոյ, և կենդանի: Բայց

իմացութեան մեր, որ զանազանէ զԵղեսացին ի, ըմբռնէ զայս պարզ տեսականութեան առակապէս ըստ որում է սկիզբն գիտելոյ, և ըստ այսմ կոչէ զնա իւնդանութիւն. և կերպասաւորէ զաստիճան կենդանւոյ. ապա ըմբռնէ զայն, ըստ որում է սկիզբն որամաբանելոյ, և ըստ այսմ կոչէ զնա բանականութիւն. Թէպէտ և այս ամ է ի և նոյն է սակութեամբ, զօրութենաբար միայն բազմապատիկ: Զնոյն առեն ածաբանք յաղագս ածային առորոգելեաց. իբ Թէ ածն է ի սակութեամբ պարզ ամենևին, մանաւանդ Թէ ի տեսակաշնութեամբ յիրում, այլ հանգիստանայ անբաւից: Ասասի բան մեր յըմբռնել զայն՝ ըստ որում պատ ժէ, կոչէ արդարութիւն: ըստ որում խնայէ, ողորմութիւն, և այլն: Թէպէտ յիրում ոչ ասէ զնա Թաւմաս *, այնմ ասի պատճառանէ ի ինչ պարզ, * ա. մ. խ. ծ. պ. ը. ասա է:
ցուցանել:

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ:

Լուծմանի առաքինութեան:

Առաքինեաս նախ: Կենդանութեան և մարդոյ, զանազանի ներգործութիւն յառաջան զգործոցութեամբ մտաց 'ի բանականութիւն: Ապա գտանի զանազանութիւն ներգործականաց տեսական 'ի մեթափիզիկական աստուածանա: Հետևութեան յայտ է: Յուցանի առաջարկութեան: Այնք են զանազանք ներգործութեան յիրում. զորոց ձշմարտին հակառականք. այլ կենդանութեան և զբանականութեան ձշմարտին հակառականք: Ապա են զանազանք ներգործութեան յիրում: Փոքրագոյնս յայտ է: Քանզի կենդանութեան ասի, Թէ է սկիզբն գիտելոյ, զբանականութեան, Թէ ոչ է սկիզբն գիտելոյ, որք են հակառականք: Յուցանի մեծագոյնն. Հակառականք ոչ կարեն ձշմարտիլ միով և նոյնով: Ապա այնք զորոց ձշմարտին հակառականք,

կանք, ոչ կարեն լինիլ ներգործութիւնք նոյն: Ապա պարտ է նոյ լինիլ ներգործութիւնք զանազան:

Պատասխանեմ, ուրանալով զառաջարկութիւնդ, զորոյ ցուցման ուրանամ զմեծագոյնն, զորոյ ցուցման զմանազանեմ զառաջարկութիւնն: Ոչ կարեն ճշմարտիլ հակասականք զիրոյ և զնոյնոյ, եթէ ըստ իրին և եթէ ըստ բանին, ընդունիմ. զիրոյ և զնոյնոյ ըստ իրին, որ բազմապատիկ է ըստ բանին, ուրանամ: Լուծումն է այն թուլմայի, զոր բերաք վերագոյն՝ ի ցուցման առաջնոյ եղրակացութեանն: Կամ այսպէս: Հակասականք ոչ կարեն ճշմարտիլ զիրոյ և զնոյնոյ, որ զօրութենաբար է բազմապատիկ, ուրանամ, որ և ոչ զօրութենաբար է բազմապատիկ, ընդունիմ: Զի ոչ ասացաք զիրոյ և զնոյնոյ ոսկի գահեկանէ ասլ, թէ եթէ առցի ըստ պարտնակելոյն միայն զարժողութեն երից լտերաց, ոչ է բաւական՝ ի վճարել զպարտս, բայց ըստ պարտնակելոյն զարժողութեն վեցից լտերաց, բաւական է: Արդ լինիլ բաւական, և ոչ լինիլ բաւական, են հակասականք: Նմանապէս զնոյն կարեմ ասել, թէ ըստ որում ակտանի զգիծ, ոչ է վախճան. իսկ ըստ որում աւարտեալ զայլ գիծ, է վախճան: Ապա զիրոյ և զնոյնոյ զօրութենաբար բազմապատիկ եղելոյ, հնար է ճշմարտիլ երկուց հակասականաց:

Առնեցեմք, կենդանութեն մարդոյ տեսակաւ նապէս առեալ է համաբուն ընդ կենդանութեն ասինի: Այլ սա՝ ի բնութէ իւրմէ զանազանի՝ ի բանականութէն: Ապա և այն:

Պատասխանեմ նախ, ձեռնարկութեդ չոյժ ցուցանէ, ոչ թէ ունիլ ոչ միայն զտեսակն, այլ և զիրական զանազանութեն. զի կենդանութեն ասինի իրապէս է զանազանեալ՝ ի բանականութէն:

Պատասխանեմ երկրորդ զանազանելով զմեծագոյնդ. կենդանութեն մարդոյ է համաբուն ընդ կենդանութեն ասինի, ըստ գործոց, որք

պատշաճին նման ըստ որում ասի կենդանութեան.
ընդունիմ. ըստ այլոց, որք պատշաճին նման
բանիւք գերազանցութեան մարդոյ՝ ի վերայ առիւ-
ծու, ուրանամ: Քանզի, առեսականութեին այն, զոր
՝ի մարդն կոչեմք կենդանութիւն, պարզունակ զնա
որինչ է՝ ի կենդանութեան առիւծու, զի և ար-
մատ զգալոյ, ննջելոյ, արթնոյն լինելոյ, ու-
տելոյ, և այլն: Բայց՝ ի մարդն ունի աւելի
գործս, զորս ոչ ունի յառիւծուս. քանզի լինիլ և
սկիզբն տրամաբանելոյ. ըստ որոյ ասի, իմաս-
* ՚ա. ն. խ. ք. ե. պ. է. ա. ա: Ե գ. ընդդէմ հեթանո՚՚. գլ. ին:

հաղորդելոյ այսպիսի իմն զօրայ : Ասասի ըստ նշանակելոյ սրբոյ վարդապետին , յառաջ են՝ թադրեն միշտ զենթակայ այսպիսի կամ այնպիսի իմն օրինակաւ հաղորդական գօրայ , յորմէ կարասցեն արտադրել զայն :

Եւրդ ասացաք յայտնապէս ՚ի պատասխանումն առաջնոյ թէ զհամբնթացութենէն հրամանական սաղմոս մնինալ՝ ամենեցուն պարտ է ընդունիլ . քանզի ըստ մոլինայի և համախոհից նոր մեկնելոյ , ոչ թէ նոցա հոսումն ինչ մանանական , անբաւական , և ըստ նրոցա ինչ կախեալ ՚ի ստեղծուածոց , ոչ միայն ոչ է հարկ , այլ և անարժան ընծայելոյ առ աստուած պատճառն : Եւ յայտնի իսկ ոչ կարէ լինիլ մանանական . զի պարտ է այլ ըստ ոյժ առաջին պատճառ , և յայնմ կարդի ՚ի բաղդատ գործն հակիլ , որովհետև ոչինչ կայ ՚ի նմա , որում հնար նոցա զէրծ լինիլ ՚ի պատճառելոյ թէ նորա . ուստի հոսումն այն , որով հակի ՚ի գործն , է բոլորական յիւրում կարգի : Եւ վն այսորիկ , ըստ սրբոյն Թովմայի * , ոչ այնպէս նոյն գործ ընծայի բնական պատճառի , և ամենայնոյ զէմ հնարս զօրութենէ , այլ ինչ ինչս յայ , և ինչ ՚ի բնական արարս ղէնս լինելոյն , այլ երբեմն և յերկոցունց ըստ այլ և այլ եղանակի : Ասասի * մերժէ յայտնապէս զօրինական մոլինայի , որ զհամբնթացութենէն այ , և ստեղծուածոյ նմանեցուցանէ երկուց բարձրոցդ զոյ նոյն բեռն , կամ վարողաց զնոյն նաւակ , որով յայտնի երևի , բայց ՚ի բաց օտարանալ հակառակորդաց յայսմ՝ ՚ի մուտս սրբոյն Թովմայի : Եւ գարձեալ զհամբնթացութենէն այ անմարթ է ասել կախեալ ՚ի ստեղծուածոյ , որում գործակից : Մի՛ զի ընդդէմ է կարգի վերագոյնին ըստ որում վերագոյն կախիլ ՚ի ստորնադասունէ : այլ համբնթացութենէն այն է այ արարչոյն նրբ վերագոյն պատճառ : Եւ երկրորդ , զի ոչ ասէ ոչն Թովմաս * , թէպէտ հոսումն այ ոչ արտադրէ զգործ առանց երկրորդ պատճառի , բայց այն ոչ է յանբաւականութենէ և ՚ի կարօտութենէ , այլ յատաւելութենէ , և ՚ի զեղ



* Ք. ընդ դէմ հելոս գլխ ե:

* ՚ի գլխ պիսպոս. նուէց. ա. գլ. իգ:

մանեն ներ՝ ի ստեղծուածն, որ հաղորդեն զօրու թեն իւրոյ: Ապա յայտնեն ոչ կարեն՝ ի ստեղծուածոյ, այլ միայն կացուցանեն զայն կախեալ յիւրմէ:

Այլ ինչպիսիցեւս երկրորդ, թէ զիարդ հնար է լինել՝ զի գործն որ բուսոյն յայ, լոյս և՝ ի ստեղծուածոյ, և զիարդ՝ եթէ հոսումն այ բա ւական է առ արտադրութեն գործոյն, զոր ծակեցաւն ստեղծուածոյն չէջ աւելորդ:

Պատասխանեմ ընդ այն թուիմայի, վասն զի այլ և այլ օրինակաւ հային յայն՝ ած և ստեղծուածն: Ստեղծուածն իբր սեպհական առնող և ընդ մանաւոր բանիւ այսպիսի ինն էակի. իսկ ած իբր ընդհանուր պատճառ իրաց, և ըստ բանիւ էակի՝ բացարձակ և պարզապէս. Ուստի ընդ այլ և այլ բանիւ ընծայի պատճառ ստուգինոյ և երկրորդի: Քանզի պատճառելոյ թէ միոյ կարգի ոչ խափանէ և ոչ արտաքոյ ըստ պատճառելութեն միւսոյն, թէպէտ և բուսոյն կան իցէ յիւրում կարգի: Ապա ամ մեկնի զգա լի օրինակաւ յարկէ տան, որ բարձեալ լինի յորմոց իբր՝ ի բուն և՝ ի մանաւանդ հաստատ նէ, և դրձէ՝ ի գետնոյ իբր՝ ի հանրական հաստատութենէ ամ մարմնոյ. ոչ զի երկաքանչիւրոցն լինել բուսական պատճառ յիւրում կարգի: Ապա ոչ գետինն թէպէտ է բաւական և բուսական հաստատութեն ամ ծանուցանց, որով և՝ ի վեր ունի զնո, սակայն ոչ արդեւր, ՝ի վեր իբր միոյ մարմնոյ զայլ մարմին՝ ի վեր ունել. այլ առաւել ընթացակից նմա առ այսպիսի վերս բարձուն. այնպէս և ած թէպէտ է բաւական և բուսական պատճառ բուսոյ էակի, որով և զբուսոյ էակն հեղու յիւրմէ, սակայն ոչ արդե լս յիւրաստեղծ էակս միոյնն կախել՝ ի միւսմէ, իբր՝ ի մերձաւոր պատճառէ. այլ առաւել յաջողէ զդոյն, ընթացակից եաւ երկոքումբք վերոգրեալ եղանակօք ընդ սեպհական և ըստ երկրորդ պատճառս, առ արտադրութեն գործոց:

# ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ:

Մինչ կարօղ էիր ՚ձեր բացարձակ կարողութիւնդ
պատճառս եղիր պակասին, և ընդ ինքդ ոչնչացուր,
փիլիսիպպէս նախաշարժել. և մերյէ-
ցուցանել ատ առնել:



Որպէս եդեալ զինդրոյս զիարդն, և
մեկնեալ զեզերս, աստուձան քան զաս
տիճան կամելով մատչիլ յորո-
շեալն նը, յայսմ պրակի խնդրես
ցուզք թէ արդեօք կարօղ էիցէ ՚ձեր բացարձակ կա
րողութիւնդ մերձեցուցանել և շարժել փիլիսիպպէ
զերկրորդ պատճառս առ առնել, որովհետև
կարօղ է ՚ձեր առնել քազում ինչ, զոր ոչ առ-
նէ: Ասանիք ՚ի հակառակորդաց՝ ակն ածեալ
ամենակարողութեն ՚ձեր, ոչ իշխեն ուրանալ,
թէ կարօղ էիցէ ՚ձեր զերկրորդ պատճառս՝ և ես և
զպատս փիլիսիպպէս նախաշարժել առանց
ինեառս ազատութէ, այլ՝ ասեն ոչ է հարկ այդմ
լինիլ որովհետև պատճառն ազատ կարօղ է
զինքն մերձեցուցանել և քացորոշել: Իսկ այլք
պնտեն թէ և յաստուածոսատ ոչ է հնար կամաց
շարժիլ նախընթացութէ և փիլիսիպպէս, ա-
ռանց ինեառս ազատութէ գիտելով թէ սիւն
հաստատութէ կարծեաց իւրեանց գլխովին կոր-
ծանի, ՚ի դնել թէ հնարէ կամաց նախաշար-
ժիլ յոյզ պահմանթ ազատութէ: Ալլ զար-
մանք են, զի արք դիւրահաւանք և պժոխա-
րապոյն դիսօնածոց, ոյք՝ թէ հնար էցէ նիւ-
թոյ լինիլ առանց տեսակի, և նոյնոյ մարմնոյ
միանգամայն լինիլ քանակապէս յերկուս տե-
ղիս. և այլն. յայսմ և եթ լինելն խոշտահար, իբ
րև թէ մեծ ինչ անպատեհութէն էցէ, ոյ արար-
չին կամաց պահմանթ ազատութէ նը՝ կարօղ լի-
նիլ մերձեցուցանել զինս նախընթացութէ. փէ
զիպպոն և անվրէպ, առաջն որ հաճոյ էցէ ինքեն

Ա՚ոս

## Ա. առաջին եղբակացութիւն:

Արժան է ամ փիլիսոփայս նախաշարժել զբնական պատճառս առ աւնել:

Այս եղբակացութիւն ոչ ոք կարէ ուրանալ այն համար հաւատոյ, որով դաւանիմք զամ՝ամենակարող, և ամենայնի տէր: Զի ոչ լինէր լիով ամենակարող. և ոչ ամենայնի գերագոյն տէր, եթէ ոչ բնական զօրութիւնք այնպէս հպատակ կային նմա, մինչև կարող լինիլ զնա ըստ կամս կատեցուցանել յառնելութէ, կամ մերձեցուցանել առ առնել: Եւ ևս եթէ հրեշտակք կարեն փիլիսոփայս մերձեցուցանել զբնական զօրութիւնս, ոյք՝ ի յարուցանել զմրրիկս, ՚ի կործանել զքաղաքս, ՚ի հատուցանել զհիւանդութիւնս, ՚ի դադրեցուցանել զկիրս, յամբոխել զերևակայութիւնս, և առաւել կարօղ է ամ զառեղծեալ զօրութիւնս մերձեցուցանել, զի՝ ոյք ասեն գիտեք, ՚ի չէ՞ս նոքա եղիէ. և ընդ իշխանութիւն նոցա ամենայն. զորոյ հարուածն Հանճարեղն համայն արարածք. որ և է թագաւոր ամենայնի, մինչև կարօղ լինիլ զնա ըստ կամս շարժել և մերձեցուցանել:

## Բ. երկրորդ եղբակացութիւն:

Ոչ միայն զհարկաւոր և զբնական պատճառս, այլ և զազատս կարօղ է նախաշարժել փիլիսոփայս, մերձեցուցանելով զնոսա ներգործական, նախընթաց, անվրէպ՝ և՝ ի ներքուստ այս գործոցդ: Եղբակացութիւնս հետևի յառաջինոյն: Զի ոչ նուազ տիրէ ամ կամաց մարդկան, քան այլոց ստեղծուածոց: Բայց քանզի ՚ի սոյն հաստատեալ կայ ծանրութիւն խնդրոյս:

Յուցանի նախ վկայութիւնք ոչ գրոց. զի ասէ առաք. Նա. սկսա մարդոյ ՚ի ձեռս այ, ընդ որ կոյս կամի, դարձուցանէ զնա: ԵՒ եսայ. Ժ. թէ

ամ

ամէն վարի կամօք մարդկան, ոչ փայտահար փայ
տատաւ, զոր գարձուցանէ ոչ և կամի: և ինքն
ամէն ՚ի յուցանել զայս կարողութեն վոխոխե-
լոյ և շրջելոյ զնիրա մարդոյ՝ ասէ եզեկիէլին.
պր• լԶ: գայ ՅԵՂ ԱՒԵՐ Մարմնէդէն • ի զնիստ և
զանատամբ կամս ձեր փոխեցից յուսկինդիր և
՚ի հնազանդ կամս • և արասցէ զի ՚ի պատուիրանս
իմ գնայցէք, և զնրաւունս իմ պահիցէք, և առնիք
ցէք զնա: Որովք, և այլ բազում բանիւք, զոր
՚ի սորս վկնեացուք, յայտնի ցուցանեն սուրբ
գիրք զազգօնուԹէն ամէնայնի կամաց ՚ի շարժել
զնիրաս մարդկան, և զգերագոյն ուրուԹենն,
որով ամէն կարող է և ներգործաբար ՚ի ներ-
քուստ, և անվրէպ յօժարեցուցանել զմեր
կամս, որ այնինքն է փիլիպատէս նախաշար
ժել: Վայ մեզ օգտակարնաս ասէ յորմիական. Թէ
ամէն առնէ ամենակալ իշխանուԹիւն ՚ի յօժարեցուցանել ըզ
անիրաս յուրումն և կամեցոյն: Եւ դարձեալ * ասէ, ով ով * յենուրի-
այնպէս անմիտ էիք, մինչև սկսայ, նէ ամէն կամս պիանի.
մարդկան, զոր կամի, և յորժամ կամի, էիցէ կարող գե զնէ:
ընչնել ՚ի բարին: Ապա Թէ ոչ, ոչ նա ինքն ա-
սէ *, վասնիչ անիչէն գասանուԹիւն հաւատոյս մերոյ, * յենուրի-
որով կատարվան էինիմ հաւատալ մեզ յամէն ամենակա- պիանի.
րօղ, եԹէ անկար է ամէն առնել՝ զի կամիցիմք գե զնէ:
լինել, և զայն ազգաւ և ամենազօր շարժուԹիւն:
Ամանաւանդ զի ոչ նոյնն ասէ *, ամէն առաւել * ՚ի գերա
անիչ յերաս էշխանուԹիւն զիմս մարդկան, գան ինչ կրապաս-
մարդիկ: Ապա, ոչ յայտնապէս ասէ և ամէն ընդհայ.
Թովմաս *. եԹէ կարող է մարդ ազատօրէն գե ձէ:
մերձենալ զանձն առ առնել. էս առա- * կո• կէ.
ջել կարող է ամէն: Աւասիկ նոյն ինքն *, զայս յզէս ձըզ
առաջելուԹիւն ընծայէ ոչ՝ կարող լինիլ շար- մարգոնէ.
ժել զկամս ոչ միայն յորդորմամբ. այլ է, բա- պր• Ը:
րոյականապէս. այլ և ներգործաբար ՚ի ներ- * ա. մ. կո.
քուստ յօժարեցուցանելով առ այն զոր կամի. ճշմարտէ:
ի, փիլիպատէս, և անվրէպ: Այլ զերկա-
քանչիւր վարդապետաց զվկայուԹեանն լինա-
գոյն զննեացուք սորս:

Յուցանի եկեղ եղբայրացուԹիւնս բանիւ հիմ-

նեալով

նեալով յերրեակ սկզբունս այլոյ օգոստինոսի, և այլոյ Թովմայի: Նա կարօղ է շարժել զկամս, ոչ բարոյական յորդորմամբ միայն, այլ և ֆիզիկական մերձեցուցմամբ, որոյ կամքն է ամենևին գործունեայ, որ գերագոյն աերուեստն ունի՝ ի վերս սրտի մարդկան, և որ ստեղծիչ է կամաց: Իսկ արդ ասի կամս ամենևին գործունեայ. է գերագոյն ևր սրտից, և արարիչ կամաց մարդկան: Ապա կարօղ է ֆիզիկապէս և ներգործաբար մերձեցուցանել, և շարժել զկամս: Փոքրագոյնս է՝ ի հաւատոյ: Իսկ մեծագոյնս աւանդի՝ ի այլոյ օգոստինոսէ, և՝ ի այլոյ Թովմայէ, զորս գրեսցուք ստորև՝ ի տեղի ասոյ ևրեանց. բայց և ցուցանի ըստ ամենայնի մասանց:

Այժ նախ ապացուցանի՝ ի գործունէութենէ ձեռ. պ.ը: ասծոյին կամաց. զի ոչ ասէ ոեն Թովմաս *. աս գործունէութի ասծոյին կամաց վերաբերի ոչ միայն, զի լինիցին իրք, այլ և, զի լինիցին ոտք և կամի: Իսկ արդ եթէ ոչ կարէր մերձեցուցանել ֆիզիկապէս և նախընթացութեամբ ըզկամս աս ազատօրէն կամիլ, ոչ կարէր առնել, զի լինիցին իրք ոտք և կամէր: Ապա կարէ ֆիզիկապէս և նախընթացութեամբ մերձեցուցանել զկամս աս ազատօրէն կամիլ:

Ցուցանի նոյն մեծագոյնն և յերկրորդ սկզբունէ. ք՝ ի գերագոյն տրուեցէն ոչ՝ ի վերս կամաց մերոց: Քանզի ոեն է վարիլ այնուհետև, որ նոյն է՝ մերձեցուցանել զնա՝ ի գործ. զի վարուման կամ կիրառուեցին, ոտք ասհմանէ ոեն Թովմաս, է մերձեցուցումն նորին՝ ի գործ: Ապա քանզի ասծ է գերագոյն ևր կամաց, կարօղ է զոյն մերձեցուցանել՝ ի գործ:

Ցուցանի և յերրորդ սկզբունէ, ք՝ յայնմանէ, թէ ասծ է ստեղծիչ կամաց: Զի արարիչն կամաց կա- *ի.Կ.Ե.յա
ղափ ձըւ րն ի-ի-ա-Ե-Ե-ե-ւ պնա՝ ի ին-Ե-ա-ա-ա-ի յայւ. յօ-ձ-ա-Ե-ց-ա-ն-Ե-ւ-ղ
ն-ա-ր-ա-ա-Ե. պնա՝ ի ներ-ա-ա-ա-ա ներ ա-ր-ա-ր-ւ-ա-կան պ-ա-պ-ա-ա-ա. ասի ասէ
պ-ը-Ե:-ա-ա. ոեն Թովմաս *: Իսկ արդ ասծ է արարիչ կա-
Ե.ի-ա- Ն-ի. մաց: Ապա կարօղ է ներգործաբար յօժարե-

պր. ա:

ցու-

ցուցանել զնա ի կամիլ, փոխաբերեաւ ի միջ
ջէ ներգործուածէ յայլ. որ այնինքն է, փիլի
գապէս նախաշարժել: Փոքրագոյնս է ի հա
ւասոյ. իսկ մեծագոյնս մեկնի ի սքին թով
մոյէ, որ բաղումս ուրեք ասէ, թէ յօժարու
թիւն գհետ երթայ բնուածէ. ուստի ոչ տուեալ
լինի ի տուողէն բնուածէ, նոյնպէս և մնայ միշտ
կատարեալ պէս հպատակ նմին. զի փոխեսցէ
և շրջեսցէ զնա ըստ հաճոյից: Ապա քանզի
կամքն է յօժարուածի իմացական բնուածեան.
տուեալ լինի յոյն, որ է արարիչ հոգեղինաց.
և նման միոյնոյ այնպէս հպատակի, մինչև յօժա
քեցուցանիլ ի նմանէ և շրջշրջիլ՝ ոչ զիարդ հա
ճոյ թուիլն նմա: Զայս ապատճառ դեղեցկիկ
նշանակէ ոքն փողգենոսիոս *, յասէ, Սէրն
մարդ ինչ էին գիարդ էրայ՝ այսպէս հաւատալ, և վար
կանիլ, զի ինչ ոք, որ սիրելի է մարդկան, կարօղ
էին առնել զմարդ, այլ ճոխել ուլաս. և որ ու
րուք օգնականութիւնք պէտս ունի ած ի առնել զմար
դին, փարանայսկ գործել զիւր հաճոյս ի կամս մարդ
կան. ինչպէս գիտեալ էին և մարդոյ զնոյն կամիլ: Զայս
անդրադարձեալ ի հաւատոյդ իւրոյ արդելոյն, և յանդգ
նապէս ի քոյ արասցէ ոք:

Պատասխանի յեզս նոսա. Ոչ կարօղ է մերձե
ցուցանել զկամս բարոյական շարժուածք, և
միաբանական համընթացուածք, այլ ոչ փիլի
գական նախաշարժուածք:

Այլ է ընդդէմ. զի բարոյական շարժուածք,
և միաբանական համընթացուածք ոչ պահի զոր
ծունէուածի ածոյին կամաց. և ոչ ուրուքին
զոր ունի ի վէր սրտի մարդկան. և ոչ ընծայէ
նմ առաւելուն լինչ արժանի հեղինակի կամաց:
Ապա քանզի յայնցանէ պարտ է դնել զնեղբսա
գոյն և զբօրագոյն լինն շարժուն, ըստ զփիլիգա
կան: Հետևուածս յայտ է: Զի զինչ այլ հնար է
գտանել քան ի միաբանական համընթացուածէ,
ի բարոյական շարժմանէ, և ի փիլիգական
նախաշարժուածէ: Ցուցանի առաջարկուեաս,
և նախ ի վէր գործունէուածէ ածոյին կամաց:

զի

* ի գիրս մարդեղու ընդ հայ. գլ. ին:

զի սա ոչ պահի՝ ըստ ինքեան անգործունեայ
շարժութիւն , և անտարբեր համընթացութիւն :
Այլ շարժութիւնն բարոյական է ըստ ինքեան
անգործունեայ . և համընթացութիւնն միանգա
կան՝ անտարբեր , ոչինչ առաւել միտեալ առ
առնել քան յոչ առնել, զի օտարակ , ըստ հա
կառակորդաց , գործակցութիւն մարդկային կա
մաց : Ապա ոչ շարժութիւնն բարոյական , և ոչ
համընթացութիւնն միանգական պահեն զգոյ
ծունեութիւն ածային կամաց : Իսկ թէ՝ չեն բա
ւական և առ գերագոյն արուեստն որ՝ ի վերայ
սրտի մարդկան , ցուցանի : Գերագոյն արու
թիւնն ոչ պահի շարժութիւն , և համընթացու
թիւն , որ հպատակ է մարդկային կամաց . այլ
միայն համընթացութիւն , որ հնազանդէ ընդ
քեւ զմարդկայինն կամս . իսկ արդ շարժունն բա
րոյական ըստ ձգտարտութեան , և համընթացու
թիւնն միանգական ըստ հակառակորդաց , հնա
զանդին մարդկային կամաց : Ապա ոչ պահեն
զգերագոյն արուեստ՝ ի վերայ սրտի մարդկան : Յու
ցանի փոքրագոյնն . զի համընթացութիւնն միան
գական ըստ ինքեան է անտարբեր . և ոչ առնէ
զի արասցէ կամքն . այլ ինքն ասպատ նման : Իսկ
շարժութիւնն բարոյական առնու զիւր գործու
նէութիւնն ՝ի մարդկային կամաց . յոր ոչինչ զո
րեն համազութիւնք յորդորմունք , ողբանք , և
այլ բարոյական շարժութիւնք , եթէ ոչ թոյլ
ասցէ ինքեան շարժիլ : Այլ թէ յայնց ոչ
ինչ առաւելութիւն ընծայի այ , արժանի հեղի
նակի կամաց , ցուցանի : Եւ նախ ՝ի վերայ միան
գական համընթացութիւն : Զի գործակցիլ երկո
քիւք՝ պատշաճի անխտիր՝ պատճառի և ոչ պատ
ճառի այնր երկո : Իսկ համընթացութիւնն միան
գական է գործակցութիւն այ ընդ կամաց : Ապա
միանգական համընթացութիւն ոչինչ առաւելու
թիւն ընծայի այ՝ երբ արարչի կամաց : Այլ և
՝ի վերայ բարոյական շարժութեանն յայտնապէս ևս
յայտ է նոյնն : Զի ահա հրեշտակին ոչ է արա
րիչ կամաց . սակայն կարօղ է զայն բարոյակա

նա-

նապէս շարժել, մանաւանդ թէ բազում ան-
գամ առ վատթարութենէ մերոյ, բարոյական
շարժուածքն, որովք շարժէ զմեզ սատանայ
՚ի փորձել, ազդուլոյդոյն են, քան որովք շար
ժէ զմեզ ած. զի բազում անդամ մարդիկ դիւ-
րագոյն հաւատան սատանայի որ փորձէ, քան
ած, որ յորդորէ ՚ի բարիս: Ասա յայնմ շար
ժուածէ ոչինչ առաւելութենէ ընծայի ած, ար-
ժանի հեղինակի կամաց:

Պնտիկես. կարօղ էր ած շարժել զկամս ՚ի
կամիլ, եւս քիզիգասպես, և նախընթացութեամբ,
ոչ դնեն թուլմոյականք. այլ յայնժամ կամքն
ոչ լինէր ազատ:

Այլ ընդհակառակն առ պատասխանելոյ, նախ
առաքին առնելով զվերոդրեալ վկայութենէն:
Քանզի ած գիտէ, ած օգոստինոս, և ած թուլ
մաս, ազատ լինանն զկամս ընդ այնուհետև գոր
ծունեայ շարժութենէ: Այլ գիտէն, քանզի այնք
զորոց ասէր ած, արարից՝ զի ՚ի պատուիրանս
իմ գնայցեք, յայտ է թէ, ազատօրէն գնա-
լոց էին յայնս, ապա թէ ոչ՝ ոչինչ վարձք էին
նոցա: Այլ և ած օգոստինոս՝ յատէն զայ, թէ
զչար կամս փոխարկէ ՚ի բարի, կամ, զսիրտս
մարդկան յօժարեցուցանէ ՚ի բարին, միշտ հե
տևի նկատմամբ բարի և արդիւնաւոր գործոց:
Արդ գործն ոչ բարի է, և ոչ արդիւնաւոր,
եթէ չիցէ ազատ: Իսկ ած թուլմաս յայտնա-
պէս յայտնիկ գնէ զգործունէութենէ ածային կա
մաց, զի կարօղ է՝ ոչ միայն առնել՝ զի արաս-
ցուք, այլ և զի ազատօրէն արասցուք, քի է զի
ընդ ածային շարժութենէն գործունէի սահեա-
ցուք զազատութենէ: Ասա կարօղ է ած շար-
ժել զմեզ այնուհետև փիլիգասկան մերձեցուց-
մամբ առանց վնասու ազատութենէ:

Այսքդ ընդդիմանալն պատճառօք: Աճ է որ
և արարիչ կամաց՝ եւս քան զմարդ է ազատ. քի
առանց վնասու ազատութենէ: Ապա կարօղ է
զայն ներգործաբար մերձեցուցանել՝ ի ներգործ
ծուն քան զմարդ ազատ: Այլ խաբէին յայտ
մա-

մասին հակառակորդք, զի զշարժուԹիւնն այ ի-
մանան իբր զօրուԹիւն լինէ, դեմ ընդդէմ հակա
կայ կամաց • և զինեալ հակառակ նմին, զորոյ
պղծկամակուն բռամբ նոճաձիցէ, և զըմբռաստան
զայն ձգեսցէ ըստ հաճոյից, իբր յալԹական գոյալ
ԹեաԼ : Բայց արդ այն զօրուԹիւն ԹէպԷտ և է
պարծունեայ, այլ հեղինակ ամենևին, յամ խորչո
արտի մեղմով սոլոսկեալ : և ՚ի ծագաց միչև
՚ի ծագս ձգեալ սաստկուԹիւն • բայց և քաղց-
րուԹիւն • ոչ տեսն գիրք : Աստի մեք ձեռնհաս
նէ գիտես ՚ի խորհիլ, և ՚ի կշռել, և զկամս առ
ընտրել ըստ ԹեԼադրուԹեն մտաց, յորում է
բան ազատուԹեն, և այսպէս ձեռնարձակ պոր
ծելով մերով կատարի, զոր ինչ սահմանեալ
ելոյն այ : ոչ բաւական ուրեք նշանակէ զնոսա
տինոս :

ՊարԹ է յաւելուլ առ հաւատատուն եղրակա
ցուԹիւն զպատճառն զայն զհասարակ, այլ յայտ
մատին ազդական յոյժ : կարօղ է ոմն առնել,
որ ինչ ոչ է հակառական : Իսկ արդ ոչ է հակա
ռական, ներգործաբար ևնախընԹացուԹիւն մեր-
ձեցուցանել այ զկամս առ ազատօրէն կամիլ :
Ապա կարօղ է առ այն : Ներծայինս է հաւաս
տել, իսկ փաքրագոյնն յայտ անտի է, զի ոչ բա
ռականապէս երևի այս հակառուԹիւն : Քանզի
զոր հակառակորդքն առարկեն • ԹէԷ ներգոր-
ծուԹիւնն կամաց ընդ այնմիսիկ շարժուԹիւն լի-
նէր ազատ, ոչ ևնԹադրի • և առկայն ոչ լինէր
ազատ, լինով լուծցի ՚ի պրակն ել և : Ա՛ւ այժմ՝
ասի յայնմանէ, զի ոչ է ընդդէմ բանի ազատ
պատճառն առեղծելոյ, յօժարեցուցանիլ առ
իւր ներգործուԹիւն ՚ի հեղինակէ ազատուԹե ,
և կամիլ ՚ի առեղծողէ իւրմէ իբր ՚ի մերձեցուց
չէ, ոչ բնութիւն կրկնէ տեսն Թոմայ : Ապա
ազատօրէն գործէ ևս ընդ շարժուԹիւն և մեր-
ձեցուցմամբ այ, ուստի և ներգործուԹիւն մեայ
կատարելապէս ազատ :

# ՊՐԱԿ ՁՈՐԲՈՐԴ:

Ազդէօք ներգործութենէ նախաշարժիչիցն ՚ի վերուստ պատճառս:



ԱՅԺՄ հասատատեալ կայ ծանրութիւն իմդրոյս. թէ արդեօք ստեղծուածք լինեն այնպէս կարօտեալ ՚ի ծայնին նախաշարժութենէ, մինչև առանց նր գոլ ծել և ոչինչ:

Պատասխանեմ մոլինայ, և հաւանիմ նր: Իսկ առարատական կարծիք եղեն ամենեցունն եղելոց յառաջքան զմոլինայ. (բայց ՚ի սակաւուց ոմանց. որք դորանդոսին կարծեաց, և այլ ա՛ ՚ի նենգին անհաւանականաց չոգան զհետ,) զի զինչ այլ կարծիս հնարս էր նց ունել, մինչդեռ էր յայտնեալ յուղղափառս մոլինային կարծեաց: Ա՛նաւանդ զի այսչափ արդարէզ. անհնար է մեկնել զվիճաբանութիւն ծայնին նախախնամութենէ ընդ ազատութենէ մարդկան առանց մոլինային գիւտի, կամ Թովմայականացն նախաշարժութենէ: Զայս կարծիք կալան Թովմայականք ամ ընդ երկուց վարդապետաց ընդ օգոստինոսի, և ընդ Թովմայի: Կալան նախապատրաստիւ ծածկանք և փիլիսոփայք, զորոց յերկար լինիլ զանձանս հիւսել: Կալան և երևելի դպրոցք ՚ի, սալմանտիկեանց, լովանեանց, դուճակեանց. և այլն: Կալան և երևելի կրօնաւորաց կարգք. և ամենեքին, որք ճշմարտութիւն խոստովանին հետևօղ լինիլ սբոյն Թովմայի, զՔրիստոսական նախաշարժութենէն, նշանակ ունին Թովմայականաց դպրատան: Եւս և նախապատրաստիւ հարք յՕեան կարգի. ոյն սալմերոն. տոլետոս. բեռլարմին. պերեդիոս. ազօր. կուրսաս աղմանիոս. ենրիկուէս, և այլք, զորոց զվկայութիւնս տեսցես առ պատուական հօր կոնեթայ *Ա.Բ.վ.ճ. յառաջքան զաւարտս գայոսիկ, յամին. ՌՈՃՂ, ՚ի պր. Բ. Ի Gg մնծս յօդ. Է:

մեծարուս ումն հայր յոնեան կարդի ՚ի վանենաց-
աց դիմանի ուսոյց հրաշալարուկաս, թէ հնար
է լինել որակուրեի, որ այնմ փիլիգիական ա երա-
կան էուրեն՝ անվրէպ հասանուրեի ՚ի ներփս ածելն՝ պահ
մամբ ապաստանել. ոմն սպասել կարամուել յա-
ռաջին գիրս հիմնական ածաբանուրեե. գլ. ա.
և բազումք ևս յերկար լինն զհակակրելն կալել
իբրև փոքր մի զդուշացոյն հասնին զոր թով-
մայի և զօգոստինոսի միասս քննեալ՝ երացն հաս
տատուրեե ՚ի վր, իմաստնագոյն լեալ, մերժե
ցին զայն կարծիս, ոմ սպասմեն սահմանել
կեանք: Ապա զհետ երթեալ ընարելագոյն, և
մեծագոյն մասին, ասելն է:

## ԵԼՐԱԿՈՅՈՒԵԻՆ:

ՈՉ միայն ետ և պահպանե զներդործա
կան զօրուրեիս եկիր պատճառաց. և
ընթացակցի նց. այլ և մերձեցուցանե զնոսա
առ առնել, նախընթաց, և փիլիգիական մերձե
ցուցմամբ. որ ուղիղ կոչի նախաշարժուրե,
նախաբոյորոշուրե փիլիգիական:

Առկնի եզրակացուրեիս, յոր հաստատեալ կայ
բովանդակ ծանրուրեե լանդրոյս: Ասէ պատմ
թէ ոճ իբր առաջին և ընդհանուր շարժիչ ա
մենայնի՝ մերձեցուցանե փիլիգիապէս և նախ
ընթացուրե զամենայն երկրորդ պատճառս առ
առնել. մինչ զի ոմ ըստ որում առաջին էակ.
հոսե հանապազ յամենայն իրս զդրլ, որ է վեր
ջին ներդործականուրեի ՚ի գծի էակի, և զայն
՚ի ձեռն նախընթաց և փիլիգիական հոսման,
ըստ այնմ որ պատճառե զգոյուրեի իրաց. ոմ
ցուցանե զբն Թովմաս *. այնպէս և ըստ որում
առաջին պատճառ հոսե յամենայն զառնելն, որ
է վերջին ներդործականուրեի ՚ի գծի գործե
լոյ, ներդործաբար մերձեցուցանելով զգոր
ծողական զօրուրեիս առ առնել ըստ իւրաքան
չիւր բնուրեե և թէուրեե: Ըստ նբն Թով
մայ *, ասէ. Թէ ոմ շարժուածն որպէս՝ որ ՚ի հոգւոյ

* Ա. Ք. Ճ.

* ՚ի գիրս պիպատնուրեե. գլ. ճկե.

՚ի

'ի մարմին, է ինանէ մարմնոյ, ոչնպէս ու շարժուածն՝ որով պիէչէրէ ամենայն շարժին յայլ, է իբր ինանէ պինէ չէրայ. և վէր այն ասի ած ամենայնի ինագործող, շարժիչ կառավար, ու հզօրին: Աւրդ զայս հատուցանի և մերձեցուցանի որով ած առնէ վերկրորդ պատճառս յերկիրդուս ներգործութեան առնօղ, որով ներգործական զօրութիւնս փոխադրէ յանգործութէ 'ի գործականութէն, և որով յամենեսեան ազդէ վերջին ուժգնութէն ներգործելոյ, կոչեմք նախաշարժուածքի:

Ընդհակացուածիս՝ զոր մեկնեցաք, բաս առնոց մասանց, ի թէ ած է ու պահպանէ զամենայն ներգործական զօրութիւնս, է 'ի հաւատոց, և ապացուցաւ վերագոյն, 'ի ցուցանել մեր, թէ ած է առաջին սկիզբն ամենայնի: Իսկ թէ և ընթացակից երկրորդ պատճառս արդ ընդունին ամենքեքին, որ և ցուցաւ և մեկնեցաւ վերագոյն. 'ի պ. ը:

Այլ վերջին և զգլխաւոր մասանն, ի, թէ ած զամենայն պատճառս ներգործականս նախաշարժէ կամ մերձեցուցանէ 'ի գործել. առաջի կայ մեզ ցուցանել ամենայն ազգ ձեռնարկութէք. Նախ վկայութէ ձե գրոց. Երկրորդ վկայութէ ժողովոց. Երրորդ 'ի մաղթանաց եկեղեցւոյ. և 'ի հաստատակաց հաւանութէ հաւատացելոց: Զորրորդ վկայութէ սեց հարց. Հինգերորդ՝ առաջնոց փիլիսոփայից. Վեցերորդ՝ սեյն օգոստինոսի. Եօթներորդ՝ սեյն Թովմայի. Ութերորդ՝ պատճառաց. Իններորդ՝ օրինակաց: Տասներորդ յանպատշաճութենէ, որք զհետ գան 'ի բառնալ նախաշարժութէն:

# ՅՕԴՈՒԱԾ ԱՈՒԱՋԻՆ:

Յուսանի նախաշարժութիւնն վկայութիւք սբ գրոց:

ԱՂՇՄ ուրիք յիշեցուցանեն մեզ գիրք գերագոյն իրութիւնն, զամենապգա՝ կան իշխանութիւնն, և զանվրէպ զայն շարժու՝ թիւն, որավ ամէն հնազանդէ ընդ իւրև զամ, ևս և զկիրսս մարդկան, զորս փոխէ և փոխադրէ յախտրժակէ յախտրժակ, և մերձեցուցանէ որպէս զնարդ հաճոյ ևցէ, մերձեցուցմամբ, որոյմ ոչինչ կայ հակառակ: Ասաւն եսթեր. ժէ. ասւ: Տէր ընագաւոր ամենակալ. գին փոմ հրա՝ մանիդ սպառնէ ամենայն ոք. ուր ոք է որ ընդդէմ կայ դամոյ փոյ: Ա՛յլ այս ամենայն ոչ այլ ինչ ցու՝ ցանէ, քայց զնոյն իսկ զԹովմայականացն նա՝ խաշարժութիւն: Զի համընթացութիւնն միաս՝ նական է ըստ ինքեան անտարբեր, և առաւել սպասէ, քան Թէ ասյ զմերձեցուցմանն առաս՝ նել, ըստ հակառակորդաց. իսկ քարոյական շարժութիւնք են ըստ ինքեանց անդործունեայ: Ապա ըստ սբ գրոց պարտ է գնել զՖիլիպա՝ կան նախաշարժութիւն: Զամենայն տեղիս կերպ կար լինել ի մէջ բերել. յայսմ վայրի զամանա՝ ևեթ քաղեացուք:

Դրևելն է առաւել քանն եսայեայ. ժ. ուր ասէ ած զանձնէ, շարժել զկիրս սեռնեքերին՝ մոյ արքային ասորեստանեայց, ոմն շարժիցէ փութասահար զիւսյատատ իւր, և ձեռանն զգուսլ: Ասաւն կոչէ զնա գաւազան սրփմոսին իւրոյ, և ցոպ: և զամբարտաւանութիւնն նր կշտամբեալ ասէ. մինն վերանայցէ՞ գայպա առանկ գայպահա՝ րի, կամ բարձրանայցէ՞ սղոց առանց ոարսա՞ գիեւոյ. նոյնպէս ընչ պիտասյան ոք, կամ պիտյա առնուցու՝ ած: Ի՛նչ իրիք յայտնագոյն ևս հնար կր սբ գրոց ցուցանել մեզ զՖիլիպեական նախաշարժուն, և զկախումն ստեղծեալ պատճառաց յոյ ստեղ ծոյէ: Եւ ոչ գոյ ասել, Թէ խմացեալ լինի

ասաս

ասատ չարժուածքն բարոյական. զի այս պատասխանի եղծանել զբնաբանն: Զի եթէ ոճ չարժեաց միայն բարոյապէս, ապա ոչ ունի վնասուհարն զվնասեալ. այլ ունի յոյն աւարի զտրն. և սպաշտօնեային զմ ագաւորն. և խորհրդականն՝ զայն՝ որում տայ խորհուրդ:

Յայտնի է և այն՝ որ ասի, առանց ինձ. ոչ սահման ըստ որ կոյս կան. նոյնպէս սիրոյ նպատուրն՝ ի չէս ան ընդ որ կոյս կան, զարշուցանէ զնա: Տես դու զի որ ուրուքինն ոչ՝ ի վեր սրտից թագաւորաց՝ պեղեցիկ օրինակաւոր ուրուքէ մշակի՝ ի վեր ջրոց. զորոց զվտակս անբռուն խաղաղացուցանէ ընդ դաստանս, և ուրեք՝ զնի կատէ, և և ուրեք զնի վարէ, ունի զնարդ հաճոյ լծոյ: Այնպէս և ձեռն ունի՝ ի ձեռնին իւրում զսիրտս մարդկան. զորս կարօղ է նահանջել կամ յօժարեցուցանել, ունի և կամի, առանց ինչ դիմադարձուածք: Վա՛ որոյ չկրաւ ասէ ոչն օգուտնինս *. ՀԱՅ՝ ինձ՝ զի ուրոյ չկրաւ ասէ ոչն օգուտնինս *. ՀԱՅ՝ ինձ՝ զի մաղ մարդկան առանն զոր կամ և յորժամ կամ: Զայս ուրուքէ՝ և զորձ էած ոճ, ՝ի զարձուցանել զսիրտ ցասուցելոյ արքային արտաշէսի, ՝ի բար կուքէ՝ ՝ի հեզուքէ *: ունի նշանակէ ոչն օգտա ոլինս *: Եւ՝ ի գործ ածէ հանապազ, յորժամ ոչ միայն հաւանեցուցանէ նեղքին աղաչօ ղ թէքք, այլ և ֆոխոխէ զնէրա իշխանաց ծուղակէն ընդ որ էնկէ, ունի ասի յոբ. ժբ. զորոյ օրինակին է տուն ասանել՝ ի սաւառզ, որոմ շրջէաց ոճ զնէրա այլ. ունի ասի ա. թագ. ճ: Եւ ոչ եթէ զնշխանացն միայն, այլ և զոճ մրճկին, զորոց զսիրտս մերձէ ցուցանէ առ ինքն, ունի ասի երեմ. ը. ՆԵՐՈՒԵՑՈՒՑԻ ԱՍՈՑ ԳՈՐԾ ՀԱՅՈՑ ՀԱՐԱՆ ՉԱՐԺՈՒԱԾՔՆ ԱՐՏԱԿԱՆ ՈՒՍԱՆԻԼ ՅՈՅԺ:

Յայտ է և վկայուքէն սբյն ոզոգոսի *, որ ասէ զգործոց բարուաց. ու ըստ այնմ ինչ է, որ կոխէն, և ու ըստ այնմ ինչ որ ընդունայնէն, այլ ըստ այ, որ ազգի: Որ և ըստ նոյնոյ՝ * գործէ ՝ի մեզ զնարն, և զառանն: Զորս ոչ է մարթի խմանաւ՝ ի վերայ

* հռովմ. ը:

* ՝ի գիրս

բարոյական շարժման. զի այն ոչ գործէ ինչ. այլ միայն յորդորէ՝ և գործել. մանաւանդ թէ զբովանդակ գործունէութիւնն առնու՝ և հաւատ ընդդէմ կամացն: Ապա եթէ միայն բարոյական շարժութիւն շարժէր զմեզ ած, գործն բարի ոչ լինէր տիրապէս այ, որ շարժէ. այլ կամացն, որ հաւանի՝ և լսէ ձայնի այ: Եւ ոչ իսկ մարթէ խմանալ՝ ի վերայ միաւանական համբնթացութեան, զի ոչ ձեռնարկէ ոքն օգուտինոս * : Երկեա յայն առն առացա, ուր մարդոյն է՝ որ կամի. այլ այ որ՝ ղերմի, եթէ զի կամի մարդոյ պայն միայնակ ու վճարէ. (այ, զի լինի միաւանական համբնթացութիւն միտոյ, և այ.) զիարդ ապա զարմին հակառակին՝ ու առ ղէղ, երկ ու այ է որ ողորմի, այլ մարդոյ որ կամի. որովհետև ողորմութիւնն այ պայն միայնակ ու վճարէ: Որով գլխովին կործանէ զկարծիս հակառակորդաց. որք միայն միաւանական համբնթացութիւն մեկնեն զնեղրգործական շարժութիւնն այ: և յետ այնր հետևեցուցանէ: ապա բովանդակն է այ, որ զիամս մարդոյ նախ պատրաստէ, և պատրաստէ զայն օգնականէ. այ է, որ ոչ միայն գործակից կամաց առնողին, այլ և մերձեցուցանէ առ առնել:

* չենգրէր՝ փոնի. գլ. լբ:

Օգնոյն հաստատեն այն բանիք ընդ գրոց, յորս յայտնապէս ուսուցանէ, թէ առ ինչ կայ է, և նովաւ լինի: Յոհան. ա. ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ. և հռով. ժա. զի՝ ի նմանէ, և նովաւ, և՝ ի նոյն ամենայն. և ա. կորնթ. ը. զինչ առնիս զոր ոչ առեր: և՝ ի ժբ. գործէ զամենայն յամենայնի: Ապա գործէ և զինքն զհոտուածն և զգործակցութիւն ստեղծուածոյն, և զայն նախընթացութիւն. քանզի հոտուածն, որով պատճառն առնէ լինէ. է՝ ի նմա յատակագոյն կնութիւն և պատճառելութիւն: Ասասի ոչ ասէ առաքեալն, գործէ զամենայն ընդ ամենայնի, այլ յամենայնի, նշանակեալ, թէ ոչ միայն ստեղծուածն, այլ և որ լինէ հակութիւն կամ կատարելութիւն է՝ ի նմա, այ է գործ: Եւ յայտնի հիրկն այն, զոր կարեր ոք առարկել, թէ ած զհո-

գիտութիւն առեղծուածոյ ըստ այնմ պատճառի, ըստ որում գիներգործական զօրութիւնն, որով գործակից և առնէ՝ յառաջագոյն ընդրհեաց: Չի ըստ այսմ ոչ ևս գործէր վամենայն յամե՛ն ինչ ընտրելն նայնի, ոչ ցուցանէ ինքն օգոստինոս *: Եւ ճիշդ: դարձեալ ո՛ոք ասիցէ՝ հօր գործել յական զբ տեսութիւն, վի՛ն նմանէ լինելոյ կարողութենն, որով տեսանէ որդին: Քաջայայտ է այս յաղագս պատճառս, զորոյ մանաւանդ խօսել առաքեալն. քանզի անձնիշխանութիւնն զօրութ իւրոյ առեղծման ոչ ունի՝ այլ մատուցողն զհամրն թացութիւն իւր՝ ի գործ բարի, և յորդորողն առ այն, հաւանիլ և գործակցիլ, քան ոչ հաւանիլ: Ապա ուրեմն եթէ հաւանեացն, զայո ունի յիւրմէ. զի այն ոչ լինի, ոչ զօրութ ըստ առեղծական առնելութենէ. ոչ զօրութ անտարբեր համընթացութենէ. և ոչ զօրութ բարոյական շարժութենէ: Ապա ունի ինչ, զոր ոչ ես այլ՝ այլ, և զոր ոչ գործէ՝ ի նմա ած, որ է ըդեմ առաքելոյն:

Ապա ուրեմն, եթէ խոկութ և ոչ վերացուծութ են բանք գրոց, որովք յանդիմանն առնէ և մեղկէ մեզ ջածային հոսման զօրութիւն, ոչ պարան է լինիլ՝ ի հակաճառութենս: այլ հեռևեցուցանել սմա լինիլ, ոչ միայն այլ ըերկրդ պատճառս գործել միանական համընթացութ, այլ և՝ ի ձեռն պատճառաց. մերձեցեալ գնա, և նոքօք իբր ընդ իւրև հպատակեալ զօրութ վարեալ զգործս իւրոյ նախախնամութենէ: Չի ըստ այսմ ուղիղ լինիմն գործել այ զամենայն, ոչ միայն ըստ ամենայնի, այլ և յամենէսին. և թէ ամենայն ինչ՝ ի նմանէ, և նովքա՛ ինչ է նա լինի. և թէ սէրփ ընտրաւորաց են՝ ի յիւրոյ նորա: և թէ են առնուաւ ոչ ցուստ՝ ի ձեռնէն մարդոյ, և փոյտատ՝ ի ձեռնէն փոյտահարի: և թէ՝ ինչ մանէ փոխոխին, և մերձեցուցանին, և այլն: Ապա ամ, ի դնել զնախաշարժութենն, անվթար հաստատեալ: այլ՝ ի բառնալն՝ թերատ, և սխալակապէս:

# ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Յուդայի նախաշարժուելին ի ծողովոյ.

Ա յս տեղւոյ յերկար թախանձեն մեր ձայնաբանք, այլ մեք սակաւուք: Ի ժողովս եղեալս ընդդէմ պետապիտոսի, մանաւանդ յերկրորդ ժողովն՝ արաւսիկոյ, սահմանի, թէ մարդ յիւրմէ ոչինչ բարւոյ ունի, այլ ամենայն բարի զոր ունի՝ պարգեւի նմա յայմ: Բազում էարդէ են ի մարդկի, առ ժողովուրդ կանոնն, ել. զոր ոչ առնէ մարդն. նա ընդ, ոչինչ էարի գործէ մարդ, զոր ոչ ձայ փայէ մարդոյ առնէլ. Զի ոչ ոք ունի ինչ յիւրմէ, էայց զոփոխիկ նա պետս, ոյր ասի զինի ի կանոնն, ելբ: որով վճռաւ խրի արմատաքն հերետիկոսուելի պետապիտոսի: Զէ թէ սեպհականեալ լինէր մարդոյ բարւոյ ինչ, թէպէտ և գուշնաբեայ, զոր ոչ առնոյր յայ, մնայր արմատ մոլորուելին, և ոստք նր միայն քանցեին: Այլ ի բառնել նախաշարժուելի. և ի մնալ միայն միաբնական համբնթացուելի ընդ բարոյական շարժուելի. գործակցիլն ձգ ի գործս բարուելի, որ անտարակոյս է բարի. որով և որոշին բարիք ի չարաց, ոչ լինէր յայ. այլ ի մարդկանէ: Քանզի ոչ կարէ ասիլ. տուեալ մարդոյ յայ, ել որում նա ետ զանձնիչխանուելին, զի զայս առէր պետապիտոս. և ոչ միաբնական համբնթացուելի. զի սա ոչ տայ զհոգուոյն ստեղծուածոյ. այլ ապաւէ այնմ: Եւ ոչ ստակ բարոյական շարժուելիք. որք ոչ տան զհաւանուելին կամաց, այլ առաւել խնդրեն ի նմանէ: Ապա ել այսց ժողովոյ պարտ է դնել զնախաշարժուելին, որով տիրապետ տայ ձգ մարդոյ, գործակցիլ լինքեան ի բարիս:

Այսպէս յուշցանի ընծանելի և ի ժողովոյն տրուդենտիոյ, մանաւանդ որ սքանչելին է, ի նոյն իսկ տեղւոջէ, զոր բերեն քաղուածք ընդդէմ նա-

նախաշարժուածք ։ Ի նոր սիւնհոդոսն անդ • ի յունվարի , ժդ• յամին • ռչխէ• ի լինիսան վեցեր րորդ , ի կանոնն • ը։ ստահմանեցաւ ընդդէմ լուսաերոսի և կալվինոսի , թէ անյնիչխոնուածին շարժեալ ըսպ որոմ չարհուպչեալ յայ՝ գործակցի ածմայինն շարժուածք • և կարօղ է ոչ հաւանիլ , ենէ կամիցի ։ ըր է՝ ունի ընդ ածմայինն շարժուածըն զնոյն իանուածն առ հակառակն ։ Արդ պնտեմք , թէ անդ աւանդեցաւ բուն նախաշարժուածն Թուի մայականաց • և միանգամայն ցուցաւ , թէ ոչ բաւնայ զսպատուածին կամ զկարողուածին առ հակառակն , որք երկոքին են գլխաւոր սիւնք մերոյս դրուածք • առաս ձեռնարկեմք այսմ ։ Յորոյն ընդունի զայն շարժուածն , որուամ գործակից լինիլ ասէ , զմարդկային կամս , և ընդ նմա պահել զկարողուածն ի չհաւանիլ ։ Իսկ արդ ժողովն անդէն ստահմանէ , թէ կամքն գործակից լինի , ֆիզիգական նախաշարժուածն , և ընդ նմին պահէ զկարողուածն ի չհաւանիլ ։ Ապա ընդունի անդէն ժողովն զնախաշարժուածն ֆիզիգական ։ Մեծագոյնս յայտ է • զի որ ոչ է , ոչ ունի զյատակուածն , ուստի շարժման , որ ոչ է , ոչ կարեմք գործակցիլ , և ոչ պահել ընդ նմա զկարողուածն առ հակակայն ։ Յուցանի փոքրագոյնս , ժողովն զայս ասէ՝ ևս սեալ զոյնմանէ շարժուածէ , որուամ կալվինն , և լուսերոս ասէին թէ ոչ գործակցիմք , և ոչ ընդ այնմ պահեմք զկարողուածն ի չհաւանիլ ։ Իսկ այս է նախաշարժուածիւնն ֆիզիգական ։ Ապա ժողովն լուսոյ անդ զֆիզիգական նախաշարժուածէ ։ Փոքրագոյնս է հակառակորդաց , որք մեղադիր լինին Թումայականաց , ուստեայանել նոյ զկալվինի և զլուսերոսի շարժուածն ։ Թէպէտ այժմ այդպիսի անհնարին զրպարտուածք ոչ համարձակ վարին ։ Իսկ մեծագոյնն ցուցանի ։ Քանզի ժողովն ևս անդ ընդդէմ կալ վինի , և լուսերոսի , որոց վարդապետուածն ընդդէմ դնէ զհակառականն նորին վճիռ ։ Ապա պարտ է նմա ևս սել զոյնմանէ շարժուածենէ ,

զոր-

պորմէ իսօսին կալվին և լուտերոս. ապա թէ ոչ ոչինչ ուզղակի, և հակասօրէն վճռեր ընդդէմ նոյ: Զի թէ արդարև տիտիոս գատավարքեր, վը յափշտակելոյ սեմպրոնիուսն զնուր այգին, և գատաւորն վճռեր դարձուցանել ըղտունն, միթէ լիներ այնուհիկ վճռաւ որոշումն վնճռին, որ ոչ է՛ի վր տան, այլ՛ի վր այգւոյ: Ըստ սմին օրինակի, եթէ հերեսիկոս ոք հակառակիցի, թէ ստեղծուածն ոչ գործակցի փիլիգական նախաշարժութեանէ, և ոչ պահէ ընդ այնմ զկարողութի՛ն չհաւանիլ, և ժողոմն սահմանադրեացէ՛ի վր այլոյ շարժութեանէ, ոչ բարոյականի, կամ միաոնական համընթացութեանէ, յայտ է թէ ոչ սահմանադրէ զհակառականն այնր. այլ դեռ մնայ սահմանելի, թէ արդեօք շարժութենն այն, զորմէ հերեսիկոսն իսօսի, բաւնայցէ զկարողութի՛ն չհաւանելոյ: Զեռնարկութենս առաւել ևս հաստատի, երբ հոս լինչ ածեալ զմոտս: Նախ, զի քաջ գիտէին գերիմաստ հարք ժողովոյն թէ կալվին և լուտերոս յասել խրեանց, թէ շարժութենն այ ընկղմէ զկամս, մինչև ոչինչ տեղի գործակցելոյ կամ չհաւանելոյ թողուլ նմա, խօսէին ոչ զբարոյական շարժութէ, կամ զմիաոնական գործակցութէ առաջնոյ պատճառի ընդերկրորդաց, այլ զնեղքն շարժութէ, որ փի զնպատակս մերձեցուցանէ զկամս: Ապա եթէ այս փիլիգական շարժութի՛ն թուէր նոյ կամ չընդունելի, կամ անյարիր ընդ ազատութէ, ոչ արդեօք դիւրապատրաստ ճանապարհ էր խոպատ խրելոյ զայն մոլար վարդապետութիւն, զայլ ոչնամիտ շարժութի՛ն մէջ մատուցանել, և զայն իբր խորթ ինչ. կամ յայտնի գատապարտել, և կամ չընդունիլ: Բայց արդ ոչ միայն ոչ գատապարտեն. այլ և ընդունին, և ոչ միայն ընդունին, այլ և վասն անարժան հանդամանաց՝ առ՛ի հերեսիոլատաց նշանակեցաց, աչալրջութի՛ն վրէժ խնդրեն. և զգուշացուցանեն, մի՛ ինչ այսմ սրբ՝ ածային զօրութե-

ռաւելին՝ երբ ազատութեամբ սատակչի լինիլ պարտաւորիլն: Ապա այնուհետեւ իւրեանց որոշմամբ ֆիզիկական նախաշարժութեան գտանին ջատագով:

Երկրորդ առաւել նպաստէ այն՝ զի հարք ժողովոյն, որք սահմանեցին զայս վէհս, զնախաշարժութեանն վարդապետութեան յայտնապէս ուսուցին՝ ի գիրս իւրեանց: Եւ նախ կուսանեն լինս մասսոս եպիսկոպոս, ի կարգէ կրօսերաց, որոյ ե շարադրեալ զվէհս ուսուցանէ զայն յերկրորդ գիրս ածային պատմութեանց. գլ. ժ. որոյ վկայութեանն քանզի ե յարգի, ի հաստս լինել մատց ժողովոյն, վ այն կամ եղև յայսմ վայրի զբանս նր ի մէջ մատուցանել: Ըստ, ասէ, յայ ամենայն ինձ, իբր յառաջնոյ ընթացողէ, որ ինչ ուր ընթանայ յառաջագոյն հարկ ե ուրինչ ի մէջ ընթանալ բնաւ ի յետ: Եւ եւս կարգելոյն արիստոտ. ի կարգէ այլոյն սգուստինոսի. ի վէր ուրեք երբորդ գլխոյ թղթոյն, որ առ հռովմայեցիս: Յօհաննէս անտոնիոս տէրմեան. կարգին կրտսերաց եպիսկոպոս, ի ե. գիրս անձնիշխանութեանն: Անդրէաս վեգեան և սա եւս ի կարգ կրտսերաց. ի հնգ. ժա. յաղագս արդարացուցանելն. և ի վեցերորդ գիրս ի վէր տրմեանդեան ժողովոյն. գլ. իվ. սուր զնախաշարժութեանն կոչէ. ածային ընդունէք անճանաչ մերձեցուցանէ, և կամայ մերոյ սփանչելի ընդունի և հաճոյ: Ընդ որս և ատղեքսանդրիա մի յառաջնոց ընկերացաւ սքեյ մեծի հօրն իգնատիոսի, ի ճառն, ժէ. ի վէր թղթոյն առ հռովմայեցիս, ուր և անմոռանալ հաստատուն և անդոյլ նախաբարձութեան: Թող զայլ բազումս, եւս առաւել վկայ կարդի վամենայն հարս, յորոց յոյժ ունք գտանի ի ժողովն արիստոտեան, և համարին քան և երեք առաջնորդք, և ինքնուսեան ածաբանք. քաց յառաքելոցն յիշխանայ. և ի ծայրագոյն քահանայապետէ: որոց ամենեցուն վճռմայ հան վարդապետութեանն սկզբունս յանձին ունել, ոչինչ այլ ինչ ի նոքա ժողովն անդ, կամ ի գիրս

գիրս իւրեանց գիտացին ուսուցանել. մանաւանդ թէ յոլովք՝ ինոցանէ այնք իսկ էին, զորս յետ այնր ծագեաւ մոլենային կարծիք անհնարին պղտութեցոյց:

Նախանձաւորն եւս ձեռնարկութիւն՝ ի չչգրտել զմիաս արիդենտեան ժողովոյն՝ ի վերայ Քիլիգիական նախաշարժութիւնէ, առեալ լինի՝ ի կաթեխիզմէ այնր ժողովոյն: Քանզի այն շարժութիւն է ըստ մտաց արիդենտեան ժողովոյն, զոր աւանդէ՝ ի կաթեխիզմին իւր. այլ ժողովն արիդենտեան աւանդէ զքիլիգիական նախաշարժութիւնէ՝ ի կաթեխիզմի իւրում: Ասացուրեան է ըստ մտաց նր: Մեծագոյնս է սոյգ. Չէ՝ ի կաթեխիզմ ժողովոյն պարունակի վարդապետութիւնէ նորա: Իսկ փոքրագոյնս յայտ է բանիւք կաթեխիզմի արիդենտեան ժողովոյն * ա. մ. յա-
զգագ ա-
առաջնոյ մա-
նին հան-
գանակին-
հմբ. ք:

* ասէ. ոչ միայն ամէն զանեանն որ ինչ է, յաառաջապետութիւնէ նոնամէ, և փոփոխ. այլ և զորս ընդ ընդ-թինն, կամ ներգործեն ինչ, ներգին ընդունի այնպէս մղէ առ ընդգործն և առ ներգործութիւնէ, զի ընկալ-պէրիզորդ պատճառաց պարարտականութիւնէ ոչ խոփանէ. սակայն կանխէ. զի գոգանաձեւութիւնէ ընդունի հասանէ յամենայն, և ըստ ինամոպոյն վիայնէրոյ, յգիէ՝ ի ծագոյ մինչև՝ ի ծագս առոպիութիւնէ, և զարմանէ զամենայն փաղդութիւնամբ: Վասն որոյ առաքեալն՝ ի փարոպէլ աւետեացոյ ասէ, զոր յանձանօթս պաշպենի. ասէ, ոչ հետի ինչ է յիւրաքանչիւր ոմէ՝ ի մէնջ. զի նովաս կեամք ընդ նմա: Եւ կրկին արդեօք հնար թուիմայականի ումեք յայտնագոյն եւս մեկնել, և պայծառագոյն նկատել զքիլիգիական նախաշարժութիւնն: Աչքգարև կոյր է, և ապաստամ, որ ոչ տեսանի՝ ցե զմերոց կարծեաց անդէն յայտնի աւանդութիւն:

Հակառակորդք յայտ վկայութէ կարի լինին ներհակ, և յանհնարս մտեալ, երկս հնարեցան լուծմունս: Նախ, թէ այնր կաթեխիզմի հեղինակութէնն ոչ է յոյժ՝ ի հաւատալ, զի զայն ընդարձակեցին հարք կարգին քարոզչաց. երեսնակ

գոս արհեպիսկոպոս լանկիանեցւոց • եգիտիոս եպիսկոպոս մոսինեցւոց • Փրանչիսկոս քարտուղար ժողովոյն սրիդենտիոյ • և հասատացեալ ընդ սմա ամենայն ոք ի հինգերորդ, որ ՚ի նոցանէ կարգէ քահանայապետ:

Այլ անդուգն է այս պատասխանի, և վասն այն իբր ընտանական սրբոյ աթոռոյն, ՚ի յատաջագոյն բանուածէ գրոց տեղւոյն, որ ՚ի յունեան կարգէ, ծայրագոյն քահանայապետի հրամանաւն ընկեցաւ: Եւ գարձեալ, պարտ էին հայել հանգամակորդք, թէ ոչ միայն ՚ի նոր քահանայապետն հինգերորդէ, այլ և ՚ի գրիգորէ հնգետասաներորդէ, խնամակալուէ յունեան կարգի՝ այս կաթեխիզմ եղև հաստատեալ. և յընդհանուր եկեղեցւոյ ընկալեալ, իբր հաստատ սրիդենտեան ժողովոյն մտաց ծնունդ, և թարգման: Վն այսորիկ մերժեալ զայն լուծմն իբր պատժոյ արժանի, և ոչ դիմախոսութեաց:

Պատասխանեն երկրորդ, թէ յայդմ բանէ մանկաբերն միայն, լինիլ նախատրժուածն ողջամիտ և ուղղամտաւ վարդապետութեն, այլ ոչ մանն հաւատոյ: Ասի՝ համեստ, և ճշմարիտ պատասխանի: Քանզի մտադիւր ընդունիմք, թէ նախատրժուածն ոչ է մանն հաւատոյ: ապաթէ ոչ՝ որք ոչն ընդունին զայն, լինէին հերետիկոսք, զոր քաւ լեցի ասել: Շատ է թէ եկեղեցին ՚ի վերահաւսակ կաթեխիզմի իւրում յառաջադրեալն հաւատացելոց զողջամիտ վարդապետութեն, զնախատրժուածն թուիմայ կանանց գնէ իբր ուղղադատան կարծիս, և ՚ի մեկնել զամենակարողութեն սմ ամենևին յարմար: Այլ յայսմ արժան է յուշ ածել զոգետուութեն, և զչարամտութեն նոցն, որք զնախատրժուածն գիտ առեն լինիլ սրվարիտոսք և բանսեսեայ, երկուց վարդապետաց կարգին քարոզչաց, որք գրեցին յետ սրիդենտեան ժողովոյն: Եւ առաւել ևս քան զառաջ յետոյ ժամք գտանին, և չարայոյզք, որք քրիստոնէից

յա-

յականջս ուգիտաց, թէ նախաշարժուածքն ինչ պիղծական դատապարտեալ է՝ ի սրիդենտեան ժողովոյն. և փոքուն ինն որոշ՝ ի հերետիկոսացն կարծեաց: Ապաքէն յայտական ցուցմամբ զըպարտուածն ինձ՝ և ոչ կուշիկ հաւատոց հետս ունել վայելչանայ անգամ, թող թէ ուղղափառ:

Պատասխանեն երդ այլք, որք սիրեն զլոյս մինչ ծրէի խաւարուս ծածկել, թէ կաթեխիզմն խօսի զբարոյական շարժուածէ. այլ այս լուծուն և ոչ երկոցունք ինչ ունին հաւանականութեե, և դիւրաւ ատին նուիլին իսկ բանիւ: Քանզի կաթեխիզմն խօսի զշարժուածէ, որ հասարակ է ամ առնողաց. այլ շարժուածէն բարոյական ոչ է այսպիսի. զի միայն ազատ առնօղք տիրապէս են ընդունակ այնմ: Ապա ոչ խօսի զայնմանէ: Եւ դերձ շարժուածէն բարոյական ոչ վերաբերի առ ստորագելս ամենակարողութե. քանզի և հրեշտակք, և մարդիկ կարեն շարժել բարոյապէս զկաման մարդոյ: Ընդ ժողովն դիտէ անդէն ցուցանել զզօրուածն և զգործունէութեն ածելոյն ամենակարողութե, ոյզ յայտ է՝ ի մասնէ հանդանակին, որոյ ասելոյ զայս ասէ: Ապա ոչ խօսի զբարոյական շարժուածէ: Եւ ևս, շարժուածն բարոյական ոչ գաղտնի է, և ոչ տիրապէս կարէ անուանիլ ներքինն զօրութե: Ապա ոչ զայնմանէ է բանն: Այլ զի կաթեխիզմն խօսի զայնմանէ շարժուածէ զօրմէ խօսեր առաքեալն *, ասելով. Նովաս (այսինքն է ամ) ինձ շարժիմ ևս: Այլ ոչ ոք ասէ, թէ այս բան առաքելոյն խնացեալ լինի զբարոյական շարժուածէ: Ապա և ոչ զայնմանէ խօսի կաթեխիզմ ժողովն:

* գործոց ժէ:

# ՅՕԴՈՒԱԾ ԵՐԲՈՐԴ։

Յոգեկան նախաշարժուածքին՝ ի մաղձանաց եկեղեցւոյ • և՝ ի մթերան հաւանուածքն հաւատոցելոց ։

Ստուածաբանք յերկաշիգոյն զինեն զայս ձեռնարկուածն՝ և ճառեն զգործունէութեանէ ածային վճռոց • սակայն՝ և դէպ է յանկիլ և՝ ի փիլիսոփայական նախաշարժուածն այսոքիկ օրինակաւ ։ Գոյ այն շարժուած, զոր ինդրէ եկեղեցի յայլ ։ Իսկ արդ եկեղեցին ոչ ինդրէ յայլ զմիաբանական համընթացուածն • կամ սակ զբարոյական շարժուածն • այլ և զփիլիսոփայականն, և զնախընթացն, որ ներգործաբար • և գործունէապէս փոփոխէ զմարդկայինն կամս ։ Ապա գոյ այն շարժուածն նախընթաց փիլիսոփայական, և գործունեայ ։ Յուցանէ փոքրագոյնս ։ Ընդ նախ թէ եկեղեցին ոչ ինդրէ՝ ի մաղթանս իւր զհամընթացուածն միաբանական, ինքնին իսկ յայտ է • զի այս համընթացուածն առանց սքանչելեաց ոչ կարէ պակասել, այլ ամենեցուն, եւս և որոց ոչն աղօթեն մերձ կայ ։ Վասն որոյ թող ոչ ոք ինդրէ յայլ • զի մի անկցին երկինք, կամ զի լուսատուք լինցի արեգական, և այրեացէ հուր • զի այսպիսեացս ոչ է հնար առանց սքանչելեաց լինել այլազգ ։ Սոյնպէս և ոչ ոք ինդրէ զհամընթացուածն միաբանական • որուամ առանց սքանչելեաց ոչ է հնար պակասել • իսկ թէ եկեղեցին ոչ ինդրէ միայն զբարոյական շարժուածն նա, որք կայանան՝ ի յառաջադրուածէ յորդորիչ առաքէց • այլ և զփիլիսոփայականն և զնախընթաց շարժուածն, որ՝ ինքեր քուսան և ներգործաբար փոփոխէ զսիրտս մեր • ցուցանի՝ ի բանից մաղթանաց նորա ։ Ք՚ էն ։ Ջի ած պատպամբ նմա մեր յինէն առաջնոյն ։ Ջի պանհատաս, որ ուղ ինդին հաւատալ նմանոցն • զի մերձենոցուցէ զնոսա ի գործս բարիս • զի տարեցուցէ ն ցկեղ

զնեզ

պէտք սա ինչն, զի բարկանէն զորդի փրկչէն, և պա
տճառ մեզ զորդի մարմնեղէն, և հզօր: Զի քրիստոս
պիտոյ մեզ, և ինքեանսոյն ի բարիս, և այլն: Ա՛յժմ
այսմ ամի անհնար է լինել ի բարոյական շար
ժուածէ. որ ոչ զսիրտս շրջէ, ոչ կամս բարիս
ընձեռէ. ոչ ի չարէ ի բարի զմեզ փոխադրէ.
և ոչ ի դժկամակ գոլոյ կամեցօղս առնէ. այլ
միայն համոզէ և յորդորէ: Ապա թող ի բա
րոյական շարժուածէ խնդրել եկեղեցի և զայլ
շարժուածն ողբագին, և մարդկային հեաոտու
թիւն յաղթօղ, որով թէպէտ և կամակոր լինի
ցիմք, քաղցրանայ, այլ հզօրելապէս և ան
պարտելի ձգէ զմեզ ածս առ ինքն, և մերձեցու
ցանէ, զսիրտս մեր փոփոխելով, և առնելով
մեզ հաճոյ, որ ինչ յառաջն էր անհաճոյ. և
առաւել ազատօրէն կամիլ, յորմէ յառաջն յամա
ռուածք հրաժարէաք:

Յաստատուն նախ՝ ածական խոստամնիքն: Քան
զի բազում անգամ խոստանայ ածն ակրելեայց
զապագայ գործս մարդկան. ոչ խոստացուա
ծըրահամառ զդարձ հեթանոսաց: Ա՛յժ ոչ
ձեռնարկէ ընդն օգտասիրնոս, ածն խոստանայ զոր
ինչ ինքն է առնելոց. քանզի անմարթ է ա
ռնել, թէ ածն խոստանայ և մարդիկ կատարեն
զխոստացեալսն ամ: Ապա սաստուածն առնէ
զայն գաթձ մարդկան, ոչ միայն զի յորդորէ ի
դառնալ. (զի այս ոչ է ակրատէս առնել. այլ
յորդորել առ առնել.) այլ զի ի ներքուստ ըզ
սիրտս մարդկան փոփոխէ. հակեցուցեալ զնո
ղրդածական շարժուածք, ի չարէ ի բարին:
Յաստատուն երկրորդ, ի միաբան հաւանուածէ
հաւատացելոց. որք ի գործել զբարի ինչ, զա
մենայնին ամ՝ լերս առաջնոյ հեղինակի զսիրտս մեր
մերձեցուցչի ընծայեն. նա զիւրեանց խակ գոր
ծակցուն խոստովանին լինիլ պարտ և ածային
բարուածք: Ապա զի մի ոք սուտ բարեպաշտ
այս խոստովանուածն, ասելի է, թէ ածն ոչ
միայն է յորդորիչ գործոց բարուածք, ըստ այնմ
որ շարժէ բարոյապէս, և ոչ միայն գործակից,

զատ որում ընթացակից միանապես, այլ և հե-
ղինակ, ըստ որում ներգործ ասես շարժէ զիներ-
քուստ • և մերձեցուցանէ զսիրտս մեր: Ոս-
տոյ և հակառակագոյդք իսկ զայս կարծիք, որում
'ի վիճաբանութիւնս այնպէս ոստոկութիւն հակա-
ռակին իրօք զօրհանապազ առաջի աչս սեղա-
նոյն երկիւղածութիւն, և սրբութիւն արտի խոս-
տովանին:

## ՅՕԳՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ:

Յառջանի նախալարժանելոյն 'ի սէց հատ:

Ի նմանէ նախալարժանելն, տայ վերադոյն
ասացեալ, իմանալի զշարժութեն' զայ
պատճառաց իբր կենագործիչ • և որպէս թէ
կենսական մխուէն, որով հասէ ամէն յերկիրորդ
պատճառս զվերջին ներգործականութեն դոր-
ծելոյ, և մերձեցուցանէ զնոսա 'ի գործ: Ոչ այլ
շարժութեն ուսուցանի մեզ հարկ • 'ի հաստատել
յոլովակի, թէ երկիրդ պատճառք ոչ ներգոր-
ծեն լինչ, բայց եթէ շարժեալք և մերձեցու-
ցեալք յայլ, որ ամէն է շարժիչ, և նախ քան
զորոշիչ • զի այսպէս անուանեն զնա դիտունք
ասես *, 'ի հաստատել զկամն այլ, լինիլ երա-
ձայն նախ քաջգուշիւ • որով և մերոց ևս կամաց:
Ուսան 'ի նմանի գլխոյ ասէ զայս: Սկիզբն է մի մը-
այն ան-
ան, յորմէ է գոլ, և ամ գոլութիւն • ամ առնակութիւն, ուժանց:
ամ ներգործութիւն, և շարժառիթ: և քաղաքացի արդեք
ասէ' թէ ած շարժէ զամ առնօղ: Սքեն ամբոստիս * ' 'ի գիր-
ասէ, ած է ամենայնի կենագործօղ' շարժիչ և կառա- պատճառա-
վար, ոչ հոգին 'ի մարմնի բուսականի ամենայն ու- պատուհաս
ածէ, կենագործիչ և շարժիչ և կառավարիչ: կան 'ի գլ-
Ուր մեկնէ զերկրանակ շարժելոյ այլ զստեղծ- ի.
ուածս օրինակաւ հոգւոյ • որում զհետ եր- * ա.է.կա-
թեալ սքեն թովմայի * • ասէ • ած շարժէ զայ- ծէ. պ. է.
կարհ, նմանապէս և հոգին զմարմին: Հարց յայտ է ևս ա ե:
հոգին զիւրիգատչո և նախընկերացուցիչ շարժէ զան- * 'ի գիր-
պատ: Եւ սքեն բառասէր * • ասէ • ած զբնութ • կանոնաց-
գլ ա:

և այլոցդ ևս պիտոյանալն նշ, անհնար է երբեմն դէպի. չի ամենայնի է կարօղ, և ըստ կամս իւր փոփո-
* 'ի ճառս ինչ վամենայն: Եւ ոսկեբերանն * ասէ. ամենայն
ձեր. 'ի վէ- ինչ յանապէսպ չէոանէն այ հասպեալ և շարժելոյ
րայ մաս- պնօրէնի 'ի մէր էրկոսէի: Ոչաստ Եւսեփան կոչէ
ղէն. զայծ ամենայնի շարժել, և ներգործել: Եւ գրի-
* 'ի քա- գոր * . ասէ. սրպ սպեղծանն ըստ այնմ շարժին,
րոյակո': ըստ որոմ գաղափի ապրեցուածքեամբ այ պրամադրին.
յայտ է թէ ազդեցուածք, որ հատարակ է ամ
ստեղծուածոց. որ առանց ինչ երկբայութեան,
ոչէ բարոյական, այլ ֆիզիկական: Եւ բեռ-
* 'ի գիր- նարդոս * ասէ. ած ձևամս մերչեցուցանէ գործոյ,
ընդհաց. և շգործն կամայ: Ոչ երկուս շարժուածիս մէջ
և 'ի գիր- միայն զանազանէ, այլ և դեղեցիկ և վայելուչ
անչնիշ- բացատրէ. մի զբարոյականն, որով ած յայտ
խանոսէ: առնէ, և առաջի դնէ մեզ, թէ զինչ պարտ է
առնել. և եկիր զֆիզիկականն, որով մերձե-
ցուցանէ զմեզ առ առնել: Բայցեայ և այլ
վկայութիւնս մարթ էր յառաջ բերել, այլ շատ
լինի ասացեալս, ցուցանելոյ թէ ծանեան պէ
հարկ զգաստանի զայս շարժուն ոյ, որով մերձե-
ցուցանէ ած զմեզ առ առնել. ոչ բարոյապէս,
այլ ֆիզիկապէս, ոչ յորդորմամբ և երթ. այլ
և ներգործաբար հակեցուցանելով: Արդ ոչ
ինչ այլ լինչ լիմանան թեովմայականք անուամբ
նախալարժուելի. կամ նախաբոյորդուելի: Մանա-
ւանդ թէ և ոչ հարկ բացայայտ անգամ 'ի գործ
ածելոյ զայս բառ. զի բոլոդիկմօդ անուն յու-
նական, որով ստեպ վարին ընդ ոչխն պօղո-
սի, 'ի հայ բարբառ նախաբոյորդուելի լսի: Ասա
սի 'ի յոսկեբերէն դէպիկանն որ յայտնի հետևմանե
քի, ած կոչի նախալարժել գործոյ. պարծա-
նեալ, որոմ չէր ինչ, որ կամիցի կամ կարօղ եղե կոչ
հակառակ, ոսկ ասէ բռեսկուս *:

* չերբոնէ գիր- մէնի ևարօաե:

# ՅՕԳՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ:

## Յառաջին նախաշարժուածին վկայուածք փիլիսոփայից:

Առածք են նախնի փիլիսոփայից, թէ պարտաւոր, ուլ ներգործէն ինչ, բայց էրէ չարժեալ և մէյէնոացեալ յառաջնոյ պարտաւէ, ո՞ր յոյ չօրուէնքամբ գործէն. և որ հայարէ պահեանն առնօղ ընդ գործ ի՞ր. մանաւանդ թէ, այլ պարտաւոր բազդափին առ այն՝ էրը գործի առ արուէնսարը. և այլն: Այլ այս առածք են նոյն իսկ վարդապետուածին Թովմայականաց զնախաշարժուածն: Ապա փիլիսոփայքն առաջինք օգտուցին զնախաշարժուածին:

Պատասխանեն ոմանք ի հակառակորդաց, թէ զայս ամ պարտ է իմանալ այլաբանօքն և անյատկապէս, ոչ թէ ածն ասի չարժել, մէյէնոացանել և մղել զերկրորդ պարտաւոր, ոչ զի դնէ լինչ ի նա նեղքին. որով մերձեցուցանին առ առնել, այլ զի ի միասին ընդ առնել նոյ ընթացակցի:

Այլ այսպիսի ցուցմամբ պատասխանի դիւրաւասի յայնմանէ, զի ոչ մեկնէ, այլ ամենևին եղծանէ զձշմարտուածն: Զի թէ ածն օգնէ միայն երկրորդ պատճառաց, ըստ որում գործակից նոյ արտաքուստ ի նոյն գործ, ոչ երևիցի երևիցարի ի ձգել զկառս, և ոչ ըստ որում մերձեցուցանէ և փոխէ զնա ի նեղքուստ, ապա սուտ է թէ ածն չարժէ և մերձեցուցանէ զերկրորդ պատճառս առ առնել: Քանզի զևարդ մարթ լիցէ ասել, թէ ածն չարժէ պէրիւդէ պատճառն առ առնել, եթէ ոչինչ չարժուածն ի նմա. կամ մէյէնոացանէ, եթէ միայն գործակցուածն նմա ասպատեալ, յատնել նմա գործակցի: Եւ դարձեալ, զոնէ յայդմ պատասխանուոյ հետևի, թէ նախնի փիլիսոփայք, յատկապէս և առանց այլաբանուածն

մեկնեալ յայսմ մասին հանախտոհ գտանին թուղ մայականաց. վասն որոյ մերժեալ զպատաս-
խանիս:

Պատասխանեն այլք, և քանզ իսկ համեմատ իբրեանց սկզբանց, թէ այս ամ առածք են ստուգ. և թէ ած ներգործաբար ոչ շարժէ կամ մերձեցուցանէ զերկրորդ պատճառս, զի ոչինչ շարժուածն տպաւորէ ի նմա, մերձենալ նմ նուաւս ի գործ. այլ միայն միաժամակէս ընթացակից նմ, ընկերեալ զնովք զօրութեն՝ զօրութեամբ ստեղծուածոյն, զի յայսմ ընկերութէ արտադրեսցի ի գործ:

Այլ այս պատասխանի ոչ միայն նախատինս գնէ ամ առաջնոց, յորս նախապատուէ տկնէին միայք հաստատուն ունէին զայսոսիկ առածս, այլ և սքանչ օգտաւնոսի, և սքանչ թուլմայի, և այլոց արբոց հարց. որք ստէպ ի մէջ բերեն զայնս ի ձառել զնախախնամութէնն ած, և զաւր ժանապատճուածոցն առաջնոյ շարժոցի:

Նայ ի հաստատակաց ասոյն վկայուեց, յայտ-
նի է միտ արհաստատէլի՝, ուր զսկզբունս նա- *Ի՛նչ է-բնա-
խաշարժուե քաջ հաստատեալ, յայնոց ի զննել գիր է.
զգոյութէն ած, առնէ իւր ձանապարհ: Զի նախ առաջին դնէ, թէ ի առտակարգեալս երկրորդ շարժօղն ոչ շարժէ, բայց եթէ շարժեալ յառաջնոյ. ասէ. Զերկաթանէրմէ ասէմ շարժել, երկն որ չէիր, և երկն որ առաջին է ի շարժօղ, այլ առնել որ առաջինն, զի առանց առաջնոյն ոչ շարժէ չէիր. բայց առանց չէիրոյն առաջինն շարժէ առաջինն: Յայս սկզբանէն յարէ միւս ևս. ասն որ շարժի ասէ յոմէնէ, ըստ որ ոչ է իւր շարժել զօրութէնն, այլ զանազանի ի նմա գոյացութէնն շարժօղ ի զօրութէ շարժելոյ, ) ուր է առաջնոյ շարժօղ: մի՝ զի շարժէ շարժեալ. ոյք կենդանին շարժէ և շարժի. արդ պարտ է առաջնոյ շարժողին լինել անշարժ, զի ոչ է նմ հնար շարժիլ յայլմէ յառաջադունէ. վ՛ զի է առաջին. և ոչ յիւրմէ, զի որ ինչ շարժի յայլմէ շարժի: Երկրորդ. զի որ ինչ ըստ ինչ-

է պատճառ, մինչդ է յառաջագոյն գան գայն որ է պատճառ՝ ի յետոյ այլոյ: Եւ վասն այսր սարտ է առաջնոյ շարժողին ոչ այլով, այլ իւրով շարժել, կամ լինիլ իւր շարժիչ ըստ ուրումբ: Յայսց սկզբանցն հաւաքէ, թէ հարկ է լինիլ առաջնին սկիզբն շարժօղ անշարժ, որ ոչ այլով, այլ իւրով շարժիչ է, և նոցա իւր ըստ ուրումբ շարժիչ: Եւ վասն այսորիկ գովէ զանազատագոյնս, փոխանակ գի առաց, թէ միաքն անշարժ և անխառն՝ (այլ է թէ յայնմանէ որ շարժէ՝ և որով շարժէ) է առաջնին սկիզբն ամ շարժմանց: Ապա քանզի այսմ մտաց՝ այլ ամ շարժօղք բազդատին իբր երկրորդ շարժօղք, հետևեցուցանէ՝ ի գլ. ը: Թէ առքս ամենեքին շարժեն ըստ որում շարժեալ ի նմանէ. ասէ. ամենայնի՝ որոյ շարժէնն, և շարժին, սկիզբն է այն, որ է անշարժ: Եւ ահա այն իսկ է վարդապետուածն նախաշարժուածէ ցուցեալ այսոքիկ ձեռնարկուբ արիստոտէլի: Երկրորդ շարժօղք, կամ առնօղք՝ ոչ շարժեն, բայց եթէ շարժեալ յառաջնոյ. որպէս դնէ՝ ի գլ. ե. Այլ բաց յայ ամ ինչ է երկրորդ շարժօղ. զի առաջին շարժօղն անշարժ ոչ կարէ լինիլ, եթէ ոչ մի. ոպ հաստատէ՝ ի գլ. է: Ապա այլ ամ շարժօղք, կամ առնօղք, ոչ շարժեն, բայց եթէ շարժեալ յառաջնոյ, այ յայ:

Ասացեալ ոք. Արիստոտէլի միտք այս են, թէ երկրորդ առնօղք շարժին յառաջնոյ, ըստ որում՝ ի նմանէ յարտադրելն իւրեանց առնուն զոր ըութիւն, որով կարեն շարժել. և ընդ առնելն ներգործուածն՝ առնեն ընթացակցութիւն նմ, ոչ նախընթացիւ, այլ միամանակաւոր:

Այլ այս հակառակորդաց վարդապետուածն, և պատասխանին՝ օտար է ամենևին՝ ի միտս արիստոտէլի: Քանզի՝ ի չ. բնաբանութիւնէ. գլ. է. ոչ ճառէ զարտադրուէ հնոյ յառաջնոյ էին, այլ զկախմանէ երկրորդ շարժողին յառաջնոյ շարժողէ, եթէ հնոյ արտադրեալ՝ ի նմանէ, և եթէ ոչ: Եւ զարդէն արտադրելոյն հաստա-

աչ. թէ ոչ կարէ ներգործութիւն շարժել, և թէ ոչ շարժեացն յառաջնոյն. վն կամման որ մեռածի՝ ի բանի եկիդ շարժողին առ՝ի յառաջնոյն: Ուստի՝ ի վախճանի հատաբնաբանութիւն նմանեցուցանէ զնա զօրավարի, որոյ գործ է՝ ոչ միայն զօրականս կացուցանել. և միոյ միոյ զնուրաքանչիւր գործ նշանակել. և զինու վառել. և այնպէս կազմ յօրինել՝ ի պատերազմ. այլ և առաւել զոր այնպէս վառեալ պատրաստեալ կան՝ ի ձակատամարտին պահու, ներգործապէս շարժել, ուղղել, և յառաջ մատուցանել: Սոյնպէս ըստ մտաց արիստոտէլի, ասէ՝ ոչ միայն զամենայն ներգործելս կացոյց. և զնուրաքանչիւր իւրովք զօրութիւնք կազմ յօրինեաց. այլ մանաւանդ իւրով յառաջաշարժ լինելութիւն, առ ներգործութիւն գործելոյ նոյ, շարժէ, և մերձեցուցանէ. այսպէս ոչ, ոչ արդեօք զզօրավարի առնէր գործ: Եւ յայտնի է յայտ է ըստ արիստոտէլի՝ թէ համընթացութեան միանական, եթէ ծանուցեալ եցէ նմ զայն, և եթէ ոչ, ոչ է բաւական: Զի ոչ շարժէ ասէ նուաւս զպատճառս առ առնել. այլ յառնել նոյ գործակցի նոցուն. և ոչ զյառաջամուղ զօրավարն գործէ գործ. այլ զպատճառակից գործակցի. զոր օրինակ եթէ զօրավար ոք՝ խոստն իւ մարտիկսն պատերազմից, ընկերեալ յաւէտ քան զօրավարեալ: Ապա ըստ մտաց արիստոտէլի ասելի է, թէ ոչ միայն շնորհեաց ասէ երկիդ ներգործչաց զզօրութիւն ներգործելոյ. և ոչ միայն՝ ի ներգործել նոցուն լինի ներգործակից. այլ և առաւել շարժէ զնոս՝ ի ներգործել: Վ[ա]յ այսորիկ * ասէ. Շարժի ամ յածելէն զօրութիւնէ էակից՝ ի նէրգո՝ ի ներգործութիւն. և այն՝ նախընթաց շարժութիւն: զի շարժողին յառաջագոյն է քան զշարժութիւն շարժելոյն. գիւ

* այսինքն՝ զոր գիր ասէ

Ա[յս] ամ յայտնի ցուցանի՝ ի գիրս որ յառաջագոյն, առ աղէքսանդրոս. գլ. ձ: Եթէ արիստոտէլի է այն, ասէ հաւատարակօրէն կարծի.

և

և եթէ միոյ ուրուք ՚ի հինոց. որ զայս վարդա
պետութեն արիստոտէլի յաղագս առաջնոյ շար
ժուելն, մերձեցուցչի և շարժուղն զամ. օրինա
կաւ զօրաւարին ըստ արիստոտէլի գրութեցոյ.
այսպէս մեկնէ բացերևապէս: Որ ինչ յայսոսիկ
արարածս գոյիցի, ուրինչ է ընդհոպ յնդերծոյ ՚ի մէջ
մարդկան ՚ի ժամ պատերազմի. զի զոր օրինակ ՚ի լսել
զձայն փողոյ, վաղվաղակի է պէտանել սմանոյ զհրահան
զառեալ. սմանոյ զբահս զգեցեալ, կիսոց փոխանցեալ
առանապանս ագուցեալ, սաղաւարտս առեալ, կամար ընդ
մէջ ածեալ, մեծ ուրուք վարելով առ հասարակ խրա
խառնել. այն օրինակ ՚ի դէպ է մեզ համարիլ և զաւե
լեալսդհս. զանազի ՚ի միջէ մղել զօրութիւնք շարժեալ ա
մենայնի, գոյիցի, որ ինչ խորհրդականիւրուն ազգս և
պատշաճ: Իսկ այն զի այս զօրութիւնք ու նշմարի ՚ի
մարդկանէ, և ու իսկ երեւի կարէ, ու ինչ իւր
կոփան լինի՝ անա պատասխանն առնելոյ, և մեզ այդմ
հաւատս ընծայելոյ: Քանզի և հոգի, որով կեամք
ու անկանի ընդ մերով փետուրք, բայց ՚ի գոյիցոյ ան
պի երեւի: Ամրդ հայեաց նախ յօրինակ զօրա
վարին, որ շարժէ զզօրս, երկրորդ յօրինակ հոգ
ւոյն, որ շարժէ զնիւթ գործարանս: Երրորդ
յեզերս, որով բացատրի ընծային շարժուելն.
զի ասէ, զօրութիւնք մղիւ, որով զարժի ամ: Զորրոդ
եթէ զնաւարդ այս զօրութեն զնուազանչիւր ըստ
նուրում պայմանին շարժէ և մերձեցուցանէ առ
առնել:

Վարձեալ և պղատան ուսուցանէ, եթէ երկոքին
պատճառք են գոյիցի այ. և եթէ ոճ է նիւթ հո
գի աշխարհի, ոչ գի է մանն նոր, այլ գի է շար
ժիչ որ զամ շարժէ և մերձեցուցանէ, ոյք հո
գին շարժէ և մերձեցուցանէ զհնազանդեալ
նուր անդամս: Ալ և հռոմերոս ասէ. այնպիսի
է կամ մարդոյ, ոյք օրըստօրէ աղբէ ՚ի նա արտասուք.
արտասուազդաւ նշանակեալ զառաջին պատճառն
ամի, որ շարժէ զկամս մարդոյ: Ընա և անաք
սագորաս ուսուցանէ, գերագոյն մասս զոյիցիւ
և գնօրինել զամ: Յորոց յայտնի ծանիցիցը, եթէ
նախաշարժուելն վարդապետութեն ոչ է նո
Hh 4 բուղ

րոգ գիւտ. այլ վասինջուց լմնասա յարեսատուէ
լէ և յայլոց առաջնոց աւանդեալ՝ ցուցեալ,
և մեկնաբանեալ, նովքն իսկ բանիւք, նովքն
օրինակօք, և նովքն ձեռնարկութիւք, որով
այժմդ աւանդեն, ցուցանեն, մեկնեն, և ջա
տագովեն Թովմայականք, ճանաչանդ և յա
ռաջքան զսոսա ոչ հալք. ոչն ամբրոսիոս, որ
յայն սակս նմանեցուցանէ զնոճ հոգւոյ. զի
այնպէս շարժէ և խառնարէ զամենայն, ոյ հոգին
ՀՄարմին *: Սոյն օգոստինոս, որ * զայս մեղուն
այլ շարժիլ ասէ առաջի առնէ, ոչինչ ընդհատ
բանիւք, քան զոր 'ի գիրսն էր աշխարհի, որ
առ ալէքսանդրոս. և ոչն Թովմաս, որ 'ի մէջ
քերէ զայս օրինակ զօրավարի *: Յորս Թէ յա
ւելցես միւս ևս, զոր ոչ իրաւունս համարիմ
լռել, Թէ զնմանդ հակառակորդք, բարձամարձ
նախաշարժուածք, յայսց մեկնուածից օրինա
